200
296-ՄԱ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922
200
296-ՄԱ

ՀԱՅԵԼԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԱՅ

28(47.925)(09)
Ա-33
ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
(1004) 16649-58
1919
1201 2

ԱԲԱՐԵԱԼ Ի ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԷ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

1862

ՏՓԽԻՍ։

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

ԳԱԲՐԻԷԼԻ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԱՐԱՁՈՒՄԱՑ ԷՆՖԻՍՃԱՆՑ։

Քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն, և Հայելի անարատ Աստուծոյ ազդեցութեանն, և պատկեր առատութեան նորա։ Իմաստ. Է. 26։

Բայց մեր ամենեցուն բացաւ երեսաք զփառս Տեառն իբրև ընդ Հայելի տեսեալ՝ 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս, որպէս և 'ի Տեառն Հոգւոյ։ Բ. Կորն. Գ. 18։

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՆ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅԿ. ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ. ԳԻՒ.
ԹՒԼԻՍ ՀԻՄՆ. 1884 ՆՈՐՈՒՆ. 1909 Տեփ.
Основ. 1884 Новая пер. 1909
БИБЛІОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

ԳՐԱՆՑՎԱԾ է 1961 թ.

Ա.

281.6
Ս-33

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հարկ անձին համարիմ առաջի առնել համօրէն սիրելի Ազգիս, եթէ ուստի եղև խնամս տկարամտութեան միջամուխ լինել յայս գրաւոր վաստակ խորհրդածութեանս, որ յաղագս Աստուածային դերբնական պարգևաց և բազմատեսակ շնորհաց, զորպիսի աննախանձ ձիրս առատապէս վայելեմք հանապազօր ուղղափառ և ողջմիտ բարոյական մարմին և անդամքս ամենազօր և կենարար Գլխոյն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և թէպէտ՝ որոց ամենահայեաց են աչք հոգւոց, նոքա առաւել ևս կարեն դբացայայտ տեսութիւնս իւրեանց ուղղել և յստակամիտ նկատել յԱստուածային սուրբ Գիրս հին և նոր Կտակարանաց իբր 'ի վճիտ և 'ի մաքուր հայելի՝ այլ զի խնամս նուաստութեան վիճակեցաւ առաջի աչաց ամենից կացուցանել զայն, վասն որոյ և ես մինչ անձին առանձին ընթերցանութեամբ մըտադիր լինէի 'ի նոսա, և ահա՛ իբր հանդիսավեհ կացեալ 'ի խորհուրդս նոյն սրբազան Տառից երանելի Առաքեալն Պօղոս՝ զարդարև ամենազդու ներգործութեամբ զուարթացոյց և զօրացոյց զխնամս մտաց տեսութիւն այսուհիսրայորդոր բանիւ իւրով, զոր գրէրն առ սիրելի աշակերտն իւր Տիմոթէոս, թէ՝ "Մի՛ս դիր ընթերցուածոց բանից մխիթա-

թութեան վարդապետութեան։ Մի անտիպոյթ առներ
Հնորհաց՝ որ 'ի քեզ են, որ առաւ քեզ մարդարէ-
ութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան։ Յայդ
խորհեաց և 'ի դոյն կանխեսջիր,, .— ա. Տիմ. գ. 13,
14—15։

Այս Հնորհալից և սիրալրանան է յորդորական
բանս այս և անժխտելի. քանզի և ինքն իսկ սբր-
բազան Աղաքեանն՝ ճշմարիտ երկնաւոր վարդապե-
տին Յիսուսի Քրիստոսի մերոյ երկնահանճար աշա-
կերտն, նախապէս զնացեալ զհետ շաւղաց նորա,
ըստ սրբազան Աւետարանչացն թէ՝ "Եւ կոչեալ
առ ինքն զժողովուրդսն՝ ասէ ցնոսա, լուարուք ինձ
ամենեքեան և 'ի միտ առէք,, . Մատթ. ԺԵ. 10։
Մարկ. է. 14.։ Եւ ասա խրատ տայր Հնորհա-
բուղխ բանիւն իւրով առհասարակ ժողովրդոցն և
յատկապէս աշակերտելոցն իւրոց, և լուսաւորէր ըզ-
միտս նոցա տեսանել զսուրբ Գրոց յայտնութիւնս,
որպէս և զսիրելի աշակերտն իւր զՏիմոթէոս առ
'ի առաւել հաստատել 'ի նոսին՝ դարձեալ առաջի
առնէ նմա ասելով. "Ով Տիմոթէոս՝ սիրելի որ-
դեակ իմ ըստ հոգւոյ և հաւատարիմ պաշտօնեայ
երկնաւոր վարդապետին՝ Քրիստոսի մերոյ և հոգևոր
վերատեսուչ քեզ յանձնեալ հաւատացելոց՝ մի լիցի
քեզ տրտմիլ յաղագս հեռանալոյն իմ 'ի քէն միայն
տեղեաւ և ոչ սրտիւ և մտօք. բայց դու բնաւ չես
միայնակ, զի առ քեզ ունիս զԱստուածաշունչ Մա-
տեանս, որք ոչ միայն մատակարարեն քեզ զլիուլի

միութիւն, այլ և զվարդապետութեանդ ա-
բիւջան պաշտաման զկարևոր պիտոյս ուսուցանեն
քեզ, և ոչ այսչափ միայն, այլև յորդորեն, հա-
մոզեն զքոյդ մտաց զփոյթ և զջան արծարծել 'ի
ձրիստուր պարգևս Հոգւոյն սուրբ Հոգւոյն, զորս
'ի քեզ ունիս յօրէ անտի ձեռնադրութեան 'ի բարձ-
րագոյն աստիճան երիցութեան։ Այսպէս մի թո-
ղուր անգործ զՀոգւոյդ զօրութիւն, զոր ընկալեալ
ունիս, այլ միշտ պարապեա խորհրդով մտացդ աւե-
տարանական բանից քարոզութեան առաքինական
բարի գործովք կատարել զՀոգևոր պաշտօն քո, ո-
րով և դու որդեակ իմ Տիմոթէ ձայնակից լեալ ընդ-
իս՝ արժանաւորիս համարձակ պարծիլ 'ի Քրիս-
տոս Յիսուս, եթէ՝ "զՊաշտօնն իմ վարեալ առ-
նեմ". Հռովմ. ժա. 13։— Այս է՝ զպաշտօնն իմ
առաքելութեան և քարոզութեան, հոգևոր հովուու-
թեան և առաջնորդութեան բանաւոր հօտին Քրի-
ստոսի վարեալ կացուցանեմ, և հոգեկան հարկա-
նեմ նովաւ առ ամենայն հեթանոսս բանիւք և գործ-
ովք, զի զայն խրատ՝ զոր համարձակեցայ տալ
հոգևոր հովուաց եկեղեցւոյն Եփեսացւոց՝ նախ յան-
ձին իմում ցուցանել փոյթ կալայ, և ապա առ նա-
ուղղեցի զբան յորդորանաց խրատուն իսոյ՝ եթէ՝
"Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում
եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ
Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով". Գործք.
ի. 28։

Ապաքէն խորհրդածեալ և իմ յայս անզուգական և ամենարաւական Աստուածային շնորհաց պէտպէս ներգործութիւնս, զորս բացորոշաբար լուսաբանեն մեզ սուրբ Գիրքը որպէս զմնքուր հայելի, վասն որոյ ոչ ընդհատ 'ի խորհրդոց գտի անուանել զայս Նուաստիկ գրչիս գործ՝ "ՀԱՑԵԼԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԱՑ,, , քանզի սուրբ Գիրքը որպէս զջինջ հայելի առաջի առնեն մեզ զամենատեսակ մարդկային կրից զլսորժ և զանսորժ հայեցուածս, ըստ այնմ, եթէ զբ անարատ և ամբիծ աչօք ուղղափառ հաւատոյ և սուրբ սրտի սիրոյ սկսանիցի դեգերել յընթերցմունս նոյն Գրոց, արդարև այնպիսին զուղիղ ըմբռնումն մտաց և խորհրդոց ընկալեալ՝ կարէ ուսանել զանարատ և զուղիղ վարդապետութիւնս Աւետարանական և Առաքելական ճշմարտութեան, և հետևիլ լուսաշաւիղ քարոզութեանց և ողջամիտ մեկնաբանութեանց և շնորհալիր բանից հոգեկիր վարդապետաց սուրբ Եկեղեցւոյս, որպէս և Տիմոթէոս սիրելի աշակերտն Պողոսի լըսէր առ 'ի նմանէ, ըստ այնմ, "Դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան և յօժարութեան հաւատոց։ Եւ թէ՝ "Հաստատուն կաց յոր ուսարդ և հաւատարիմ եղեր, գիտես ուստի ուսար, զի 'ի մանկութենէ զԳիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն 'ի ձեռն հաւատոյն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս։ Ամենայն Գիրք Աստուածաշունչք և օգտակարք 'ի վարդապե-

տութիւն են և յանդիմանութիւն և յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան, զի կատարեալ լիցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ,, : բ. Տիմ. գ. 10 — 17 : Իսկ եթէ ոք ախտացեալ սէրք անհաւատութեան և պղտորեալ սրտիւ և մտօք հոգեկորոյս մոլորութեան և կամակոր մոլութեան հայեսցի 'ի սուրբ Գիրս և քննեսցէ զայն՝ ոչ կարէ այնպիսին յստակ, պարզ և յայտնի խելամուտ լինել ճշմարտութեան, և ստանալ զուսումն ուղղափառ վարդապետութեան, այլ միշտ ընդ հակառակն մերժէ զյայտնի ճշմարտութիւնս քարոզեալս 'ի սուրբ Գիրս : Յաղագս այսպիսեաց գրեալ է. "Որ յամենայն ժամ ուսանին, և 'ի գիտութիւն ճշմարտութեան երբէք ոչ հասանին, այլ որպէս Յանէսն և Յամբրէս հակառակ կացին Մովսիսի, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք սպականեալք մտօք, անպիտանք 'ի հաւատս: Այլ ոչ երբէք գայցեն յառաջ 'ի լաւ անդբը, քանզի անմտութիւն սոցա յայտնի լիցի ամենեցուն որպէս և նոցայն իսկ եղև :—(բ. Տիմոթ. գ. 7—9 :

Եւ արդ՝ որովհետև այն ամենայն շնորհանորոգ բանք սրբազան Առաքելոյն բացայայտ ծանօթութիւնս ետուն մեզ, թէ 'ի սուրբ Գիրս գերազանցապէս վայելեալ երևին Աստուածատուր զանազան շնորհաց փառաւորութիւնք 'ի յաւիտենից պատրաստեալք և ձրիապէս պարգևեալք աղգի մարդ-

կան 'ի ձեռն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, վասն որոյ և իմ անհամբեր գտեալ այն ա-մենայն բարութեանց Աստուածային Ներհաց՝ հո-գեւանդն փափագանաք վութացայ զայս Գրքոյկ առանց վհատութեան հոգւոյ շարահիւսել։ Եւ թէ-պէտ՝ առ առաջինն հայեցեալ յիմն անբաւականու-թիւն՝ տկար ըստ ամենայնի առ 'ի բանս գտի ըզ-լեզու իմ, նա մանաւանդ յԱստուածային բանիցն քարոզութիւն անվնեհեր հոգւով խորամուխ լինել տը-կարամիտ անձին իմում անտեղի իակ էր, այլ յուէտ քաջալերեալ յորդորեցայ, մինչ առ խրախուսական Աստուածային բանիցն տպաւորութիւն դարձուցի զբովանդակ ուշ մտաց իմոց՝ որ առ Պօղոսն վե-րաբարբառիւր թէ՝ "Շատ են քեզ Ներհք իմ, զի զօ-րութիւն իմ 'ի տկարութեան կատարի,, ։ բ. Կորն. ժբ. 9։ Ուստի և նոյն Առաքեալն ինքնին խոստովան լինէր թէ՝ "Հոգին 'ի թիկունս հասանէ տկարու-թեան մերում։ Հռոմ. ը. 26։—Եւ ընդ այսոցիկ զօրացուցիչ բանից յիշեցի նաև զՀոգեխրախոյսն բան սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ թէ՝ "Եւ զի ոչէ քո տկարութիւն՝ որ զօրութիւնդ ես ամենայնի, առ որ բանն քո միայն աղդեալ՝ զլրութիւն գործոցն գլխաւորէ,, ։ Նարեկ. խԹ ։

Այս աստանօր ըստ սեպուհ սրբազան պարտաւորութեան իմում և ես համարձակիմ սիրայոր-դոր և Աստուածահաճոյ աղաչանս մատուցանել առ իմ սիրելի հոգեսէր աղգն Հայոց, կաղ արթուն մը-

տոգ և ճանաչել զմոլորեալս և զհերձեալս, և ամենայն զգուշութեամբ հեռանալ 'ի կորստական բանից և 'ի գործս նոցին։ Որպէս և 'ի սոյն ձայնակից լինի մեզ սրբազան Առաքեալն Պօղոս ասելով. "Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտել զայնպիսիսն, որք հերձուածս և գայթակղութիւնս առնեցեն արտաքոյ վարդապետութեան, զոր դուք ուսարուք, և խորշեցարուք 'ի նոցանէ։ Զի այնպիսիքն Տեառն մերոյ Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի, և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց,,։ Հռովմ. ժզ. 17. 18։

Այսպէս այլ մի ընաւ անդիտանէ սիրելի Աղգն մեր զհոգեւորատ ազդարարութեամբ սրբազան Առաքելոյն Պետրոսի եթէ՝ "Լինիցին և սուտ մարգարէք 'ի ժողովրդեանն՝ որպէս և այժմ 'ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալ մուծանեն զհերձուածս կորստեան, և զոր Տէրն գնեաց՝ զնոսա ուրացեալ ածեն 'ի վերայ անձանց զարագահան կորուստ։ Եւ բազումք անկեալ երթիցեն ըղհետ նոցա անառակութեանցն, վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեցի,,։ բ. Պետր. բ. 1—2։

Յիշեցուցանեմ դարձեալ ընդ սմին նաև զԱստուածաբան Աւետարանչին Յովհաննու զկարեւորագոյն ճշմարիտ քարոզութիւն, թէ՝ "Ամենայն՝ որ յանցանէ և ոչ կայ 'ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ, որ կայ 'ի վարդա-

պետութեանն՝ Նա՝ և զՈրդի և զՀայր ընդունի։ Եթէ որ գայցէ առ ձեզ, և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի ընդունիցիք զնա 'ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա,, ։ բ. Յովհ. 9. 10։

Ըստ այսոցիկ ճշմարտութեանց առաջնորդն և հետևողն հաւատոյ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր 'ի յուշ ածէ մեզ լուսաւոր վարդապետութեամբ իւրով՝ յասելն, "Որպէս արեգակնս այս՝ որ լուսաւորէ զերկիր և որ 'ի սմա արարածք, որք երևելիք են 'ի ծովու և 'ի ցամաքի, այսպէս և հաւատոյ ճշմարտութիւն և սրբութիւն լուսաւորէ զմիտս ցանկացողացն Աստուծոյ, իւ անձնիշխանական կամքը երկնաւորք և երկրաւորք, մարդիկ և հրեշտակք ճշմարտութեամբ վարդապետք եղեն 'ի հնորհաց սուրբ Հոգւոյն ստոյգ գիտութեամբ ըստ արդարութեան օրինաց, և այսպէս առաջնորդեալ լուսով Երրորդութեանն ստոյգ պատմութեամբ արարչական էութեան՝ լցին զերկինս և զերկիր ճառագայթիւք որպէս Արեգականն լոյս 'ի կեանս և 'ի փառս երկնաւորաց և երկրաւորաց,, ։Յաճախապատում.բ.ճառ։

Այս յետ այսր ամենայնի զաղօթս առ Աստուած յերկինս մատուցանեմ, զի ճշմարտութիւնն յաւիտենական՝ նկարագիրն փառաց Հօր՝ և լոյսն հնորհաց՝ Տէրն և Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, արժանահայց խնկելի մաղթանօք սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի անչարժ և հաստատուն պահեսցէ զառաքելական Եկեղեցի մեր հսկողութեամբ ջեր-

մեռանող և մեծահաւատ ուխտիւք իւրով յուղղափառ վարդապետութեան և 'ի ճշմարտութիւնս հաւատոյ, յուսոյ և սիրոյ. որով և միշտ փառաւորեսցի 'ի մեզ երկրպագելի անուն սրբոյ Երրորդութեանն՝ այժմ և յաւիտեանս :—

Եւ ես նուիրելով զայս դուշնաքեայ գրաւոր աշխատութիւն իմ հանօրէն սիրելի Աղգիս՝

Մնամ աղօթարար

Մատթէոս Կաթուղիկոս ամենայն Հայոց :

Ի 11 Դեկտեմբերի 1860 ամի.
Ի սուրբ Աթոռն Էջմիածին.

Ֆ90

ԳՐԱԿ· Ա·

Աստուածաշունչ սուրբ Գիրքն է Հայելի Աստուածային բաղմապատիկ շնորհաց։

Վայելուչ և խորհրդաւոր դատեցաւ Աստուածարանն Գրիգոր զԱստուածաշունչ սուրբ Գիրս անուանել ամենամաքուր պարզ Հայելի Աստուածային զանազան շնորհաց՝ յաւելն՝ «Զի՞նչ առաւել յայտարար առաջի աչաց մերոց մատց, իբրև զջնջեալ հայելի բացատանուցիչ զբազմատեսակ շնորհս Աստուծոյ մարդասիրութեանն քան զանսուտիւնս Աստուածաշունչ սուրբ Գրոց»։ Ի ձառի Շնորհաց։—

Այս այս ամենամաքուր պայծառ Հայելիս յինքեան ընդքանչելի իմն երևեցուցանէ զբազմատեսակ Աստուածային շնորհաց զարմանալի տեսութիւնս, և որոշ որոշ տայ ծանօթութիւն զպէսպէս շնորհաց Աստուածային բաղմանեամ մարդասիրութեանն. բայց կարևոր է գիտել, թէ ո՞ք կարող իցէ վայելչակերպ նկատել և արժանապէս տեսանել, և ապա մարթանայ զանձել յանձին իւրում զհոգեղարդ պերճութիւնս Աստուածային առատաձեռ շնորհաց։

ԳԼՈՒԽ· Ա·

Ճշմարիտ հաւատք արժանաւորս կացուցանէ զմարդ Աստուածային Երկնաձիր շնորհաց։

Այս այս նախ՝ յոյժ կարևորագոյն է ունել յաչս մատց ամբիծ հաւատոյ ճշմարտութեան զանազան լոյսն, որով յաւէտ փարատին յաչաց հոգւոյն թանձրամած խաւար մոլորապատիր անհաւատութեան և պէսպէս թիւր և մոլար

խորհրդոց շփոթութիւնք։ Ահա զայս իմանալն լոյս հաւատոյ խնդրէր մարդարէն Դաւիթ Աստուծոյ, և վարդապետել մեզ Քանասիրելով աղաղակէր. «Լոյս տուր ցՏէր աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ»։ Սաղմ. ժբ. 4։

Այսպա ուղղափառ սուրբ հաւատք մեր զմեզ մերձաւոր Աստուածային զանազան երկնաւոր շնորհաց և պարգևաց կացուցանեն, և բարերար խնամոյն մարդասիրութեան և հայրական բաղմապատիկ գթութեան պարգևացն արժանաւորեն զանձինս մեր՝ Աստուածային շնորհաց, և զանազական զօրութիւնս փառաց՝ յանդիման տեսութեան մտաց հոգւոյ առնեն. առ այս վկայէ ինձ սրբազան Առաքեալն Պօղոս՝ յասելն, թէ՝ «Զինչ ոչ տեսանիցէ աչք հաստատութիւն, և յանդիմանութիւն՝ որոց ոչն երևին։ Հաւատովք խմանամք հաստատեալ դպրութեանն բանիւ Աստուծոյ, յաներևութից զերևելիսս եղեալ. առանց որոց անհնար է հաճոյ լինել Աստուծոյ. այլ հաւատալ արժան է այնմ՝ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած, և որ խնդրեն զնա՝ լինի պարգևատու»։ Եբր. ժա. 1. 3. 6։

Տեսանե՞ս, զի ուղղափառ հաւատք մեր Աստուածային շնորհաց և բաղմապատիկ բարերարութեանցն զմեզ մերձաւորս և հաղորդս կացուցանեն։ Ահա զայս ճշմարիտ և զառաջին գլխաւոր կարևորութիւն փութոյ և Քանից առ 'ի ստանալ Յաստուածային խնամոց զշնորհաց բարեմասնութիւնս բացայայտ աւետարանեաց մեզ Յիսուս Քրիստոս Փրկիչն մեր 'ի բաղում տեղս 'ի սքանչելագործութեան իւրում. զի յաղաղակէն երկուց կուրաց և 'ի խնդրելն զլոյս աչաց իւրեանց, հրամայեաց նոցա ցուցանել զբարեաց իւրեանց զհաւատոցն հանդէս, որպէս պատմէ սրբազան Աւետարանիչն Մատթէոս. «Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նմա կոյրք երկու, աղաղակէին և ասէին, ողորմեա՛ մեզ՝ որդի Դաւթի։ Եւ երբեմն եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն.

և ասէ ցնոսա Յիսուս. Հաւատացէք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա. այո՛ Տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա, և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի՛ ձեզ։ և բացան աչք նոցա» ։ Մատթ. Թ. 27—30։

Յովհան Զորձորեցի սուրբ վարդապետն մեր 'ի մեկնութեան այսր բանի ասէ. «Ուր երկու կոյրք աղաղակէին զՏէրն ողորմել ինքեանց և ասաց. Հաւատացէք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. հարցմամբս ազաչանաց մեոյ, և ապա բժշկէ. և թէ՝ բացան աչք նոցա ոչ միայն մարմնոյն հրճուել 'ի լոյս զդալեացս, այլ և մտացն ցնծալ 'ի լոյս խմանալեացն» ։

Այսպա յայտնի երևի թէ առ 'ի լուսաւորել զդդալն աչաց նոցա զկուրութիւն նախ խնդրեաց զիմմանալն աչաց նոցա զլուսաւորութիւն. որ լինի հաւատով. զի ըստ Ոսկեբերանին «Ճշմարտութիւնն հաւատոց լոյս է մտաց տեսութեան՝ որով ճանաչեմք զաներևոյթն զօրութիւնս և զբարերարութիւնս Աստուծոյ» ։ Ա՛ռ այս բան վկայութիւն բերէ զԿոպեշունչ խրատս սրբոյն Առաքելոյն Պօղոսի. թէ՝ «Ամենայն ինչ յանդիմանեալ 'ի լուսոյ՝ յայտնի լինի. զի ամենայն ինչ՝ որ յայտնի է. լոյս է» ։ Վասն որոյ և ասէ. «Արի որ ննջեսդ. և կանգնեա՛ց 'ի մեռելոց, և լուսաւորեսցի քեզ Քրիստոս» ։ Եփես. Ե. 13 14։

Այսպէսոր 'ի հաստատութիւն բանից իմոց յիշեալց զուսաշաւիղ վարդապետութիւնս նախահայրապետն մերոյ՝ սրբոյ Հօրն Գրիգորի Լուսաւորչին, որ 'ի բանս հաւատոյ քարոզեալ ուսոյց մեզ այսպէս. «Ճշմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն շարժմանց. խորհրդոցն յիշատակաց. զդեցեալ զլոյսն զիտութեան և իմաստութեան շնորհաց սուրբ Հոգւոյն. որ զառաջնորդական զմիտսն լուսաւորէ. և Գրովք սրբովք յանդիմանն կացուցանէ զաներևոյթսն՝ իբրև 'ի տեսիլ աչաց՝ առ բերգական լոյս. զի այն լոյս ևս այսպէս երևութանայ Աստուածային տեսութեանն մեծութեանն անքննելոյ. որ անմանն և անհամեմատ է. անպատում և անասելի. անհաս և ամբաւ յա-

թարածոց՝ այլ Ճանաչել աներկբայ հաւատով այնմ, որ 'ի նեղութեան և յանդորրու զօրացեալ հաւատով որ 'ի սուրբ երրորդութիւնն, կայ և մնայ անսասանելի առ մարտակիցն հաւատայ։ Ճառ. Գ։

Յիշեսցի առ սմին բան հոգեբուղխ և հրեշտակերօն սուրբ, վարդապետին մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, որ յարժանավայել դրուատս հաւատոյ ուղղափառութեան գրէ այսպէս. «Իսկ ըստ խրախոյս տէրունի պաշտելի բանին յիշեալ առ սմին, զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ՝ որ հաւատացն, է զի ևս չափն ընտրականաց բարեմասնութեան Աստուծոյ հաճելեացն գնեալ ասասնօր, զայս պատկեր բանի ընկալաք նախնի զահերկց առ 'ի սրբութեանցն մուտ սովիրբ հանդերձել, առանց որոյ և օչ Տէրն փառաց զիւրսն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ օչ նախ լծակից խնդրեաց բարերարութեան իւրոյ զհաւատն մեր, ուստի և ընձեռել զօրէ ինքնիշխան բաւականութեամբ առ ընթեր գոլով Աստուծոյ, քանզի հաւատք քո կեցուցին զքեզ՝ օրհնաբանեալն բերան վկայեաց, քանզի արդարև սեռն անասութիւն և կատարեալ իմաստութիւն, և առ Աստուած ընտանութիւն, և բարձրելոյն Ծանօթութիւն՝ հաւատոյ մասն։ երջանիկ և ընտրեալ անուն, որ յարաձգեալ մնայ անվթար և անփոփոխի պատուակից գոլով սիրոյ և յուսոյ»։ Եւ թէ. «ըստ որում հարցեալ Փրկչին ամենից՝ ցամենս ախտացեալս տեսանելոք, հաւատովք՝ ասելով առ այդ՝ թէ կարող եմ առնել ձեզ զայդ. օչ պարգևեաց ոչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատն գրաւ ընկալաւ»։ Նարեկ. Ժ. ժա։

Տեսա՞ր՝ որչափ կարևորագոյն է հոգւոյ ոչաց մերոց՝ սքանչելի և անաղօտ լոյսն Ճշմարիտ մերս ուղղափառ հաւատոյ, որ օչ միայն յանդիման կացուցանէ առաջի մտաց մերոյ զԱստուածային խմանալի տեսութիւնս ամենակարող զօրութեանն, և զքանչելի ներգործութիւնս բազմատեսակ շնորհաց և խրատամոյ անքննելի և անձառ մարդասիրութեանն, այլ և աստ-

ուածային անեզական լուսոյն ճշմարտութեան և ամենացան-
կալի յաւէրժական փառաց Աստուածութեանն հաղորդ և
մասնակից առնէ զմեզ։

Եւ զայս մեծ աւետիս սրբազան Աւետարանիչն Յով-
հաննէս աւետարանէ մեզ։ «Զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրա-
խութիւնն կատարեալ լիցի։ և այս են աւետիքն՝ զոր լուաք առ
Ի նմանէ, և պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, և խաւար Ի
նմա չիք և ոչ մի։ եթէ ասիցեմք, թէ հաղորդութիւն ունիմք
ընդ նմա, և Ի խաւարի շրջիցիմք, ստեմք և ոչ առնեմք զճշ-
մարտութիւն։ իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք՝ որպէս և նա լոյս
է. հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս։» ա. Յով. ա. 4—7։

Արժան է ասա հարցանել և քաջ իսկ վերահասու լինել.
արդ՝ ո՞ սրբազան Աւետարանիչդ Սիմէոնի՝ ուսմն ունիցիս հաս-
տատութիւն սքանչելի վարդապետութեանդ, կարէ ասել զայս
անժխտելի ճշմարտութիւն հոգեշահ բանից. զայս անվթար
ստուգութիւն աւետարանս ես իսկ լուայ Ի ճշմարիտ վար-
դապետէն յերկնաւոր ուսուցչէն իմմէ Ի Յիսուսէ Քրիստոսէ,
զոր նոյն ինքն աւետարանեաց՝ յասելն. «Ես եմ լոյս աշխարհի,
որ գայ զինի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն
կենաց»։ Յով. ը. 12։—

Աստանօր ընթերցիր զսուրբ վարդապետին մերոյ Սարգսի
Շնորհալւոյ զարմանալի խորհրդածութիւնս. «Համակ լոյս է,
և միշտ նոյնպէս ունի լոյս, ոչ որպէս ստորինս լոյս, այլ միշտ
միջօրեայ պայծառացեալ, ոչ զիշեր աղօտացուցանէ զնա, և
ոչ միջօրեային քոյքայէ զնաւադայթս նորա։ արդարև ստու-
գապէս աւետիք և բիւրապատիկ խնդութեան պատճառք, որ
այնպիսի Աստուած ունիմք՝ որ մաւ նորա բարձր է քան զա-
մենայն միտս, և լոյս նորա գերազանց է քան զամենայն բան.
և զի ինքն լոյս է բնութեամբ, և Ի լուսոյ անտի սկիզբն արար-
շաւործութեան իւրոյ արար, և զի զոր օրինակ չգոյ Ի նմա մասն

խաւարի նմանեալք և ոչ յարարածս իւր ըստ բնութեան. այլ եկամուտ 'ի մեղայ անտի ունիմք զնաւարն, որ եկն ելոյ ճշմարիտ, և լուսաւորեաց զմեզ, և հաղորդս արար լուսաւորութեան իւրոյ և Աստուածութեան։ Սարգիս Շնորհալ. Մեկն. կաթ. տիպ կ. պօղոյ՝ երես 637 ։

Այս բարեմի՛տ ընթերցող՝ պարտաւոր եմք ընդ այսր ոչ միայն լինել շնորհակալ պարգևողին այսր անաղօտ լուսոյ շնորհաց և փառաց, այլև մաղթել մաղթեսցուք 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որպէս զի այսու լուսով հաւատոյ ճշմարտութեան լուսաւոր պահեսցէ զաչս մտաց մերոց, զի մի՛ խաւար մոլորութեան կամ մոլութեան տիրեսցէ մեզ, յաղագս որոյ Հայաստանեայց ուղղափառ սուրբ Եկեղեցի առնէ զայս աղօթս մշանջենաւոր միաբան ուխտիւք։ «Եկեալքս ամենեքեան 'ի սուրբ Կաթուղիկէ և Յառաքելական Եկեղեցի՝ ադաչեսցուք զՄիածին Որդին Աստուծոյ՝ զՏէրն մեր և զՓրկիչն Յիսուս Քրիստոս, որ էջ փառաւք Հօր 'ի մէջ հնոցին, և փրկեաց զերիս մանկունսն 'ի Քաղդէացւոց անտի, լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր, զի մի՛ երբէք խաբիցուք մեք ի մեղայ և 'ի ցանկութենէ աշխարհի, այլ արժանի եղիցուք պահել զզգաստութիւնս նորա՝ առնուլ զդսակն լուսոյ և կենաց յանձինս մեր, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս տէր մեր» ։

Այսպէս մի՛ մերժեսցուք կամ խափանեսցուք զլոյսն Ճրշմարիտ հաւատոյ՝ զոր խոստացեալ ունիմք 'ի շնորհացն Աստուծոյ, և պարգևեալ 'ի բազմախնամ մարդասիրութենէ անտի, մի՛ ի վերայ մեր եկեալ տիրեսցին մոլորեցուցիչ չարաչար թեւլաղրութիւնք սատանայի և մեղսաշաղախ խաբէութիւնք և ցանկութիւնք աշխարհի, քանզի մինչդեռ ունիմք զայս լուսաւորութիւն 'ի հոգիս մեր՝ ոչ երբէք աղդէ չարաչար ներդործութիւն բանսարկուին, այլ միշտ յաղթահարեալ 'ի զօ-

բութենէ Քրիստոսական շնորհաց լուսաձաձանչ սուրբ հաւատոյն մերոյ՝ ամօթ ապարտ հեռանայ ի մէնջ։—

Ահա զայս ամենայն հաստատ իւրով իսկ վկայութեամբ երանելի և սրբազան Աւետարանիչն Յովհաննէս. «Դուք յԱստուծոյ էք որդեակք, և յաղթեցէք նոցա. զի մեծ է՝ որ ի ձեզդ է, քան զայն՝ որ յաշխարհին է». Զի ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ, յաղթէ աշխարհի. հաւատքն մեր. ա. Յովհ. գ. 4։ և. 4։

Յիշեսցուք աստանօր զՀոգեբուղխ վարդապետութիւնս երանելւոյն Թոսրովու Անձևացեաց Եպիսկոպոսի, զոր գրէ ՝ի խրատսոյս մեր ամենեցուն. «Ամենայն նեաց հրեղէնք սատանայի՝ խաւարելոցն ազգեն, իսկ լուսաւորելոցն մտաք՝ անդօրք են ըստ Աստմսողին. «Ո՛չ երկիցես յերկիւղէ գիշերի, և ոչ ՝ի նետէ որ թռչի ՝ի տուէ»։ Քանզի թէ արեգակն արդարութեան ծագեալ՝ տիւ առնէ քոց մտացդ, աներկիւղ Ճեսցես յամենայն նեաց, զի այն իր ՝ի խաւարի շրջի. յորժամ խաւարաւ դիւին գայթակղեն, և յաւուր հասարակի լոյս զնաւարն զայն կարծեն զփափկութիւն աշխարհիս և զցանկութիւն մեզաց. այնր ապազաւ խրատէ ինդրել զլոյսն Աստուածային և զսրբութիւն և զյատկութիւն մտաց, զի մի երբեւ լուսով խարիցուք ՝ի մեզաց և ՝ի ցանկութենէ աշխարհիս. «Լարեցէն, ասէ, զաղեղունս իւրեանց յիրս դառնութեան՝ ձգել ընդ գաղանիս այնոցիկ. որք ուղղեալ են սրտիւք. յանկարծակի ձգեսցին ի նոսա. զի զիրս դառնութեան և զնաւարի իրրև զքաղցու և զլուսոյ ինչ դան ձգել արկանել ՝ի սիրտն, այլ ուղղեալն սրտիւք ոչ երկիցեն՝ թէ յանկարծ և յանդիպաս ձգի. քանզի լոյսն՝ որ յուղղեալ սրտին է. չտայ խարել. այլ ծանուցանէ զդառնն դառն. և զնաւարն խաւար, և անպատիր Ճեսցեալ լինի»։ Թոսրով. ՝ի Մեկն. ծամագր. երես. 137։

ԳԼՈՒԽ Բ.

Աստուածային շնորհացն լոյս յատակէ զխիղճ մտաց՝ ընդ ճշմարիտ հաւատոյն ունիլ եւ զառաքինական բարեմասնութիւնս։

Երկրորդապէս կարեւոր և պարտ իսկ է մեզ զաչս խղճի մտաց մերոց արթուն պահել առաքինական և Աստուածահաճոյ գործովք՝ զի մի՛ շիջցի լապտեր հոգւոց մերոց ՝ի լուսոյ ճշմարիտ հաւատոյն՝ պակասեալ ՝ի յիւղոյ բարեգործութեան և սրբութեան վարուց ըստ Ոսկերերանին ՝ի Մեկնութեան առակի յիմարաց կուսանաց ։ Մատթ. ԺԵ. Զ ։ Եւ զնոյն վարդապետն մեզ չափաբերական ոճիւ նաև Շնորհալի սուրբ Ներսէս Հայրապետն մեր ։

«Զիմաստնացայ ես յերկոսին,
Ըստ իմաստնոց կուսից հնգին.
Զի ըստ դիւրագինն ընդ դժուարին,
Ո՛չ ստացայ ես զբարին.
Այլ յիմարաց եղէ յետին,
Ո՛չ պահելով իւղ լապտերին.
Ընդ կուսութեան զողորմութիւն,
Եւ կամ զօծուն Աւազանին ։
Որչ ՝ի գիշերն անդործ վերջին,
Ինձ արծաթով ո՛չ. վաճառին.
Որով և դրունք Հարսնարանին
Հեզգացեալոյս ընդդէմ փակին» ։

(Ցիառաս Որդի. երես. 128) ։

Այսպէսէն զոր օրինակ հուր կամ ճրագ վառեալ՝ այո՛ կարին շիջանիլ հակառակօքն՝ ջրով և հողմով և կամ արծարծիչ նիւթոցն պակասմամբ՝ այսինքն փայտի կամ այլ ինչ նիւթոյսմին նման սուրբ Հոգւոյն Աստուծոյ հաճոյարար շնորհաց և զանազան պարգևաց գերբնական լուսաւորութիւնք որ ՝ի միտս

և 'ի հոգիս մեր, յիրաւի ունին շնչանիլ կամ խափանիլ յոր-ժամ հակառակ այսց ներքին ներգործութեանց շնորհացն հեռանելով չարաչար վարուց մերոց և պէսպէս մոլութեանց և մոլորութեանց, և յաւէտ արհամարհելով և մերժելով զհո-գեշունչ լուսաշաւիղ բանս և զաւանդութիւնս սուրբ Գրոց, և ոչ երբէք զգուշանալով 'ի հոգեկորոյս և 'ի մտախոր թելադ-րութեանց բանսարկուին, չմերժելով 'ի խորհրդոց մտաց մե-րոց զչարօրինակ դաղափարս, և չխորշելով 'ի չարախտավատ գործոց մերոց՝ չդանձնեսցուք 'ի միտս մեր զխորհուրդ առաքի-նական բարեմասնութեանց, և չհետևեսցուք Աստուածահա-ճոյ բարեգործութեանց։ Ապա այսոքիւք յանցուածովք մեք մեղէն հնարեմք շնչուցանել և չարծարծել 'ի մեզ զսուրբ Հոգւոյն շնորհայն զլոյս, որոյ յաղագս 'ի յաւէտ զգուշութիւն առ Եկեղեցին Թեսաղոնիկեցւոց գրէր երանելին Պօղոս։ «Զհո-գին մի՛ շնչուցանէք, զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք, զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք, յամենայն ի-րաց չարաց 'ի բաց կացէք, և ինքն Աստուած խաղաղութեան սուրբս սրասցէ զձեզ համօրէն։ և բովանդակ ձեր ոգի և շունչ, և մարմին՝ անարատ 'ի դալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի»։ ա. Թեսաղ. է. 19։

Տեսէք, բարեմիտ ընթերցող, թէ որչափ հարկաւոր է հոգ-ւոց մերոց արթնութիւն խղճի մտաց, և կարի մտադիր զգուշու-թիւն խորհրդոց, բանից և գործոց մերոց, զի մի՛ անկանիցիմք ընդ կրստապատիր իշխանութեամբ խաւարասէր այսոյն չարու-թեան։ Զայս պատուէր հոգեկեցոյց զգուշութեան աւետա-բանեաց մեզ երկնաւոր Վարդապետն մեր և կենարար Փրկիչն աշխարհի Յիսուս Քրիստոս՝ հրամայելով այսպէս. «Գնացէք մինչ դեռ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ, զի որ դը-նայ 'ի խաւարի՝ ոչ գիտէ յո՞ երթայ»։ Յովհ. ժբ. ՅՅ։

Զայս Տերունական պատուէր երկրորդելով զեկուցանէ հա-ւատացելոց՝ սուրբ Առաքեալն Պօղոս՝ գրելով այսպէս. «Զի թէ-

պէտ և երբեմն էիք խաւար, արդ լոյս էք 'ի Տէր. իբրև զորդիս լուսոյ գնացէք՝ զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է, և արդարութեամբ, և ճշմարտութեամբ» : Եփեսաց. Ե. 8. 9:

Ըստ սմին օրինակի զրէ և սրբազան Առաքեալն Պետրոս՝ 'ի քաջալերութիւն և 'ի յորդոր ճշմարիտ հաւատացելոց, որպէս զի մնադիւր ծանիցին զՔրիստոսական շնորհաց առատութիւնս, և փութացին բեղմնաւորել զնոյնս յանձինս իւրեանց ներքին համոզմամբ, ուստի ասէ. «Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրիցէք այնմ՝ որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն: Որք երբեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Աստուծոյ, որք չողորմեալք, այժմ զողորմութիւն գտիք» : ա. Պետր. բ. 9. 10 :

Յաւետարանական և յառաքելական անժխտելի բանից ստի գանձեալ՝ շնորհաբուղխ վարդապետութեամբ իւրով քարոզեաց մեզ առաքելապատիւ Նախահայրապետն մեր սուրբն Գրիգոր Լուսաւորիչ՝ այսպէս. «Ման այսորիկ պիտոյ է յոյժ զգուշութիւն պահելով զլսելիս և զմիտս յայնպիսեաց անտի վնասուց, և խորհելով յօրէնս Տեառն 'ի տուէ և 'ի գիշերի, որ փրկութեամբ լի է և կենաց, զի մարդս մտաւոր և բանաւոր՝ շնորհիւ Աստուծոյ անշարժ կացցէ 'ի լաւութեան մտերիմ հաւատով և անարատ վարուք՝ փոխիլ 'ի վնասակարէն 'ի լաւն, և արժանաւոր լինել հոգևոր առողջութեան և ամբիծ սրբութեան՝ երախտեաց ճշարիտ սիրոյն Աստուծոյ, և ընդունել զշնորհս առաքելութեան, մարգարէութեան, վարդապետութեան, քահանայութեան՝ հաւանական կամաց, և լուսաւորել զամենայն խորհուրդս մտաց՝ լուսով գիտութեան, և արժանաւոր և երախտաւոր վարուք հասանել 'ի նաւահանգիստն կենաց: Զի մարդս յաղագս անձնիշխանութեան ունի զօրութիւն կալ 'ի մտերմութեան սուրբ սիրոյն 'ի Տէր, 'ի հնազանդութիւն հո-

գեւոր օրինացն ունի և 'ի բարեացն 'ի վայր կործանիլ 'ի խորս չարեաց, և զանարգանաց անուն ժառանգել, և զամբարշաւութեան զանօրէն և զպիղծ, սոյնպէս և երկնաւոր զօրութեանցն է իշխանական կալ կամսք 'ի հրամանի Արարչին և ստուգանել ցեռուն, որպէս խմանալի է և հոգեղենացն կալ ՇՆալ 'ի սէրն Աստուծոյ և 'ի միշտ և յանդադար փառաբանութեան Արարչին իւրեանց, իսկ ապստամբն 'ի նոցունց ասի սատանայ, և որք ընդ նովաւ՝ այսք պիղծք և չար դեւք անուանին, այսպէս յանուանէ ունին զՀետեւմունս բարւոյն, չարին, յայտնեն մեզ զլաւն և զանարգն, զի իւրաքանչիւրոցն ծանուցեալ զպատիւ և զանարգանս, զՀետ երեմ իցու՝ քարեաց և ատեսցուք զչարն, զի լուիցուք զբարրառն երանելին՝ որ ասէ. «Ա'զնիւ ծառայ բարի և հաւատարիմ, որովՀետեւ 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ մուտ յուրախութիւն ՇՆառն քո»: ՇՆաՇնախապատում. ՇՆառ. Դ:

Ապաքէն աստանօր պարտաւորիմք միայն զայս մեր կենդանի հաւատով և կատարեալ սիրով հոստատիլդ ունիլ 'ի փրկարար և յամենակարող զօրութիւն կենատու Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ աղօթակից լինելով ընդ հրեշտակաւրն վարդապետին մերոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ 'ի խորոց սրտէ մաղթելով և աղաչանելով առ Նորին ամենողորմ մարդասիրական գթութիւնն՝ թէ. «Աստուած յաւիտենական բարերար և ամենակալ՝ ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք 'ի մահու, և լոյս 'ի խաւարի, յոյս ակնուղղաց և երկայնամտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ խնամատութեամբքով դաստիարակեսս յայդ զտուներս մահու, անուանաւոր ծագումն և անմուտ արեգակն, քանզի ոչ զերեք ծածկել զվառս տերութեան քո խաւար գիշերոյ, որում կրնի ծուներ երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, որ լեռս զՀեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զանկրուածս նոցա, Աստուած

իմ և թագաւոր իմ, կեանք իմ, և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Յիսուս Քրիստոս Աստուածդ ամենայնի, սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց, և քաւարան մեղուցելոց, որ զիսես զամենայն յառաջ քան զլինել նոցա, առաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո, և փրկեա զիս յերկնից գիշերի և 'ի գիւէ չարէ, որպէս զի զմիշտակ սոսկալի և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ՝ կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որք կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ : Եւ 'ի դրոշմ խաչի քոյոյ նշանիդ՝ զոր Աստուածային արեամբդ քով ներկեալ նոր-բոգոցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք Աստուածականօք՝ ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն, բազուկ քո հովանասցի և աջ քո կնքեսցէ, վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց : Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։ Նարեկ. ղգ :

ԳԼՈՒԽ. Գ.

Հաստատ ճշմարիտ 'ի սուրբ Գիրս իրրեւ 'ի Հայկազն պատկերացուցանէ առաջի մտաց զտեսութիւն երանութեան յաւիտենական փառաց։

Ըստ սրբոյ Ոսկերերանին արդարև զԱստուածաշունչս սուրբ Գրոց հին և նոր Կտակարանաց ճշմարիտ և ստուգապատում տեսութիւն բանից՝ արժան իսկ է անուանել Հայելի հոգևոր, վասն զի զԱստուծոյ ամբաւ և զամենակալ մեծութիւնն, զանեղ և զենքնազոյ երեքանձնեայ միասնական ցէրութիւնն, և զամենակարող զօրութեան սքանչելի ներգործութիւնս առ արարածս իւր, ևս և զպէսպէս զմարդասիրական շնորհաց և

ձրիատուր պարգևաց բազմաբաշխ առատաձեռնութիւն միշտ յանդիման կացուցանէ մտաւորական տեսութեան մեր. և մեք յիրաւի յորժամ ջերմեռանդն հոգւով խոնարհութեան շնորհ-ընդունակ սրտիւ սրբութեան, և անսերկայ հաւատով ճշմարտութեան ընթեռնումք, և նկատել փութասիրեմք, յայնժամ յայտնի տեսանեմք չափաւոր տեսութեամբ մտաւոր իմացական զօրութեան մերոյ զԱստուածային ճշմարտութիւնն, և զբանչելի զօրութեան ամենակալ մեծութեան նորա ներգործութիւն, և զմարդասիրական երկնային շնորհաց և առատագութ խնամոց յաճախութիւնս : Ապա և մեք ըստ Առաքելոյն Պօղոսի 'ի հոգիս մեր ստացեալ զհոգեկար շնորհատիպ գաղափարս բերկրապատար ցնծութեամբ քարոզեսցուք միմեանց, եթէ «Եղբարք, այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ. այլ յայնժամ դէմ յանդիման, այժմ խեղամուտ եմ փոքր 'ի շատէ. այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս» : ա. Կորնթ. ժգ. 12: այսինքն. Եղբարք՝ այժմ յընթեցս մահկանացու կենաց մերոյ, յորում գնամք առաքինութեամբ անստուեր լուսոյ ճշմարտութեան ուղղափառ հաւատոյ, իբրև յամբիծ հայելւոջ յԱստուածաշունչ սուրբ Գիրս տեսանեմք և ճանաչեմք զԱրարիչն մեր զԱստուած ճշմարիտ, և զանչափ գերազանց զօրութիւնս, և զամբաւ մեծութիւնս փառաց և զինքնաբուն բարութիւնս նորա, բայց այսոքիկ ամենայն անկատար տեսութիւնք համարին, իսկ եթէ յորժամ երանութեան հանդերձեալ կենացն՝ արքայութեան երկնից արժանացուք, յայնժամ տեսցուք կատարեալապէս ամենայստակ տեսութեամբ զամենացանկալի փառս Աստուածութեանն՝ մշտնջենաւորապէս վայելելով 'ի յաւիտեանական կեանս : Զայս ամենայն երանական վայելչութիւն Աստուածային փառաց 'ի յայտ յանդիման տեսութիւն մեր՝ յաւէտ ճշմարտագոյնս աւետարանէ մեզ սրբազան Աւետարանիչն Յովհաննէս՝ հոգեշունչ բանիւ իւրով այսպէս. «Սիրելիք՝ այժմ որ-

դիք Աստուծոյ եմք, և չև ևս է յայտ՝ եթէ զի՞նչ լինելոց եմք, գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն, և ամենայն՝ որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր, որպէս և նայն սուրբ է» : ա. Յովհան. գ. Զ.Յ.—

Զի՞նչ քան զայս առաւել անղուգական երանութիւն և անեղական բերկրութիւն՝ տեսանել զփառս Աստուծոյ դէմ յանդիման յարքայութեան երկնից՝ յաւիտենական զմայլմամբ: Եւ ընդ հակառակն՝ զի՞նչ քան զայն տուելի թշուառութիւն և սոսկալի վիշտ, տանջանք և ողբ մշտուչարչար և արհաւիրք դժոխային՝ ըստ ամենայնի մերժիլ զերկիր յաստուածային փառացն՝ յերանաւէտ տեսութենէ անտի : Յայս միտ բազատատան ձևով ուսուցանէ սուրբ վարդապետն մեր Սարգիս Շնորհալի յասելն.«Զի՞նչ ինչ բարձրագոյն փառք և մեծագոյն երանութիւն կամիլ ումեք, քան զնա իւրական փառաբանն լի բովանդակ տեսանել. քանզի այն է արքայութիւնն, այն է վերին քաղաքին և առագաստին հանգիստն, այն է իսկ անճառ բարիքն և անպատում երանութիւնն : «-Արդարև բիւրապատիկ երանութեան և անեղական խնդութեան արժանաւորք են, զոր աչալրջութեամբ զտեսիլն զայն տեսանեն և առանց ամենայ և պատկառանաց հայեին յերանելի երեսն Աստուծոյ : Եւ բիւրապատիկ ողբոց և արտասուաց արժանաւորք են այնոքիկ՝ որք յայնմ տեսլենէ զերկիրն, քանզի այն է ահագին և անտանելի տանջանք քան զտանջանս գեհենին, և քան զամենայն դառնագոյն տեսակս տանջանաց՝ յերանելի տեսութենէն Քրիստոսի զերկիր, և յերեսայն Աստուծոյ անկանիլ : Ճառ հինգերորդ. Յով. ա. թղթոյն :

Արդ մտագիր արթնութեամբ հոգւոյ ունկնդիր լիցուք Աստուածաշունչ սուրբ Գրոց՝ հին և նոր Կտակարանաց. հոգևկնցոյց և շնորհապարգև. բանից ըստ հոգեշահ լուսաշաւիղ վարդապետութեան բազմերախտ Հայրապետին մերոյ սրբոյ Հօրն

Գրիգորի լուսաւորչին, որ յիրանութիւն Աստուածային փառաց ժառանգութեան յորդորել զմեզ յասելն. «Գաղարեսցուք 'ի գաստարկ և 'ի վայրապար քննութենէ, և զկնտ երթիցուք զլերատուց Գրոց սրբոց հնոյս և նորոյս, զի ես եմ՝ ասէ Աստուած, և չիք այլ որ՝ որ պատմէ զիրաւունս, զի նովաւ կեամք, շարժիմք և եմք. նմա լուիցուք՝ որ փրկէ զմեզ յամենայն վնասանէից, և փոխէ յարքայութիւն երկնից: Արդ եկայք որդեակք իմ, լուարուք ինձ, և զերկիւղ Տեառն ուսուցանեմ ձեզ, ասէ 'ի Սաղմոսերգութիւնսն. որ կամէ զաւանեսեան 'ի հնազանդութիւն հոգեւոր օրինաց, և զի որ պահէ զպատուիրանս իմ՝ ասէ Տէր. նա է՝ որ սիրէ զիս, և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ, և առ նա եկեսցուք, և օթեւանս առ նմա արասցուք: Ոչ պիտի անճառ սիրով պատուեալ եղաք, արդ՝ մի՛ խոտան գայուք Աստուծոյ, զի մի՛ անկցուք յերեսանցի կենացն, զոր խոստացաւ սրբոցն. զի արդարքն ժառանգեսցեն զդարիսն, և մեղաւորքն կրեսցեն զպատիժսն: Որք Հոգւով Աստուծոյ վարին՝ ասէ. նոքա են որդիք Աստուծոյ, իսկ որ ըստ մարմնոյն կեան, հաճոյ Աստուծոյ լինիլ ոչ կարեն: Զի հոգեւոր վարուք այսու կենաւք՝ վայելեսցուք յամենայն երկնաւոր բարութիւնսն. որ է բոլոր մեծութեան անհամեմատ և անկշռելի այնր անվախճան կենաց: Յաճախապատում. Ճառ Բ:

Աստուածն՝ սրբեալ և քանի՛ երանելիք են այնոքիկ, որք զգուշանան չանկանիլ յորդորելոց մեզաց և չլինիլ որս չարութեան բանսարկուին, և մանաւանդ ապատ կամաք և սրտի մտաք հաւատին յԱստուածային օրէնս, և 'ի խորհուրդս մտաց իւրեանց զանձն ընդ ելս յաճախ ընթերցմամբ սուրբ Գրոց, և ուսմամբ օրինաց և պատուիրանացն Աստուծոյ, որով գործս Աստուածահաճոյս առաքինութեան միշտ առնել յօժարին հաւանմատ օրինացն Աստուծոյ. և կարի զգուշանալ փութասիրեն հեռանալ 'ի մաղրեցուցիչ ճանապարհաց անտի ամբարշտական գործոց անզգոյշ և անդարձ մեղաւորաց, ահա՛ քեզ կրկին կատա-

բելութիւն երանութեան, առաջինն՝ մաքուր խորհրդոց մտաց և վարուց բարոյականութեան, երկրորդ՝ ճանաչելոյ զհրաման Աստուածային օրինաց՝ զորս ուսուցանեն սուրբ Գիրքս։ այսպէս է մշտայօժար կամաք ծառայել նոցին, յարգել զառաքինութիւնն արդեամբք և ատել զմեղանչական կիրս։

Ա. Հա՛ զայս երանութիւն գովաբանէ հոգենուագ մարգարէն Դաւիթ յառաջին երգս Սաղմոսարանին։ «Երանելի է այր, որ ո՛չ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, ի ճանապարհի մեղաւորաց նա ո՛չ եկաց, և յաթոռս ժանտից ո՛չ նստաւ։ Այլ յօրէնս Տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեսցի նա ի տուէ և ի գիշերի։ և եղեսցի նա որպէս ծառ՝ որ անկեալ է ի գնացս ջուրց։ Սաղմ. Ա. 1. 2։ Զայսն համառօտ իմն բովանդակէ այլուր։ «Երանեալ են ամբիծք ի ճանապարհի, և ոք գընան յօրէնս Տեառն։ Սաղմ. ճԺԸ. 1։

Տեսանեմ օրինապահ և առաքինասէր ընդերցող՝ զի երանութիւնս այս կրկին ունի զվայելչութիւնս, մին պահի հաստատեալ ի հանդերձեալ կեանս՝ յայտ յանդիման տեսութեամբ Աստուածային փառաց, և այս իսկ է անժխտելի վճիռ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ «Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի՛ անտցիկ՝ որք սուրբ են սրտիւք։ զի նոքա զԱստուած տեսցեն։ Մատթ. Ե. 6.—8։ Իսկ միւս երանութիւնն է ստանալ յանձինս մեր զհոգեւորական և զարիացուցիչ շնորհառատ օրհնութիւնս Աստուածայինս, և ահա այսու օրհնութեամբ երեւեցան յաշխարհի ատ դասք նահատակաց և Մարգարէից, երջանիկի սրբոց ընտրելոց, և սրբազան Առաքելոց։ Առ այս Աստուածային օրհնութիւնս իրաւամբք պանծայ երանելի առաքեալն Պօղոս։ «Օրհնեալ է Աստուած և Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս, որպէս ընտրեաց զմեզ նո-

վաւ. յառաջ քան զլինելն աշխարհի, լինիլ մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով։ Եփեսաց. Ա. 3։

Զարդասալիք բեղմնաւորութիւն այսր երանական և Աստուածային օրհնութեան՝ աչօք մարգարէական հոգւոյ տեսեալ երջանիկ սուրբ մարգարէն Երեմիա՝ յայտնի քարոզէ. «Օրհնեալ լիցի մարդն այն՝ որ յուսացաւ 'ի Տէր, և եղիցի Տէր յոյս նորա, և եղիցի որպէս զծառ զուարճացեալ 'ի գնացս ջուրց, ձգտեցուցեալ զարմատս իւր, և մի՛ երկիցէ. յորժամ հասանիցէ տօթ, և եղիցին տերեւն նորա անտառացեալ շուրջ զնովաւ, յամի երաշտութեան մի՛ երկիցէ, և մի՛ կասեսցի 'ի տալոյ զպտուղ»։ Երեմ. ԺԷ. 7, 8։

Զի՞է ինձ յուզել հետազօտել և որոնել աստի և անտի ապայոյոյս հաստատութեան բանից։ Ո՞չ ապաքէն սուրբ վարդապետն մեր Սարգիս շնորհալի՝ աստուածիմաստ մտօք խորհրդածելով զշնորհալոյս բանից Աստուածաշունչ սուրբ Գրոց՝ հոգեշարժ և իմաստալից յորդորակս ուղղեալ իսկ է առ մեզ գրելով այսօրինակ. «Եւ արդ մեք ստորերկրեայքս փառաւորեսցուք զԳրիստոս, զի և մեք յաւէտ վայելեսցուք 'ի շնորհս նորա, և զիութեամբ նորա անճառելոյն հաղորդ եղաք, և յարքայութիւն նորա կոչեցաք։ Արդ փառաւորեսցուք զնա՝ մի՛ միայն բանիւք, այլ և գործովք. և մի՛ գրչովք միայն, այլ և հաւատովք, և մի՛ հաւատովք միայն՝ այլ և յուսով, և սիրով, և խոնարհութեամբ և հեզութեամբ։ Եւ զի՞նչդ այսսուտ ամենայնիւ փառաւորեմք զնա՝ ասիցէ որ արդեօք, եթէ ընթերցուածոյ Գրոց միտ դնեմք, և զառ 'ի նոցանէն զշահն մեզ ամբարեմք. վասն զի չէ և չէ հնար յօգտակարացն և յԱստուածայնոյն և զոր 'ի փառս Աստուծոյ վերելանեն, բաստանալ առանց Գրոց վարդապետութեան։ Սորին վասն և Տէրն մեր յորդորէ զմեզ քննել զԳիրս, և զԱդուկեցիսն կշտամբեալ յանդիմանէ, որ մոլորեալքն էին, և ո՛չ գիտէին զԳիրս և ո՛չ զզօրութիւն Աստուծոյ։

Տեսանեմ, զի զօրութիւն Աստուծոյ՝ Գրոց գիտութեամբն ծանուցեալ լինի : Եւ զնոյն ինչն զԱստուած չկարէ ոք գիտել կամ պաշտել որպէս պարան է՝ առանց Գրոց գիտութեան : Լուր Պօղոսի. «Մինչ դիր՝ ասէ, ընթերցուածոյ Գրոց մինչեւ բութեան. մի՛ անտեսցէք առնելոյ զչորհայդ՝ որ 'ի քեզ են»: Եւ դարձեալ թէ. «Համբերութեամբ և մխիթարութեամբ Գրոցն զոյսն ընկալցուք, և դարձեալ, Ամենայն Գիրք Աստուածաշունչք և օգտակարք՝ 'ի խրատ և 'ի վարդապետութիւն մեզ գրեցան : Եւ Մովսէս հրամայէ խոսել 'ի նոսա, 'ի նստելի 'ի տան և 'ի գնալ 'ի ճանապարհի, 'ի ննջել և 'ի յառնել. և գրեա՛ զդոնսան ասէ, 'ի մերայ սեմոց տանց քոց և 'ի դրունս քոս. և զնոցի անշարժ առաջի աչաց քոց : Եւ Դաւիթ 'ի Սաղմոսարանի անդ ասէ. խորհել յօրէնս Տեառն 'ի տուէ և 'ի գիշերի, և այնու լինիլ որպէս ծառ՝ որ անկեալէ 'ի գնացս ջուրց, վասն զի՞ր ջուր գիտէ այնպէս զտունկս աճեցուցանել և պտղաւէտ և տերեւաշատ առնել՝ որպէս ընթերցուածք Աստուածային Գրոց՝ զմիտս : Եւ կամ՞ որ անձրև գիտէ՝ այնպէս սնուցանել զերկոյս և քաջուղիշ առնելոյ որպէս գիտութիւն Գրոց՝ զհոգիս ստուածասէրս :

Տեսանե՞ս, եթէ՞ որքան փոյթ եղև Քրիստոսի և ինքեանմբ և Առաքելովք և Մարգարէիւք յորդորել զմեզ յընթերցուածս Գրոց սրբոց՝ կրթասէր և խնամակալու լինելոյ ցանկ յայնմ պարապիլ 'ի գիշերի և 'ի առաւօտեան. 'ի նոյն աքսիլ գնոյն հոգալ միշտ 'ի նոյն խոսիլ և ինքեան կերակուր և ըմպելի հոգևոր՝ զնոյն վարժանել և ասել ընդ Մարգարէին. «Քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ : Եւ դարձեալ՝ Սիրեսցի զօրէնս քո քան զամենայն ոսկի և զտպազիոն : Եւ դարձեալ. Կանխեցի յառաւօտու խօսիլ ինձ զբանս քոս, և որք՝ 'ի սոյն միտս բերին» : Զ. Յորդորակ. Բ. Գլուխ :

Այսպիսին՝ սիրելի ընթերցող՝ նեղքին նուրբ նկատմամբ աչաց հոգւոյ նշմարեցեր զնմանատիպ տեսութիւնս Աստուա-

ծային պէսպէս շնորհաց յայտ յանդիման երևեալս Աստուածաշունչ Գիրս հին և նոր Կտակարանաց իբրև 'ի պարզ և յամենամաքուր հայելւոջ։ Ապա մի՛ երբէք դանդաղեսցուք, մի՛ ներիհսցուք կիսատեալ զաչս հոգւոյ մերոյ 'ի ներնջմելութեան կամ մոլորութեան, անձնատիրութեան և փութամելութեան, աշխարհասիրութեան և մարդահաճութեան, այլ արթուն և զգաստ հոգւով հայեսցուք, նկատեսցուք, ուշադիր լինիք Աստուածային բանից սուրբ Գրոց՝ առ 'ի ճանաչել զբարերար կամս Աստուծոյ արարչին մերոյ, և զամենանամամարդասիրութիւն զանազան շնորհաց նորին, որով ողողեսցուք զվարս գնացից մերոց յաշխարհի առատ, և 'ի հանդերձելումն երանութեան տեսութեան փառաց արժանասցուք։ Ահա այս է անժխտելի հրաման Աստուածային՝ ոչ բանիւ երջանիկ Մարգարէին Դաւթի պարտաւորէ զմեզ արթուն մտաք և անզբաղ խորհրդով միշտ հայիլ 'ի սուրբ Գիրս օրինաց Աստուածաշունչ մատենից։ «Դայեցարուք՝ ժողովուրդք յօրէնս իմ։ խնդարհեցուցէք զունկն ձեր 'ի բանս բերանոյ իմոյ»։ Սաղմոս. Հէ.։

Ապա երանելի արժանապէս նկատողաց զօրէնս Աստուծոյ լուսով Աստուածային շնորհաց, յորս Աստուածային բարութիւնք բացայայտ երևին։ Ահա զայս շնորհ զարթուցիչ խոշոր մասց հայցէր Մարգարէն՝ աղաչակելով։ «Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց 'ի սքանչելս օրինաց քոց»։ Որով կամի ասել. Տէ՛ր իմ. Արարիչ իմ. Աստուա՛ծ իմ ապրեա՛ յիս զշնորհս զարթուցիչս մասց իմոց. զի փարատեսցին նոքա խաւարային խորհուրդք շարաչար կրից իմոց. զարթո՛ զաչս իմ. Տէ՛ր. երկնային իմաստութեանդ ազդեցութեամբ. զի կարողացայց ճշշմարտապէս ճանաչել զօրինաց քոց բազմագիմի զօրութիւնս, և զշահաւէտութիւնս, զի մի՛ ծածկեսցեն զաչս հոգւոյ իմոյ զանազան պղտորմունք զիւական խաւարային խորհրդոց։ Ապա՝ Տէ՛ր. զարթո՛ զաչս իմ զի համարձակ հայեցայց 'ի ըս-

քանչելիս օրինաց քոց. և ուղղեցիր զընթացս վարուց և կեանաց իմոյ 'ի լուսաշաւիղ ճանապարհս օրինաց քոց :

Այո՛, ինդի՛ր ողջոյն, հայրենաց համեմատ Աստուածային բարերար կամաց, զի Հաստատիչն մարդկային հոգւոյ և մարմնոյ բարեաց հաստատեաց զսուրբ Դիրս հին և նոր Կտակարանաց, և կոչոյց առաջի աչաց հոգւոց մերոց իբրև սքանչելի ինն հայելի՝ տեսանել և ճանաչել 'ի նոսին զանչանչելի տեսութիւնս մարդասիրական շնորհաց և ամենայնակալի փառաց իւրոց, առ որ ունիմք զքրիստոսազգեցիկ քարոզութիւնս սրբազան Առաքելոյն Պողոսի. «Բայց մեք ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեառն իբրև ընդ հայելի տեսեալ 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս որպէս և 'ի Տեառն հոգւոյ» : Բ. Կորնթ. Գ. 18 :

Այսպա թշուառ և ողբալի է վիճակ այնպիսեաց՝ որ չարախոսվատ կամապաշտութեամբ և զանցաւութեամբ զաղդեցութեամբ Աստուածային բարեխնամ շնորհաց՝ կափուցանեն զսին տեսութեան մտաց իւրեանց : Յաղագս այսպիսեաց է այն սոսկալի վճիռ ահրունական. «Տեսանեն, և ոչ տեսանեն, և լսեն, և ոչ լսեն, և ոչ առնուն 'ի միտ : Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ՝ որ ասէ. «Լսելով լուիջք՝ և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք, և մի՛ տեսջիք : Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծանրանս լուան, և զաչս իւրեանց կափուցին զի մի՛ երբէք տեսցին աչօք, և ականջօք լուիցեն, և սրտիւք իմասցին, և դարձցին և բժշկեցից զնոսա» : Մատ. ԺԳ. 13—15 :—

Աստանօր արժան է ուշի ուշով և ամենայն խելամտութեամբ ընթեռնուլ զՇիրշս բացատրութիւնս վերոյդրեալ մարգարէական բանիցն՝ զոր երանելի սուրբ վարդապետն մեր Յովհան Ծորմորեցի հոգեզգօն վարդապետութեամբ գրէ. «Եւ զի հաւատութեամբ ամբաստանէ զնոցանէ Մարգարէն՝ ասէ. քանզի չասաց թէ չտեսանէք, այլ թէ տեսանէք և ոչ

տեսանէք. այսինքն մարմնով միայն և ոչ հոգւովք կամ տեսեալ չտեսանիցէք. քանզի անձամբ իսկ զանձանց իսկ խցին զականջս և կափուցին զաչս, թանձրացուցին զսիրտս իւրեանց, որպէս վահան կամ սալ դարձնի, և ոչ միայն չլսել կամիին, այլ և ծանուցս լսէին, այսինքն դժուարանային 'ի լուրն, և զայս էր վասն. զի մի երբէք տեսցին աչօք, և ականջքն լուիցեն, և սրտիւքն իմասցին, և դարձցին, և բժշկեցից զնոսա, այսինքն՝ զի մի դարձցին, և թողցի յանմախութիւն չարեաց նոցա, որով յայտ է, թէ կամաւ և յոժարութեամբ սրտի խուսափեցին. քանզի թէ կամեցեալ էին՝ մնալ էր դառնալ և բժշկութիւն ընդունիլ 'ի ձեռն ապաշխարութեան։ 'Ի Մեկն. Մատթ. ԺԳ։

Ա.ՐԴ՝ մի՝ ապախտ արասցուք աստանօր զսրտառուչ բանիւք սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի նարեկացւոյ՝ որ ամենախոնարհ ջերմեռանդութեամբ անձին իւրում ստղտանս դնելով վարդապետէ մեզ զարթնուլ 'ի միտս յասելն. «Քանզի զինչ վայելումն իցէ կեանքրոյն, եթէ անդգայեալ ցաւովք ուտիցեմ, և կամ զոր շահ Սաղմոսն ունիցի, եթէ ոչ 'ի միտ առնուցուս»։ Նարեկ. 'Ի բանն ԿԲ։

Ա.պաքէն արթուն մտօք, անդադար խորհրդով, և ամբիծ հաւատով ջերմեռանդութեան մտադիր լիցուք Աստուծաշունչս սուրբ Գրոց հին և նոր Կտակարանաց, և գործադիր լիցուք հոգեկեցոյց ազդեցութեանցն, զի և մեք արժանացուք երանութեան շնորհաց և փառաց Փրկչն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս ընկալան յԱստուածային շնորհաբուղխ բերանոյն անտի աւետարանեալ սրբազան դասք Առաքելոց. և ընդ նոսին ճշմարիտ հաւատացելոցն ժողովք. ըստ այմմ. «Բայց ձեր երանի՛է աչաց՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց զի լսեն»։ Մատթ. ԻԳ. 16։ Ղուկ. Ի. 23։

Ա.ՐԴ եթէ կամիցիմք սրտի մտօք փոքր 'ի շատէ ծանօթանալ խորհրդոց այսր ամենացանկալի երանութեան, ուշա-

գիր եղիցուք մեկնաբանութեան բանից երանելւոյն Յովհաննու Ծործորեցւոյն. «Ո՛չ զմարմնաւոր տեսանելեացս և լսելեացս ասէ՝ այլ զհոգւոյ աչաց և զսրբին լսելեացն. քանզի երևելի աչքք փարիսեցիքն և Հրէայքն տեսին զՔրիստոս. և զձայն նորա լուան. բայց ո՛չ հաւատացին. ապա ուրեմն երանէ զաչս և զականջս. զի այնպէս տեսանէին զՔրիստոս իբրև զՈրդի Աստուծոյ. և որպէս պատշաճ էր լսել որպէս Որդւոյն Աստուծոյ. այնպէս լսէին»: Ի Մեկն. Մատ. ԺԳ. :—

Արդ՝ եթէ փոյթ է մեզ. և կամիմք ուսանել. եթէ զի՞նչ է արթնութիւն մտաց՝ ահա՝ ՏԷՐ Ցխուս Հրամայէ. «Արթուն կացէք»: Մատթ. ԻԴ. 42: Իսկ. 13: Եւս և Սրբազան Առաքեալք ուսեալք զայս արթնութիւն հոգևոր Ի ճշմարիտ վարդապետէն իւրեանց քարոզէին. որպէս Պօղոս. «Եղարուք՝ մի գքնով անկանիցիմք որպէս այլքն. այլ արթունք և զուարթուք եղիցուք»: Ա. Թեսաղ. Ե. 6: Այնպէս և Պետրոս. «Արթուն լերուք և սկսիք. զի սատան ձեր սատանայ իբրև զառիւծ զոչէ. շրջի և խնդրէ. թէ զո՞ կլանիցէ»: Ա. Պետր. Ե. 8. :—

Այնպէս ուսուցանէ մեզ զայս մտաւորական արթնութիւն երանելին Խորով Անձևացւոց հոգեզգօն Եպիսկոպոսն մեր իբրև դասական վարդապետութիւն. «Զի՞նչ մտաց արթնութիւն և անդբօսութիւն խորհրդոյ՝ զբաղնուլ Ի հոգս և Ի ցանկութիւնս երկրաւորս. այլ յերկինս թռչուլ և զվերինն խորհիլ՝ զոր ինչ Աստուծոյ և Աստուածայնոցն. զի որպէս որք ենքն՝ չփարեն լուսոյ տեսօղք լինել և ո՛չ այլ իրաց. թէ և մերձաւոր իսկ իրքն կայցեն. այնպէս և մեք մարմնաւոր ցնորիւք թմրելք ո՛չ կարեն տեսանել զլոյսն անշիջանելի փառացն Աստուծոյ. որ զոգիս լուսաւորէ. և ոչ որ ինչ այնուհետև լուսոյն յերկնայնոցն տեսանի մաքուր ոգեացն»: Ի Մեկն. Ժամագր. երես. 272:

Ա՛ռ այս սուրբն Յովհան Ոսկեբերան ասէ. «Արթնութիւն

խղճի մտաց է զգայլ լինել յաւէտ ընդունել 'ի ներքս յիշողութեան խորհրդոց զարգելիչս բարեխոհ ուշադրութեանց խաւարային խորհրդոց մոլութեանց և մոլորութեանց։ Ի Մեկնութեան բանից Զօզոսի։ «Մի տայք տեղի սատանայի։» Եփեսաց. Դ. 27։

Այս արդարև չարաչար ՁՆասեն աչաց հոգւոյն խորհուրդք չարք. և կուրացուցանեն զտեսութիւն մտաց, որպէս գրէ սուրբ Կիւրեղ Հայրապետն Երուսաղէմայ. «Այրել այրեն մեղք զՁիսս հոգւոյ, և փշրեն խորտակեն զմտաւոր ոսկերս խորհրդոց. և շիջուցանեն զլուսաւորութիւն մտաց»։ Կոչուին Ընծայ. ՃառԵրրորդ։

Այս որ երանութեան չիցէ արժանի ըստ Գրիգորի Աստուածաբանի՝ որ աչալուրջ մտօք և բարեխոհ զգօնութեամբ մատչի յընթեռնուլ զԳիրս սուրբս, յորմէ ուսանի և ծանօթանայ՝ ոչ միայն պահանջմանց բարերար կամացն Աստուծոյ. այլ և ստանայ զեւր հոգւոյն փրկութիւն։ Ահա սորին ապացոյց յայտնի տեսանի 'ի սուրբ Գիրս Գործոց Առաքելոց, թէ «Այր մի Եթիոպացի ներքինի հզօր պաշտօնեայ Կանդակայ տիկնոջ. գանձապետ ամենայն արքունի գանձուց նորա, եկեալ էր յԵրուսաղէմ երկրպագանել Աստուծոյ ճշմարտի 'ի սուրբ ՏաճարՁի անդ. և մինչ դառնայր անդրէն յարքունիս՝ նըստեալ ի կառս իւր ընթեռնոյր սրտի մտօք զմարգարէութիւն Եսայեայ. և ընդ այն կողմանս անցանէր մի ոմն յԵօթանասունն և երկու աշակերտացն Քրիստոսի Փիլիպպոս անուն, որում ըստ ազգութեան հրեշտակի Աստուծոյ հրամայեցաւ երթալ մերձենալ 'ի կառս ներքինւոյն, և առեալ կալեալ զընթերցուն նորա, եհարց. զիա՞ն արդեօք զոր ընթեռնուցուսդ։ Ետ պատասխանի ներքինին. Զիա՞րդ կարիցեմ գիտել թէ զոր ոչ առաջնորդեսցէ ինձ»։ Եւ ապա ակնուանելով ներքինւոյն թէ Փիլիպպոս կարիցէ վարդապետել նմա, աղաչեաց զնա ելանել նստիլ ընդ նմա 'ի կառան, և գլուխ գրոյն՝ զոր ընթեռ-

նոյր։ էր՞ այս։ «Իբրև զուչխար 'ի սպանդ վարեցաւ, և իբրև զոչխար առաջի կտրչի իւրոյ անմռունչ։ այնպէս ոչ բանայ զբերան իւր։ 'ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ։ զի բառնին յերկրէ կեանք նորա»։ Եսայի։ ԾԳ։ 7։ Ապա ներքինին ասէ ցՓիլիպպոս։ «աղաչեմ զքեզ։ վասն ո՞յր ասէ Մարգարէն զայս։ վասն ինքեր, եթէ վասն այլոյ ուրուք»։ Եւ սկսաւ Փիլիպպոս զհրաշանպս քրիստոնէական հաւատոց տալ նմա կատարեալ ծանօթութեամբ վասն Յեսուսն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Փիլիպպոս խօսէր, և ներքինին ջերմեռանդն հոգւով ունկնդիր լինէր, Փիլիպպոս աւետարանէր, և Աստուած իսկ զներքինւոյն միտս լուսաւորէր, Փիլիպպոս բացայայտէր զմարգարէութիւն Եսայեայ, և 'ի սիրտս ներքինւոյն ճշմարտութիւն հաւատոյ հաստատեալ լինէր այնչափ՝ մինչ զի զճանապարհայն հասեալ 'ի ջուր ինչ՝ ասէ ներքինին։ «Ահաւասիկ ջուր։ զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ։ և ասէ Փիլիպպոս, եթէ հաւատաս բոլորով սրտիւ՝ մարթ է։ պատասխանի ետ և ասէ ներքինին։ հաւատամ, եթէ Յիսուս Քրիստոս որդի է Աստուծոյ։ Եւ հրամայեաց կացուցանել զկառն, և իջին երկոքեան 'ի ջուրն՝ Փիլիպպոս և ներքինին, և մկրտեաց զնա, և իբրև ելին 'ի ջրոյ անտի, Հոգին սուրբ եկն 'ի վերայ ներքինւոյն, և հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ոչ ևս ետես զնա ներքինին։ և գնայր զճանապարհն իւր ուրախութեամբ»։ Գործք Առաք։ Ը։ 34—39։

Աստուածոյ զկայ առցէ գրիչ մեր ընդլայնել ևս զճառս գովեստից Աստուածաշունչ սուրբ Գրոց։ այլ մատաղիր լիցուք յաւէտ հոգեշունչ բանից երանելեաց՝ մարգարէին Դաւթի, և առաքելոյն Պօղոսի։ որք պարզաբանեն զպէսպէս հոգեշահ զօրութիւնս սուրբ Գրոց՝ գրելով զայս ամենայն։ «Օրէնք Տեառն անբիծ են, և դարձուցանեն զհոգիս։ վկայութիւն Տեառն հաւատարիմ է, և իմաստուն առնէ զանշայս։ Սաղմ։ ԺԸ։ 8։

ՃԺԶ. 130 ։ «Մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն 'ի չար անդր մոլորեալք և մոլորեցուցանեն, այլ դու հաստատուն կայ՝ յոր ուսարդ և հաւատարիմ եղեր, գիտես ուստի ուսար, զի 'ի մանկութենէ զԳիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն, 'ի ձեռն հաւատոյն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս։ Ամենայն Գիրք Աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են, և 'ի յանդիմանութիւն և յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան, զի կատարեալ լիցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ։» Բ. Տիմ. Գ. 13—17 ։

ԳԼՈՒԽ. Դ.

Լոյս շնորհաց է յատկապէս քրիստոնէիցս հաւատալ 'ի մարգեղութիւն Քրիստոսի՝ որ եկն 'ի փրկութիւն բնութեանս մերոյ։

Աստանօր 'ի սուրբ Գիրս բացայայտ երևեալ առաջի մարտաւորական տեսութեան մերոյ սքանչելի զօրութիւնք և բազմատեսակ ներգործութիւնք Աստուածային պէսպէս շնորհաց, արդարև. տան մեզ հմտարձակութիւն պարծիլ իրաւամբ. զի ոչ միայն յայտնեցաւ մեզ 'ի սուրբ Գրոց նորին շքեղագոյն տեսութիւն, և ոչ միայն ճանաչեմք սեպհական հաւատով զերկնապարգև զերապանծ վայելչութիւնս փառազարթիչս հոգւոց, այլ և 'ի սիրտս և 'ի հոգիս մեր ընկալեալ ունիմք զանեղծանելի ներգործութիւնս ձրիական և անչափելի պարգևացն անտի Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ, ապա և մեք անկեղծ Քրիստոսապարգև հաւատով մերով կարեմք համարձակ ձայնակից լինել ընդ Աստուածարան Աւետարանչին Յովհաննու զոհարանութեամբ պարծելոյ եթէ «'ի լութենէ անտի նորա մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնորհաց, զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան՝ շնորհք և ճշմարտութիւնք 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։» Յովհ. Ա. 16։

Զի՛նչ քան զայս անբաւ և անչափ Աստուածային մարդասիրութեանն շնորհք. զոր բազում մասամբք և բազում օրինակաւք զուշակէին կանխաւ Մարգարէք. որպէս և այժմ յայտնի առնեն մեզ ճշմարտապատում բանք սրբոցն Աւետարանացն և հոգեւորոց քարոզութիւնք երջանիկ Առաքելոցն. որպէս զի անսահման և սքանչելի Աստուածային մեծութիւնն անբաւելն երկնի և երկրի անձն Որդւոյն Աստուծոյ մարդասիրական ամենառատ գթութեամբ յանձն էառ ըստ ամենայնի խոնարհիլ 'ի մեր մարդկային բնութիւն և ընդ Աստուածային անձին միաւորեալ անշփոթ անխառն ծնանիլ յամենամաքուր 'ի սուրբ կուսէն Մարիամայ. և հաճեցաւ ճշմարիտ Որդին Աստուծոյ որդի մարդոյ անուանիլ իսկապէս. ոչ միայն զմարդկային մեղապարտ բնութիւնս փրկել 'ի մեղաց. և ոչ միայն սրբարար և արդարացուցիչ ձրիական շնորհիւն զարդարել զնա. այլ և իւրում Աստուածային մեծութեանն և անեղական փառացն հաղորդս կացուցանել. ապա զնո՛ր զոհութիւնս և զնո՛ր երկրպագութեան սրտառանցն փառաբանութիւնս վերառաքել պարտաւորիմք մեք 'ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոյ Աստուածահաճոյ արդեամբք գործոյ բարութեան ։

Ա՜հա՛ զայս գերագոյն մեծութիւնս շնորհաց Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ հոգեբուղխ վարդապետութեամբն քարոզեաց Լուսաւորիչն մեր սուրբն Դրիգոր. «Զգուշակումն Մարգարէիցն. զքարոզութիւն Առաքելոցն. զվկայութիւն վաստակելոցն. որ նա ինքն է յէութեանն. որպէս և էին իսկ ։ Սակայն յորժամ կամեցաւ՝ էառ զմարդոյ կերպարանս. և զգեցաւ մարմին. և էջ 'ի մեր նմանութիւն. այն՝ որ բնաւն էր և անհաս յամենայն լրութեան յԱստուածութեան. և վասն մեր էջ 'ի չափաւորութիւն. և ամփոփեցաւ 'ի մարմին. բովանդակեցաւ ճշմարտութեամբ 'ի մարմնի. և ճշմարիտ իսկ մարդ եղև. և էջ յանարգութիւն՝ զի զմեզ բարձրացուսցէ. սակայն իւրով

Աստուածութեամբն յերկինս էր և յերկրի՝ առ Հօր և ընդ Հօր. և ամենայն սրբարանք հրամանաւ նորա շարժին ըստ իւրաքանչիւր կարգի կաղմելոյ. սակայն թէպէտ վասն մեր էջ յանարգութիւն. այլ կայ յիւրում բնութեանն՝ որպէս և ինքն իսկ ասէ թէ. Ես նայն եմ և ոչ փոփոխեցայ. զի թէպէտ ըստ կերպարանս էառ և զմարմին մարդկան. այլ խառնեաց միաւորեաց ընկղմեաց զմարմինն յԱստուածութեան իւրում»։ ՅԱղաթանգեղոս։

Սմին նման հրեշտակերան սուրբ վարդապետն մեր Նարեկացի զայսմ պաշտելի մարդասիրութենէ և զերկրպագելի շնորհացն առատութենէ՝ ի խորոց սրտի գոհաբանելով զրէ. «Որ եսդ և էիր միայն բովանդակ ամենեքին անպակասելի. առեր զմերս խնդալս համայն. զի՝ ի լրութենէն քումմէ լցուցեալս օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութեամբ մեզ՝ ի փրկութիւն. ի փառս և ի զովեստ անճառ բարձրութեան ահաւորիդ բարեբարութեան։ Նարեկ. ՝ի Բանն Ղ.Ե։

Տեսէք. մեծահաւատ և բարեպաշտ հարազատ որդիք մեր առաքելական. կաթուղիկէ. սուրբ Եկեղեցւոյ. ոգիսի Ջերմեռանդն և ողջամիտ հաւատով ճանաչեմք զմարդասիրական պէսպէս շնորհացն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ զզօրութիւնս և զներգործութիւնս. վասն որոյ գոհաբան լինիմք միաբան ուխտիւք. հոգւով և ճշմարտութեամբ երկրպագանելով մաղթեմք յաղօթս մեր այսպէս. «Աստուածդ մշանջենաւոր. Աստուածդ յաւիտենական. որ՝ ի սուրբ աշխարհս լոյս ծագեցար՝ և լուսաւորեցեր զմեզ՝ ի խաւարային մեղուց մերոյ։ Որ վասն մեր՝ ի չափաւորութիւն եկիր անչափդ Աստուած. և հեղեալ ծաւալեցեր զշնորհս Հոգւոյդ սրբոյ յարարածս քո. Այժմ և յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես ամենամեծդ Աստուած ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ՝ի ժամագիրս։

Ապա զայս հոգեւոր իմաստութիւն սրտի մտօք միշտ խնդրել պարտաւորիմք 'ի վերուստ անտի յԱստուծոյ, ըստ իմաստնացելոյն Սողոմոնի. «Նա և այն իմաստութիւն է, ճանաչել թէ յումմէ՞է շնորհն, անիկայ առաջի Տեառն, աղաչեցի զնա յամենայն սրտէ իմմէ»: Իմաստ. Ը. 20:

Եւ երանելի Առաքեալն Պօղոս գրէր առ ժողովուրդս: Եկեղեցւոյն Կորնթացւոց ողջամիտ և կենդանի հաւատով ճանաչել և քաջածանօթ լինել անբաւ շնորհաց և առատաձեռն մարդասիրութեան Յիսուսի, որ պարգևեցաւ բնութեան մերոյ զրկելոյ 'ի հոգեւորական փառաց և բարեաց, և այս ամենի բարերարեցաւ մեզ, այլ նոյն ինքն անբաւելին երկնի և երկրի անդարագիր և անվայրապակ մեծութիւնն այնչափ մարդասիրութեամբ խոնարհեցաւ յԱստուածային փառաց մեծ վայելչութենէն, խակապէս մարմնացաւ՝ մարդացաւ ծընաւ յամէնարանեալ 'ի սուրբ կուսէն, խանձարրօք պատեցաւ և յանդանից մտուր եղաւ՝ զխնարհական ցաւալի և վըշտակիր կեանս ազքատին ընտրեաց, որպէս զի զմեզ ազատեսցէ 'ի հոգեւոր ազքատութեան տառապանաց, և պարգևեսցէ իրաւամբք և արդարութեամբ զպակապէս շնորհս քաւութեան մեղաց, անմահ կենդանութեան՝ երկնային յաւիտենական փառաց ժառանգութեան: Զայս մեծ քարոզէ և անօթն ընտրութեան, «Քանզի գիտէք զշնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի վասն ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի զուք նորա աղքատութեամբն մեծասջիք.» Բ. Կորնթ. Ը. 9:

Ապա քէն պարտաւորիմք և ևս ամ միայն խոստովանել շընորհաց և անչափելի յաւէտ բարեմասնութեան և երանաւէտ փառաւորութեան հոգւոց մերոց զայն անսահման սիրոյ և հաճոյական ճանաչումն Յիսուսի Քրիստոսի, որով ճանաչէ զմեզ և արժանի կացուցանէ ժառանգութեան բարեաց և փառաց իւրոց՝ այլ և հարկ 'ի վերայ կայ մեր կենդանի հաւատով ուղիղ մտօք առեւտրական երջանկարուցիչ պատ-

աւիրանաց և խրատուց Յիսուսի Քրիստոսի հեւեալ և սրտի մտաք դաւանել զԱստուած՝ տէր և կենարար փրկիչ. և ամենիմաստ երկնաւոր վարդապետ. նա մանաւանդ իբրև ճշմարիտ և քաջ հովիւ ընդդրեալ մոլորեալ ոչխարի բնութեանս և վերստին դարձուցիչ յերկնային փարանն իւր երկնից արքայութեան սքանչելի խնամածութեամբ և Աստուածային սիրալիր հոգողութեամբ, որպէս և ինքն իսկ աւետարանեաց. «Եսեմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիմն և ճանաչիմ յիմոցն» Յովհան. Ժ. 14։

ԳԼՈՒԽ. Ե.

Հաւատք ճշմարիտ աստուածածանօթութեան՝ է շնորհ քրիստոնէիցս 'ի նախասահմանութենէն Աստուծոյ։

Յետ խորհրդածութեանց զաստուածահրաշ տնօրէնութեանց մարդեղութեան փրկչին մերոյ հարկ 'ի վերայ կայ մեր սատէն ծանօթութիւն ստանալ հայեցեալ 'ի հայելի Աստուածային Գրոց և 'ի բացատրութիւնս Աստուածաբան Հարց սրբոց. նախ՝ թէ զի՞նչ իցէ Աստուածային անվրէպ ճանաչումն. և երկրորդ՝ ո՞րպիսի ճանաչումն ունիլ հարկ է ճշմարիտ հաւատացելոցս առ Աստուած և առ Աստուածային, զորմէ վերոյ բացայայտեաց երկնաւոր փրկիչն, եթէ «ճանաչեմ զիմն և ճանաչիմ յիմոցն»։ Արդ Աստուածային ճանաչումն է նախասահմանեալ ընտրութիւն ժառանգաւորաց շնորհաց և փառաց իւրոց ըստ ամենայնի հնազանդելոց աստուածային բարերար և մարդասիրական կամաց համեմատ նախասահմանեալ ընտրութեան և պարգևեալ ձրիական շնորհացն, որք զարդիւնս Աստուածահաճոյ գործոց և վարուց յայտնելով յանձինս իւրեանց՝ ճանաչին զԱստուծոյ նախասահման ընտրութեամբն. ապա ուրեմն ճանաչումն Աստուծոյ գնի բազում անգամ փոխանակ հաւանելոյ. հաճելոյ. սիրելոյ. և ընտրելոյ. որպէս

ցուցանեն վկայութիւնքս։ «Մինչև ստեղծեալ էիր յորովայնէ գիտեմ զքեզ. և մինչև ելեալ էիր յարգանդէ սրբեցի զքեզ մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ։ Երեմ» Ա. 5 ։ Նաև. «Իբրև եսես Յիսուս զՆաթանայէլ. զի գայր առ նա ասէ վասն նորա. » Ահա այր իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ » ։ Այսու բանիւ Յիսուս յայտ առնէ զՆաթանայէլն զկիր Աստուածային ընտրութիւնն, զհաճութիւնն և զսիրելութիւնն, վասն որոյ մինչ ասաց Նաթանայէլ. » ուստի ճանաչես զիս « պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա, մինչև էր Փիլիպպոսի կոչեալ զքեզ. զի էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ։ Պատասխանի ետ նմա Նաթանայէլ և ասէ։ Ռաբբի, դուն ես Որդի Աստուծոյ. դուն ես թագաւոր Իսրայէլի » ։

Զայս նախասահմանեալ ընտրութիւն, զհրաւերումն և զհաճութիւնն Աստուծոյ երանելին Պօղոս ի բազում տեղիս գրէ » Դիտեմք՝ եթէ որոց սիրեցն զԱստուած յամենայնի գործս՝ յոգ՝ ի լեալ ի բարիս. որք հրաւիրանացն ի կոչեցան ։ Զի զորս յառաջն ճանաչէր. յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանս կից լիսել պատկերի որդւոյն իւրոյ՝ զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց ։ Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց, զնոսին և կոչեաց. և զորս կոչեացն՝ զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյցն. զնոսին և փառաւորս արար » Հռովմ. Ը. 28. — 30 ։— Որով և վճռակեցաք յառաջագոյն հրաւիրեալք ըստ յառաջագրութեան Աստուծոյ. որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամայ իւրոյ՝ լիսել մեզ ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս ի Քրիստոս ։ Եւ փեսաց. Ա. 11. 12 ։— » Որ փրկեաց զմեզ և կոչեաց ի կոչումն սուրբ ոչ ըստ գործոց մերոց՝ այլ ըստ իւրում յառաջագրութեան և շնորհաց. որ տուաւ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակսն յաւիտենից ։ Բ. Տիմ։ Ա. 9 ։ » Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ունի զկնիքս զայս. եթէ ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որք իւրն են. և ի բաց լիցի յանի-

բաւութենէ ամենայն՝ որ անուանէ զանուն Տեառն» Բ. Տիմ. Բ. 19։

Սուրբ Գրիգոր Նարեկացի հրեշտակերօն վարդապետն մեր 'ի ներբողն գասուց Առաքելոց գրէ.«Եւ եթէ ոչ հրաշալի գրեսցէ լսողաց. մերկասցի, բաց 'ի բաց երեւեսցի ծաղուկ ծոցոյ բանիս անեղծականս Ճառել զստեղծեալսդ ժամանակաւ, և գրեալս շնորհաւք որդիք էութեանն. և թէպէտ և ոչ ժամանակք ըստ անսահմանին՝ այլ սկիզբն գոյից յաւիտեանց. իբր հիմն ժամանակաց սկսեալք. ընտրեալք նախ քան զանիւթ էից աշխարհի։» Եւ 'ի բանս Շարականաց տես.» Որ հրաւիրեցեր զյառաջագոյն ընտրեալսն 'ի սկզբանէ աշխարհի 'ի հարանին անտապական. կշռելով յաւրախութիւն ընդ բաղմաբոյն յառաջասաս։»—»Զորս ընտրեցեր յառաջ դիտութեամբ զարժանացեալս անձինս տպաւորեալ 'ի նոսա զհոգի շնորհաց քոց. որով վանեալ հերքեցին զպատմաւ զեղ շնամին»։—» Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող. որ յառաջ դիտութեամբ բազփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ 'ի Պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր։»

Այսաբէն երանելիք են. որ Աստուածային մարդասիրական կամաց ընտրութեանն և ձրիատուր շնորհաց կոչման հետեւելով և համեմատորին առաքինանան Աստուածահաճոյ գործովք բարութեան. որով Աստուծոյ և Աստուածայնոցն արժանաւոր ճանաչող դատանին. և ճշմարիտ և կենդանի հաւատով առաջնորդեալք ժամանին յերկնային յաւիտենական փառաց ժառանգութիւնս. ըստ աւետարանական խոստման կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ եթէ. «Ոչխարք իմ ձայնի իմում լսեն. և ես ճանաչեմ զնոսա. և զկնի իմ գան. և ես տամ նոցա զկեանս յաւիտենականս. և մի՛ կորիցեն 'ի յաւիտեան. և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց իմոց.» Յովհան. Ժ. 27։

Բայց դու տես՝ ասասնաւոր ընդ հայաբանին սորին և ուսիր զոզբալի վիճակ յաւիտենական դատապարտութեան՝ ընդդէմ

Աստուածային զանազան շնորհաց ապերախտից՝ որք քրիստոնէական անուամբ և եթէ պանծան՝ և 'ի քրիստոնէավայել առաքինի գործոց 'ի սպառ հեռացեալ՝ 'ի զանազան անօրէնութիւնս մոլութեան և մոլորութեան զակատեալ անզղջ. անապաշխար զկեանս իւրեանց վճարեն, որոց սոսկալի վճիռն տուեալ յարքայութենին երկնաւոր դատաւորէն 'ի Յիսուսէ Քրիստոսէ, եթէ՝ «Ո՛չ ամենայն՝ որ ասէ ցիս. տէր տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է: Բազումք ասիցո՛ն ցիս յաւուրն յայնմիկ. տէր տէր. ոչ յանուն քո մարգարէացաք. և յանուն քո դեւս հանաք. և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք: Եւ յայնժամ ասացից նոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ: 'Ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ դուք գործէիք զանօրէնութիւն.» Մատթ. Է. 21. 22. 23:

Ապա փոյթ կալցուք առաջի սրտագիտի՛ն Աստուծոյ հաճելի կացուցանել զանձինս մեր առաքինագարդ հաւատովք հաստատուն և աներկրայ յուսովք և կատարեալ սիրովք. ունկնդիր լինցուք հողերուզն յորդորանայ Սրբազան Առաքելոյն Պօղոսի. որ առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր գրէր.» փութ ասէիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ. մշակ առանց ամօթոյ. ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան: Այլ 'ի պղծոց և 'ի սնոտի խօսից մերժեսջիր. զի առաւել յառաջ զայցեն յամբարշտութիւնս. և բանք նոցա իբրև զքաղցկեղ ճարակ զտանին. որոց սակի են Հիմենէոս և Փիլետոս, որք վրիպեցան 'ի ճշմարտութենէ.» Բ. Տիմ. Բ. 15.—18: Ա. Տիմոթ. Ա. 18. 19. 20:

Ուրեմն սրտի մտաք ըստ մարդարէին Դաւթի խնդրեսցուք զԱստուծոյ. զի լուսով շնորհաց խմաստանացուսցէ զմիտս մեր. և ընդարձակեսցէ զկամս մեր հանապազ ճանաչել զբարեբարեաց կամս իւր. և զհաճոյս նորա գործով կատարել արիաստուրք՝ ըստ այնմ.« Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես

Աստուած իմ։» Եւ թէ. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղղութեան։» Սղմ. ՃԽԳ. 11-12։ Եւ ջերմեռանդն հոգւով միշտ ապերասիկ լեցուք սրբոյն Նիկոսի Շնորհալւոյ մեծի Հայրապետին մերոյ վերակրկնելով զայս խնդրուածս առ Աստուած. «Խմաստութիւն հօր Թիսուս. տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհիլ՝ խօսիլ և գործել առաջի քո յաստենայն ժամ 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս։» և թէ՝ «Կամեցող բարեաց ՏԷր կամարար. մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց։»

Սուրբ Յովհան Ոսկեբերան 'ի բնարանի աստ սրբազան Առաքելոյն Պօղոսի. «Արդ՝ մարդկանն հաճոյ լինիցիմ. թէ Աստուծոյ. կամ խնդրիցեմ մարդկանն հաճոյ լինել՝ եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի. ապաքէն Քրիստոսի ծառայ չէի։» Գաղատ. Ա. 10։ յորդորանս գրէ. «Ցինչ շահ հոգւոց մերոց մեռեալ վայելչութեամբ աշխարհի փառաւորիլ 'ի մարդկանէ, և անարդիլ յԱստուծոյ. յաշխարհի աստ արդեամբ մարդահաճութեան զհանդիսան վայելել զանցաւորիս կենաց, և զյաւիտենականն 'ի սպառ կորուսանել զերանութիւն կենաց զվայելչութիւնս։ Եւ Դրիգոր Նարեկացի սուրբ վարդապետն մեր կարի խոնարհամիտ սրտիւ ստոյգանէ զհրեշտակրօն և զսրբափայլ անձն իւր յասելն. «Հրեշտականամ յերկնս՝ և 'ի խորհուրդս դիւանամ. 'ի յատս հաստատիմ՝ և 'ի մտս տատանիմ. սուտ ձեռանամ և իրօք խոտորիմ. կեղծաւորիմ արդար. և արդեամբք ստրարշանիմ՝ 'ի մարդկանէ գովիմ. և 'ի տեսողէդ պարտաւորիմ. 'ի հոգածնելոցս երանիմ. և յարդւոցն լուսոյ աւաղեմ. հաճոյանամ յետին ռամկին՝ և թագաւորիդ մեծի յաշաց ելանեմ։» Նարեկ. ՀԱ։

ԳԼՈՒԽ Զ.

Իսկական Նշան հաստատելոյ է շնորհ անկեղծ եղբայրութեան հանդերձ ապդասիրութեամբ։

Այդ ճշմարտութեամբ ճանաչելն մեր զԱստուծոյ բազմապարգև շնորհսն թէ կարենք ապացուցանել և յատուկ նշանաւ յայտնել, եթէ ոչ զի պարտաւոր ծանիցուք զանձինս մեր մտաց իւր սրտիւ և ամենայն յօժարութեամբ ծառայել բարերար կամաց նորա, զամենայն հրամանս՝ զորս յայտնեն մեզ սուրբ Գիրքս ամբիծ հաւատով և ջերմեռանդութեամբ կատարեսցուք, որով հաւատի լինի ճանաչելն մեր զԱստուծոյ անսահման արարչագործ մեծութիւնն, և զմարդասիրական բազմաշնորհ խնամածութիւնն, ապա թէ ոչ սոսկալի յանդիմանութիւնս տացէ մեզ Յիսուս Քրիստոս և մերժեսցէ յամենայնկալի շնորհաց և 'ի յաւիտենական փառաց իւրոց, ասելով՝ Չի՞ կոչէք զիս տէր, տէր, և զոր ասեմն ոչ առնէք։ Մատ Ի. 21. Ղուկաս. Զ. 46։ Մի՞ երբէք կուտնսցի 'ի մեր վերայ այն Աստուածային բարկութեան բան մեղադրանաց, որպէս երբեմն գանգատէր ամենախնամ բարերար Աստուածային արդարութիւնն զանպերախտ և զանպատամբ ազգին Իսրայէլի այսու բանիւ Մաղաքեայ մարգարէի՝ «Որդի փառաւոր առնէ զհայր, և ծառայ երկնչի 'ի տեառնէ իւրմէ. իսկ արդ՝ եթէ Հայր եմ ես, ուր են փառքն իմ, և եթէ տէր եմ ես՝ ուր է պատիւն իմ ասէ Տէր ամենակալ։» Ա. 6։

Այո՛, այս Աստուածային հայրախնամ շնորհաց և զթութեան և ամենակալ ամենակարող Տերութեանն ճշմարտապէս ծանօթանալոյն մեր կարևորագոյն պարտաւորութիւնն բացայայտ երևի 'ի հոգեշարժ և 'ի յորդորական զիրս Աստուածաբան Աւետարանչին Յովհաննու. «Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեալք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։ Որ ա-

սիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս նորս ոչ պահիցէ։ սուտ է՝ և ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ։ Որդեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք՝ այլ գործովքք և ճշմարտութեամբ։ Եւ այսուիկ լեցուք ծանուցեալք՝ եթէ ի ճշմարտութենէ անտի իցեմք, և առաջի նորա արասցուք հանդէս սրտից մերոց։» Ա. Յովհան. Բ. 3. 4։ Գ. 18. 19։

Ուշադիր լեցուք աստանօր հոգեշունչ բանից Սարգսի շնորհալւոյ սուրբ վարդապետին մերոյ՝ որ ասէ.» Զսան զի այս է արդարև ճշմարիտ ծանօթութիւն Աստուծոյ կամացն նորա լուծեմ, և պատուիրանացն կատարումն։ Իսկ որ յայսմիկ կատարեալ ոչ է, անկատար է և ծանօթութեան Աստուծոյ և ոչ գիտ։ Թէ ոմպիսի տեր ունի. և կամ զիարդ պարտական է պահել զպատուիրանս նորա, և կամ զիարդ ոչ պահելովն անծանօթ է ի նմանէ և բիւրապատիկ պատժապարտութեան արժանաւոր։» Բ. Յառ. Ա. Յովհան։

Ա. բացայայտագոյն ևս առնել զբան մեր ասեմք, եթէ նշան ճշմարիտ ծանաչման մեր Աստուծոյ և Աստուածայնոցն՝ եղբայրսիրութիւն և ազգասիրութիւնն է, զոր ամենագոյն և սրտաուչ Աստուածային բանիւ իւրով Նոր իմն սքանչելի շնորհիւ պատուիրան աւանդեաց մեզ Աստուած Փրկիչ մեր Յիսուս Քրիստոս, զի նովաւ լեցուք հաղորդ և կցորդ իւրեան իսկ անճառելի Աստուածային և ամբաւ մարդասիրութեանն։ Զսան որդ և հրամայեաց. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ. զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Այսչափ պատուէր իմ՝ զի սիրեսջիք զմիմեանս, որպէս ես զձեզ սիրեցի։ Դուք բարեկամք էք իմ՝ եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։ Զայս պատուիրեմ՝ զի սիրեսջիք զմիմեանս։» Յովհաննու՝ ԺԳ. 34. 35։ ԺԵ. 12. 14. 17։

Տեսէք ի՞նչարար, ով արդեօք իցէ հիմնադիր պատուիրա-

նայց. եթէ ուշ ինքն տէր Աստուած մեր և փրկիչն աշխարհի, ապա մի կարէ ժխտել և մերժել զայս պատուէր. և ո՞ կարիցէ առաւել քան զայս՝ ազգս վարդապետել մեզ զնդայրսիրութենէն, զոր շնորհաբուղխ աստուածային բանաձին պատուիրեաց մեզ։ Ուրեմն իրաւամբ զրեաց երանելի սրբազան Առաքեալն Պօղոս «Այլ վասն եղբայրսիրութեան՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ աստուածուսցեալք էք առ միմեանս սիրելոյ. Ա. Թեսաղ. Դ. 9։

Ցե՛ս. յո՛ր զերազանցութիւն փառաց և շնորհաց բարձրացուցանէ զմեզ կատարեալ սէրն. եթէ արդեամբք ցուցանիցեմք առ եղբարս. առ տէրմանիցս և առ հաւատակիցս մեր։ Այո՛ այս աստուածասէրման պատուէր առաքինութեանս սքանչելի մարդասիրութեանն անեղբական փառաց և պէսպէս շնորհաց հաղորդակիցս առնէ զՀոգիս մեր։ Լուր սրբազան Աւետարանչին Յովհաննու.» Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս. զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է Ծնեալ. և ճանաչէ զԱստուած։ զի Աստուած սէր է. և զի յայսմ երևեցաւ սէր Նորա'ի մեզ. զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհս. զի եղիցուք նովաւ կենդանիք։ եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած. և զեղբայր իւր ատիցէ՝ սուտ է։ Որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ. զԱստուած՝ զոր ոչն ետես. զնմանէ կարիցէ սիրել։» Ա. Յովհ. Դ. 7. 8. 9. 20։ Ըստ այսմ յօժարութեամբ հոգւոյ՝ և արթնութեամբ մտաց ընթերցասիրել փութասցուք զՀոգեբուղխ վարդապետութիւնս Սարգսի շնորհալւոյ սուրբ վարդապետին։ «Անեղբական բարիք և անձնամ խնդութիւն և անպտղման ուրախութիւն. եթէ զայն ինչ զոր Աստուած սեպհական ունի ամենաբարի բնութեամբն. մեք սեպհականեմք մահկանացու բնութեամբս մերով'ի ձեռն սիրելոյ զմիմեանս՝ և փոխարէն տրիտուր զղջութիւն Որդւոյն Աստուծոյ ժառանգել. վասն զի միածնի Որդւոյն Աստուծոյ այս

գործ եղև սիրել զաստուածայնս և զմարդայնսն։ Ո՛չ զի ինքն փառաւորեսցի, որ անկարօտն է փառաց, այլ զի զմեզ փառաւորեսցէ ի ծանօթութիւն Աստուծոյ ի վերս հանիցէ։ Նմին իրի և սա ասէ, որ սիրէ՝ յԱստուծոյ ծնեալ է և ճանաչէ զԱստուած. և թէ ճանաչէ զԱստուած՝ յորժամ սիրիցէ զերեցարն որպէս պարտն է սիրել։ Յորժամ բարիս համատանջիցն առնիցէ. վասն զի այս են տիրապէս կերպարանքն Աստուծոյ, և զայսոսիկ իսկ ունելով ոք ի յինքեանս՝ ճանաչէ զԱստուած։» Յառ. Ի. Ա. Յով։

Նամա՞ս Նկարագրել ի բարեխոհ միտս քո զամենազգեղեալ և զզանազան վայելչութիւնս եղբայսիրութեան. սես ի յետագայ Նկարագրութիւնս երջանիկ Առաքելոյն Պօղոսի, զոր ամենայն հանգամանսքն գծագրէ, յորում բացայայտ երևին կարևոր յատկութիւնք ճշմարիտ եղբայրսիրութեան։ Ա. Երկայնմտութեամբ զսղել զբարկութիւնն և զզայրացումն սրան։ Բ. Քաղցրաբարոյ և բարեացակամ հանդիսանալ ի բարեվարձակ բերմունս եղբարց։ Գ. Ընդ բարեղէպ յաջողութիւնս և ընդ բարիս եղբօրն ոչ երդիք նախանձիլ։ Դ. Զյօժարիլ և չսպասել ի վայելչասքանչութիւնս և յառաքինական գործս, գովութիւնս և պարծանս յեղբարց ընդունիլ և ամբարհաւաճիլ մտաք։ Ե. Ո՛չ երդիք զոռոզանալ և բարձրամտիլ ի գեղազանց և պերճաշուք երևիլն յամենասին, և ոչ զհետ լինիլ փառասիրութեան և մեծամտուն լինելոյ։ Զ. Ո՛չ համարձակել զանպարկեշտ և զանզգաստաբերս խօսիլ և գործել հանդուգն պարկեշտութեան և պատշաճանաց, օրով լինի գայթակղութիւն եղբարց։ Է. Ո՛չ անձին առանձին զգեստն և զարարն խնդրել անձնասիրութեամբ, և ոչ պարտպանել միայն զանձնական իրաւունս և վայելչութիւնս, այլ նախադասել զեղբօրն քան զնա։

Ը. Համբերատար հոգւով ի վնասիլն յեղբարց՝ ոչ զրդռիլ

'ի վրէժխնդրութիւն, այլ ջանալ և իշխել չարութիւն կրից և սանձահարել զնոցն։

Թ. Ո՛չ զիւրահաւան զտանիլ զբարսն ամբաստանողաց զեղբարց՝ ոչ ունելիք կարծիս զնոցանէ, և չտալ բնաւ 'ի սրտին տեղի առնել զնորհուրդ չար վասն եղբարց։

Ժ. Ո՛չ բերկրամիտս լինիլ յանիրաւի դատապարտիլն եղբարց և 'ի հարստահարիլն 'ի բռնաւորաց, այլ կարեկցաբար մխիթարել և զգաստութենէ նոցա հոգալ։

ԺԱ. Հոգեզուարճ բերկրութեամբ խնդամտիլ յաւէտ ընդ հաստատութիւն և ընդ անկեղծութիւն ճշմարիտ և Աստուածահաճոյ կրօնից ուղղափառութեան համազգի հաւատակից եղբարց։

ԺԲ. Համբերել՝ և տանիլ առանձին սիրելմանց և պակասութեանց եղբարց և տկարութեանց նոցին ըստ կարի օգնական լինելով նոցա բարոյական խրատաբանութեամբ։

ԺԳ. Ցուսիկ կասկածանս ինչ ստութեան և կամ խաբէութեան, այլ զոր ինչ բարիս վկայեն զեղբարցն արժանադատ անձանց դիւրաւ ընծայել հաւատս բարեմտութեամբ։

ԺԴ. Ո՛չ լինիլ յուսահատ 'ի դարձ և 'ի զղջումն չարախտակիր և մոլորեալ եղբօրն, այլ յուսալիր սրտիւ խնդրել Յաստուծոյ զկնորհ դարձի նորա։

ԺԵ. Կատարեալ եղբայրսիրութիւնն ջունի խոյս տալ 'ի նեղակրութեանց վասն եղբարց բարեբաւութեան և ազատութեան վշտացելոց, այլ մտադիր համբերել ձախորդութեանց 'ի փրկութիւն և յաղատութիւն նոցա։

Ահա զայս ամենայն առ 'ի ազդել 'ի միտս զրէ սրբազան Առաքեալն Պօղոս։ Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճի, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ զրդռի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն, ամենայնի տաէ,

ամենայնի հաւատայ, ամենևին յուսայ, ամենայնի համբերէ։
Ա. Կորնթ. Գ.Դ. 4. 5. 6։

Արդեօք կամի՞ս գիտել ով եղբայրասէր և ազգասէր, ողջամիտ և բարեսիրտ հաւատացեալ. եթէ զերկրպիսի և զերքան երջանկացուցիչ հոգւոց զերկնաձիր բարութիւնս և զնորքին զօրութիւնս յԱստուծոյ ընդունին ողջամիտքն և եղբայրասէրքն, որով ոչ միայն կարողանան յաղթել և սանձել զանձնական չարաչար կրիցն բռնադատութիւնս, այլ առաւել ևս արդիւնաւորին յառաքինական գործս, և յաւէտ հաճելի Աստուածային բարերար կամաց լեալ՝ հանդիսանան ճշմարիտ ճանաչող Աստուծոյ, որով և ճանաչին 'ի նմանէ, մանաւանդ սրտիւ և հոգւով մերձաւոր լինելով միշտ խնամասիրին և պաշտպանին 'ի նմանէ. վասն որոյ արժանապէս ընդունին զանստուեր լոյս շնորհացն՝ որ ըստ ամենայնի մերժէ զկաւաբ և զմոլար ճանապարհս, և յաւիտենական կենաց հաղորդ լինին, 'ի սպառ ազատեալ 'ի հոգեկորոյս մահաբեր մեղայ։ Իսկ հակառակ սմին ազգասեացք և եղբայրասեացք զչին յերանաւէտ Աստուածային բարեաց և փառաց, որպէս զրէ սրբազան Աւետարանչին Յովհաննէս. «Որ սիրէ զեղբայր իւր 'ի լոյս բնակի՝ և գայթակղութիւն 'ի նմա չիք. իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ 'ի խաւարի է, և ընդ խաւար շրջի, և ոչ գիտէ յո՞ երթայ. զի խաւարեալ ուրացոյց զաչս նորա։» և թէ՝ «Մեք գիտեմք, զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս։ իսկ որ ոչն սիրէ, անդէն 'ի մահուն մնայ։ Ամենայն որ ատեայ զեղբայր իւր, մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենական յանձին հաստատեալ». Ա. Յովհան. Բ. 10. 11. Դ. 14. 15։

Տես, զնաբդ, համոզէ զմիտս մեր հոգեյորդոր բանիւք վարդապետելով 'ի վերայ բնաբանիցս սրբազան Աւետարանչի՝ շնորհալի սուրբ վարդապետն մեր Սարգիս՝ գրելով այսպէս.» Տեսէ՞ք զսիրոյն փոխարէն. 'ի լոյս բնակի՝ ասէ. և այս ոչ փոքր

ինչ վասն զի լոյս իմանամք զՏէրն՝ որ ասաց .« Ես եմ լոյս աշխարհի»: Ապա յայտ է թէ որ զսէրն ունի՝ յԱստուած բնակի։ Եւ զի՞նչ ինչ այլ մեծադոյն արիւտուրս պարգևաց խնդրեսցէ. ոք քան զուսոյն բնակութիւնն, և զԱստուծոյ մերձաւորութիւնն։ «Եւ գայթակղութիւն. ասէ 'ի նմա չե՛ք»—Թուի թէ այս այն է՝ զոր Տէրն ասաց, «Որ գնայ 'ի տուն ջեան ոչ գայթակղի»: Արդ՝ որ սիրով ընկերին 'ի լոյս բնակի, աղատեալ է 'ի գայթակղութենէ մեղայ: Մեծաւ առաւելութեամբ դդատապարտութիւն ատեցողն եղբօրն 'ի կիր արկանէ. վասն զի վերադոյնն ասաց.որ ատէ զեղբայր իւր 'ի խաւարի է տակաւին, իսկ աստ ևս առաւելութեամբ դնէ զբանն. ընդ խաւար շրջի ասէ, և ոչ գիտէ յո՞ երթայ, էր վասն, զի խաւարն կուրացոյց զաչս նորա: Եւ այս սահման չարի՝ քան զամենայն չարիս է չարադոյն, ասելն՝ մոլորեալ 'ի ճանապարհէն՝ ոչ գիտէ յո՞ երթայ. վասն զի զառաջնորդն զսէր ոչ ունի, որպէս զի դարձեալ յարքունական ճանապարհն գնա վերածիցէ, այլ մոլորական շրջի թափառական 'ի պէսպէս զառածեալ և կորստեամբ դատապարտեալ: Եւ զայս Տէր մեր ասաց, կոյր կուրի յորժամ առաջնորդէ. սխալի՝ և երկոքեանն 'ի խորխորատ անկանին: Կոյր է ատելութիւնն, կոյր է և զաչացու մարդն առանց սիրոյ ընկերին: Արդ՝ որ զատելութիւնն առաջնորդ ստանայ, երկոքեանն 'ի խաւարն յղարկին: Չի խաւարն՝ ասէ, կուրացոյց զաչս նորա. կրկին և երեքկին չարիք. մի՝ զի 'ի խաւարի շրջի, և միւս ևս՝ զի ոչ գիտէ յո՞ երթայ, և դարձեալ զի խաւարն կուրացոյց զաչս նորա, այսինքն ատելութիւնն, զի գնա խաւար անուանէ: Իսկ աչս՝ ոչ զմարմնականն անուանէ. այլ զհոգեկան.» Գ. Ճառ. Ա. Յովհաննու: Եւ այլուր թէ՝ «Մեք գիտեմք. ասէ, այսինքն, հաւատացաք և ծանեաք և 'ի նոյն հաստատեցաք եթէ չեմք 'ի խաւարի՝ չեմք 'ի ստուեր մահու. էր վասն. վասն զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի կեանս: Չիարդ և որով եղանակաւ, զի սիրեմք. ասէ՝

զեղբարս, և այս գիտութիւն ոչ է ամենեցուն յայտնի, այլ միայն մեզ Քրիստոսի աշակերտացս՝ որք 'ի նմանէ ընկալաք զզօրութիւն գիտութեանս այսորիկ. և լուսաւոր արար մեզ զկեանս և զանեղծութիւն 'ի ձեռն սիրոյն՝ որով սիրեաց զմեզ ոգւով չափ, և զնոյն չափ սիրոյ հրամայեաց մեզ ուն իլ առ եղբարս, մեք գիտեմք, ասէ, զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի կեանս: Եւ արդ տեսցուք, եթէ զո՞ր ասէ մահ, և զո՞ր կեանս, վասն զի է մահ մեղաց՝ և է մահ ատելութեան. և է մահ մարմնոյ. նոյնգունակ է կեանք հոգւոյ, և կեանք սիրոյ, և է կեանք մարմնոյ: Եւ սոցունց ամենեցուն վկայութիւնք յայտնի են 'ի Գիրս սուրբս, որ ոք կամիցի ուսանիլ. մեզ այն է ասելի առ այժմ, եթէ յո՞ր մահուանէ, յո՞ր պիսի կենդանութիւն փոխեցաք սիրելով զեղբարս. «Այս է թէ յատելութեան մահուանէ և նախանձու, վասն զի է մահ ատելութեան և նախանձու, նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ՝ ասաց խնամատուն, և ատելութեամբ և նախանձու սպան Կայէն զեղբայր իւր»: Զ. ճառ. Ա. Յովհաննու: Ապա եղբայրասէր քրիստոնեայն խսկապէս ունի զքրիստոնէական վայելչութիւնս և արժանաւորութիւնս Աստուածային շնորհաց և վառաց, վասն զի սրտի մտօք Ծառայէ Աստուծոյ բարերար կամացն՝ իսկ եղբայրատեացն՝ անուամբ և եթէ կոչի քրիստոնեայ՝ բայց կամապաշտութեամբն՝ նախանձու և ատելութեամբն զկռապաշտութեանն բերէ յանձին զպիղծ նմանութիւնս, վասն որոյ սուրբն Գրիգոր Նարեկացի հրեշտակերօն վարդապետն մեր յորդորական բանիւ վարդապետէ: Մի պարծեսցի որ 'ի մարդկանէ բամբասաւորօք զենուորեալ նեսիւք զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիշտ է քօղով ծածկեալն. որ զկերպարանն միայն ունի և զոչ ախորժելիս զԱստեղծչին կատարէ.» Նարեկ. 'ի բանն ԽԸ:

Ինքնասցին այս ամենայն խորհուրդս ածութիւնք 'ի վերայ բանից հոգեկորոյս եղբայրատեցութեան վճռական բանիւ կենարարին

մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ հրամայէ այսպէս. «Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի, և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի, և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի 'ի գեհենն հրոյն»։ Մատ. Ե. 22։

ԳԼՈՒԽ Է։

Բաղմապիսի եղեն շնորհք սքանչելի Աստուածային մարգասիրութեան, զոով լոյս յայտնեցաւ մեզ Քրիստոս Յիսուս։

Ի սուրբ Գիրս յայտնի երևի բազմատեսակ լինելն Աստուածային շնորհաց, որք թէպէտ 'ի միոյ աղբերէ Աստուածային շնորհաց յառաջադային, բայց իւրաքանչիւրն արժանապէս ընդունողաց զանազան զօրութիւնս և ազդուութիւնս ներգործէ, ըստ այնմ.» Զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, որչափ ևս առաւել շնորհքն Աստուծոյ և պարգևքն շնորհաց միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի 'ի բազումս առաւելաւ։ Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է։ Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։ Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն յամենայնի։ Հռովմ. Ե. 15. Ա. Կորնթ. ԺԲ. 4. 5. 6։ Իւրաքանչիւր որ որպէս և ընկալաւ շնորհս ինչ 'ի միմեանս զնոյն մատակարարել իբրև զբարւոք հաղարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ.» Ա. Պետր. Դ. 10։ Եւս և Մարգարէն Դաւիթ յիշելով զշնորհ Աստուածային հայրապետութիւն խնամոյն՝ երգէր զայս խնդրելով մասնակցիլ զթութեանն շնորհաց.» Գթութիւնք քո բազում են Տէր, ըստ իրաւանց քոց կեցո զիս.» Սաղմոս. ՃԺԸ. 156։

Այսպէս հարկ իսկ է մեզ ասանօր ՅԱստուածային բաղմազան շնորհս ճանաչել եթէ՝ որն եղև մեր մարգկային

բնութեանս պարգևեալ յԱստուածային բարերար կամաց։ Ահա Աստուածարան վարդապետք ճշմարտութեան վկայութեամբ հին և նոր Կտակարանաց առաջին շնորհն անուանին զմարդասիրութիւն Աստուծոյ։

Լուր վկայութեանցս։» 'ի սէր յաւիտենական սիրեցի զքեզ. ՚ի մարդ. վասն այնորիկ ձգեցի զքեզ 'ի գթութիւն. Երեմ. Լա. 3։ Սուրբն Կիւրեղ Երուսաղէմայ Հայրապետն 'ի վերայ մարգարէական բանիցս գրէ.» Արդարև սէրն Աստուծոյ առ մարդկութիւնս յաւիտենական է և այնքան հնագոյն՝ զոր ունի առ ինքն»։

Ահա այսու մարդասիրական շնորհիս ամենակարող Տէր Աստուած մեր երկայնամիտ, գթած, ներող և ողորմած լինի 'ի վերայ մեր, ապասէ զղջման և ապաշխարութեան մեր.» Ողորմիս ամենեցուն՝ զի յամենայնի կարող ես, և անտես առնես զմեզ մարդկան ապաշխարութեամբ, զի սիրես զամենայն ինչ որ է, և ոչ զարշիս յումեքէ՝ զորս արարեր. . . . խնայես յամենեսեան, զի քո են Տէր ոգեսէր». Իմաստ. ԺԱ. 24. 26. 27։

Ո՞վ սքանչելի շնորհք Աստուածային սիրոյն առ մարդկային բնութիւնս, զորմէ գոհացեալ 'ի խորոց սրտի՝ և զնոյն բարեբանելով հոգերուղիս բանիւ գրէ սուրբն Գրիգոր Նարեկացի։ Ով ոք զօրացէ տնտնել հանդիսիս պարերգութեամբ 'ի մեզ կամեցուածոյ ցոլոյ քումդ բարութեան, որ ցանդ զեղերս պատրաստել պատմառս հնարից իմս փրկութեան։ Եւ զոր մեծն է գրեցից պատմել յայտանիսն՝ քանզի ոչ անուանեցար հրեշտակաբեր, որ և զպետութիւնս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս զամբարօք նոցին զմատանց քոց գործ. ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա, այլ առեր 'ի պատիւ մեծաց զովեստից առաջին զասեալ զմարդասիրութիւն. վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անճառ 'ի խորհուրդս սոսկալի, զերկնայինսն լուսակերպիցն կոչեցեր զնոսա սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակարարութեանց, իսկ զստորնային

ծնունդս մահկանացուաց տիրական և Աստուածական պաշտելի անուամբդ պերճացուցեր։ Նարեկ. Ի բան Լ։

Տես բարեխոհ մտաց աչօք զԱստուծոյ մարդասիրութեան շնորհ. որ է անսահման և յաւիտենական. Ծանիր զնորին զքանչելի և զդերադոյն նշան հիանալի հրեշտակաց և մարդկան. որ է մարդասէր Հօր Աստուծոյ էակից և փառակից Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս։ Յայս միտ բացայայտ աւետարանէ սրբազան Աւետարանիչն Յովհաննէս. «Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած՝ այլ զի նախ նա սիրեաց զմեզ և առաքեաց զորդին իւր Ի քաւութիւն մեղաց մերոց»։ Ա. Յովհան. Դ. 10։

Նկատել արժան է ասել. զի զոր ինչ լուաւ և ուսաւ Ի Ճշմարիտ երկնաւոր վարդապետէն իւրմէ սիրելի Աշակերտն. զնոյն խսկապէս աւետարանէ. վասն զի Ուսուցիչն Ճշմարտութեան Յիսուս Քրիստոս զկնի բազում հոգեկեցոյց և շնորհապարգև բանից իւրոց աւետարանեաց և զայս Նիկոդիմոս ասնուն Իշխանին. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ. մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ Ի նա. մի՛ կորիցէ՝ այլ ընկալցի զկեանս յաւիտենականս.» Յովհաննու Գ. 16։

Ի վերայ այսոցիկ աքանչելահրաշ աւետարանական բանից Աստուածխնամտութեան մտօք խորհրդածելով զարմանալ ինն վարդապետ Սարգիս շնորհալի. եթէ՝ «Յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ Ի մեզ. յայսմ ասէ. յո՞ր. զի զՈրդին միածին առաքեաց յաշխարհ»։ Արդարև ահագին նշանակ սիրոյ. և քան զամենայն միտս առաւելեալ քան զմարդկան և զհրեշտակաց. վասն զի ոմ ետես կամ ոմ լուաւ. եթէ մարդ ոք Ի մարդկանէ զմիածին որդի և զսիրելի վասն ծառայիցն պարտ բաշխի առնիցէ՝ և Ի չարաբանս տացէ զնա և Ի մահ. և մանաւանդ՝ ո՛չ վասն սիրելի ծառայից. այլ վասն ապերախտից. ապստամբաց և տեսոս անարդողաց։ Որպէս Հայրն երկնաւոր

առաքեաց զՈրդի իւր յաշխարհ զմիածին և զսիրելի, ուշ 'ի փառս և պատիւ կամ 'ի թագ արքայութեան, այլ 'ի նախատինս և 'ի թշնամանս՝ և 'ի մահ խակ գլխովին : Ի՞նչ վասն, կամ յաղագս ո՞ր պատճառի : Զի մեք ասէ, որ մեռեալ էաք և դատապարտեալ, եղեցուք նոքա կենդանիք: Զի եթէ կեանքն սակս մեռելոցն մեռաւ, մեռեալքն զի՞նչդ վասն կենացն ուշ լինիցին կենդանիք»։ Ի։ Ճառ։ Ա։ Յովհաննու։

Ապա պարտ իսկ է մեզ ճշմարիտ հաւատոյ ամրիծ աչօք ճանաչել զԱստուածային անճառ և յաւէրժական մարդասիրութեանն բաղմապիսի գերազոյն բարութիւնս և զառատաբաշխ պարգևաց լուութիւնս շնորհեալս մեզ : Ապա արթուն և զգաստ լեցուք չէտեւիլ դիւրաբաւ բնութեանս մերոյ զգայական բաղձանաց, որով յԱստուածային շնորհացն բարութենէ մեռցուք զրկեալս, մի՛ զանցաւորիս մարմնական շքեղութիւնս փառաց և պատուոյ, և զհնչութիւնս մարութեանց սիրեսցուք, այլ յաւէտ ողջամիտ հաւատոյ լուսով և առաքինական Աստուածահաճոյ գործովք փութասցուք դանձել 'ի հոգիս մեր զպէսպէս գանձս մեծամեծս Աստուածային պարգևաց : Յամենայնի զգուշասցուք՝ եղբարք, արթնութեամբ խղճի մտաց և պահպանութեամբ Աստուածային օրինաց և պատուիրանաց, զի մի՛ որսացեալ լեցուք 'ի կորստական խաբէութիւն մոլորեցուցիչ պատրանաց անսերելոյի թշնամւոյն հոգւոց մերոց չարահնար բանսարկութիւն : Ա։յլ ջերմեռանդն հաւատով սուրբ սրտիւ և լիակատար յուսով ուղղասցուք զվարդուրդս մտաց և զյաժարութիւն կամաց մերոց 'ի վերնանամ մարդասիրութիւնն և 'ի բաղմագութ տեսչութիւնն 'ի պարգևիչն անստուեր լուսոյ շնորհաց յամենակալ Հայրն Աստուած, յորմէ զմարդասիրականն երկնապարգև շնորհս ընկալեալ եմք : Ահա՛ զայս ամենայն զեկուցանէ մեզ սրբազան Առաքեալն Յակոբոս յորդորական բանիս՝ «Մի՛ խաբիք եղբարք իմ սիրելիք, զի ամենայն տուրք բարիք և ամե-

Նայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն և շրջելոյ ստուերս։ Յակոբ՝ Ա։ 16։

Աստանօր սրբազան Առաքեալն ոչ կամի միայն զարթուցանել զմիտս մեր չհետևիլ խաբէապատիր ունայնութեան փառաց և վայելչութեանց անցաւոր կենաց աշխարհիս, այլ ընդ նմին աւետարանել մեզ հոգւոյ աչօք ամրիծ հաւատոյ աչալուրջ նկատմամբ ճշմարտապէս ճանաչել և խոստովանիլ սրտի մտօք զմիանական սուրբ Երրորդութեանն զերկնաձնեայ Աստուածութիւն անեղական և իմանալի լոյս ճշմարիտ, որ ձրի պարգևիւն է սքանչելի լուսոյ պէսպէս շնորհաց և փառաց ըստ վիայութեան սուրբ Գրոց՝ «Ո՛չ ևս եղիցի քեզ արեգակն 'ի լոյս տուընջեան, և ոչ ծագումն լուսնի տայէ քեզ զլոյս գիշերի, այլ եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական, և փառք քո Աստուած»։ Եսայեայ։ Կ։ 19։ «Եթէ նստայց 'ի խաւարի, Տէր է իմ լոյս» Միքիայ։ Է։ 8։ «Տէր լոյս իմ և կեանք իմ» Սաղմ։ ԻԶ։ 1։ Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա և ասէ, «Ես եմ լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց։» Յովհան։ Ը։ 12։ Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ 'ի նմանէ և պատմեմք ձեզ։ զի Աստուած լոյս է և խաւար 'ի նմա չիք և ոչ մի։» Ա։ Յովհան։ Ա։ 5։

Արդ 'ի վերայ այսոցիկ բանից հրաշալի ելեն վարդապետն մեզ Սարգիս Շնորհալի։ «Արդարև ստուգապէս աւետիք և բիւրապատիկ ինչդութեան պատճառք, որ այնպիսի Աստուած ունիմք, որ ճառ նորա բարձր է քան զամենայն միտս, և լոյս նորա գերազանց է քան զամենայն բան։ Եւ զի ինքն լոյս է բնութեամբ և 'ի լուսոյ անտի սիրելն արարչագործութեան արար։ Եւ զի զոր օրինակ չգոյ 'ի նմա մասն խաւարի, նմանապէս և ոչ յարարածս իւր ըստ բնութեան, այլ եկամուտ 'ի մեղաց անտի ունիմք զխաւարն։ զի եկն լոյսն ճշմարիտ և լուսաւորեաց զմեզ։ և հաղորդս արար լուսաւորութեան

իւրոյ և Աստուածութեանն։ Արդ եթէ ասեմք, ասէ՝ եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա՝ և 'ի խաւարի շրջիմք, ստեմք և ոչ առնեմք զճշմարտութիւն։ Եթէ բանիւք միայն, ասէ՝ խոստովանիմք զայսոսիկ, եթէ բարեմասնութեանս այսմիկ արժանաւորք եղաք, և 'ի բարձրադոյն պատիւս յայս կոչեցաք, և անեզբական Աստուծոյ բարութեանցն հաղորդս դասք, և նորոգութեամբ աւազանին զՀնութիւն մեղացն մերկացաք, և զքրիստոս վերստին զգեցաք, և նորափետուր զարդարեցաք լուսաւոր պատմուճանաւն և կնքով պատկերին Աստուծոյ։ Եւ զկնի այսպիսի և այսքան դաւանութեան՝ զործովք 'ի խաւարի շրջիմք, ստեմք և ոչ առնեմք զճշմարտութիւնն։ Վասն զի այլ են ասացուածք բանից՝ և այլ արդիւնք զործոցն ճշմարտութեան։ Բ. Ճառ. Ա. Յովհան։

Տես աստանօր զպատշաճաւորն բաղդատութիւն, զոր առնէ սուրբ Գրիգոր Նարեկացին՝ համեմատելով ընդ Աստուածային անստուեր լուսոյն՝ զմարդկային ազիտութեան խաւարային խորհուրդս ընդ Աստուածային անեզբական բարութիւնն զհակամիտելն 'ի լերիս մարդկայինս տկարութեան. զորպիսի տկարութիւն 'ի վերայ անձին իւրոց բերելով զարմանալի խոնարհութեամբ նկարագրէ. «Դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար, դու իսկութեամբ բարի գովելի, և ես համոյնիւն չար ապիկար» Բան. Զգ։

Սրտի մտօք ուշադիր լեցուք նաև հոգևնուազ բանից մեծի Հայրապետին մերոյ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն, որ վասն ճշմարիտ և ուղղափառ խոստովանութեան առ միասնական երկրպագելի սուրբ Երրորդութիւնն՝ երգաբանեաց, «Լոյս արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալ 'ի լոյս անմատոյց։ Հայր երկնաւոր 'ի դասուց լուսեղինաց օրհնեալ։ 'Ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՝ 'ի հոգիս մեր զլոյս քո խմանալն։ Լոյս 'ի լուսոյ ծագումն արեգակն արդար, անձառ ծնունդ Հօր Որդի, յառաջ քան զարև անուն քո գովեալ ընդ Հօր, 'ի ծագել

լուսոյ առաւօտուս Ծագեա 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։ Լոյս 'ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան Հոգիդ սուրբ Աստուծոյ, մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարերանեն, 'ի Ծագել լուսոյ առաւօտուս՝ Ծագեա 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։ Լոյս երրեակ և մի անբաժանելի սուրբ Երրորդութիւն, զքեզ ընդ երկնայնոց երկրածինքս միշտ փառաւորեմք, 'ի Ծագել լուսոյ առաւօտուս՝ Ծագեա 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Յայսոցիկ Ճշմարտութեանց բացայայտ երևի ուղղափառ խոստովանութիւնն մեր յամենասուրբ Երրորդութիւն և յերեքանձնեայ միութիւնն, որոյ առաջին լոյս հաւատով խոստովանիմք զառաջին անձն զՀայրն Աստուած, որէ աղբիւր ամենայն բարութեանց և պարգեւաց, որպէս Առաքեալն Յակոբոս աւետարանէ մեզ. «Մի խաբիք եղբարք իմ սիրելիք. զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն և շրջելոյ ստուերք։ Յակ. Ա. 17։ — 'ի վերայ հրաշալի բանիցս բարոյական տեսութեամբ զնորհրդական բայտարութիւնս Ճշմարտաբանէ Սարգիս Շնորհալի յասելն՝ «Եւ դարձեալ ըստ ուղղեալ տեսութեան բանից՝ տուրս բարիս 'ի Հօրէ՝ իմանալի է մեզ զՈրդին, և պարգևս կատարեալս զՀոգին սուրբ. և զոյս 'ի գրոց վկայութենէ ունիմք հաւատարիմ առնել, որ 'ի բաղում տեղիս բաղում անգամ ցուցանեն տուրք Աստուծոյ՝ զՈրդին լինել, և պարգեւք՝ զՀոգին սուրբ։ Եւ մանաւանդ 'ի տէրունական բանիցն, ըստ այնմ «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ։ Եւ յայսմիկ երևեցաւ սէրն նորա 'ի մեզ՝ զի զանձն ետ վասն մեր։ Եւ այսպիսի սէր երբէք ոք ոչ կալցի, զի զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց. որպէս ես ասէ անձամբ իմով դնեմ

զանձն իմ։ Եւ ևս ևս «Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ մեզ 'ի ձեռն նորա»։ Եւ ըստ Եսայեայ՝ «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր»։ Եւ զարձեալ թէ. «Հայր առաքեաց զՈրդի իւր փրկիչ աշխարհի»։ Արդ առաքեաց զնա ոչ մերկ Աստուածութեամբն, զի անհնար էր տեսանել զնա արարածական բնութեամբ, զի մահկանացուն զմահկանացու 'ի մահուանէ փրկել ոչ կարէ, և դատապարտեալ զդատապարտեալ ազատել և մեղաւոր՝ զմեղաւոր արդարացուցանել. այլ ելն զդեցաւ զմերս և մերոյս սրբեաց զմեզ և արդարացոյց և փառաւոր արար։

Տեսէ՞ք՝ զի տուրքն բարի. ուր տարաւ կացոյց զմեզ. կամ ի՞մ իմիք զմեզ արժանի արար, աղատութեան, որդեգրութեան, արքայութեան, ընդ Աստուծոյ միաւորութեան։ Վասն զի իւր մարմնակիցս և հաղորդս և ժառանգակիցս զմեզ կացոյց. Նորին աղաչաւ ասէր առ Հայր. զորս ետուրն յաշխարհէ՝ քո էին և ինձ ետուր զնոսա։ Իսկ պարգևք կատարեալք՝ է Հոգին սուրբ. որպէս և կանխաւն ասացի և ոչ միայն պարգևք՝ այլ և ուսուցիչ և մխիթարիչ և կեցուցիչ և զայսոսիկ իսկապէս Տէրն մեր ինքնին ուսուցանէ։ Աղաչեցից ասէ. զՀայր, և այլ մխիթարիչ պարգևեսցէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի, զՀոգին ճշմարտութեան։ Եւ դարձեալ. «Բազում ինչ ունիմ ասել ձեզ. ասէ, այլ ոչ կարէք ուսանիլ այժմիկ. իսկ յորժամ եկեսցէ Հոգին ճշմարտութեան, ուսուցէ ձեզ զամենայն, զի յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ։ Եւ պարզապէս զանձառից կենաց օրինակս կամելով մեզ 'ի դէմս ածել, զորս ոչ երբէք ետես ակն կամ լուաւ ունկն, կամ 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ խոստմունք սիրելեացն, մեզ Աստուած յայտնեաց Հոգւովն իւրով, զի Հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ։ Եւ այսու ամենայնիւ մեծացուցանէ զկերպարանս պարգևացն։

§Եւ զսոյն փառաւորագոյն յայտնութիւն սրբոյ Երրորդութեան 'ի լեառն Թափոր, յորում առաւել և արտաքս փայլեցաւ և յայտնեցաւ Աստուածային դիմաց Յիսուսի Փրկչին մերոյ սքանչելի լոյս փառաց Աստուածութեանն և 'ի Հօրէն ամենակալէն վկայութիւնն սակս փառակցութեան և էական համադոյ որդիութեան մարմնացելոյն վասն մեր փրկութեան յայտնաբարար հռչակեցաւ ըստ գրութեանց սրբազան Աւետարանչայն։ — «Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն, և պայկերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս . . . : Ահա ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն՝ և ասէ, դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։ Մատ. ԺԷ. 1. Մարկ. Թ. 1. Ղուկաս. Թ. 28։

Տեսեր զդերագոյն զօրութիւնն և զԱստուածային մեծութիւնն և զփառաց լուսափայլութիւնն Յիսուսի Փրկչին մերոյ, որով և յԱստուծոյ Հօրէ վկայեալ ծաւալեցաւ յԱռաքեալս, յորոց երանելին Պետրոս պանծանօք վերահռչակէ. «Ո՛չ եթէ պատճուճեալ լինչ առասպելաց զկետ երթեալ ցուցաք ձեզ Յեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւնն և զգալուստն, այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն։ Քան զի առեալ յԱստուծոյ Հօրէ զփառս և զպատիւ եկեալ յայնպիսի բարբառոյ՝ 'ի մեծ վայելչութեան փառաց անտի, եթէ դա է Որդի իմ սիրելի, ընդ որ ես հաճեցայ։ Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք 'ի սուրբ լերինս։ Բ. Պետր. Ա. 16. 17։ Ահա այս ամենայն բանից տեսութիւն բացայայտ երեւի յայս բան սուրբ Աւետարանին. եթէ. «Եւ Յիսուս զարդանայր իմաստութեամբ, հասակաւ շնորհօք յԱստուծոյ և 'ի մարդկանէ։ 'Իմարդկանէ ասէ քանզի, ողջամիտ դիտողութեամբ զհամբաւելն 'ի մարդկանէ նորին

«քանչելի իմաստութեանն և ամենակարող զօրութեանն և շնորհաց լիութեանն պարտիմք իմանալ, որով փառաւորեալ իսկ լինէր յամենեցուն, ըստ անժխտելի վկայութեանց սրբոյն Ղուկասու, «եւ զարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն 'ի Գալիլեայ, և ել համբաւս զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին։ Եւ նա ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցուն, և թէ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին 'ի բերանոյ նորա» Ղուկ. Գ. 14. 15. — 22։ «Եւ եղև 'ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել 'ի ժողովրդեանն, և բազումք իբրև լսէին՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, և ասէին. ուստ'ի է սմա այս, և զի՞նչ է իմաստութիւն, որ տուեալ է սմա, զի զօրութիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինին։ Մարկ. Զ. 2։ — «Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս, և ընդ գիւղս ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զԱւետարանն արքայութեան և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս 'ի ժողովրդեանէ։ Մատթ. Թ. 35.։ «Յետ այսորիկ զնաց Յիսուս յայնկոյս Ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ, և զհետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր 'ի վերայ հիւանդաց»։ Յովհ. Զ. 1. 2։ Առ այս բազմապատիկ շնորհս սքանչելի զօրութեանց Քրիստոսի Աստուծոյ մերոյ վայելուչ հանդիսացի 'ի վերջ զլսոյս հոգեբուղխ փառաբանութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. «ԱստուածՅ անսահման, Ծնունդ Աստուծոյ հարազատ. անթարգմանելի, արարիչ բնաւին եղելոց. Քրիստոս թագաւորելոյս 'ի խաւարի սրտից մթացելոց, ընդ մեզ լսմամբ և ընդ առաքչիդ իսկութեամբ, մերովս զքոյինդ Ծանուցանող հրաշապէս։»

ԳԼԱԽ ԵՐԿՐՈՐԴ.

Բացատրութիւն սահմանի Շնորհացն Աստուծոյ։

Աստուածաբանք համառօտիւ զշնորհն Աստուծոյ սահմանեն «Գերբնական պարգև Աստուծոյ, ձրիապէս տուեալ բանական արարածոյ իւրոց յաղագս արդեանց փրկագործ տնօրէնութեանն Քրիստոսի»։

Արդ՝ ասի բնական, որով զանազանի 'ի բնական պարգեւացն Աստուծոյ առ մարդկութիւնս, որնախ՝ 'ի խնամառատ արարչագործութեան յատուկ շնորհօք փառազարդեաց զնոյն. զի յայնժամ մեխացոյց անմահութեամբ, խմացականութեամբ մտաց, և անձնիշխանութեամբ կամաց, որով անուանեցաւ մարդն պատկեր բնութեամբ բարւոյն Աստուծոյ, ըստ այնմ՝» եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա. Ծննդ. Ա. 27։ «Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւն, և 'ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա»։ Իմաստ. Բ. 23։ Զսոյն զայս ձիրս պարգեւաց առ մարդկութիւնս ճշդրիտ վարդապետեաց մեզ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ մեր. «Արդ՝ Հօրն Արարչի խորհուրդ 'ի մէջ եղեալ ընդ Արարչակից Որդւոյ և Հոգւոյ, իբրև զնորհուրդն առաջին 'ի նախաստեղծ մարդոյն. զի որպէս անդր ասաց թէ՝ Արասցուք մարդ 'ի նմանութիւն պատկերի կերպարանաց մերոց. և անդէն ստեղծեալ զԱդամ 'ի կենդանութիւն. 'ի չգոյէն հաստատեցաւ»։ ՅԱդաթ. երես 117։ Եւ և 'ի Շարականի. «Որ զկերպարանն Աստուածային ստեղծեալ Երրորդութեանդ խորհրդակցութեամբ, զարդարեցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար»։ Երկրորդ՝ մարդս գտաւ ընդունակ Աստուածային պէսպէս պարգեւաց, և ժառանգութեան Աստուածային յաւիտենական կենաց։ Ահա զայս ամենայն նրկատեալ հոգետես իմաստութեամբ և երանաւետապէս Աստուա-

Ծային ձրիատուր պարգեւացն զանձն իւր խոստովանեալ երջանիկ Մարգարէն Դաւիթ և միանգամայն 'ի վեր քան ըզհասողութիւն մտաց երգեաց գոհաբանութեամբ այսպէս. «Ահա դու ցէր Ծանեար զյետին իմ, և զառաջին իմ, դու ստեղծեր զիս, և եդեր զձեռն քո 'ի վերայ իմ։ Աքանչելի եղև գիտութիւն քոյինէն, զօրացաւ և ոչ հանդարտեմ սմա»։ Սաղմոս. ՃԼԸ. 3. 4։ Եւ երանելի Առաքեալն Պօղոս յաղագս հոգւոյն մերոյ ընդունակ լինելոյ Աստուածային շնորհաց և փառաց պանծանօք գրէ. «Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառն տեառն իբրև ընդ հայելի տեսեալ 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս, որպէս և տեառն հոգւոյ»։ Բ. Կորնթ. Գ. 18։

Երրորդ՝ պատուեաց Աստուած զմարդն, զի նախ քան զստեղծանելն զնա՝ զյատուկ շնորհ մարդասիրութեան իւրոյ եցոյց նմա, ստեղծանելով 'ի վայելս նորա զամենայն կարեւոր պիտոյս կենցաղավարութեան՝ յաշխարհի աստ. ըստ այնմ՝ «Երկինք երկնից տեառն են՝ և զերկիրս ետ որդւոց մարդկան». (այս է, տեառն Աստուծոյ բարձրագոյն փառաց վայելչութիւնն 'ի վեր է քան զերեւելիս, և զերեւելի վայելչութիւնս և բարութիւնս երկրի նախահոգութեամբ արարչագործեալ շնորհաց ազգի մարդկան). Սաղմոս. ՃԺԳ. 24։ Յաղագս այսորիկ գրէ սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր. «Արար Աստուած զերեւելի արարածս զգայական, առ դարմանս մարդկան կենաց, որպէս երկինք ամպով և ցօղով և լուսաւորօք խնամէ և հասուցանէ զպտուղս բուսոց և անկոց։ Որոց բուսոց պիտոյանն ըստ ժամանակին հովուց և Ջերմութեան, որ սնուցանէ և անվնաս պահէ։ Զրովն ոռոգանէ զերկիր, և արբուցանէ զմարդիկ և զանասունս և զգազանս և զթռչունս, և զամենայն զեռունս և զսողունս, որ ունին շունչ կենդանի.» Յաճախ. ՃԱՌ. Է։

Ահա այս ամենայն բնական պարգևք Աստուծոյ՝ որք են

խսկապէս շնորհք ձրի պարգեւեալ յԱստուծոյ մարդկան. զորս հասարակաբար վայելեն մարդիկ շարք և բարիք։ Ըստ այնմ։ Զարեղանն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Մատթ. Ե. 45։ Ուստի երգեաց երջանիկ Մարգարէն Դաւիթ՝։ Գթած, ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ։ Քաղցր է Տէր առ ամենեսեան, և գթութիւն նորա 'ի վերայ ամենայն արարածոց իւրոց։ Սաղմ. ՃԽԴ. 8. 9։ Զորրորդ՝ ասի շնորհքն՝ Նոր-Օրէնք։ յոր նկատեալ՝ յայտնի երեւի թէ բնութեան մարդկային պարգեւեցաւ յԱստուծոյ՝ առ իւրաքանչիւրս ձրիապէս առանց նախընթաց արդեանց. սակայն որպէս վրկայէ Առաքեալն Պօղոս. « Իսկ եթէ շնորհօք ոչ ևս 'ի գործոյ ապա թէ ոչ. շնորհքն ոչ ևս շնորհք լինին.» Հռովմ. Դ. 6։ Զի այլ է շնորհն ձրիապարգև, և այլ է վարձուց հատուցումն յԱստուծոյ ըստ վաստակոց առաքինութեանց Աստուածահաճոյ արանց երանական փառօք և լուսեղէն պսակօք յարքայութեան երկնից։ Ցաղագս որոյ գրէ դարձեալ երանելի Առաքեալն.« Բայց այնմ՝ որ գործիցեն, ոչ համարին վարձքն ըստ շնորհաց. այլ ըստ պարտեաց։ Հռովմ. Դ. 4։

Տեսա՞ր. զի այլ է հատուցումն վարձուց ըստ գործոց և արդեանց առաքինացելոյն առաջի Աստուծոյ. ըստ այնմ։ Երանի՜ է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ, և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք. զի վարձք ձեր բազում են յերկինս։ Մատթ. Ե. 11. 12։ Մարկոս. Թ. 40։ Ղուկ. Զ. 22. 23։ « Իւրաքանչիւր որ զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց։ Ա. Կորնթ. Գ. 8։« Արդ մի՛ մերժէք 'ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն։ Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն։ Եբրայ. Ժ. 35. 36։

Ապա գերբնական պարգևն Աստուածային անկախ յար-

գեանց մերոց է ձիրք ձրի շնորհեալ մեզ։ բայց հարկ է մեզ չը-մերժել զնոյն լարաչար վարուք և հակառակ ձրիատուր շնոր-հացն Աստուծոյ ունիլ գործս մոլութեան, որք հեռացուցա-նեն զԱստուածային շնորհն։ Արդարև ցաւակցարար 'ի վերայ այնպիսեաց արտասուել և լալ արժան է, զոր յայտնի եցոյց մեզ աղբիւրն շնորհաց Յիսուս Փրկիչն մեր. որպէս գրէ Ա-ւետարանիչն Ղուկաս. «Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքա-ղաքն ելաց 'ի վերայ նորա. և ասէ. եթէ գիտէիր դու գոնէ յաւուր յայսմիկ զխաղաղութիւն քո, բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց։ » Ղուկաս. ԺԹ. 41·42։

Եւ տես սրբազան Առաքեալն Պօղոս, զի բազումք 'ինոր հա-ւատացելոց անտի ունայնացուցանել կամէին զզօրութիւն խաչին Քրիստոսի կամապաշտութեամբ իւրեանց և մոլի վարուք մշ-տայօժար լինելով յանձնասիրութիւնս, նա մանաւանդ հա-կառակէին յայտնի անժխտելի վարդապետութեան քրիստոսա-կան կրօնի սրբութեան՝ և եկեղեցւոյ կարգաց և աւանդու-թեանց, վասն որոյ ըստ ճշմարիտ երկնաւոր վարդապետին Յի-սուսի Քրիստոսի՝ արտասուելով 'ի վերայ հոգևոր թշուառու-թեան նոցա գրեաց այսպէս. «Լալով իսկ ասեմ զթ շնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուստ է, որոց աստուած որովայնն իւրեանց է, և փառք ամօթն իւրեանց, որք զերկրա-ւորս և եթէ խորհին։ » Փիլիպ. Գ. 18· 19։

Աստուած թէ՝ [illegible] զոր սրբազան Առաքեալն Պօղոս քաղցրու-թիւն և մարդասիրութիւն Աստուծոյ անուանէ, որ Յիսու-սի Քրիստոսի փրկարար մարդեղութեան խորհրդովն յայտ-նեալ երևեցաւ. «Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրու-թիւն Փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ։ Ոչ 'ի գործոց արդարութեան զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմու-թեան ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծնն-դեան և նորոգութեան Հոգւոյն սրբոյ։ Տիտ. Գ. 4· 5։

Քանիր բարեմիտ ընթերցող. զի այս շնորհ փրկագործութեան Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայնժամ յայտնեցաւ մեզ. մինչ մեք 'ի վիճակի դատապարտութեան էաք իրաւամբ արժանացեալ. բայց յորժամ կամեցաւ վերնախնամ մարդասէր բարերարութիւնն իրրև Հայր գթած և ամենողորմ. զձիրատուր շնորհն պարգևեաց մեզ զՅիսուս Քրիստոս զէակից զՈրդին իւր. որով բազմապեսի շնորհաց Նորին արժանաւորեցաք։ Այս անեղական պարգև Աստուածային լոյս է սքանչելի. և ուր ուրեք հրաշափառ փայլի և տարածի. մերժէ անտի զխաւար հեթանոսական հոգեկորոյս ցանկութեան, և փառամոլութեան, և լուսաւորէ զանասութիւն մտաց ճանաչել բարւոք և ստանալ սիրով զարդիւնս զգաստութեան, ժուժկալութեան, մաքուր վարուց և Աստուածպաշտութեան, որով յաջողեսցի ամբիծ հաւատով և կատարեալ յուսով զարդարեալ հոգւոյն հասանել յաւէժական փառաց երկնից արքայութեան։ Ահա 'ի վարդապետել մեզ զայս ամենայն՝ գրէ սրբազան Առաքեալն Պօղոս. «Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան. որ խրատէ զմեզ՝ զի ուրացուք զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւն. զգաստութեամբ և արդարութեամբ և Աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի. և ակնկալցուք երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի». Տիտոս. Բ. 11. 12։ Զայս ամենայն ճշիգական պարգևս Աստուածային մարդասիրութեանն հոգեկիր մտօք նկատեալ և բարերանեալ զնոյն ինքն զաղաչիւն շնորհաց՝ ուրն Գրիգոր Նարեկացի գրէ. «Եւ արդ զու միայն Աստուած երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ. քո է զօրութիւն. քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն. քո են պարգևք. քո միայնոյ են ձիրք»։ Նար. ԺԶ։ Եւ Սարգիս Շնորհալի 'ի նոյն միտս ճառէ. «Այն շնորհք որ Յաստուածութենէ անտի մեզ պարգևի, ձիր է և ոչ առաքինութեան յաղթանակ. պարգևք է. այլ ոչ արդարութեան հա-

տուցումն. մարդասիրութիւն է. այլ ոչ փոխարինաց տուրք. որպէս զի այնու արտաքոյ արժանեաց զմեզ երանելիս արասցէ.» Ա. Հաս. Ա. Պետր :

Ի սահմանի ասացաւ «Բարեկամ դիտիցես», որով յայտնի լինի թէ՝ ոչ ամենայն էակ է արժանացեալ և ընդունակ ձրիական շնորհացս, այլ միայն մարդիկ՝ որք են բանականք զարդարեալ անմահական հոգւով և ծոխացեալ մտօք և կամօք անձնիշխանութեան. ապա որդիք մարդկան արժանացան զերազոյն շնորհաց մարդասիրին Աստուծոյ. և կարողացան ճանաչել և գանձել 'ի սրտի զբազմատեսակ բարութիւնս երկնաւոր պարգևացն, և վայելեցին զփրկարար արդիւնս շնորհաց և զերանաւէտ վայելչութիւնս փառաց և կենաց. վասն որոյ մարդիկ միայն կարեն պարծանօք խոստովանիլ ձայնակցեալ ընդ Աստուածաբան սրբոյ Աւետարանչին Յովհաննու. եթէ՝ «Զի 'ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց. զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան. շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն.» Յովհան. Ա. 16. 17 : Յեսու. հրեշտակին քարոզեաց մարդկան ծագեալ 'ի նոսա զանեղական շնորհացն զոյս աւետարանելով յերկնից զփրկարար աքանչելի յայտնութիւնն. քանզի դասուց երկնային զուարթնոց ևս յայտնեցաւ. եթէ յաւիտենական թագաւորն և Տէրն տէրանց հաճեալ է շնորհել ազգի մարդկան զիւր երկնից արքայութեան փառաց վայելչութիւնս. վասն որոյ ոչ միայն աւետարանեցաւ երջանիկ հովուացն 'ի հրեշտակէն փրկութեան շնորհ. եթէ «Աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ. որ եղիցի ամենայն ժողովրդեան. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ»: Այլ և տես զինչ գրէ Աւետարանիչն. «Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ՝ բազմութիւն զօրաց երկնաւորաց՝ որք օրհնէին զԱստուած և ասէին՝ փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն. 'ի մարդիկ հաճութիւն». Ղուկաս. Բ. 10. 13. 14 :

Տեսանեմ. բարեմիտ ընթերցող, զի ամենայն ձրիատուր պարգեւք փրկագործ տնօրէնութեան Յիսուսի Քրիստոսի շնորհեցաւ միայն ազգի մարդկան, ուստի 'ի Հանգանակի անդ հաւատոյ խոստովանիմք և ասեմ. «Որ յաղագս մեր մարդկան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալապէս 'ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն սրբով»։

Երանելի Առաքեալն Պօղոս յաղագս այսր Աստուածային մարդասիրական շնորհաց փրկագործութեան գրէ. «Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ.» Երբայ. Բ. 16։ Եւ երջանիկ սուրբ վարդապետն մեր Ներսէս Լամբրոնացի 'ի մեկնութեան Սաղմոսի յայս բան՝ «Ո՞վ է մարդ՝ զի յիշես զնա. կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արասցես զնա». զրէ զարմացմամբ, «Տէր զի՞նչ տեսեր 'ի մարդն, զի այդչափ սիրեցեր զնա. այդչափ աշխատեցար 'ի վերայ նորա. զհրեշտակս 'ի ներքոյ պատժոց թողեր, և զմանէ բուռն հարեալ կանգնեցեր. երկնից և երկրի սիրող զքեզ չասացեր, և մարդասէր անուամբ պարծէիր»։

Աստանօր նկատեսցուք զվերջին բան սահմանի շնորհացն «ԷՐԵՔ ՈՒՐԵՔՆ ԵՒ ԴՈՒՔՆ ԲԷՐԵՑԷ» վասն զի ազատեալ և փրկեալ եմք 'ի սոսկալի դատապարտութենէ սկզբնական մեղաց և արդարացեալ ժառանգորդ երկնային փառաց արքայութեան լինիլ յուսամք՝ ոչ մերովք ինչ արդարութեամբք Աստուածահաճոյ գործոց. այլ միայն Յիսուսի Քրիստոսի փրկագործ տնօրէնութեան արդեամբք և արդարացուցիչ ձրիատուր շնորհօք նորին մարդասիրութեան. վասն այսորիկ սրբազան Առաքեալն Պօղոս բազդատական ձեռնարկութեամբ ցուցանէ զանչափ զօրութիւնն և զամենաառատ ծաւալումն շնորհաց Յիսուսի Քրիստոսի և զառաւելութիւն ամենաբաւական արդանց նորին փրկագործութեան. ևս և յայտնէ զբարձումն դատապարտութեան սկզբնական մեղաց՝ որով ապականեալ էր բովանդակ բնութիւնս. և թէ յաղթեաց արդա-

բացուցիչ լեութիւնն շնորհաց Յիսուսի Փրկչին մերոյ հոգեկորոյս զօրութեան մեղաց. վասն որոյ համեմատելով զյանցանս բովանդակ մարդկային սակարութեան ընդ Քրիստոսի Փրկչին մերոյ առատաձիր շնորհացն լեութեան և փրկարար արդեանցն զօրութեան, գրէ. «Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն, զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, որչափ ևս առաւել շնորհքն Աստուծոյ և պարգևքն՝ շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի 'ի բազումս առաւելու։ Զի եթէ 'ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն. որչափ ևս առաւել ոք զառաւելութիւն շնորհաց և զպարգևաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն 'ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի։ Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս և հնազանդութեամբ միոյն արդարք բազումք եղիցին։ Զի որպէս թագաւորեցին մեղքն 'ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ 'ի կեանսն յաւիտենից 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ». Հռովմ. Ե. 15. 17. 19. 21։

Այսու ամենայնիւ զօրացուցանել և քաջալերել փութացաւ երանելի Առաքեալս զհաւատս և զյոյս հաւատացելոց աւետելով այսպէս. «Ունիմք այսուհետև եղբարք համարձակութիւն 'ի մուտս սրբութեան արեամբն Յիսուսի, որ նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի 'ի ձեռն վարագուրին այսինքն մարմնոյն իւրոյ.» Երր. Ժ. 19. 20։

Արդ՝ երանելի Առաքեալն Պետրոս ջանայ առաւել քան հաւատալ զմիտս քրիստոնէից 'ի հաւատս և 'ի յոյս. մանաւանդ ճգնել յորդորել զամենեսեան 'ի սէր նեղութեան և չարչարանաց վասն անչափ սիրոյն Յիսուսի Քրիստոսի, արդարև մեծագոյն պատիւ և անեղբական փառք վասն երկրպագելի անուան նորա վիշտս և չարչարանս կրել. որպիսիք էին երանելասուրբ վկայքն Յիսուսի, վասն որոյ գրէ. «Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր 'ի յաւիտենական 'ի

փառան Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք, նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստատիցն արասցէ։ Նմա իշխանութիւն և փառք յաւիտեանս՝ ամէն.» Ա. Պետր. Ե. 10. 11։

Տէս և յայս միտ զնիրդ վայելչահիւս ճառագրէ Սարգիս Շնորհալի սուրբ վարդապետն մեր. «Ցեսանէս զառաւելութիւն շնորհին, եթէ ոչ կոչեաց զմեզ կամ որոշում փառաց հաղորդս արար. ոչ հրեշտակի փառաց և ոչ հրեշտակապետի. այլ իւրում զերազոյն և մշտնջենաւոր փառացն. զայս ասելով մխիթարէ զնոսա և սփոփէ մի՛ զանդիտել 'ի նեղութեանցն. և մի՛ երկնչիլ 'ի չարչարանաց, որ այնպիսի փառաց և այնքան երանութեան ձեզ առիթ լինին։ Զի եթէ Տէրն ձեր և արարիչն սակս ձեր այնչափ չարչարեցաւ և զանեցաւ և բամբասեցաւ՝ և զձեզ կոչեաց 'ի փառան հայրենիս, ապա և դուք մի՛ զլանայք զպարդևս չարչարանաց.» Յհ. ՃԱ. Ա. Պետ։

Այսպիսէն 'ի վերջն սահմանի Աստուածային շնորհաց ըզգոհաբանական մաղթանս մեր սրտի մաօք և ջերմեռանդութեամբ առ մշտարուղն աղբիւրն բարութեանց վերառաքեսցուք ընդ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ աղօթակից լինելով. «Աստուած և տէր, կեանք և արարիչ, ողորմած, դթած, լոյս, երկայնամիտ, անսխակալ, մարդասէր, ամենագութ, պարգևատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ։ Դարան ամրութեան, պատսպարան վստահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հսպաւոր, անյուսութեան ելք, անուն խոստովանեալ՝ Որդի Աստուծոյ. և Հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի և Հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելւոյ փառք և պաշտօն զոհաբանութեան յաւիտեանս՝ ամէն». Նարեկ. ՁԹ։

Եւ արդ յետ ճառելոյ զբազմապիսի շնորհաց ամբաւ բա-

բերարութեանց բարձրելոյն ընդհանրապէս առ ազգս մարդկան՝ կայ մեայ մեզ յառաջիկայս մասնաւորապէս տողել զեօթն խորհրդոց հաստատելոց 'ի Փրկչէն. որք առիթ և միջոցք են Աստուածային շնորհաց աղբերացելոց 'ի մեզ փրկարար ներգործութեամբքն։

ԳԼՈՒԽ Ա.

Մկրտութիւնն հոգեւոր ծննդեամբ որդեգրէ զհաւատացեալն Հօր Աստուծոյ, որում եւ զերբնապէս նմանակից առնէ Յիսուսի Քրիստոսի եւ հաղորդակից շնորհաց նորա։

Բազմատեսակ Աստուածային ծրիտուր շնորհաց զերբընական զօրութիւնքն բացատրին և Ծանուցանին զանազան անուամբք. յորոց մին անուանի յԱստուծաբանից՝ Ունակական շնորհ հեղեալ 'ի հոգիս հաւատացելոց և միանդամայն արդարացուցիչ օրբարար և որդեգրական շնորհ. զոր ընդունին մկրտեալք յանուն ամենասուրբ Երրորդութեան. ըստ անժըխտելի հրամանի կենարար փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. «Գնացէ՛ք այսուհետև աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.» Մատ. ԻԸ. 19. Մարկ. ԺԶ. 15։

Արդարև մկրտութեան սրբարար և արդարացուցիչ շնորհայներգործութիւնն նորահրաշ հոգևոր ծնունդս պարգևէ ապականեալ բնութեանս, որով մկրտեալք 'ի ջուր աւազանին խորհրդոյ մկրտութեան՝ ըստ ամենայնի ազատեալ 'ի մեռելութենէ մեղաց և 'ի նորին դատապարտութենէ՝ վերանորոգին 'ի յաւիտենական կեանս հրաշափառագոյն նոր հոգևոր ծնընդեամբ. և այս իսկ է շնորհաձիր արդիւնք փրկագործութեան կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի մահուանէ վերափոխել 'ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ 'ի գիտութիւն ճշմարտութեան. ևս և վերակոչել սրբարար շնորհիւ։ Զայս վերսին հոգևոր ծնունդ ա-

«Ետարանեաց Յիսուս Նիկոդիմոս անուն իշխանին Հրէից, որ եկեալ էր առ նա 'ի գիշերի, և յետ բազումս բանից տեսեալ սրտագիտին, զի այս այր եկեալ է առ ինքն ստանալ ըստ Ասկերերանին զյոյս ժառանգութեան երկնից, վասն որոյ բացատանոյց նմա ասելով. «Ամէն ասեմ քեզ, եթէ ոք ոչ ծնցի վերըստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ։ Առ այս բան կարի տարակուսեալ՝ ափշեալ և հիացեալ խոստովան եղև Նիկոդիմոս, եթէ ոչ ինչ իմացաւ 'ի գերբնական զօրութենէ բանիցն Յիսուսի, վասն որոյ ասաց. «Զիա՞րդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծնեալ իցէ. (սխալ է յօրինակս ինչ Ա.Ետարանի. յորս գրեալ է, որ ծերն իցէ). մի՛ թէ մարթ ի՞նչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ մտանել կրկին և ծնանիլ. Պատասխանի ետ Յիսուս և ասէ ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի 'ի Ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ, զի ծնեալն 'ի մարմնոյ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է։» Այսու բանիւ կամեցաւ Յիսուս ուսուցանել Նիկոդիմոսի, զի 'ի յայտնել լուսոյ շնորհաց նոր փրկարար օրինացս, պարտի յայտնի աւետարանել. եթէ ոչ ոք կարէ մտանել յարքայութիւն երկնից, որ ոչ է ծնեալ վերստին 'ի Ջրոյ և 'ի հոգւոյ. վասն զի արքայութիւնն երկնից հոգևոր է, և Աստուած իսկ անեղական հոգի է. Ծանիր ով Նիկոդիմոս 'ի մարմնաւոր ծընընդենէ մարմին ծնանի, այսինքն մարդ մտաւոր և բանական մարմնեղէն և մեղանչական. ապա ինքնին ոչ կարէ մտանել յարքայութիւն երկնից. իսկ յորժամ վերստին ծնանի 'ի սուրբ Հոգւոյն 'ի մկրտութեան՝ ընդունիլ ընդունի զարբարար և զարդիւնացուցիչ շնորհս և առնու զՀոգևոր պարգևս որդեգրութեան Աստուծոյ, և լինի ժառանգ երկնից արքայութեան։ Ապա մի՛ զարմանար դու ով իշխանդ Հրէից ընդ այս իմ բան շնորհաց, թէ ասացի քեզ. «Պարտ է ձեզ վերստին ծնանիլ.» զի ես ոչ խօսիմ զմարմնեղէն բնական ծնունդենէ, այլ զգերբնականէն։ Ապա պարտ է քեզ ողջամիտ հոգւով հաւատալ Աե-

տարանական բանից իմաց. զի չէ քեզ հնար մարդկային տկար մտօք վերահասու լինել. ահաբեկ յարացոյց. «Հոգին ուր կամի շնչէ՝ և ձայնն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի՞ գայ, կամ յո՞ երթայ. սոյնպէս և ամենայն ծնեալն 'ի Հոգւոյն»: Այս ամենայն բաղուած են յՈսկերերանէն 'ի բան Աւետարանին Յովհաննու. Գ. 'ի 1-ոյ մինչ 38 համարն:

Լուր սրբազան Առաքելոյն Պօղոսի, որ գրէ յաղագս հրաշագործ ներգործութեանց սրբարար շնորհաց մկրտութեան վերատին ծննդեան սուրբ Հոգւոյն 'ի մարդասիրական փրկագործութեան շնորհապարգև արդեանց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ առ հաւատացեալս բարերարեալ. «Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն փրկչին մերոյ յայտնեցաւ ոչ 'ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք. այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ 'ի ձեռն առաջնին միւսանգամ ծննդեանն, և նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ. զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ. զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգորդ յուսով կենացն յաւիտենականաց». Տիտոս. Գ. 4—7:

Ի մկրտութեան սրբարար և արդարացուցիչ խորհրդոց անտի ևս և պարգևին զանազան գերբնական ներքին շնորհք ըստ քանչելահրաշ ներգործելոյ 'ի հոգիս մկրտելոյ:

Նախ առաջին է որդեգրութեան շնորհն, որով անուանիմք ճշմարտապէս շնորհական որդիք Հօրն ամենակալի. ըստ այնմ՝ «Ցիւրան եկն, և իւրքն զնա ոչ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա, ետնոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատացեն յանուն նորա. որք ոչ յարենէ և 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն՝ այլ յԱստուծոյ ծնան». Յովհ. Ա. 12. 13: «Տեսէք՝ զի՞նչ սէր շնորհեաց մեզ Հայր. զի որդիք Աստուծոյ կոչեսցուք և մեք»: Ա. Յովհ. Գ. 1:

Զի որ Հոգւոյն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ:

զի ոչ առիք զՀոգին Ծառայութեան մի՛ սանդամ յերկիւղ, այլ առիք զՀոգին որդեգրութեան՝ որով աղաղակեմք Աբբայ Հայր։ Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։ Հռովմ. Ը. 14–16։

Ուրեմն անշնջելի տպաւորեսցին 'ի միտս մեր հոգեշահ բանք յորդորանաց Սարդիսի շնորհալւոյ. «Եւ արդ՝ ասէ, եթէ զայսպիսի Հայր ունիմք, և Հայր հոգևոր և խնամակալաւ, և վայելեցաք և միշտ վայելեմք 'ի խնամս նորա և 'ի սէր, ապա մի՛ երևեսցուք յաշխարհի, և մի՛ ապաշնորհ առ երախտաւորն զոյուք, և մի՛ զամենայն ինչ 'ի նմանէ ունիլ կամեսցուք. այլ մեք նպաստ լիցուք 'ի շնորհս նորա մերով բարեգործութեամբս, իբրև զՀայր զթած պատուեսցուք զնա և իբրև 'ի ցեառնէ երկիցուք 'ի նմանէ։ 'Ի միտ առցուք զսէրն՝ զոր շնորհեաց մեզ, և մի՛ թշնամանեսցուք զառեալ շնորհն 'ի նմանէ։ Եւ զիաւրդ բնակիցէն 'ի մեզ շնորհքն, եթէ չծուլանայցիմք 'ի պահել ըղպատուիրանս նորա, եթէ չանպատուիցեմք զերախտաւորն։ Եւ զենչ իցեն շնորհքն, մեզաց թողութիւն, ազատութիւն, և որդեգրութիւն։ Եւ արդ՝ ամ՛ իցէ. որ թշնամանիցէ զշնորհն և կարիցէ պահել զնա և ոչ կարուսանել։ Այսպիսի սէր շնորհեաց մեզ զիաւրդ լինիցի ընդ մեզ շնորհքն և հաճութիւն Հօր». Դ. Յորդոր. Ա. Յովհ։

Եւ երկրորդն է հրաշալի ինն նմանակցութիւն Յիսուսի Քրիստոսի էական Որդւոյն Աստուծոյ. և հաղորդակցութիւն շնորհաց և փառացնորին զերբնապէս, որ ունակաբար ապաւորի և ինքն 'ի հոգիս մեր, որով յարդարեալ և կազմեալ լինիմք խորհրդական և շնորհընկալ մարմին յօգեալ և շաղկապեալ շնորհիւն 'ի նոյն ինքն 'ի գերամբարձ գլուխն մեր 'ի Յիսուս Քրիստոս, յորմէ հեղեալ ծաւալին առ խորհրդական մարմինս իւր՝ առ հաւատացեալս ամենայն պարգևք սրբութեանց և Աստուածախնամ բարութեանցն, ուշադիր կացցուք վկայութեանցս. «Եւ զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից

Նորա և զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ։ «Ամ. Ճշմարտեալք սիրով աճեսցուք 'ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս։ «Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և ինքն է փրկիչ մարմնոյ»։ Եփես. Ա։ 22։Դ։ 15։Ե։ 23։

Աստանօր եթէ համարձակեալ հարցցուք 'ի սրբազան Առաքելոյն 'ի Գողոսկ. եթէ Ծանեալք և հաւատացաք՝ զի մի միայն ընդհանրական շնորհաղեղ գլուխ խորհրդական մարմնոյ իւրոյ եկեղեցւոյ է Յիսուս Քրիստոս, ապա Առաքելոյն նոցին և օրինաւոր յաջորդք ձեր չունի՞ն զնորին ընդհանուր գլխաւորութեանն զիշխանութիւն վարել 'ի մէջ հաւատացելոց։ Ո՛չ բնաւ, պատասխանեսցէ, նախ՝ զի մեք աշակերտեալքս ճշմարիտ վարդապետին մերոյ Յիսուսի Քրիստոսի Ծառայք և պաշտօնեայք եմք նորա առ 'ի կատարել սիրով զբարերար կամս և զմարդասիրական հրամանս նորա, և փութամք երեքիլ առաջի նորա իբրև անտես բարի և մատակարար հաւատարիմ սեղանաւորել արժանաւորաց զաւետարանական հոգեկեցոյց վարդապետութիւնս փրկագործութեանն և այսպէս շնորհաց նորին։ Վասն որոյ համարձակ զճշմարիտն գիտեմք։ «Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հաղորդակցս խորհրդոցն Աստուծոյ»։ Ա։ Կորնթ. Դ։ 1։ «Եւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ վասն ձեր, և ինչ զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի 'ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա՝ որ է եկեղեցի, որոյ եղէ ես Գողոս պաշտօնեայ՝ ըստ տընտեսութեանն Աստուծոյ, որ տուեալ է ինձ 'ի ձեզ կատարել զբանն Աստուծոյ»։ Կողոս. Ա։ 24։

Ուրեմն որպէս սրբազան Առաքելքն՝ նոյնպէս և ամենայն օրինաւոր յաջորդք նոցին անուանին պաշտօնեայք Յիսուսի Քրիստոսի։

Ուստի այն ամենայն խմասաք բանից ո՛չ ուրեք յԱռաքելոց և 'ի յաջորդաց նոցին պատշաճին. այլ միայն ինքնիշխան, ամենիշխան և ընդհանրական տէրութեանն Քրիստոսի

սեպհականի ամենայն կիրպիւ։ ապա նա միայն է գլուխ ընդ-
հանուր եկեղեցւոյ իւրոյ անսխալ, անսիսալ և յաւիտենական
իշխող և նախախնամող՝ որով փառաւորէ զեկեղեցի իւր զհա-
ւատացեալս պաշտելի անուան իւրոյ։ Լուր վկայութեան բա-
նից խորհրդոց ընդհանուր գլխաւորութեանն Յիսուսի։ «Ի վե-
րայ ամենայն իշխանութեան և պետութեան և զօրութեան
և տէրութեան և ամենայն անուանելոյ՝ ոչ միայն յաշխարհ-
հիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձելումն։ Եւ զամենայն ինչ
հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա։ և զնա եդ գլուխ 'ի
վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ որ
զամենայն յամենայնի լնու»։ Եփես. Ա. 21–23։

Տեսանեմ զԱստուածային մարդասիրական պարգևան Աս-
տուծոյ Հօր, որ սահմանեաց զմարդասէրն վասն մերոյ փրկ-
ութեան զՅիսուս Քրիստոս ընդհանրական ամենազօր գլուխ
ընդհանուր հաւատացեալ քրիստոնէիցս՝ զոր գիտէ խնամել
և պաշտպանել, բարգաւաճել և փառազարդել ներհեշական
շնորհիւ իւրով։

Աստանօր արժան է նկարագրել զԱստուածիմաստ խոր-
հրդածութիւն բանից սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի. «Ի
վերայ ամենայն բարութեանց՝ ասէ, յաւել Աստուած զդերա-
զոյնն՝ տալով եկեղեցւոյ գլուխ զՔրիստոս զեւր Որդի. ոչ ըզ-
հրեշտակ ոք կամ զհրեշտակապետ և ոչ զառաւելեալ քան
զնոսա. ոչ այնու միայն մեծարեաց զմեզ, զի զառ 'ի մէնջ ըզ-
մարդն այնքան բարձրացոյց, այլ և ետ յարիլ 'ի նա իրրև մար-
մին 'ի գլուխս։ Մեկն. Թղ. Եփ։ Եւ Գրիգոր Աստուածաբանն
գրէ բացայայտ. «Ամենեքեան մի մարմին եմք 'ի Քրիստոս, այլ մի
ըստ միջէ Քրիստոսի և իրրեաց անդամք։ . . . Ապա ընդէր
զ քեզ առնես հովիւ, որ ոչխարդ ես, ընդէր լինիս գլուխ ոտնդ
հանդիպեալ, հիմ զօրավարել ձեռնարկես կարդեայդ ընդ զեն-
ուորս». ՅԱռ. որս։

Եւ սուրբ վարդապետն մեր Ներսէս Լամբրոնացի երգա-

բանեաց. «Ընդ քեզ յարուցեր յանմահութիւն զմահացու բրնութիւնս, որով նստար ընդ աջմէ Հօր գլուխդ եկեղեցւոյ, հրաւիրելով զանդամքս քո 'ի նոյն միութիւն։ Յայսմ անխուսափելի ճշմարտութենէս յաւէտ ստիպեալ՝ Աւետիքեան Հ. Գաբրիել վարդապետ Մխիթարեան բացայայտ գրէ. «Կարգեաց Աստուած եկեղեցւոյ գլուխ զՔրիստոս 'ի վերայ ամենայնի. որք անկեն և պէտք եկեղեցւոյ. առ 'ի նախանամել եկեղեցւոյ զամենայն բարիս, առ 'ի կատարել 'ի նմա զամենայն մատակարարութիւնս, որ ճշմարիտ գլխոյ վայելէ ոչ պակասելով իւիք 'ի մի ինչ իրս, այսինքն լուսաւորել զեկեղեցի, պաշտպանել, զօրացուցանել, զարդարել, շնորհօք և փառաւք, ուղղել և դատել. կամ այսպէս. կարգեաց զնա գլուխ ընդ հանրական և ինքնիշխան ըստ ամենայն զործոց և տեղւոյ և ժամանակի. ծայրագոյն կառավար և հրամանատար միահեծան, որում պէտք ամենեքեան են փոխանորդք և պաշտօնեայք» (որ ճշմարիտ գլխոյ վայելէ, ոչ պակասելով իւիք 'ի մի ինչ իրս)։ Մեկն. Պօղոսի. Բ. Հատ. երես 507։

Ապաքէն յաղագս այսոցիկ ճշմարտութեանց ուսնիդիր լեցուք վիպութեանցս սրբազան Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ «Քանզի կայ իսկ 'ի գրի. թէ ահաւասիկ դնեմ 'ի Սիօն վէմ ընտիր՝ գլուխ անկեան պատուական, և որ 'ի նա հաւատացէ մի՛ ամաչեսցէ»։ Զեզ այսուհետև հաւատացելոց է վէմ պատուական, իսկ անհաւատիցն վէմ՝ զոր անարդեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան». Ա. Պետ. Բ. 6. 7։ «Այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ. շինեալք 'ի վերայ հիման Առաքելոց և Մարգարէից. որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս, յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար սուրբ Տէրամբ, յորում և դուք ընդ նմին շինիք 'ի բնակութիւն Աստուծոյ հոգւով»։ Եփ. Բ. 19—22։

Ուրեմն անխտիր ամենայն մկրտեալք յանուն ամենասուրբ

Երրորդութեանն՝ իբրև խորհրդական անդամք են Քրիստոսի Փրկչին մերոյ, որոյ շնորհիւն յօրին 'ի նա իբրև 'ի ճշմարիտ գլուխն իւրեանց, և հաղորդակցին շնորհաց և փառաց 'ի նորին փրկագործութենէն, որպէս ուսուցանեն մեզ առաքեալքն բանից զօրութիւնք. «Որպէս 'ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, և անդամք ամենայն ոչ զնոյն գործ գործեն, կամ ուշին, նոյնպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս։ Այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք». Հռովմ. ԺԲ. 4. 5։ «Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ է՛ք. չկ՛ք խաւիր, ոչ Հրէի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան դուք մի է՛ք 'ի Քրիստոս Յիսուս». Գաղատ. Գ. 27. 28։ «Հաւատարիմ է Աստուած՝ որով կոչեցարուք 'ի հաղորդութիւն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ». Ա. Կորնթ. Ա. 9։ Եւ և առնէ զմեզ մկրտութեան շնորհն հաղորդակից Յիսուսի մահուան և թաղման, փառն որոյ 'ի նշանակել և 'ի նկարագրել զերեքօրեայ կենդանաբար մահն և զթաղումն Յիսուսի՝ յարարողութեան մկրտութեան երիցս ընկղմեմք զերեխայն 'ի ջուր աւազանին, որով նկարագրի հաղորդակցութիւն մեր ընդ Յիսուսի Քրիստոսի անմահական կենդանութեան Աստուածային փառաւորութեան և շնորհաց լինութեանն, որով եղաք մեք հաղորդ անՀաւասարելի արդեամբք երեքօրեայ մահուան և թաղման կենարարին մերոյ. ըստ այնմ՝ «Ո՛չ գիտէ՛ք, զի որ միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս Յիսուս, 'ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ. զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառաւքն Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութեան կենաց շրջեսցուք». Հռովմ. Զ. 3. 4։ Յաղագս որոյ գրէ Ոսկերերանն, «Թաչ է մարկրութիւնն, որ ինչ էր Քրիստոսի թաչն և գերեզմանն, այն է մեզ մկրտութիւնն, նա մարմնոյն մեռաւ և թաղեցաւ. մեք մեռանիք և թաղիմք մեղաց». Ճառ Ժ։ Եւ արդ եղեալ սրբ-

բարար և արդարացուցիչ խորհուրդն մկրտութեան է կերպարան խաչի և մահուան Յիսուսի Քրիստոսի, և որպէս անհրաժեշտ է Տեառն մերոյ Յիսուսի վերստին մահու անարգութեամբ խաչիլ և թաղիլ. նոյնպէս անհնար է միանգամ մկրտելոյն դարձեալ վերստին գալ 'ի մկրտութիւն: Իսկ որք անզգամութեամբ յանդգնին, կամ ինքեանք գալ վերստին 'ի մկրտութիւն և կամ զմկրտեալս վերակոչել 'ի երկին մկրտութիւն՝ ընդ Աստուածաբաց և անօրէն խաչահանուաց՝ ընդ դարձ և փարիսեցւոց կեղծաւորաց 'ի դատաստան յաւիտենական պատժոյ ունին մատնել: Թող յանդգնելոյքն լուիցեն երջանիկ Առաքելոյն Պողոսի՝ որ զբէ բացայայտ: «Քանզի անհնար է միանգամ մկրտելոյն՝ որք ճաշակեցին յերկնաւոր պարգևացն և հաղորդ եղեն Հոգւոյն սրբոյ. և զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակեսն ճաշակեցին. և զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին. և կործանեսցին միւսանգամ նորոգել յապաշխարութիւն և վերստին 'ի խաչ հանել անձանց զՄրդին Աստուծոյ և դարձեալ խայտառակել» Եբր. Զ. 4—6: Ահա՛ 'ի վերայ սոցին բանիցս խօսի տիեզերայոյս սուրբ վարդապետն Յովհան Ոսկեբերան. «Որպէս անհնար է Քրիստոսի խաչիլ մահու խայտառակութեամբ, նոյնպէս անհնար է միանգամ մկրտելոյն երկրորդ անգամ գալ 'ի մկրտութիւն. և զՀնութիւնն մեզոյ նոփաւ սպանանել. և որ յուսայ կրկին մկրտութեամբ սրբիլ. համարիցի թէ կամ վերստին խաչելոյ է Քրիստոս. և կամ առաջին խաչն և մահն զուր է. կեղտիարդ և անբաւական». Արդ՝ չէ՞ հարկ մեզ դատաւոր նամիլ. դատաստանս առնել անխիղճ գործոց յանդգնեցելոց հակառակ Աստուածային շնորհաց. վասն զի ունիմք դատաւոր երկնաւոր զԱստուած արդար և ճշմարիտ, որ նա միայն գիտէ ամենեցուն հատուցումն առնել որպէս և գրեալ է. «Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից՝ ասէ Տէր» Հռովմ. ԺԲ. 19: Եւս և խորհրդով մկրտութեան հաղորդիմք Յիսուսի Քրիստոսի անեղական լուսոյն. վասն զի հրաժարիմք

ի խաւարային խորհրդոց սատանայի. և դառնամք 'ի լոյս Աստուածային ճշմարտութեան ներքին ունակութեամբ մկրտութեան շնորհաց Յիսուսի Քրիստոսի. որով և յաջողի մեզ բացամերժել զնաւար տգիտութեան և մեղաց. և սեպհականել զլոյս հաւատոյ ճշմարտութեան և անմահ կեդանութեան: «Ես եմ լոյս աշխարհի. որ զայ զինի իմ. ընդ խաւար մի՛ դընասցի. այլ ունիցի զլոյսն կենաց» Յովհ. Ը. 12 : «Զի թէպէտ և երբեմն էիք 'ի խաւար. արդ լոյս էք 'ի Տէր. իբրև զորդիս լուսոյ գնացէ՛ք : Զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է և արդարութեամբ և ճշմարտութեամբ». Եփես. Ե. 8. 9: Այլ դուք եղբարք՝ ո՛չէք 'ի խաւարի՝ . . . . զի ամենեքեան դուք որդիք լուսոյ էք. և որդիք տուընչեան. չեմք գիշերոյ. չեմք խաւարի : Ապա մի՛ զքնով անկանիցիմք որպէս և այլքն. այլ արթուն՝ք և զուարթունք եղիցուք» Թես. Ե. 4—6 : «Որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրիցէք այնմ՝ որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն». Ա. Պետ. Բ. 10 :

Լուր յորդորական վարդապետութեան Սարգսի Շնորհալւոյ «Տեսո՛ր՝ ասէ. զորիսուր երախտեայն Աստուծոյ : Նա ասէ 'ի խաւարէ յիւր սքանչելի լոյսն կոչեաց զձեզ. և դուք զլուսատեսակ ձեր առաքինութիւնս նուիրեցէք նմա». երես. 317 : Ապա մկրտեալք դաշնադիր եղեալ են ընդ Աստուծոյ ունել անհաշտ թշնամութիւն ընդ խաւարաշուք գնացից և գործոց սատանայի. և հետեւիլ Աստուածային անատուեր լուսոյ ճշմարտութեան զիրութեամբ և վարուց վայելչութեան : Վասն որոյ 'ի մկրտութեան նախ՝ պարտաւորին քահանայք խորհրդաւոր արարողութեամբ հրաժարեցուցանել զերեխայն ասելով՝ «Հրաժարի երեխայս 'ի սատանայէ և յամենայն խարէութենէ. նորա. 'ի պատրանաց նորա. 'ի խորհրդոց նորա. 'ի գնացից նորա. 'ի չար կամաց նորա. 'ի չար հրեշտակաց նորա. 'ի չար պաշտօնէից նորա. 'ի չար կամարարաց նորա. և յամենայն չար գործութենէ նորա հրաժարելով հրաժարի և

դառնայ 'ի լոյս Աստուածգիտութեան։ Իսկ եթէ երեխայա-
ցեալ մանկունքն քան զմին առաւել իցեն, հարկ է ասել երե-
խայքս և այլն. և եթէ երեխայացեալքն իցեն չափահաս ան-
ձինք՝ որպէս պատանիք, երիտասարդք և ծերք յանհաւատու-
թենէ եկեալք, և ըստ կարի ուսեալք զքրիստոնէական ուղ-
զափառ կրօնից վարդապետութիւնս, պարտ է նոցա նախ տալ
սերտել զբանն հրաժարման և խմատից բանին վերահասու-
առնել զնոսա, մինչև կարողանալ բանիւ բերանոյ արտասանել
«Զհրաժարիմքն 'ի սատանայէ» այլոլք հանդերձ։ Իսկ եթէ ոք
'ի քրիստոնէական լուսաշաւիղ կրօնից ուրացմամբ իւրով յան-
հաւատութիւն մոլորեսցի. և դարձեալ կատարեալ զղջմամբ
և խոստովանութեամբ յանձն առնուցու ապաշխարել պարտ
է զնա վերստին հրաժարեցուցանել այսպէս. «Զերստին հրա-
ժարիս 'ի սատանայէ» և այլն զկնի։ Եւ կամ դարձեալ՝ վե-
րըստին դառնաս 'ի լոյս Աստուածգիտութեան։ Եւ եթէ
կամիս ով ընթերցող այսր ամենայնի քաջ վերահասու լինիլ.
ընթերցիր զկոնդակ սրբոյն Ներսիսի շնորհալւոյ գրեալ առ
քահանայս և առ բարեպաշտ ժողովուրդս եկեղեցւոյն 'ի Սա-
մոստայ քաղաքին։ «Դիտալի է ձեզ՝ ասէ. զի վաղ ուրեմն ե-
հաս 'ի ձէնջ գիր առ մեզ յաղագս Արևորդեացդ՝ որք 'ի քա-
ղաքի ձերում բնակին. եթէ կամին և աղաչեն 'ի հօտն Քրիս-
տոսի խառնել զնոսա, զի նոքա ազգաւ և լեզուաւ 'ի տոհմէն
Հայոց են, յօժարին՝ զի և հաւատով և հոգւով 'ի նոյն միա-
բանութիւն հաւասարեսցին ընդ նոսա։ Եկին և առաջի մեր
'ի նոցանէ՝ և զնոյն բանս աղաչանաց խօսեցան ընդ մեզ. և մեք
ծանուցաք նոցա՝ զոր ընթերցեալ էաք 'ի Գրոց վասն դիւա-
պաշտ աղանդոյ նոցին. և զոր լուեալ էաք 'ի համբաւէ յին-
դելակցաց նոցին զզանազան չարիս բանիւ և գործով ըզ-
նոցանէ. զի որպէս յաղագն Հռոմոց Պօղոմելոքն անուանեալք
մեայնի խաւարեալք 'ի լուսոյ Աւետարանի փառացն Քրիստոսի
և թագնարար ուսնելով 'ի սիրոս զաղանդն սատանայի. ոչ հը-

նազանդեցան Առաքելոյն քարոզութեանց, այսպէս և Արևորդիքդ յազգս մեր 'ի մասին սատանայական խաւարին մնացեալք ոչ կամեցան լուսաւորիլ Աստուածային լուսանալ 'ի ձեռն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, այլ սիրեցին զխաւար և ոչ զլոյս մինչև ցայսօր ժամանակի: Եւ եթէ 'ի նուաստ զեալ բարեաց ժամանակս մեր՝ ողորմեցաւ Աստուած նոցա, և երբոյ զխաւարեալ աչս հոգւոյ նոցին հրաժարիլ 'ի սատանայէ և դիմել առ Աստուած ոչ խարէութեամբ, այլ ճշմարտութեամբ. զոհութիւն գթութեանն Աստուծոյ մատուցցուք, որպէս և զդրա որ առ մեզս եկին, յուրաստ եղեն երդմամբ մեծաւ 'ի չար աղանդոյ անտի. և նզովեցին բերանոք իւրեանց որ զայնպիսի ծածուկ անաստուածութիւն ունելոյ յիրեանս, և զոր ինչ սահման եղաք նոցունց յանձն առին կատարել զամենայն: Վասն որոյ և մեք զաէրուռնականն կատարեմք հրամանն առ նոսա՝ թէ, Որ զայ առ իս՝ ոչ հանից արտաքս, քանզի կամի Աստուած զամենայն մարդիկ՝ զի կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ըստ Առաքելոյն: Եթէ ճշմարիտ լեցի դառնալ նոցա առ Աստուած. ուրախութիւն է Աստուծոյ և հրեշտակաց 'ի յերկինս, և մեզ 'ի յերկրի ընդ փրկութիւն այնքան հոգւոց մարդկան. իսկ եթէ ստութեամբ լինիցի դարձ նոցա, որպէս և կարծեն բաղումք ըզնոցանէ, և դարձեալ անդէն 'ի փսխանն իւրեանց դառնան՝ մեզ և ոչ մի ինչ է վնաս, զի վասն հրամանին քրիստոսի մեք կամիմք, արիանալ ջանամք զնոսա՝ թէ հնար էր և զամենայն ազգս 'ի յուռկան Աւետարանի նոցա, այլ ընարելն և ժողովելն զբարի բարին յամենս ըստ առակաւոր բանի Աւետարանին և զնոսանսն 'ի բաց ընկենուլ՝ արդար դատաւորին է. յորժամ նստցի յաթոռ փառաց իւրոց և հատուցանէ իւրաքանչիւր ըստ հաւատոց և ըստ գործոց:

«Արդ՝ Աստուածային հրամանաւն զայս ինչ պատշաճ հաճարեցաք առնել առ դոսա. զալ ամենայն քահանայիցդ հան-

դերձ պատուական աշակերտաց մերոյք՝ ի մեծ եկեղեց. ոչդ որ ի քաղաքիդ, և ժողովեալ զԱբեսորդիսն անուանեալ զամենասին զարս և զկանայս և զմանկունս՝ ի դրունս եկեղեցւոյն, և նախ՝ հարցանել ցնոսա, եթէ կամիք՝ ի բոլոր սրտէ և յամենայն մտաց և ի զօրութենէ ձերմէ թողուլ զառաջին մոլորութիւն հարցն ձերոց և գալ՝ ի ճշմարիտ Աստուածդիտութիւն քրիստոնէութեանս, և յորժամ զայս յանձն առնուն և ասեն, եթէ կամաւ և յօժարութեամբ սրտից՝ ի բաց կամք՝ ի սատանայական խաբէութենէ հարցն մերոց և զիմամբ առ Քրիստոս, յայնժամ դարձեալ երիցս անդամ հարցանիցէք ցնոսա՝ որդէս ընդ երեխայսն՝ ի ժամ մկրտութեան. եթէ հրաժարիք՝ ի սատանայէ և յամենայն խորհրդոց նորա. և՝ ի բանից և՝ ի զօրծոցն, և իբրև յանձն առնուն և ասեն թէ, հրաժարիմք, ապա յարեմուտս դարձուցէք զդէմս երեսաց նոցա՝ և ասացէք թէ թքէք յերեսն սատանայի երիցս անգամ և անարգեցէք զնա որպէս զպիղծ, զաւուտ և զանիրաւ». Ընդհան. երես 137 և 138։ Ուրեմն զայս արարողութիւն հրաժարման՝ ի սատանայական խորհրդոց և կամաց, և դառնալոյ՝ ի լոյս Աստուածդիտութեան հաստատեալ միայն իբրև Աստուծահաճոյ դաշնաւորութիւն, նախ քան զմկրտութեան խորհուրդն պարտիմք պահանջել՝ ի բերանոյ երեխային. և զայս իշխանութիւն հրաժարեցուցման երեխայից ունին չորս ասոտիճանաւոր դպիրք. ըստ որում մինչ ձեռնադրող եպիսկոպոսն տայ զՄաշտոց դիրքն յերորդում աստիճանի, հրամայէ ասելով՝ «Ա՛ռ քեզ՝ ի Հոգւոյն սրբոյ և ամփոփեա զդրեալս առատ՝ ի միտս քո, հրաման է քեզ դնել զձեռս քո՝ ի վերայ հիւանդաց, և որք դան՝ ի մկրտութիւն, հրաժարեցուցանել՝ ի սատանայէ և՝ ի նորայնոց». մեծ Մաշտ. երես 239։

Ահա այս ամենայն ծանօթութիւնք թոյլ չտան մեզ՝ ի մէջ եկեղեցւոյ՝ եթէ նախ քան զամերգութիւն, և եթէ՝ ի մէջ կամ՝ ի վերջն ժամերգութեան յարևմուտս դարձուցեալ

զգևմ ժողովրդոց սահել զբաժարիմքն, քանզի ճշմարիտ հաւատացեալ ժողովուրդք են որդիք լուսոյ և խորհրդական անդամք Քրիստոսի. և մանաւանդ շնորհիւ միրտութեան սրբարար խորհրդոյն հրաժարեալ և ազատեալ են 'ի սատանայական բռնութենէն և 'ի խաւարային խորհրդոց նորին. որով յիւր որոգայթս կորստեան սկզբնական մեղաց որսացեալ ըմբռնեալ էր զնութիւնս մեր մարդկային: Իսկ այժմ հաւորդեալ շնորհաց և փառաց և 'ի լոյս ճեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աներկրայ հաւատով գնան 'ի շաւիղս Աստուածդիտութեան և Աստուածպաշտութեան:

Յաղագս այսոցիկ շնորհաց գրէ սրբազան Առաքեալն Պօղոս առ ժողովուրդս եկեղեցւոյն Եփեսացւոց. «Զի թէպէտ և երբեմն էիք խաւար՝ արդ լոյս էք 'ի Տէր. իբրև զորդիս լուսոյ գնացէ՛ք»: Եփ. Ե. 8: Իսկ եթէ ոք ոգիտարար ասասցէ՝ ո՞չ ապաքէն ներզործական մեղաք մեղանչելով մեր՝ վիրաւոր հաղորդեալ դատնիմք սատանայի խորհրդոց և կամաց. որպէս գրէ սրբազան Աւետարանիչն Յովհաննէս. «Որ առնէ զմեղս. 'ի սատանայէ է»: Ա. Յովհ. Գ. 8: Պատասխանեմ այո՛. բայց ներզործական մեղաց հիւանդութեան հոգւոյ առողջացուցիչ ամենազգու դարման բժշկութեան, և 'ի սատանայական կապից մեղաց փրկելոյ և արձակելոյ սահմանեաց զխորհուրդ ապաշխարութեան և զդղման փրկիչն մեր Յիսուս Քրիստոս իւր կամաւոր չարչարանաց, թաղման և ինքնաղոյ յարութեան շնորհիւ: Ըստ այնմ՝ «Այսպէս պարտ էր չարչարիլ Քրիստոսի և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի. և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս սկսեալ Յերուսաղէմէ»: Ղուկ. ԻԴ. 46 47: Զայսմ սրբարար շնորհաց ունիմք զրեալ Տերամբ ուրոյն բացատրութեամբ. քանզի մնայ մեզ տակաւին զրեալ զարդարացուցիչ շնորհաց խորհրդոց միրտութեան. որով հոգի մեր սրբեալ և յարդարեալ նուիրի հոգևոր տաճար բնակութեան ամե-

նասուրբ Հոգւոյն Աստուծոյ։ Եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ։ կամ թէ. «Ո՞չ գիտէք. զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն, որ է 'ի ձեզ՝ զոր ունիք յԱստուծոյ. և չէ՛ք անձանց տէր։ Ա։ Կորն։ Գ։ 16։ Զ։ 19։

Տեսանք զի հաւատացեալք 'ի Քրիստոս Յիսուս շնորհիւ մկրտութեան կազմեն յարդարեն զանձինս իւրեանց և նուիրագործին սքանչելի տաճար Հոգւոյն Աստուծոյ. ապա չեմք անձանց մերոց տէր ինքնիշխան. այլ ամենակալ տերութիւն սուրբ Հոգւոյն Աստուծոյ իշխէ մեզ։ ուրեմն մի՛ ըստ հաճութեան չարայսժամ կամաց մերոց աղատարար վարեսցուք զանձինս մեր 'ի պէսպէս մոլութիւնս ապականիչս հոգւոց մերոց. զի գրեալ է. «Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ. ապականեսցէ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սուրբ է որ էք դուք։ Ա։ Կորնթ։ Գ։ 17։ Իսկ թէ ապականութիւն հոգւոյն քանի՞ կերպիւ լինի. խօսեսցուք 'ի յաջորդ գլուխս։

ԳԼՈՒԽ Բ.

Ոմք հեռացուցանեն զնորս Աստուծոյ բնակեալս 'ի մկրտութեան։

Ապականիչն է 'ի լաւութենէ 'ի յոռութիւն դալ. և կամ վայելուչ կերտուածոյ իրիք խանդարիլ և եղծանիլ. ըստ այսմ ապականի հոգին, յորժամ 'ի ներքս ընդունի զմոլորեցուցիչ և զստապատիր վարդապետութիւնս, զորս ջանան սերմանել 'ի միտս պարզամտաց 'ի մոլորեցուցանել։

Ուստի երանելի Առաքեալն Պօղոս ասելով եթէ 'ի ժողովուրդս եկեղեցւոյն Կորնթացւոց խորամանկութեամբ սպրդեալ են սուտ առաքեալք մոլորեցուցիչք խանդարել զմիտս նոցին և մոլորեցուցանել 'ի ճշմարիտ յանկեղծ հաւատոյն և 'ի քրիստոնէական վարդապետութենէն և 'ի բարոյական վարուց առաքինութեան, համոզիչ յորդորանօք գրէ առ նոսա։ «Նախանձեցուցանեմ զձեզ 'ի նախանձ Աստուծոյ. զի խօսեցայց զձեզ

առն միում իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի. բայց երկնչիմ՝ զուցէ որպէս օձն խաբեաց զԵւայ խորամանկութեամբ իւրով՝ ապականեսցին միտք ձեր 'ի միամտութենէն՝ որ 'ի Քրիստոս։ Զի եթէ՝ որ գալոցն էր՝ այլ Քրիստոս քարոզիցէ՝ զոր մեքն ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար առնուցուք, զոր ոչ առիք, կամ աւետարան օտար, զոր ոչ ընկալարուք. բարւոք անսայիք նոցա։ Բ. Կորնթ. Ժ.Ա. 2—4։

Երկրորդ՝ խանգարիչ և ապականիչ շնորհաձիր ուսմունքեան չոգւոյն է գառողութիւն, յանձնապատանութիւն, անձնապաշտութիւն և փառասիրութիւն, որք հակառակին Աստուածային ճշմարտութեան։ Ուստի սրբազան Առաքեալն Պօղոս զրկ առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր զգուշանալ յայսպիսեացս։ «Զայս գիտասջիր եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք, զի եղեցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք. հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, անմուէրք. անգութք, բանսարկուք. անժոյժք, վէնք, անբարեսէրք. մատնիչք. յանդգնութիւնք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ քան Աստուածասէրք. որք ունիցին զկերպարանս Աստուածպաշտութեան, և 'ի զօրութենէ անտի նորա ուրացեալք լիցեն, և խորշեսջիր 'ի նոցանէ։ Այլ որպէս Յաննէսն և Յամբրէսն հակառակ կացին Մովսէսի, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք մտօք անպիտանք 'ի հաւատս։ Այլ ոչ երբէք գայցեն յառաջ 'ի լաւանդր. քանզի անմտութիւն նոցա յայտնի լինիցի ամենեցուն. որպէս և նոցայն իսկ եղև։ Բ. Տիմ. Գ. 1—9։

Երրորդ՝ ըստ ամենայնի խանգարեն և ապականեն զարեմտութիւն և զուրջ զգայմունս հոգւոյն և զբարեարարութիւնն Աստուածահաճոյ վարուց առաքինեաց չարայոյզ և գայթակղեցուցիչ բանք և պիղծ խօսակցութիւնք։ Վասն որոյ պարտիմք զգուշանալ յայսպիսեաց և չլինիլ մտադիր

չարախօսութեանց նոցին, խրատեալ 'ի սրբազան Առաքելոյն Պօղոսէ. «Մի՛ խաբիք. ապականեն զբարս քաղցուն բանք չարք. սթափեցարուք արդարութեամբ. և մի՛ մեղանչէք. զի գիտութիւն Աստուծոյ ոչ ունին ոմանք. առ ամօթոյ ձերոյ ասեմ»։ Ա. Կորնթ. Ժե. 33. 34։

Չորրորդ՝ մարդկան գործք և խորհուրդք անօրէնութեան ընդդէմ բնական և գրական օրինաց գործեալք յաւէտ պղծենն և ապականեն զհոգւոյ սրբութիւն և զբարեշուք պայծառութիւն նորա. ըստ այնմ՝ «Ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց և ոչ ոքէ՝ որ առնէ զքաղցրութիւն». Սաղմոս. ԺԴ. Զ։

Այսպիսի անօրինեալք ոչ միայն զսրբութիւն հոգւոյն ապականեն և զշնորհն Աստուածային մերժեն անարժանութեամբ, այլ և դատապարտեալք յԱստուածային արդարութենէն՝ զբիլն յերանաւէտ փառաց և 'ի յաւիտենական կենաց երկնից արքայութեան, եթէ ոչ սրտի մտաք զղջացեալք՝ փոյթ ընդ փոյթ ապաշխարեսցեն համակար սիրով։ Լուր վճռական բանից սրբազան Առաքելոյն Պօղոսի՝ որ գրէ. «Եթէ ոչ գիտէք զի անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի՛ խաբիք, ոչ պոռնիկք, ոչ կռապարիշտք, ոչ շուն, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք և ոչ յափշտակողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն»։ Եւ դուք այսպիսիք ոմանք էիք, այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և 'ի Հոգւոյն Աստուծոյ մերոյ». Ա. Կորն. Զ. 9—11։

Արժանի իսկ է ասել զզարթուցիչ խղճի մտաց մերոց զյորդորական բանս երջանիկ վարդապետին մերոյ Սարգսի Շնորհալւոյն, «Եւ արդ՝ եթէ մարմնիք եմք 'ի մարմնոյ նորա՝ որպէս խոստմունքն են. և տիրապէս հաւատացաք նմա, մի՛ ապա աղտեղեսցուք զանդամս Քրիստոսի 'ի շարաւս մեղայ և 'ի ձեռնձերս անօրէնութեան. և մի՛ ապականեսցուք զմարմինս նորա

'ի կամ և 'ի տիրոջն զազգութեան մեղայ։ Եւ մի՛ փշրեսցուք խստիւ ինչ անկարգութեամբ զոսկերս նորա։ վասն զի տաճարն եմք Աստուծոյ կենդանւոյ. և հոգի նորա սուրբ բնակեալ է 'իմն զ 'ի ձեռն շնորհացն Քրիստոսի։ Արդ՝ որ զտաճար Աստուծոյ ապականէ՝ ապականեսցէ զնա Աստուած։ զի տաճար Աստուծոյ սուրբ է. որ էք դուք։ Տեսանեմ զաւետիսն մեծ՝ և առ նմին զհաղորդն սպառնալիսն և զառանց ողորմութեան վճիռն։ Արդ՝ երկիւղուք 'ի սպառնալեացն աղաչեմ. զարհուրեսցուք 'ի դատապարտութենէ դատաստանացն։

«Զի եթէ զթագաւորի ուրուք շինեալ ոսկեղէն տաճար՝ և ունիք 'ի ծառայիցն յանձն արարեալ խնամով պահել. սրբել 'ի փոշւոյ. մաքրել յայլազգութենէն. և անփոյթ առն՝ 'ի ազգով և ժամահատութեամբ ևս ընուցու. զ՞որպիսի մեղադրութիւնս և զո՞րպիսի պատիժս ոչ ընդունի 'ի թագաւորէն. և մահ իսկ գլխովին։ Եւ եթէ առ մահկանացու թագաւորի և առ անշունչ տաճարս այսպիսի դատաստանք են. ո՞րպիսի ահագին դատաստանաց և անծառելի տանջանաց ակն ո՞չ ունիցի. որ զանմահ թագաւորին և զերկնաւոր արքային զտաճարն մեղաք ընուցու. որ առաւել ժամահատ է մեղքն՝ քան զամենայն աղտեղութիւնս աղոյ. զի ո՞ր զաղբահոտութիւն այնպիսի նողկալի է որպէս շարաւահոտութիւն մեղայ։ Եւ զի զնորա զաղբահոտութիւն ծանուցեալ մեծն 'ի մարգարէս Դաւիթ՝ ասէր ողբալով «Նեղեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ»։ Վասն զի արգարև անզգամ է՝ որ պաղշոտութեամբ և այլով աղտեղութեամբ պղծէ զտաճարն Աստուծոյ։ Եւ վասն զի իսկապէս տաճար եմք Աստուծոյ՝ որպէս և ինքն իսկ ասայ.» Բնակեցայց 'ի նոսա և գնացից 'ի նոսա և եղէց նոցա Աստուած. և նոքա եղիցին իմ ժողովուրդք։ Արդ՝ ո՞րպիսի պատժոց, ո՞րպիսի տանջանաց չիցեմք արժանի. որ Աստուած բնակիչ ունիցիմք. և գարշահոտութեամբ մեղայ փախուցանեմք

և զբանսարկուն փոխանակ Նորա 'ի մեզ բնակեցուցանեմք։ Ը։ Ճառ։ Ա։ Պետ։

Այս բաւականապէս բացատրեցաւ, թէ ոչք էին ապականիչք Հոգւոյն Հնորհաց։ Մնայ մեզ ասա կարդել զիսօսս դարձեալ ըստ ներդործութեանց սրբարար խորհրդոյն միրուութեան։

ԳԼՈՒԽ Գ։

Մատակարար շնորհաց խորհրդոյ միրուութեան բնորեցան Առաքեալք 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի յորդեգրութիւն Հօր Աստուծոյ։

Գերագոյն եղեւ արդարև Նուիրիչն մեր յորդեգրութիւն Հօր Աստուծոյ ամենակալին, և լինելն ժառանգակից Հնորհաց և փառաց Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ և հոգևոր տաճար բնակութեան սուրբ Հոգւոյն։ Վասն որոյ 'ի վերայ միրտեալ երախայից ասի այսպէս։ «Այս անուն ծառայս Աստուծոյ՝ եկեալ յերախայութենէ 'ի միրտութիւն, միրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, գնեալ արեամբն Քրիստոսի 'ի ծառայութենէ մեզաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի լինել ժառանգակից Քրիստոսի և տաճար Հոգւոյն սրբոյ»։ 'Ի մայր Մաշտոցի։ Ասէ Սարգիս Շնորհալի։ «Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ։ առանց քննելոյ են դատաստանք Նորա և առանց գնեելոյ ճանապարհք Նորա։ Եւ ըստ մարգարէին դարձեալ՝» Աքանչացաւ գիտութիւն քո յիս, զօրացաւ և ոչ բաւեմ բերել զառաւելութիւն շնորհաց քոց և պարգևաց։ Իսկ զպարգևսն կատարեալս ասել այն է, որ ամենայն Աստուածատուր շնորհացն և տնօրէնութեանցն Քրիստոսի կատարումն՝ գալուստ սուրբ Հոգւոյն եղև, որով մաքրեաց զմեզ յաղտոյ մեղաց։ և միրտութեամբն լուաց և քան զձիւն սպիտակացոյց։ և որդեգրութեան արժանացոյց։ Որով համարձակութեամբ ասեմք Աբբա Հայր։ Վասն զի հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։

եթէ որդիք. ապա և ժառանգք Աստուծոյ. և ժառանգակիցք Քրիստոսի։ Ցեսցո՛ զառաւելութիւն պարգևացն, եթէ ո՞ւր տարաւ կացոյց զմեզ։ Դ. Ճառ. Յակ։

Ի մի՛ առեր սիրելիդ իմ զմարդասիրական տուրս Հօր Աստուծոյ. Ծաներ ևս, զի զայս շնորհաց լուսաձիր տուրս և երկնապարգև բարութիւնս, ո՛չ միայն ճանաչէ ուղղաւառ եկեղեցի մեր հանդերձ ուխտիւքն, այլ և միշտ խնդրէ յաւերժանալ ի զօրութիւնս նոցին, և արիանալ նոքօք և պատսպարիլ։ Վասն որոյ աղօթէ. «Շնորհատո՛ւ բարեաց ամենայնի աառատ անմահ ցէր, փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ և շնորհեա՛ մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ Երրորդութիւնդ այժմ և միշտ և յաւիտեանս»։ Ի յամենայնիս։

Ո՛վ ամենացանկալի բարութեանն Աստուծոյ շնորհաշնա՛ճանչ լոյս. որ փարատիչն է խաւարի պատրանաց բանսարկուին չարահնար թելադրութեանց նորա. զայսմանէ կանուխ մարգարէացաւ Եսայի, և զնոյն աւետարանեաց ինքնին լոյսն ճշմարիտ Յիսուս Քրիստոս Աստուած փրկիչ մեր։ «Յողովուրդ՝ որ նստէր ի խաւարի, ետես զլոյս մեծ. և որոց նստէին յաշխարհի և ի՛ սուրբս մահու՝ լոյս ծագեաց նոցա»։ Եսայի. Թ. 2. Մատ. Դ. 16։

Ո՛չ բաւէ տկար գրիչ զպարտուպատշաճն տողել աստանօր զբաղմատեսակ բարութեանցն, զորս շնորհեաց մեզ անաստուեր և անեղական լոյսն ճշմարիտ բանն Աստուած սքանչելի խորհրդով փրկարար մարդեղութեանն. ապա թող աստ կրկնեցից զքանի մի տող բանից հոգելից և սրտաշարժ երդաբանութեան երանաշնորհ թարգմանիչ վարդապետին մերոյ սրբոյն Մեսրոպայ. զորս երգէ աղերսալեր զոհաբանութեամբ և սղջամիտ վարդապետութեամբ։ «Գովեմք զքեզ բան և լոյս, որ զանիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա՛ զանկեալս մեզոք քոյին սուրբ չարչարանօք»։

Այս 'ի լուսոյ ծնաւնդ և ծագումն. որ եկիր 'ի խնդիր մոլորեալ ոչխարի բնութեանս. զոր ընդ խաչին բարձեր 'ի վերայ ուսոյդ մաքրեա զմեզ 'ի մեղայ մերոյ: Որ զայս Աստուածային քո բանի ծագեցեր յաշխարհահաճ խաւարն անդիտութեան՝ լուսաւորեա և զմեզ Հոր իմաստութիւն». 'ի Կանոն երրորդ կիւրակէի մեծի պահոց: Մի՛ զանց արասցուք ասասանօր յիշատակել զՔրիստոսանդ խոստովանութիւն և զպաղատանսառն բարեբանութեան զՀոգեզուարճ երդս քերթողահօր սուրբ վարդապետին մերոյ Մովսէսի Խորենացւոյ. զոր երգեաց յաւուր ցեռան ընդառաջն. «Այս 'ի լուսոյ 'ի Հօրէ առաքեցար և մարմնացար 'ի սուրբ կուսէն, զի վերստին նորոգեսցես զսպականեալն Ադամ: Դու Աստուած 'ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար և փրկեցեր զտիեզերս յանիծիցն Ադամայ: Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց Քրիստոս թագաւոր փառաց, ողորմեա մեզ Աստուած»: Այս շնորհ որդեղրութեան և հոգևոր վեհանելութեանն նորոգութիւն յաւազանի մկրտութեան տարամարդի և կատարի սուրբ Հոգւոյն Աստուծոյ յատուկ ներգործութեամբն. վասն որոյ փրկիչն մեր Յիսուս աւետարանեաց Նիկոդիմոս անուն իշխանին Հրէից զայս հոգևոր աքանչելի վեհանելութիւն այսու անժխտելի բանիւ. «Ընդեալն 'ի մարմնոյ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է.» Յովհաննու. Գ. Ը: Զայս հրաշալի շնորհ ներգործեալ 'ի հոգիս վերածնելոց սրբարար խորհրդով աւազանին մկրտութեան. նախասահմանեալ նկարէր և ձևակերպէր սուրբ Հոգին Աստուած 'ի ստեղծման աշխարհի շրջելով 'ի վերայ ջրոցն անդնդոց, որպէս գրեալ է յԱստուածաշնչի: «Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ և խաւար 'ի վերայ անդնդոց և Հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջրոցն» Ծն. Ա. Զ: Ուստի զրէ սուրբ Գրիգոր Նարեկացի. «Օրհնութեամբ ընդ Հօր և Որդւոյ և զանբաժանելի բղխաւն Ծնողին փառակից Հոգւոյն տերութեան. որ ստեղծ զընաւս և կենդանածնէ զամենայն, որ անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մը-

թուլեան աշխարհական միգի շրջէր նկարէր և կերպարա-
նէր ամենունակ ջուրքն անբաւութեան երկրաստաբած ծովու
'ի կատարումն արդեան խորհրդոյս զսուրբ աւազանն լուսոյ։
Նարեկ. Հե. 8։

Ի սոյն վարդապետութեան միտս գրէ Ներսէս Շնորհալի 'ի
Շարակնոցի. «Որ 'ի վերայ ջուրցն գոլով ստեղծանէիր զա-
րարածս, ի՛ջեալ 'ի ջուրս աւազանին ծնանիս որդիս Աստու-
ծոյ։ Եւ ի ստեղծող արարածոց, որ շրջէիր 'ի վերայ ջրոց, նոյն
և 'ի ջուրս աւազանին 'ի շնորհել մեզ քումդ էակցին, զգուեա
սիրով աղաւնակերպ, զմարդիկ ծնանիս Աստուածակերպ։ Ահա
զայս հրաշալի նեղոցութիւն սուրբ Հոգւոյն Աստուծոյ 'ի
ջուրն սուրբ աւազանին՝ նկարագրէ ուղղափառ Եկեղեցի մեր
ըստ սահմանադրութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսա-
ւորչին 'ի ջուրն աւազանին զսրբալոյս միւռոն կանթեցուցանելովն
նախ քան զմկրտիլ երեխային, և անդանօր խորհրդաւոր արա-
րողութեամբ հանդիսացուցանէ երգելով զՇարակնի զերիս
տունս Հոգեդալստեան. «Առաքելոյ աղաւնւոյ» և այլն. տես 'ի
մայր Մաշտոցն՝ յերես. 111։

Ի գերազանց շնորհս կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի
և զայս ևս խոստովանելի է սրտի մտօք շնորհք շնորհաց. քան-
զի զկնի կատարելոյ յաշխարհի ասա զփրկարար և զկենդանա-
գործ խորհուրդ սքանչելի մարդեղութեան. վերստին տնօրի-
նեաց մարդասիրութեամբն անպակաս մշտնջենաւորել 'ի մար-
դիկ 'ի հաղորդակցութիւն Աստուածային շնորհացն զՀոգւոյ
փրկութեան անընդհատ զօրութիւն. և զաւետարանական
լուսաւոր քարոզութիւն. զժառանգութենէ յաւիտենական
կենաց։ Վասն որոյ նոյն ինքն Յիսուս յետ յարութեանն պարա-
գևելով կատարեալ և համահաւասար ամենեցուն երջանիկ
դասուց սրբազան Առաքելոցն և զերբնտիր աշակերտաց իւրոց
զիւր Աստուածային անհամեմատ իշխանութեանն շնորհս՝
հրամայեաց այսպէս։ «Մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա

և ասէ՝ տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ. գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն: Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ'ի կատարած աշխարհի։ Մատթ. ԻԸ. 18 — 20։

Զսքանչելահրաշ ներդործութիւնս այս Քրիստոսական իշխանութեան առաքելական դասուց դովասանական երդօք բարեբանեալ երգէ սուրբ Մովսէս խորենացի քերթողահայրն մեր. «Որք 'ի սկզբանէ պատուեալ եղեն 'ի սէր բոլորից Հօր. առաքելական կոչմամբ զտիեզերս հրաւիրեցին յուսով հաստատել մասին. վարդապետութեամբ սոցա ամենեքեան օրհնեսցուք զՏէր։ Որք սկանատեսք և սպասաւորք եղեն մարմնացելոյ բանին զեր 'ի վերոյ անմարմնոցն դասուց հանդիպելով շնորհի. վարդապետութեամբ սոցա ամենեքեան օրհնեսցուք զՏէր։ Բարեկամք Քրիստոսի և հաղարապետք Աստուածային խորհրդոց. ընդունողք զբանն կենաց և լուսաւորիչք տիեզերաց. բարեխօսեցէք շնորհել մեզ զխաղաղութիւն ամենայն աշխարհի»։

Եւ դասք սրբազան Առաքելոց և երանելի Աշակերտացն Յիսուսի փրկչին մերոյ ըստ օրինակի ճշմարիտ երկնաւոր վարդապետին իւրեանց զաւետարանական լոյս շնորհաց տարածեցին ընդ ամենայն աշխարհ. որպէս հրաշալի նկարագրութեամբ քարոզեաց Լուսաւորիչն Հոգւոյ մերոց սուրբն Գրիգոր։ «Զի Տէրն զնոսայ նոցա զհամբերութիւն, թէ երանի է ձեզ. յորժամ հալածեսցին զձեզ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք. զի վարձք ձեր բազում են յերկինս։ Կա՛ զապար արկանէր. թէ այսպէս հալածեցին զմարգարէսն՝ որ յառաջ քան զձեզ էին. և թէ դուք էք աղ երկրի և լոյս աշխարհի»։ Եւ զինքն օրինակ առեալ նոցա. որ ինքեամբն կատարեաց զամենայն. որպէս և նոքա այլոց ցուցանէին. թէ ըստ

ՏԷՐՆ ինքնին գլխովին տեսաք։ Եւ ապա սփռեալ ընդ ամենայն ազգս տալ զգիտութիւն Աստուածածանութեան, և ընկեցուցանել զամենեսեան, որպէս մարդարէն յառաջագոյն երգեաց իրրև 'ի նոցանէ յառաջգիտութեամբ՝ գուշակութեամբ Հոգւոյն սրբոյ թէ՝ «Լուարուք զայս ամենայն ազգք ունկնդիր լերուք ամենեքեան, զոք բնակեալ էք յաշխարհիս։ Ծընունդք երկրի և որդիք մարդկան 'ի միասին մեծամեծք և տընանկք։ Եւ ոչ ոք կարէ թուել բաւել հասու լինել այլ ընդ ամենայն երկիր եկ բարբառ նոցա՝ և մինչև 'ի ծագս տիեզերաց են խօսք նոցա։ Այնպէս քարոզեցին ընդ տիեզերս առ 'ի լուսաւոր առնել զամենայն մարդ՝ որ գալոցէ յաշխարհ. տալ զապաշխարութիւն փրկութեան ամենեցուն լուսնալ, զամենեսեան արձակել 'ի կապանաց խաւարի՝ մկրտութեամբն 'ի Քրիստոսագունդն դրոշմել զամենայն ազգս, տալ զՀրդին Աստուծոյ բընակիլ 'ի սիրտս մարդկան, միաբանել խառնել 'ի սէր Աստուածորդւոյն, զի 'ի սրոյ ամենեցուն երբ և աղաղակիցէ և զամենայն աշխարհս միաբանեալ ասել Աբբա Հայր։ զի բարձցի անուն ծառայութեան, և զիցի անուն որդեգրութեան շնորհելովն Քրիստոսի. ուստի զմարմին Աստուածորդւոյն և ըմպել զարիւն կենդանարար, զի այնու մոցեն ամենայն աշխարհ 'ի ժառանգութիւն Քրիստոսի. լինիլ ժառանգ Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի»։ յԱգաթ։

Այդպէս և սուրբ Նարեկացին զկնի հրաշալի գովեստից համարէն երանեալ գասուց սրբազան Առաքելոց՝ վերջաբանութիւնս առնէ թէպէտ համառօտ՝ բայց բովանդակիչ բազմատեսակ բարեմասնութեանց նոցին շնորհաց։ «Սոքա մեր նախնիք. սոքա մեր ծնողք ըստ աւաղանին. սոքա գաստիարակք մերս իմաստից. սոքա վարդապետք աշակերտելոցս. սոքա դաւանութեան բարեաց ուսուցիչք. սոքա եկեղեցւոյ սըրբոյ հիմնադիրք. սոքա կցորդակիցք արդարութեան պաշտամանս. սոքա խրախոյսք ընտրական կրօնիցս. սոքա ձեռնա-

դրօղք քահանայութեանս 'ի Քրիստոսէ ընկալեալք և մեզ մատնաւորեալք. հաւատարիմ ուխտի դաշնաւորք. վկայք վեհագոյնք Աստուածատուն կարգի։ 'Ի ձեռն սոցա ընդունակսն և հաճոյական մաղթանաց հայցման աղօթից՝ ընկալցուք և մեք մասն փրկութեան 'ի բարերար գթութենանց խնամոյն Աստուծոյ՝ զօրանալ ձեռին մեր 'ի շնորհս, 'ի բժշկութիւնս, 'ի բաշխումն կենաց պարգևաց։ 'Ի ձառն Առաք։ Արդ՝ այսչափ բաւ համարեսցուք յաղագս խորհրդաձութեանց մերոց զանչափ մարդասիրական բարերարութեանց և զամբաւ շնորհաց փրկարար մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ յէակցէն և 'ի փառակցէն իւրմէ 'ի Հօրէն լուսոյ առաքեցաւ փրկիչ և կեցուցիչ մեր մարդկային գատապարտեալ բնութեան, զոր սրբազան Առաքեալն Յակոբոս [illegible] քարոզեաց համառօտակի յասելն՝ «Զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ։ Ահա աստանօր իբրև 'ի հայելւոջ պարզ և մեկին բանից սուրբ Գրոց և հոգեբուղխ վարդապետութեանց երանելոյ հարց բացայայտ երևեցաւ մտաւոր տեսութեան մերում բազմատեսակ շնորհք խորհրդոյ մարդեղութեան։ Ուրեմն մատիցուք 'ի տեսութիւն կատարեալ պարգևաց Հօր Աստուծոյ մարդասիրին, որ է սուրբ Հոգին Աստուած։

ԳԼՈՒԽ Դ.

Զինչ նշանակեն տուրք բարիք եւ պարգեւք կատարեալք։

Պարգևատու է Հայր Աստուած, ուստի և նորին մարդասիրական տուրք բարութեան է Որդին միածին, և պարգևն լիակատար շնորհաց սուրբ Հոգին Աստուած. վասն որոյ և երեքանձեայ մի Տէրութիւնն ունի զնոյն բովանդակ կատարելութիւնս, ըստ ողջամիտ և հրաշալի վարդապետութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ «Կատարեալ է Հայր անձամբ

և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ և զամենայն իւր անձին իսկութեամբ ունի։ Կատարեալ է Որդի անձամբ, զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն հայրաձին իսկութեամբ ունի։ «Կատարեալ է սուրբ Հոգին անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, զամենայն իւր անսկիզբն էութեամբ ունի»։ Ճառ Բ. Ցաճախ։

Առ այս Աստուածաբանական խորհուրդ քարոզեաց սքրբազան Առաքեալն Յակոբոս յասելն՝ «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն և կամ շրջելոյ ըստուերք» Ա. 17։

Արդ՝ զպարգևատուն ամենայն բարեաց զՀայրն երկնաւոր աղաչէ սուրբ Եկեղեցի մեր հանգերձ ուխտիւքն, զի շընորհեացէ զկատարեալ պարգևսն բարեաց և շնորհաց, զի նոր և աւուր լիցուք 'ի խաւարային և 'ի խռովայոյզ խորհրդոց սատանայի և 'ի նենգապատիր գաղտնորդայթ թելադրութեանց նորին բանսարկութեան, որոյ մարիծ հաւատով և հաստատուն յուսով և կատարեալ սիրով հաղորդ լիցուք յաւիտենական փառաց երկնից արքայութեան։ Վասն որոյ յաղօթս երեկոյեան հանգստեան ժամուն խնդրեմք 'ի Հօրէն լուսոյ. «Պարգևատու բարեաց և աղբիւր խաղաղութեան ՏԷր Աստուած մեր, յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո զմիտս մեր և զխորհուրդս 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի, որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան քո, զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց»։

Ըստ սմին և սուրբ Լուսաւորիչն մեր ասէ. «Աղբիւր է Հայր Աստուած ամենայն բարեաց՝ և 'ի նմանէ բաշխին պար-

գեր յարարածս։ Արդ՝ զոհայեալ զպարգևողէն զբարիս և զկատարողութիւն բղխողէն ազնիւբարար՝ մաղթէ զնաղարութեան բարին, որ լու ազոյնն է քան զամենայն բարիս, առանց որոյ և ոչ այլ բարիքն հաստատին։ Պարտիմք ևս զոհարանական երգօք բարեբանել զկատարեալն յամենայնի պարգևատուն զՀայրն Աստուած, և զկատարեալ պարգևն շնորհաց և զանազան բարեաց, զէակից և զփառակից Որդւոյ զսուրբ Հոգին Աստուած, որպէս երդէ սուրբն Ներսէս Շնորհալի։ «Որ կատարեալ անձնաւորութեամբ յերից կատարելոց մի և նոյն բնութիւն, որով ընդ Հօր և ընդ Որդւոյ միշտ երկրպագիս յարարածոց Հոգի Աստուծոյ, օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց։ Որ համասպատիւ Հօր և Որդւոյ քարոզեցին զքեզ Աստուածաբանք եկեղեցւոյ, յոր միրտիմք և դաւանիմք համագոյ Երրորդութեան անբաժանելի»։ Յօրհ։

Զի՞նչ քան զայս գերագոյն և անչափ շնորհաց պարգև, որ շնորհեցաւ գալստեամբ սուրբ Հոգւոյն Աստուծոյ, և զեղեալ առատացաւ 'ի մեզ լուր սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ, որ 'ի Ճառի գալստեան սուրբ Հոգւոյն զնոյն բարեբանելով գրէ «Ահա՛ ձիր՝ որ ոչ չափի, և պարգև՝ որոյ ոչ կշիռ գործոց զուգակցի։ ահա՛ տուր՝ որոյ խկութիւն ընութեան ոչ պարփակի, և շնորհ՝ որոյ ոչ զեղումն գերազանց մատց սահմանի։ ահա՛ ողորմութիւն առատ, որ ամենայն թագաւորութեան աշխարհս հաստատեալ՝ փոքր գասնի։ և մխիթարութիւն՝ որոյ ոչ ուրախութիւն մարմնաւոր լծորդի»։

Յիշատակաց արժանի է արդարև կրկնել աստուածոր զբանս ուղղափառ դաւանութեան և զքանչելի բարեբանութիւնս Գրիգորի Նարեկացւոյ զպարգևաց սուրբ Հոգւոյն թէ՝ «Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ Հօր և ընդ Որդւոյ և զՀոգի Հաւթեան նոցին, ամենազոր, ճշմարիտ կատարեալ և սուրբ, որ յանէից գոյացոյց զլոյսն եղեալքս ամենայն ինքնազոր հաստատեալ միշտ երկուքն ևս ընդ նմին անեղջ և անսահման թագա-

ւորութեան, որ ինչ պատճառն առաջին և բանն ահաւոր նորին ինքնութեան, նոյն ինքն և Հոգին բարձրացեալ։ Բարի ինքնակալ ամենից բաշխիչ զէօրն պարգևս 'ի գովեստ անուան փառաց միածնին, որ ազդեաց յօրէնսն, շնչեաց 'ի մարգարէս, փչմամբ ազդակցին տպաւորեցաւ յԱռաքեալսն, կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի Յորդանան 'ի մեծութիւն փառաց եկեղեցին, փայլեաց 'ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, զօրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս, օծ արքայութիւնս, օժանդակեաց թագաւորս, ետ վերակացուս, հրամանատրեաց փրկութիւնս, շնորհեաց ձիրս, հանդերձաւորեաց քաւութիւնս, զմկրտեալսս 'ի մահն Քրիստոսի 'ի բնակութիւն իւր մաքրաղաղեաց, զոր Հայր և Որդի, զնոյն և Հոգին ներգործեաց, և ինքն է Աստուած խնկեալ սիրապէս ամենայն յամենայնի»։ Նարեկ։ Լդ։

ԳԼՈՒԽ Ե։

Բնական շնորհք մարդկան 'ի ստեղծագործութենէն եւ գերբնական պարգեւաւորութիւնք առ նա 'ի ձեռն մարդեղութեանն Քրիստոսի։

Աստանօր նախ քան զպէտս գերբնական զառատաբաշխ շնորհաց զԱստուածային ձիրատուր պարգեւաց տալ իմ զձանաչութիւն արժան համարիմ յիշել և 'ի միտ առնուլ զԱստուածային ինքնաբուն բարութեանն զբնական պարգեւաց և շնորհաց զորութիւնս 'ի մարդկային հողեղէն բնութիւնս կանխաւ ներգործեալս, որով բանական և անմահական հոգւով պերճացեալ անուանեցաք պատկեր Աստուծոյ անսահման մեծութեանն՝ լինելով բանաւոր և անձնիշխան ընդունակ Աստուածային երանութեան և փառաց զարդարեալ սիրբնական արդարութեամբ և փառաւորեալ 'ի վիճակի անմահութեան, ըստ վիայութեան սուրբ Գրոց և հոգեշունչ վարդապետաց։

«Եւ ասաց Աստուած արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան . . . և արար Աստուած զմարդն

'ի պատկեր իւր ըստ պատկերի Աստուծոյ արար զնա». Ծնունդ. Ա. 26. Բ. 7. Ե. 1. Թ. 6։ «Զի Աստուած հաստատեաց զըմարդն յանեղծութիւն և 'ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա. և որք 'ի նորա վիճակի սակի են». Իմաստ. Ա. 13. Ե. 13—15. Սաղմ. Ը. 6։

Սուրբ Նէրսէս Շնորհալի Հայրապետն մեր յերգս Արարչականին գրէ։ «Զհանդուրժեալ բնութեամբ բարւոյն ունկիս միայն զանձառ բարին, այլ ստեղծեալ զմարդ յիւր պատկերին 'ի վեցերորդ առաւօտին և 'ի յերրորդ ժամ զկողաճինն 'ի յօդնութիւն ետ հողաճնին, զորս 'ի դրախտին եդ վայելել բայց 'ի պտղոյն մահու արգել». 'ի ժամսդիրս։

Եւ սուրբ Գրիգոր Նարեկացի յաւէտ երախտապարտ խոստովանեալ զանձն իւր այսմ Աստուածային շնորհաց գրէ. «Որ արարեր զիս 'ի քո պատկեր պանծալի 'ի ձեռն վեհիդ տրպաւորութեան զտկարս օժանդակելով. զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտաք ճոխացուցեր, խմաստիւք ածեցուցեր, հանճարով հաստատեցեր, 'ի շնչականաց որոշեցեր, հոգւով իմանալեաւ խառնեցեր. իշխանականին զոյիւ պճնեցեր». Նարեկ. Ե։

Սուրբ Հայրապետն մեր Նէրսէս Շնորհալի ըսելով՝ թէ 'ի Միջադեսս Ծագեալ է չարաչար մոլորութիւն ինչ համարելոյ զանմարմին անեղական բնութիւնն Աստուծոյ ունել մարմնաւոր կերպարանս մարդոյ, հերքէ զմոլորութիւն նոցին վկայութեամբ սուրբ Գրոց ըմբերանելով զնոսա յասելն՝ «Վասն զի մարդն անուն՝ որ է արթուն* այսինքն է իմաստուն, ոչ մարմնոյս է, այլ հոգւոյս. և Մովսէս զմարդն ասէ՝ թէ արար Աստուած 'ի պատկեր իւր, որ է հոգին, և ոչ մարմին. և Տէրն զմարմնոյն ասէ, թէ ոչինչ օգնէ, հոգին է՝ որ կենդանի առնէ, վասն որոյ և հաղորդ Աստուծոյ հոգիս մեր է անուամբ և պատկերաւ՝ և ոչ մարմին անուամբ. ըստ այնմ թէ՝ «Հոգի

*) Բայրամ ձեռագրի եղեալ կայ հարթուն։

է Աստուած և պատկերացու յաղագս անէնիշխանական բնութեանն. զի որպէս Աստուած իշխան է ամենայն եղելոց. և զոր ինչ կամի առնէ իշխանաբար յարարածս իւր. և ոչ զոք ընդդիմանայ եղելոցն 'ի նմանէ. նոյնպէս և մարդս իշխան է ըստ հոգւոյ անձին իւրոյ կամաց. զի զոր ինչ կամի առնէ եթէ բարի և եթէ չար. և ոչ բարին բռնադատի յԱստուծոյ. և ոչ 'ի չարէ ակամայ ձգի 'ի չարիս. այլ յոր կողմն հակամիտ յօժարութիւն կամաց իւրոյ և սիրէ՝ զայն գործէ. եթէ զբարին և եթէ զչարն. վասն որոյ և վարձս ըստ բարեաց և տանջանս ըստ չարեացն ընդունելոց է». յԻնդհան երես 275։

Եւ Սարգիս Շնորհալի վարդապետն մեր համառօտիւ գրեաց. «Որ զմարդն՝ զպատկեր Աստուծոյ փառաւորէ. ընդ նրմին և զսկզբնատիպն փառաւորէ. և որ զմարդ անարգէ. ընդ նմին և զԱստուած անարգէ. որ զնեզ անարգեաց ասաց Տէր մեր. զնս անարգէ». 'ի Մեկնութեան Պաղատրիկեայց. յեր. 145.

Արդ՝ այսչափ եղեն Աստուածային բարերարութիւնք շնորհաց առ 'ի սկզբան 'ի ստեղծագործութեան անդ նմին պատկերակից լինելով. բայց այժմ առաւելեալն 'ի մեզ առատութիւնք շնորհաց 'ի փրկագործ անօրէնութեան արգանդս և 'ի լուսաւորեալ պարգևաց անտի փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. ըստ այնմ՝ «Զի 'ի լուսաւորեալ անտի նորա մեք ամենեքին առաք զշնորհս փոխանակ շնորհաց. զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն և ճշմարտութիւնն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն». Յովհ. Ա. 16. 17։

Զայս շնորհաց առատապագեալ զեղումն և զարբարարներգործութեանց զօրութիւնն մարդարէական հոգւով նկատեալ երանելին Դաւիթ փոխաբերութեամբ ի մեն յաղագս վերանորոգման զատապարտեալ բնութեանս 'ի խորոց սրտէ աղաղակելով երգէր «Ի քէն է Տէր աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս». Սաղմ. Լե. 10։

Խոստովանիմք կատարեալ հաւատով ըստ Գրիգորի Աստ-

ուածարանին. եթէ Աստուած է կենդանարար և սրբարար շնորհաց աղբիւր, ևս և է անեղական խմանալի լոյս. որ լիւրմէ զերամաքուր ներդործութենէն մարդասիրարար շնորհէ հոգւոյ մերոց զլոյս զարթուցիչ մտաց և փառաւորիչ հոգւոյ։

Ա.հա զայս ամենայն ճշմարտաբանելով քարոզեաց մեզ Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր յասելն՝ «Աղբիւր է Աստուած ամենայն բարեաց. և արբուցանէ զհաւատացեալս ըստ իւրաքանչիւր բարւոյ ցանկութեան սուրբ շնորհօք։ Եւ կենդանարար և մշտնջենաւոր, որ կենդանութիւն տայ ամենայն արարածոց իւրոց, և բարերարէ առ ամենեսեան, որ պարգևօք իւրովք շնորհէ զքաւութիւն, որք դառնան առնա 'ի չարեաց, և լոյս է՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ կամի 'ի խաւարային մեղայն զալ 'ի սուրբ լոյսն»։ Յաճախ. ձառ. Ժ։

Ա.հա՛ յայս Աստուածային աղբիւրն իւր Յիսուս Քրիստոս Փրկիչ մեր մարդասիրական խնամօք կոչէր. հրաւիրէր զամենեսեան մերձիլ և ըմպել 'ի կենդանարար և յանմահական ջրոյն շնորհաց, որպէս զրէ սրբազան Աւետարանիչն Յովհաննէս «Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յիսուս աղաղակէր և ասէր. եթէ ոք ծարաւի լցէ, եկեսցէ առ իս և արբցէ»։ Յովհան. է. 37։

Ո՛վ ամենաքաղցր և սքանչելի մարդասիրական հրաւէր. եթէ ոք՝ ասէ, զգայ զիւր հոգւոյն ծարաւութիւն, 'ի ջուրն անմահութեան կենաց ջերմեռանդ հաւատով և անձնիշխան կամաք եկեսցէ առ իս, և արբցէ. զի ես եմ մարգարէական հոգւոյն Դաւթի խնդրաւ յայտնեալ Աղբիւրն շնորհաց և անմահութեան կենաց «Ջուրն՝ այսինքն շնորհք. զոր ես տայց նմա՝ եղեցի նմա Աղբիւր ջրոյ բղխեցելոյ 'ի կեանսն յաւիտենականս»։ Յովհան. Դ. 14։

Ա.պա ըստ Ռակերերանին «Վա՛յ է վայ սոսկալի մերժելոց հեռացելոց յանմահական կենաց յառաջագոյն շնորհաց Աստ-

ուստծային ազգերէ ասոմ. կամ չարաչար մոլորութեամբ հաւատոյ և կամ պղծալիր մոլութեամբ բարուց և վարուց. 'ի ձառն Զղջման. մասն. Բ։

Եւ խմաստասէրն Յովհաննէս 'ի կարգս պաշտաման եկեղեցւոյ յերես 208 'ի վերոյ բանին՝ Լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս՝ ասէ. «Երեսօք պարտիմք խմանալ զմարդեղութիւն Որդւոյն Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի, յորմէ ընկալաք զլոյս շնորհաց և կենաց, զոր բացայայտ աւետարանեաց մեզ սրբազան Աւետարանիչն Յովհաննէս յասելն. «Եւ լոյն 'ի խաւարի անդ լուսաւորէ. և խաւար նմա ոչ եղև հասու։ Եւ թէ՝ Բանն մարմին եղև և բնակեցաւ 'ի մեզ. և տեսաք զփառս նորա իբրև զմիածնի առ 'ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ»։

Որ եմն Ջերմեռանդն հաւատով արժանաւորապէս խընդրօղք հաղորդեցան սքանչելի զօրութեան և պէսպէս շնորհաց և լուսոյ իմաստութեան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. առ այս վարդապետք երանաշնորհ վարդապետն մեր Ձեռն Բարսեղ 'ի մեկնութեան Մարկոսի. գ. «Որպէս որ զհետ երթայ լուսոյ և անու շահոտութեան ինչ իրաց. լցեալ լինի լուսով և անու շահոտութեամբ. այսպէս և որ զհետ երթայ Քրիստոսի լցեալ լինի Աստուածային լուսով և անու շահոտութեամբ առ 'ի նմանել»։

Այսպէսն Յիսուս Քրիստոս 'ի բնէ անսահմանարար ունէր յինքեան զամենայն կատարելութիւնս Աստուածային զօրութեան, իմաստութեան և լիապատար շնորհաց, և ոչ թէ օր քան զօր և կամ ամ յամէ ընդ ածել և ընդ զարդանալ հասակի մարմնոյն յօրէ ծննդեան ածէր և զարդանայր Աստուածային զօրութեամբ. իմաստութեամբ և շնորհօք 'ի ներքս յանձին իւրում։

Այս զի՞նչ պարտ իցէ մեզ իմանալ զդրեալն 'ի սուրբ Աւետարանի անդ երթէ. «Եւ Յիսուս զարդանայր իմաստութեամբ

և հատակաւ, և շնորհօք յԱստուծոյ և 'ի մարդկանէ։։ Ղուկ։ Բ։ 40։ 52։

Այս զարգացումն տայ մեզ իմանալ առ արտաքս յայտնեալ ծառայութիւն և տարածումն զօրութեան և իմաստութեան և շնորհաց Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Վասն զի Աստուածորդւոյն մարդեղութեանն շնորհ փրկարար նոխս յայտնեցաւ տարածեցաւ 'ի հօրէն Աստուծոյ ամենակալէն 'ի գիշերի հրաշափառ սուրբ ծննդեան յարթուն և 'ի զգաստ յերջանիկ հովիւսն, 'ի յերկինից յայտկապէս առաքելով աւետարեր հրեշտակն առ նոսա և հետեւարար ընդ հրեշտակին ընդ այնմիկ եղև անդանօր բազմութիւն զօրաց երկնաւորաց երևեալ, որք ոչ միայն աւետարանեցին հովուացն զհրաշափառ մարդեղութեան փրկարար շնորհաց լուութիւնն, այլև հրեշտակային երգօք փառաբանութեան յայտ արարին եթէ՝ ծնեալն 'ի սուրբ կուսէն է Աստուած փառաց և ՝ի զօրութեանց, վասն որոյ զրէ սուրբ վարդապետն մեր Իգնատիոս մեկնիչն։ «Այլ և սքանչելիս ծածկեաց 'ի բազմաց և յայտնեաց հովուացն։ Զնոսա միայն հաճեցաւ մերձակայ և տեսող լինել սքանչելեացն, թերևս զի պարզամիտք էին և առանց նենգութեան։ Ուստի և հրեշտակ ցեառն երևեալ տայր նոցա աւետիս, և փառք ցեառն ծագեաց առ նոսա։ Եւ զի՞նչ իցեն փառք ցեառն, փայլումն լուսոյն, որ յայտնեաց զփառս Աստուածութեան այնմիկ, որ խանձարրօք պատեալ գնիւր 'ի մնուր։ և թէ հրեշտակք յերկինս վերացան յանդիման նոցա, զի 'ի միտ առցին հովիւքն, թէ անտի իջին, անտի էր և Մանուէլն 'ի մնուր եգեալ՝ որում զփառսն երգէին։։ 'ի Մեկն։ Ղուկ։ երես 69։ 74։

Զայս ամենայն ուսուցանէ սրբազան Աւետարանիչն Ղուկաս։ Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայգ։ որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։ Եւ հրեշտակ ցեառն երևեցաւ նոցա և փառքն ցեառն ծագեցաւ առ

նասա և երկեան յերկիւղ մեծ. և ասէ ցնոսա հրեշտակն. մի՛ երկնչիք. զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր 'ի քաղաքի Դաւթի։ Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եղեալ 'ի մսուր։ Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք օրհնէին զԱստուած և ասէին. Փա՛ռք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն և օրհնութիւն։ Եւ եղև իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչև ցՔեթղեհեմ. և տեսցուք զբա՞նն այս՝ որ եղև, զոր Տէր եցոյց մեզ։ Ղուկ. Բ. 8–15։

Ահա ճիշդ ապացոյց առ արտաքս 'ի մէջ մարդկան տարածանելոյն և քարոզելոյն Աստուածային զօրութեանց և շնորհաց Յիսուսի Փրկչին, նոյնպէս անժխտելի վկայութիւնք Հօր Աստուծոյ՝ որ 'ի Յորդանան հռչակեցաւ՝ ըստ գրելոյ սրբազան Աւետարանչաց՝ «Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և եհաս զՀոգին Աստուծոյ. զի իջանէր իբրև զաղաւնի և գայր 'ի վերայ նորա, և ահա ձայն յերկնից, որ ասէր, դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»։ Մարկ. Ա. 9. Ղուկ. Գ. 21։ Յաղագս այսր սքանչելահրաշ Աստուածայայտնութեան աստուածիմաստ վարդապետութեամբ գրէ սուրբ Հայրապետն մեր Ներսէս Շնորհալի 'ի մեկնութեան անդ. «Ի վերք քան զլոյս և զյաժարութիւն մարդկոյին ընութեան տեսեալ լինէին յայնժամ բարութիւնք, քանզի խորհուրդ Երրորդութեանն Ծածկեալ յայտնանց և յազգայ յայտնէ 'ի Յորդանան . . . Հայր 'ի վերուստ վկայելով, և Որդին մկրտութեամբն, և Հոգին աղաւնակերպ իջմամբն։ Եւ զի՞նչ այլ այս, եթէ ոչ նորոյ արարածոյ դարձեալ սկիզբն առնելոյ. ո՛չ երևելոյ՝ այլ անտեսանելի փրկագործութեան ազգաց մարդկան»։

Ապա զայսչափս բաւ համարեալ յաղագս պէսպէս շնորհաղեղ պարգևաց և շնորհաց, որք հետևորդ արդիւնք են սրբարար խորհրդոյ մկրտութեան, փութամ խորհրդածել զսքանչելի խորհրդոյ դրոշմին համառօտիւ, քանզի ընդարձակ գրեալեմ զայնմանէ 'ի Հանդիսարանին Ուղղափառութեան Հայոց յօրինեալոյ յինէն. յերես 307—318։

ԳԼՈՒԽ Զ.

Շնորհք սրբարար խորհրդոյ դրոշմին անջնջելի է 'ի հոգիս հաւատացելոց, որով և անկրկնելի։

Սրբարար խորհուրդ դրոշմին անջնջելի տպաւորէ 'ի հոգիս մկրտելոյ զտիրականն կնիք առատազեղ շնորհաց սուրբ Հոգւոյն Աստուծոյ. սովաւ արիանան և զօրանան հոգիք մկրտելոյ յաղթել հոգեկորոյս մոլութեանց և յառաջադէմ լինել Աստուածահաճոյ առաքինութիւնս և անվնասիկ խոստովանիլ զՇնորհիս հաւատս ուղղափառ սուրբ կրօնիդ քրիստոնէութեան. և սովաւ կնքիմք հոգեւոր զենուր Քրիստոսի առ 'ի միշտ յաղթող հանդիսանալ ընդդէմ կորստական որոգայթից չարահնար սատանայի և պէսպէս մոլութեանց արքանեկաց նորին։ Յաղագս այսր ներքին շնորհաց սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ զոր ներգործեալ ունիմք 'ի հոգիս մեր խորհրդով դրոշմին սրբարարս միառնի. զրէ Յովհաննէս Աստուածաբան աւետարանիչն. «Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն, և գիտէք ամենեքին։—Զայս գրեցի ձեզ. . . Եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի ձեզ. Ա. Յովհ Բ. 20—27։ Վասն այսր բանի բացատրութեան զրէ Սարգիս Շնորհալի յասելն. «Օծութիւն՝ թուի ինձ երեք զաւազանին ասէ, որով յորդեգրութիւն Աստուծոյ ժամանակին, որով և յեղեալրութիւն Քրիստոսի 'ի վեր ելին, որով զամենայն մեղս մերկացան, և զամենայն սրբութիւն զգեցան

և իմաստանոցան Հոգւոյն իմաստութեամբ. և շնորհս զանազանս և պէսպէս ընկալան։ Նմին իրի ասէ, (եւ գիտէք ամենեքին) այսինքն 'ի պարգևաց Հոգւոյն առնալք, որ 'ի յօծմանէ անտի, մարգարէաբար գիտէք զամենայն ինչ, և ճանաչէք զյապա լինելոցսն»։ Դ. Յառ. Ա Յովհ։

Եւ սուրբն Ներսէս Լամբրոնացի սոյնօրինակ գրէ. »Սա (Հոգին սուրբ) օծանէ զմիտս մեր ըստ Յովհաննու, և առնէ քրիստոնեայս և Քրիստոսընկալս. և յայսմ օծութեան զօրանամք գիտել զամենայն, և լուսաւոր առնէ զաչս սրտից մերոց գիտել զյոյս կոչման մերոյ, և զմեծութիւն փառաց ժառանգութեան ևգոյայնութիւն և զերկայնութիւն սիրոյն Քրիստոսի»։ 'Ի Յառն Հոգւոյն սրբոյ։

Եւ սրբազան առաքեալն Պօղոս վարդապետելով Կորնթացւոց եկեղեցւոյն զՀոգևոր դրշմի զօրացուցիչ խորհրդոյն գրէ։ «Այլ՝ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս. և որ օծ զմեզ, Աստուածէ, որ նիքեաց զմեզ. և ետ զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր»։ Բ. Կորնթ. Ա. 21. 22։

Տես աստանօր բարեմիտ ընթերցասէր, զիաբդ մեկին և բացայայտ զուղղափառ խոստովանութենէս զայսմանէ գրէ Գրիգոր Նարեկացի. «Զի որպէս յիջումն լուսարանի սուրբ աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամբ առնուլ սրբութիւն. սոյնպէս 'ի յօծումն խւղոյն պարարեալ յուսով զՀոգւոյն զօրութիւն սովիմբ և 'ի սոյն համարիմք ունիլ ամենայնիւ աներկմտելի»։ Նար. Ղէ. 'Ի Յառն Միւռ։

Ահա զայս խորհրդաւոր և շնորհազարդ սարսղութեան սրբարար դրոշմին սրբալոյս միւռոնի հրաշալի ինն սքանչելագործութեամբն Աստուծոյ հաստատեաց և աւանդեաց ուղղափառ սուրբ եկեղեցւոյն մեր լուսաւորիչն սուրբ Գրիգոր. զորմէ գրէ ստուգապատումն Ագաթանգեղոս։ «Եւ իբրև ելանէին մարդիկն ամենայն և թագաւորն 'ի մկրտութիւն անդր 'ի Ջուրն Եփրատ գետոյն, նշան սքանչելի երևեալ յԱս-

տուծոյ, զի զտեղի առեալ ջուր գետոյն, անդրէն դարձաւ ընդ կրունկն . . . Եւ իւղն օծութեան՝ զոր արկանէր Գրիգոր 'ի վերայ մարդկանն. շրջան առեալ 'ի մէջ գետոյն շուրջ զմարդ-կարն խաղայր . . . սոյնօրինակ զորձեաց և բազմացոյց զեկեղեցիս, և կացոյց քահանայս և քրիստոսեան դրշմաւն առ հասարակ ընծայեցուցանէր զամենեսեան լինել ամենեցուն Հոգւոյն սրբոյ. Ազաթան։

Այսքէն և զայս կարևորագոյն է ջերմեռանդն հաւատոյ աչք ճանաչել, խոստովանիլ, եթէ այս սրբալոյս միւռոնի դրոշմն և շնորհազեղ խորհուրդն է անջնջելի կնիք հաստատութեան Աստուածային խոստման, ժառանգելոյ ճշմարիտ հաւատացելոց զյաւիտենական երանաւէտ փառս երկնից արքայութեան. ուրեմն սքանչելի զօրութիւն խորհրդոյ դրոշմին սրբալոյս միւռոնի է օծումն ներքին շնորհաց ձրիատուր պարգևաց. կնիք անխախտելի եղեալ 'ի վերայ իւրաքանչիւր ուղղափառ հաւատով մկրտելոց երբև զրաւական հաստատութեան երկնային երանաւէտ ժառանգութեան խոստացելոցդ։ Առ վերոգրեալ բանն սրբազան Առաքելոյն Պօղոսի՝ որ առ Կորնթացիս, թուղթ Բ. Գլուխ Ա. համար 21. 22. բացայայտ մեկնութիւն տան սուրբ վարդապետն Ոսկիբերան, և այլ սրբազան մեկնիչք Աստուածային Գրոց համաձայն այսօրինակ գրեն. եթէ միտք բանին է այս։ Աստուած մարդասէր օծ և կնքեաց զմեզ ձեօք հանդերձ, հրաշալի խորհրդով դրոշմին 'ի սիրտս ձեր անեղծանելի և անայլայլելի շնորհաց սուրբ Հոգւոյն, որով իբրև առհաւատչեայ խոստացելոյն իւրոց յաւիտենական ամենայանկալի երանաւէտ փառաց ժառանգութեան կնքեալ եմք։ Առ այս բացատրութիւն համաձայն գրատանին և սրբազան վարդապետք ուղղափառ սրբոյ եկեղեցւոյն մերոյ Ներսէս Լամբրոնացի և Գրիգոր Նարեկացի գրելով այսպէս։ Կնիք է ամուր 'ի վերայ իւրաքանչիւր անդամոց եկեղեցւոյ սրբոյ Քրիստոսի, որ պարապալ պահին սուրբ յիւրաքան-

չիւր պատիւս շնորհի։ Քանզի որ հաստատեաց զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս՝ Աստուած է. որ եւ զառ հաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր և կնքեաց զմեզ». 'ի Ներքոյ գալս. Հոգւոյն սրբոյ։ «Ահա արդարև յաւէտ խոկալէ՝ եւ զոս այս լուսապատար խնկալիր վերնականիդ սիրոյ տեսութեան, վասն որոյ և Պօղոս իսկ պատշաճ վարուկ 'ի ճառ գոհարանութեանն ասելով յայտնի, որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս Յիսուս, Աստուած է. որ և կնքեաց զմեզ և ետ զառ հաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր». Բան Ղ. 'ի ճառն Միւռոնի։

Տեսէ՛ր ով բարեմիտ ուղղափառ ընթերցող՝ զի այս Աստուածային կնիք գրոշմին հաստատուն և անփոփոխելի է. ապա և յաւէտ անկրկնելի և անջնջելի, վասն որոյ գրէ սրբազան Առաքեալն Պօղոս։ «Բան զի անգիջ են շնորհք և կոչումն Աստուծոյ». Հռովմ. ԺԱ. 29։ Իսկ որ հակառակի այսմ և վերակրկնէ զդրոշմն, ոչ միայն արհամարհող շնորհաց սուրբ Հոգւոյն դատի, այլև մարդասիրական տնօրէնութեանն և խորհրդոյն պարտաւոր։

ԳԼՈՒԽ Է։

Զինչ շնորհաներգործէ արժանաւորաց խորհուրդն սրբոյ Հաղորդութեան, եւ զինչ կարեւոր իցէ յարժանաւորութիւն այնմ։

Արդ՝ սկիզբն արասցուք ողջամիտ հաւատով խորհրդածել 'ի վերայ սքանչելի խորհրդոյ կենդանարար հաղորդութեան, քանզի անհերկրայ հաւատով և կատարեալ զղջմամբ և ապաշխարութեամբ մերձեցելոցն 'ինչոյն՝ բաշխի և պարգևի փրկարար և կենսադրդծ մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ. յորմէ զանազան պարգևք շնորհաց ներգործի 'ի մեզ. ապա շնորհք շնորհաց անուանեալ զայս կենդանարար խորհուրդ Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սրբազան Հաղորդութեանն պարտ և արժան է մեզ. քանզի բազմապատիկ շնորհս պարգևեալ ներ-

գործէ 'ի հոգիս մեր, զորս բարեբանելով զոհաբանական շնորհապարտ խոստովանութեամբ զրէ Գրիգոր Նարեկացի։ «Որ յամենայն վայրի կառուցեր զնոքանն վկայութեան արեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն՝ նոքա զդատաւորիք մահուն Հաբելի զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի, կեանս կրկինս և անմահական շնորհաց մերոութեան, յաւրութեան նորոգութեան, առ քեզ ընտանութեան ընդ Հոգւոյդ սրբոյ միութեան քաւութեան, աղաւութեան, լուսաւորութեան մշանջենաւոր մաքրութեան, իսկապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան անկապուտ փառաց։ Ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն՝ հաշտեցուցիչ բանից աղաչանք։ «Եւ զոր ահաւորն է ասել. կարգեմ աստանօր, յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, Աստուած իսկ լեսնիլ ընտրութեամբ շնորհին և ընդ հաստողիդ միանալ տեսուանի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ, զոր կատարուին երջանիկ խոստմանն, ըստ Պօղոսի բանին, ոչ ուներ օրէն»։ Նարեկ ԾԲ։ Ուշն ուշով արժանի է նկատել զամենայն պարբերութիւնս հոգելից բանից սուրբ վարդապետիս, յորս յայտնի ցուցանէ զկենդանարար խորհրդոյն փրկագործ հաղորդութեանն զպէսպէս շնորհաց ըստ քանչելի ներգործութիւնս։

Արդ՝ նախ արժանապէս մերձեցօղք առ խորհրդական սուրբ սեղանն նորոյ ուխտիս՝ իսկապէս հաղորդին կենդանարար մարմնոյ և արեան Փրկչին, զորմէ վկայէր սրբազան Առաքեալն Պօղոս յասելն՝ «Բաժակն օրհնութեան՝ զոր օրհնեմք. ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի, հացն՝ զոր բեկանեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի»։ Ա. Կորնթ. ԺԱ. 16։

Յայս միտս զոհաբանելով երգեաց Սահակ պարթև սուրբ և երանեալ Հայրապետն մեր. «Բան Հօր և քահանայապետ ճշմարիտ, որ զաշխարհակեցոյց զմարմին և զարիւնդ քո բաշ-

խեցեր յԱռաքեալն։ այսօր հաղորդիմք հոգեղէնքս Աստուա-
ծային խորհրդոյդ։ 'ի Շարկ։ Աւագ Հինգշաբաթի։

Երկրորդ՝ շնորհն հաղորդութեան է անընդմիջելի մեր-
ձաւորութիւն և սիրալեր ընտանեկցութիւն ընդ Ցեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի։ ըստ այնմ՝ «Որ ուտէ զմարմին իմ
և ըմպէ զարիւն իմ։ նա յիս բնակեսցէ և ես 'ի նմա»։ Յով։ Զ։ 57։
Վասն որոյ գրէ հրեշտակերօն վարդապետն մեր Գրիգոր Նարե-
կացի։ «Ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակ-
մամբ»։ Նարեկ։ ԾԲ։

Երրորդ՝ փրկագործ մարմնոյ և արեան Յիսուսի Քրիս-
տոսի փրկչին մերոյ շնորհիւն խոստովանեալ զղջացեալ և ա-
պաշխարեալ հաղորդելոց կատարելապէս պարգևի մեզայ։ Թո-
ղութիւն ըստ այնմ՝ «Եւ առնալ բաժակ զոհացաւ։ ետ նոցա և
ասէ՝ արբէք 'ի դմանէ ամենեքեան։ այդ է արիւն իմ Նորոյ
ուխտի։ որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի քաւութիւն մեղաց»
Մատթ։ Ի։ 27։ 28։

Եւ սուրբն Գրիգոր Նարեկացի զոհարանելով զշնորհաց կեն-
դանարար սուրբ Հաղորդութեան գրէ։ «Որ մարմնակից և պատ-
կերակից մեր եղեալ և քահանայապետապէս անօրինակդ զօ-
բինակին խորտակեալ զլուծ ընդ գենման մահու անասնոցն,
բարերանեալ մարմնոյդ նուիրմամբ։ անմահապէս միշտ մա-
տուցանիս և աննուազարար քաւութիւն շնորհես։ ոչ սակա-
ւամեղեցն միայն։ այլ և որոց հատեալ է ակնկալութիւն առ
ելս կենաց»։ Նարեկ։ ԾԳ։

Չորրորդ՝ շնորհիւ սրբարար խորհրդոյն լուսաւորեալ ներ-
քին յիշողութեան մտաց մերոց։ Ջերմեռանդն հաւատով կա-
րողանամք յիշատակել զկամաւոր չարչարանս և զխաչելու-
թիւն Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վասն մերոյ փրկու-
թեան։ և սրբի մտօք յիշատակելով լեցուք հաղորդ և կցորդ
չարչարանաց և խաչելութեան նորին։ որով և արժանացուք
փառաց Աստուածութեան նորին հաղորդս գտանիլ։ Վասն

որոյ զայս պատուէր անժխտելի աւանդեաց ՏԷՐՆ մեր ՅԻՍՈՒՍ ԿՐԻՍՏՈՍ. «Զայս արարէք առ իմոյ յիշատակի». Ղուկ. ԻԲ. 19։ Ուստի սուրբ Հայրապետն մեր Խոհակ մեծն յերդս շարա-կանի Աւագ Հինգշաբթու գրեաց։ «Բաշխեմ զմարմին և զարիւն իւր Նոր ուխտ անուանեալ և յիշատակ կամաւոր մահուանն մերձեցելոցս 'ի նա սրբութեամբ». 'Ի Շարակ։ Զայս պատուէր Փրկչին մերոյ ՅԻՍՈՒՍԻ սրբազան Առաքեալն Պօղոս բացայայտ քարոզէ հաւատացելոց յասելն. «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս և ըմպիցէք զբաժակս. զմահ Տեառն պատմե-ցէ՛ք. մինչև եկեսցէ նա». Ա. Կորնթ. ԺԱ. 26։ Յայտնի իսկ երևի միաբ բանիս ուղղափառ ողջմտիտ հաւատացելոց ըստ Ոսկերերանի ճշդրիտ բացատրութեան. «Քանիցս անգամ ար-ժանասջիք ուտել զկենդանարար մարմին ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ Փրկչին մերոյ ընդ տեսակօք խորհրդական հացին, և ըմպել զփրկարար արիւն նորա ընդ տեսակօք գինւոյս՝ պարտաւոր-եալ էք յիշել սրան մտօք զմահ Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻ-ՍՏՈՍԻ. և այս այնչափ մտադիր խորհրդածութեամբ լիցի. մինչև մարթասցի սիրտ ձեր և հոգի գտանիլ կցորդ փրկա-բար և կենդանարար չարչարանաց խաչելութեան և մահ-ուան ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ Փրկչին մերոյ. զի ըստ Առաքելոյն՝ «Եթէ չարչարանացն կցորդ լինիմք. և փառացն հաղորդ լի-նելոց ենք». Հռովմ. Ը. 17։ Յաղագս որոյ պատարագամատոյց քահանայն ըստ սրբոյ Ոսկերերանի և Բարսղի և այլոց հարց՝ համեմատ պատուիրանագրութեան Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻ-ՍՏՈՍԻ. և ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի 'ի սրբագործելն խորհրդական հացին և բաժակին՝ յիշատակէ զփրկագործ խորհուրդս կամաւոր չարչարանաց կենարարին մերոյ, ՅԵՐՄԵ-ՌԱՆԴ հոգւով բարերանելով այսպէս։ «Եւ արդ՝ մեք ՏԷՐ ըստ այսմ հրամանատարութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քո՝ յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենսատու խաչելութիւնն. զե-

բեքորեայ թաղու�։ զերանելի յարութիւնն զԱստուածա-պէս համարձուս։ զնստիլն ընդ աջմէ քո Հօր։ զահաւոր և փառաւորեալ զմիւսանգամ գալուսն խոստովանիմք և օրհնեմք։ Խորհր։ Պատա։ Ա՛ռ այս գոհաբանական մաղթա-նիս պատարագիչ քահանային զմեծ արդիւնաւորութիւնս ու-նիլ ուսուցանէ մեծ քահանայապետն մեր սուրբն Գրիգոր լու-սաւորիչ յաւանն։ «Եւ 'ի մատուցանելդ զահաւոր և զսարսա-փելի զփրկական խորհուրդն, յիշէ անդ զմարդասիրութեան նորա զերախտիսն։ և խնդրէ Ջերմեռանդն արտասուօք զքա-ւութիւն կենդանեաց և մեռելոց։ և առնու զինդրելին։» Յա-ճախ։ ՀԱՌ։ ԺԳ։

Եւ Ներսէս Շնորհալին զրէ յԱյսօր անՃառն։ «Թագաւորն ա-բարածոց զՀայն կենայ ետ քաղցելոց։ և զբաժակն ուրա-խարար՝ որք յԱդամայ արամեցելոց։ այս նոր ուխտ է իմոյ արեան։ փոխան հնոյ ուխտին արեանց։ զոր յիշատակ իմ առնիցէք։ մինչև եկից ես միւսանգամ։» Շարական։

Հինգերորդ՝ Հաղորդութեան անմահարար մարմնոյ և արեան Փրկչին զանմահ կենդանութեան յաւիտենական փա-ռաց երանութեան զդրաւական շնորհէ արժանաւորապէս մեր-ձեցելոց՝ ըստ անժխտելի աւանդութեան կենարարին Յիսու-սի՝ «Ամէն ամէն ասեմ ձեզ։ զի որ հաւատայ յիս։ ընդունի զկեանս յաւիտենականս։ Ես եմ հացն կենաց։ Հարքն ձեր կերին զմանանայն յանապատին և մեռան։ Այս է հացն։ որ յերկնից իջեալ է՝ զի որ ուտիցէ ոք 'ի նմանէ։ մի՛ մեռցի։ Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ։ Եթէ ոք ուտիցէ ի հացէս յայսմանէ կեցցէ յաւիտեան։ և հացն՝ զոր ես տաց՝ մարմին իմ է։ զոր ես տաց վասն կենաց աշխարհի։» Յովհ։ Զ։ 47—52։

Զսոյն Ճշմարիտ վարդապետութիւն երկնաւոր Փրկչին յայտ միտ մեկնաբանելաքարոզեաց Լուսաւորիչն մեր ասելով՝ «Որք 'ի Քրիստոս մկրտեցան։ Ճշմարիտ հաւատով և սուրբ սիրով հա-

զորդին մարմնոյ և արեան փրկչին, որ գրաւական է փառաց յուսոյ յարութեանն։ Ըստ բանի Տեառն՝ թէ «Քանիցս անգամ եթէ ուտիցէք 'ի մարմնոյ իմմէ և ըմպիցէք յարենէ իմմէ, զիշատակ մահուան իմոյ պատմեսջիք մինչև 'ի գալ ձ գալստեան իմոյ յերկիր։ Զի նա է ազատիչ և արդարացուցիչ, որով լուծանին մեղք հին մարդոյն, և սկիզբն առնուն նորքս՝ որ ըստ Աստուծոյ հաւատովք սուրբ և ճշմարիտ 'ի Քրիստոս Յիսուս։ Մեկնիլ յամենայն չարեաց և յարդարիլ ամենայն բարի գործովք աւետեաց յուսոյն կենաց։ Զի մահուամբն իւրով երկոյծ Քրիստոս զզօրութիւն սատանայի, որ զիշխանութիւն մահուն 'ի ձեռն մեղաց ուներ, և կենաւքն թագաւորեցին արդարութեամբ և յոյս յարութեան հաստատեալ կայ 'ի Քրիստոս»։ 'Ի Յաճախս. Հառ. ԺԳ։ Եւ մեծ Հայրապետն մեր սուրբն Խաչիկ գրէ յերգս Շ սաղմանի մեծի Հինգշաբաթուս։ «Որ բաշխմամբ կենդանարար խորհրդոյ՝ անապական ճաշակմամբն հրաւիրեաց զմեզ յերկնից արքայութիւն»։

Վ. Եցերորդ՝ խորհուրդ անմահական սուրբ փրկարար պատարագին ըստ սուրբ Գրոց՝ անուանի Աստուածային խորհրդական սեղան սրբութեան, յորում ճշմարտապէս միշտ պատարագի մարդասիրական շնորհիւն Յիսուս Քրիստոս զառն Աստուծոյ և նուիրագործի յայսմ խորհրդական սեղանի մարմին և արիւն Յիսուսի Քրիստոսի ընդ տեսակաւ սրբագործեալ հացի և գինւոյ»։

Եւ արդ՝ քանզի աներկմիտ սրտիւ հաւատամք թէ 'ի վերայ սուրբ և խորհրդական սեղանոյս մատչի ամենասուրբ պատարագն և կատարի սրբազան խորհուրդ կենդանարար մարմնոյ և արեան Յիսուսի Քրիստոսի, ապա արժան իսկ է խոստովանիլ և հաւատոյ աչքք ճանաչել զնա սեղան սրբութեան, սեղան փրկութեան, սեղան հաղորդութեան մարմնոյ և արեան կենարարին մերոյ։ Զայս Աստուածային սեղան փրկութեան հալածիչ բռնութեան թշնամւոյն հոգւոյ մերոյ բե-

լեարայ՝ 'ի հեռուստ մարգարէական աչք տեսեալ երջանիկն Դաւիթ զոհանալով ասէր. «Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան ակնյանդիման նեղչաց իմոց». Սաղմ. ԻԲ. 6։ Այն այս խորհրդական սեղանոյս նուիրագործութեան օրինակն յայտնեցաւ 'ի ձեռն Մելքիսեդեկ քահանայի, քանզի մինչ Աբրահամ Աստուածային զօրութեամբ յաղթեաց բռնաւոր թագաւորացն ազգայնոց իւրոց և եկն 'ի յաղթութենէն առ Մելքիսեդեկ քահանայն, նա եհան ընդ առաջ նորա պատարագ հաց և գինի, և ընդ նուիրելն օրհնեաց զԱբրահամ և ասէ. «Օրհնեալ Աբրահամ յԱստուծոյ բարձրելոյ, որ արար զերկինս և զերկիր. օրհնեալ է Աստուած բարձրեալ, որ մատնեաց 'ի ձեռս զթշնամիս քո». Ծննդ. ԺԴ. 18—20։

Տեսէք բարեմիտ ընթերցող զօրինակն խորհրդական սրբարգործեալ հացին և գինւոյն. այսինքն փրկարար մարմնոյ և արեան 'ի ձեռն Մելքիսեդեկ քահանայի յայտնեցաւ ազգեցութեամբ նախախնամ Աստուածային անտի տեսչութեան. եթէ օրինակն խորհրդական սեղանոյ սքանչելի և փափագելի հանդիսացաւ յետ յաղթութեանն Աբրահամու, ապա իսկայնն սրբոյ առաւել սքանչելի և փափագելի պարտ է լինիլ ջերմեռանդից, որով անշուշտ յաղթել կարողացին հոգևոր թագաւորացն Բելլարայ և արքանեկաց նորա. և 'ի սպառ վանել, մերժել զհոգեկորոյս թելադրութիւնս նորին և զչարախորհուրդ հնարս. մանաւանդ բազմատեսակ ախտից մեղաց մերոց զգարշութիւնս սրբել և չքացուցանել. որպէս Յովհան Ոսկեբերան վկայէ զայսմանէ 'ի ձառի Հաղորդութեան. «Այս մարմին և արիւն խորհրդական հալածէ զդևս, և հեռագոյն լինիլ առնէ, և կոչէ զհրեշտակս առ մեզ և զՑերն ամենեցուն, զի ուր երևեսցի մարմին և արիւնս տէրունական, փախչին դևք, ընթանան հրեշտակք»։

Այսպա իրաւամբ պանծայ անօթին ընտրութեան սուրբն Պօղոս, արհամարհելով զհեաւոյզս մովսիսական հին օրինաց զբ-

բելով առ Եբրայեցիս։ «Ունիմք մեք սեղան՝ ուսսի ոչ ունին իշխանութիւն ճաշակել որք պաշտին զպաշտօն խորանին»։ Եբր. ԺԳ. 10։ Նկատէր ևս 'ի մէջ եկեղեցւոյն Կորնթացւոց զպայպիսի հաւատացեալ անձինս, որք անխիղճ մերձեցեալ 'ի սեղանս կռոց ուտէին զզոհեալս առ նոսա հակառակ քրիստոնէական կրօնից և սրբութեան սեղանոյ ցեռան հաղորդութեան։ վասն որոյ մերժելով մերժէ զնոսա 'ի փրկարար սեղանոյ ցեռան գրելով այսպէս։ «Այլ զոր զոհենն հեթանոսք՝ դիւաց և ոչ Աստուծոյ զոհեն, ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել։ քանզի ոչ կարէք զբաժակն ցեռան ըմպել և զբաժակն դիւաց, և ոչ կարէք 'ի սեղանոյ ցեռան վայելել և 'ի սեղանոյ դիւաց։ Ա. Կորնթ. Ժ. 20։ Սակայն զայս խորհրդական Աստուածային սեղանոյ զանազան շնորհաց ներզործութիւնս կենդանարար մարմնոյ և արեան փրկչին մերոյ զգալի աչօք անհնար է տեսանել։ Որպէս սուրբն Յովհան Ոսկեբերան 'ի յորդորակի ԻԹ ճառին Հաղորդութեան գրէ այսպէս։ «Անասցուք այսուհետև ամենայն ուրեք Աստուծոյ, և մի՛ լեցուք բանընդդէմ։ Թէպէտ և հակառակ ինչ մերոյ մտացս բանն կարծիցի, եղիցի քան զմիտս մեր և զերեսս բան նորա հաստատուն։ Այսպէս և 'ի խորհուրդս առնեմք, զի ոչ յայն առաջիկայն միայն հայիմք, այլ զբան նորա ունիմք 'ի մտի, զի նորա բանն առանց խարէութեան է, և մեր տեսիլս գիւրապատիր, նա ոչ երբեք վրիպէ, և սա բազում ինչ սխալէ։ Եւ քանզի զբանն ասէ։ «Ա՛յս է մարմին իմ։ հաւանիմք և հաւատամք, զի իմանալի աչօք տեսանեմք զայն։ քանզի ոչինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս, այլ տեսանելի իրօք զիմանալիսն զամենայն։ Նոյնպէս և 'ի մկրտութիւնն 'ի տեսանելի ջուրն գործի պարգևն, և իմանալիք են՝ որք կատարին, ծնունդն և նորոգութիւնն, զի եթէ անմարմին էիր, թերևս և մերկ իսկ զիմանալիսն պարգևեալ էր։ բայց քանզի մարմնով պատեալ են ոգիքն, տեսանելիօք զի-

մանալիսն աւանդեաց քեզ։ Քանիք իցեն, որ ասիցեն այժմ, եթէ կամիմ զերեսս Նորա տեսանել զկերպարանսն, զհանդերձն. զոտիցն օդ. ահաւասիկ զնա իսկ տեսանես. Ի Նա մերձենաս, և ուտես և ս, դու զհանդերձսն ցանկասա տեսանել, և Նա զանձն իսկ տայ քեզ. ոչ միայն տեսանել, այլև շօշափել և ուտել Ի ներքս առնուլ»։

Զայս ճշմարտութիւն սուրբ Գրիգոր Նախահայրապետն մեր թէպէտ համառօտ, բայց ազդու բանիւ քարոզեաց մեզ այսպէս. «Զի Գրիգոր սուրբ սիրոմն խրախուսեալք սրբոցն ցնծան յուսովն Ի ձեռն հաշտարար պատարագին, որով փրկեցան արարածք, որ զաներևոյթն երևելեօքս եցոյց կամաւոր խաչելութեամբն, հաշտեցուցանել զարարիչն ընդ արարածս»։ Ցաճախ. Հատ ԺԳ։

Արդ արժան իսկ է մեզ ջերմեռանդ հոգւով և արժանաւոր պատրաստութեամբ մերձիլ Ի սեղանն սրբութեան և հաղորդիլ փրկագործ մարմնոյ և արեան Փրկչին մերոյ. փարձեսցուք ուրեմն զանձինս մեր. քննեսցուք խղճիւ մտաց ըստ սիրոս մեր մաքրիլ յանպականութենէ մեղաց, և ըստ ամենայնի հրաժարիլ յանպակութենէ չար գործոց ճշմարիտ զղջմամբ և անկեղծ խոստովանութեամբ, յանձն առցուք ամենայն յօժարութեամբ զկատարեալն ապաշխարութիւն, որով արդարացեալ արժանապէս հաղորդ լիցուք բաղմատեսակ շնորհաց և փառաց փրկարար խորհրդոյն։ Ցաղագս որոյ սրբազան Առաքեալն Պողոս զրէ առ հաւատացեալս այսպէս. «Փարձեացէք մարդ զանձն իւր, և ապա Ի հացէ անտի կերիցէ, և Ի բաժակէն արբցէ»։ Որպէս թէ կամի ասել ընդ Ոսկեբերանին. նախ քան զմատչիլ Ի սուրբ և Ի փրկարար խորհուրդն, ինքնին Ի հարցուփորձ մտցէ ընդ անձն իւր. Ի դատ լիցի անձին՝ վկայ և դատախազ քննեսցէ զսիրտ իւր. և ապա կատարեալ խոստովանութեամբ և Աստուածահաճոյ զղջմամբ ապաշխարութեամբ մարթասցի գտանել զկորուսեալ արդարութիւն

իւր. որով արժանաւոր լինիցի ընդունելութեան սրբարար խորհրդոյն շնորհաց և փառաց։ Արդ՝ զարթիք ուրեմն խղճի մտաց 'ի բանից ասեալ յորդորանաց. անսէ՛ք՝ զմրպիսի սոսկալի վճիռ և զահագնաբուր սպառնալս յիշեցուցանէ սրբազան Առաքեալն Պօղոս. «Այսու հետև՝ որ ուտիցէ զհացս և ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն»։ Եւս և վերստին զկուցանէ ամենեցուն զառաւելագոյն ծանրութիւն յանցանաց անարժան հաղորդելոյն յասելն. «Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անէին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խորհէ զմարմին Տեառն». Ա. Կորնթ. ԺԱ. 27—29։

Ո՛վ սարսափելի վճռոյս անհրաժեշտ դատապարտութեան, որ 'ի ներքս յանձն և 'ի հոգի իւր ընդունի անարժանութեամբ հաղորդեալն մարմնոյ և արեան Տեառն, յաղագս այսոցիկ կարեւորագոյն պարտաւորութեանց մերձեցելոց 'ի խորհրդական սեղանն սրբութեան, բան ազգու և յորդորական գրէ Յովհան Ոսկեբերան սուրբ Հայրապետն այսպէս։ «Ամենեքին արթուն պարտիս լինիլ. քանզի և ոչ սակաւ տանջանք պահեսցին այնոցիկ՝ որք անարժանութեամբն հաղորդեսցին. ըզմտաւ ածեալ. որպիսի ցասումն մատնչին և խաչահանուացն ելեւ. զգոյշ լեր այժմ գուցէ և դու պարտական մարմնոյ և արեանն գտանիցիս։ Նոքա զմարմինն սպանանեն, և դու յաղտեղալ հոգիդ ընդունիս յետ այնչափ երախտեաց։ Քանզի չշատացաւ մարդ լինիլն ապատակիլ և մեռանիլ. այլև տակաւին զանձն իւր խառնէ ընդ մեզ. ոչ միայն հաւատովք. այլ և արդեամբք իսկ մարմին իւր յօրինէ զմեզ։ Քանզի զինչ չէ պարտ սրբագոյն լինիլ այնմ՝ որ յայնմ զենման վայելիցէ. քան զրմպիսի ճառագայթս պայծառագոյն ձեռինն՝ որ զայն մարմինն հաւանիցէ. և բերանոյն՝ որ հոգեւոր հրոմն լնուցու. և լեզուին՝ որ յահագին արենէն ներկանիցի։ Զմտաւ ածեալ. որպիսի պատուով պատուեցեր. կամ յորմէ՞ սեղանոյ վա-

յելս. զոր հրեշտակք տեսանեն և զարհուրին, և չ'իշխեն համարձակ ընդդէմ հայել փայլատականցն՝ որ անտի հատանիցին, և մեք նովաւ կերակրիմք. և նովաւ զանդանիմք և լինիմք մի մարմին և մի հոգի». Յովհան. Ոսկեր. գառ. ԻԹ։

ԳԼՈՒԽ Ը.

Խորհուրդն ապաշխարութեան հաստատեալ 'ի Քրիստոսէ, որ զործադրի 'ի Հեռն քահանայից պաշտաձիցն Աստուծոյ խոստովանութեամբ զղջացելոց, Ներգործէ նոցա զրաղմապատիկ արդարացուցիչ շնորհս Հոգւոյն սրբոյ։

Խորհուրդն ապաշխարութեան կատարելագործի փրկարար շնորհիւ կամաւոր շարչարանաց և խաչելութեան կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի ըստ իւրումն մարդասիրական սահմանադրութեան՝ թէ «Ա'յսպէս պարտ էր շարչարիլ Քրիստոսի, և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս սկսեալ յԵրուսաղէմէ». Ղուկ. ԻԴ. 46։ Ո՞վ որչափ և որքան երանութեան է արժանի, որ կատարեալ զղջմամբ և ճշմարիտ խոստովանութեամբ խղճի մրատաց 'ի սուգ վարակի և յապաշխարանս յաղագս մեղացն զործեցելոց, հոգիք նոցին զներողութեանն շնորհ ընկալեալ 'ի ցեառնէ՝ ուրախ լինին Աստուածային անզուգական մխիթարութեամբ. քանզի «Երանի՛ սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին». ասէ Յիսուս. Մատ. Ե. 4։ Զայս աւետարանական երանութիւն ըստ ամենայնի մեկնաբանելով՝ 'ի վերայ սգալեր զղջմամբ ապաշխարողաց քարոզեաց Լուսաւորիչն մեր սուրբ Գրիգոր. «Որոց (սգաւորաց) ընկալեալ են զշնորհս Հոգւոյն աւ Աստուած սէր բաղձալի. խնդիրս արտասուօք անմեկնելի լինի յԱստուծոյ սգաւորն. որ անձկայ շնորհօք տեսանել զանձաւելիսն. որ սրբոցն տուաւ։ Ա՛յլ և զղջացեալսն է իմանալ զսգաւորսն. որք դառնան 'ի չարաչար վարուց ստոյգ խոստովանութեամբ,

և հանապազ արտասուօք խնդրեն զԹողութիւն յանցանաց յամենեցուն Ցեառնէն, զի կարասցեն հասանել յօթևանս կենաց՝ որ լեն է և անզեղջ 'ի մխիթարել։ Եւ զուարթածալիկ ուրախութեամբ ընդ ճշմարիտ սգաւորսն ժառանգել զերանութիւնն, որ է յաւիտենից մխիթարութիւն։» Ցաճախ։ Ճառ։ Ժ։

Զայսմ երանութենէ գրէ Սարգիս Շնորհալի ընդարձակագոյն մեկնաբանեալ զյետագայ խրատս սրբազան Առաքելոյն Ցակոբայ վասն ապաշխարութեան. «Սրբեցէ՛ք մեղաւորք և ուղի՛ղ արարէ՛ք զսիրտս երկմիտք, տառապեցարո՛ւք, սգացարո՛ւք, և լացէ՛ք, խոնարհեցարո՛ւք առաջի Ցեառն և բարձրացուսցէ զձեզ։ ոմ անտանելի քաղցրութեանն՝ ասէ, եթէ ընդ որոյ՝ զորս շնորհէ. վասն զի ո՛չ կարէ զեւրն պատկեր յայնպիսի խոնարհութեան տեսանել և անտես առնել, այլ վաղվաղակի բարձրացուցանէ. միայն զայն կամի՝ զհակառակն զբնալ ճանապարհ, ամբարտաւանութեանն հակառակ զիսոնարհութեանն, և հակառակ մեղաց զսգոյն և զապաշխարութեան։ Զի թէ հայր զորդի տեսանելով 'ի սուգ և յարտասուս՝ ո՛չ առնէ անտես, այլ կարեկից լինի և սգակից վասն գթոյն։ Ջանայ և հնարի մխիթարել և զպատճառս արտասուացն հատանել։ 'Ի վեր առնու 'ի գետնոյն, բիւր բանս աղերսանաց խօսի խանդաղատական սիրով. մինչև տեսանիցէ զնա դադարեալ յարտասուացն։ Եւ այն՝ զի մարդ է, որչափ ևս առաւել Աստուած Հայրն գթութեանց և Աստուածն ամենայն մխիթարութեանց՝ տեսանելով զմարդ խոնարհեալ սակս երկիւղին, 'ի սուգ և յարտասուս վասն մեղաց քուրձ զգեցեալ և 'ի վերայ մոխրոյ նստեալ, ո՛չ առնէ անտես. այլ վշտակից լինի նմա և սգակից։ Մխիթարէ ասելովն, եկա՛ք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնիք և ես հանգուցից զձեզ։ Եւ միւսովն՝ թէ ո՛չ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալն և զկեալն։ Եւ դարձեալ՝ թէ անօրէնն եթէ դարձցի և արասցէ արդարութիւն, կելով կեցցէ և մի՛ մեռցի։ Եւ դարձեալ՝

թէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիթ, իբրև զձիւն ըստվիտակ արարից։ Եւ այսպիսի բիւր բանս ողբանաց խօսի առ այնպիսի սգաւորն և երանէ զսուգ նորա, և արժանի մխիթարութեան վարկանի զնա։ Երանելիք են՝ ասէ սգաւորքն, զի նոքա մխիթարեսցին։ Մինչև յայսպիսի բանից համարձակութիւն առեալ ասիցէ ընդ մարգարէին, դարձոյց զսուգ իմ յաւրախութիւն, էղերծ յինէն զքուրձ իմ և զգեցոյց ինձ ուրախութիւն։ Եւ թէ յերեկոյս մեղայ եկին ինձ լալիք, իսկ յառաւօտու գթութեանն Աստուծոյ՝ եղև ինձ ուրախութիւն։ Զի եհատ Աստուած յաչաց իմոց զամենայն արտօսր՝ որ 'ի մեղայ։ Արդ զայս ամենայն տեսեալ ասաց, խոնարհեցարուք առաջի Տեառն, և բարձրացուսցէ զձեզ։ Դու ասէ, խոնարհիս իբրու զմարդ վասն մեղայ քոց և անկարգութեան, և Նա բարձրացուսցէ զքեզ որպէս զԱստուած վասն ողորմութեան իւրոյ և մարդասիրութեան։. ՃառԹ։ՅՃ։Թ։ՂԹ։Ոյ։

Արդ՝ հիմն հաստատութեան օրինաւոր և Աստուածահաճոյ ապաշխարութեան է խորհրդական խոստովանութիւնն առաջի քահանայի, որ ունի զպաշտօնական իշխանութիւն 'ի Փրկչէն մերմէ։ Որպէս 'ի հին օրէնս կարգեաց Աստուած ըզՍամուէլ մարգարէ իբրև խոստովանահայր 'ի վերայ Սաուղայ, որպէս զնի կատարեալ զդջմամբ ընկալցի ներողութիւն յանցանացն գործելոց ընդդէմ Աստուածային կամաց։ բայց նա փոխանակ խոնարհական զղջման, ամբարտաւանութիւն խառնեաց ընդ մեղայական բանի իւրոյ յասելն՝ «Մեղայ, այլ մեծարեա զիս առաջի ծերոց ժողովրդեան իմոյ և առաջի Իսրայէլի։ և դարձիր ընդ իս և երկրպագիցէ Տեառն Աստուծոյ քում։ Ա։ Թագ։ ԺԵ։ 30։

Այնպէս և զՆաթան մարգարէ իբրև խոստովանահայր առաքեաց Աստուած առ Դաւիթ՝ յանդիմանել զնա յաղագս մեղայ նորա։ որպէս և գրեալէ յԱստուածաշունչ սուրբ Գիրս «Եղև բան Տեառն առ Նաթան և ասէ. Երթ և ասա

ցՃառայն իմ Դաւիթի». և այլն. Բ. Թագ. Է. 4. 5 ։ ԺԲ. 1—13։ Իսկ յորժամ խոստովան եղև Դաւիթ զմեղս իւր կատարեալ զղջմամբ առաջի Նաթանայ մարգարէի յասելն իւր՝ Մեղայ Տեառն. յայնժամ լուաւ զարձակումն մեղայ 'ի Նմանէ, եթէ «Եւ Տէր անցոյց զքո զմեղս քո, և մի՛ մեռցիս»։

Իսկ 'ի շնորհական օրէնս սքանչելի անօրէնութեամբ ցիսուսի Փրկչին մերոյ՝ առաջին պաշտօն խոստովանահայրութեան ընկալաւ սուրբ Յովհաննէս մկրտիչ. որպէս գրէ սրբազան Աւետարանիչն Մատթէոս. «Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք, և ամենայն Հրէաստան. և ամենայն կողմն Յորդանանու. և մկրտեին 'ի Նմանէ 'ի Յորդանան. և խոստովան լինէին զմեղս իւրեանց». Գլուխ Գ. 5. 6։

Եւ զայս խոստովանահայրութեան պաշտօնն և զարձրադոյն իշխանութիւնն արձակելոյ 'ի մեղայն կազանաց ինքն ին Աստուած Փրկիչ մեր շնորհեաց սրբազան դասուց Առաքելոց յետ յարութեանն երևելով նոցա 'ի վերնատան անդ՝ յերեկոյի աւուրն միաշաբաթու. յորժամ փչեաց 'ի նոսա ասելով՝ «Առէք Հոգի սուրբ». այսու Աստուածային խորհրդական փչմամբն ոչ զլեութիւն պարգևաց սուրբ Հոգւոյն Նշանակէր. զոր ընդունելոց էին յաւուրս Պենտէկոստէի. այլ զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ. վասն որոյ անմիջապէս հրամայեաց յասելն՝ եթէ «Ուստեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եթէ զուրբաք ունիցիք, կալեալ լիցի». Յովհ. Ի. 23։

Գերագոյն իշխանութիւնս այս ոչ միայն ներդործեալ տարածեցաւ յԱռաքեալս, այլ և յօրինաւոր յաջորդս նոցա։ Ուստի եթէ սրբազան Առաքեալք և եթէ օրինաւոր Երիցուք եկեղեցւոյն գլխարհրդական խոստովանութիւնս պաշտօնական յանձնեցեալ իշխանութեանս կատարեին և կատարին յաջորդաբար։ Իսկ ցիսուս Քրիստոս փրկիչ մեր Աստուածային իշխանութեամբն և բացարձակ հեղինակութեամբն ի բով քաւութիւն և ներողութիւն մեղայ շնորհէ. և ըստ

Աստուածային անսուտ խոստմանն՝ «Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս»։ Մատ. Թ. 6։ Վասն այնորիկ սուրբ Գրիգոր Նարեկացի յիրաւի բարեբանեաց զոհարանութեամբ զՁեր մեր Յիսուս Քրիստոս անուանելով սկզբնահայր խոստովանութեան յասելն. «Դու ոսկրմած սկզբնահայրդ խոստովանութեան անյայտ ծածկութիւն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ Տէր Յիսուս Քրիստոս քաղցրութեամբ նայեցիս քաւել»։ Նարեկ. ԼԱ։ Տէս բարեմիտ ընթերցող զի բանն Աստուած Յիսուս Քրիստոս բացարձակ հեղինակ և սկզբնահայր խոստովանութեան զոլով 'ի ձեռն մարգարէին Եսայեայ 'ի խոստովանութիւն մեղաց կոչէ զյանցաւորն օրինաց իւրոց սքանչելի մարգասիրութեամբ։ որպէս երբեմն 'ի դրախտին կոչեաց զնախահայրն մեր 'ի խոստովանութիւն մեղացն. ըստ այնմ «Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ. և ասէ ցնա ո՞ւր ես»։ Ծն. Գ. 9։ «Ո՛չ դնեցեր ինձ խունկս արծաթոյ, և ո՛չ ցանկացայ ճարպոյ զոհից քոց, այլ 'ի մեղս քո և յանօրէնութիւնս քո վերակացու եղէ քեզ։ ես եմ, ես եմ Նոյն, որ ջնջեմ զանօրէնութիւնս քո, և զմեղս քո այլ ևս ո՛չ յիշեցից»։ Թ. 24. 25։ Ահա այսպէս և 'ի ձեռն սոյն մարգարէիս զայս կարևոր պաշտօն աւանդէ քահանայից հին օրինաց վասն յանցաւորաց Յերուսաղէմ բնակելոց ապաշխարութիւն յանձն առողաց յասելն՝ «Քահանայքդ խօսեցարուք 'ի սիրտ Երուսաղէմի, և մխիթարեցէ՛ք զդա, զի լի եղև տառապանօք։ թողեալ լիցին դմա մեղք իւր, զի ընկալաւ 'ի ձեռանէ Տեառն կրկին զհատուցումն մեղաց իւրոց»։ Եսայ. Խ. 2։

Եւ 'ի ձեռն Երեմիայ մարգարէի յանցաւորաց ցուդայական ցեղին զապատիժս մեղաց ցուցանելով կոչէ 'ի խոստովանութիւն և յապաշխարութիւն հրամայելով այսպէս. «Թերևս լուիցեն տունն ցուդայ զամենայն չարիս, զոր խորհեալ եմ ես առնել նոցա, զի դարձցին իւրաքանչիւր 'ի ճանապարհէ իւրմէ չարէ, և քաւիչ եղէց անիրաւութեանց և մեղաց նոցա»։ Լ. 3։

Այսպէս ինքեանցի աստանօր խորհրդածութեանս բանից վերջաւորութիւն ամենազգու յարդարական դրութեամբ սրբարաղան Աւետարանչին Յովհաննու։ որ ասէ. «Եթէ ասիցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ։ Այլ եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ 'ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեղ յամենայն անիրաւութենէ։ Եւ թէ ասիցեմք՝ եթէ ոչինչ մեղաք, ստուտ առնեմք զնա, և բան նորա ոչէ 'ի մեզ։» Ա. Յովհան. 8—10։

ԳԼՈՒԽ Թ.

Շնորհք ձեռնադրութեան ընդ երդիսի պարտականութեամբ արկանեն զնոգեւոր հովիւս։

Խորհուրդ ձեռնադրութեան քահանայական բարձր պաշտամանն է շնորհ պարգևեալ 'ի ճշմարիտ քահանայապետէ և 'ի հեղինակէ անսի Յիսուսէ Քրիստոսէ, զոր պարգևեալ սրբարաղան դասուց Առաքելոց, որով և անուանեցան բարձրասահմանն պաշտօնեայ և անտես Աստուածային սրբազործ և փրկարար խորհրդոց։ Եւս և հոգեւոր հովիւս արթուն հսկողութեամբ և ճշմարիտ վարդապետութեամբ առաջնորդել և խնամել զբանաւոր հօտս ճշմարիտ Հովուապետին, և այս շնորհ երկնարերձ ասահմանի քահանայութեան 'ի ձեռն սրբազան Առաքելոց և առաքելապատիւ Հարց սրբոց պարգևեցաւ և պարգևի միշտ ներդործելով յարժանաւոր մշակս 'ի հոգեւոր պաշտօնեայս սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի, յաղագս այսց բարձրագոյն շնորհաց լուր սրբազան Առաքելոյն Պօղոսի։ որ գրէ առ Տիմոթէոս աշակերտն իւր։ «Մի՛ անփոյթ առնիր զշնորհացդ՝ որ 'ի քեզ է՝ որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան։ Ցայդ խորհեա՛ և 'ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։» Եւ թէ «Յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհս Աս-

տուծոյ, որ են 'ի քեզ 'ի ձեռնադրութենէ իմմէ։» Ա. Տիմ. Գ. 14։

Տեսանենս սիրելի ընթերցող՝ «Մի՛ անփոյթ առներ, ասէ, զշնորհացդ՝ որ 'ի քեզ են» ըստ Ոսկեբերանի և այլոց սրբոց հարց մեկնչաց՝ կամի ասել. «Ով ձեռնադրե՛ալդ և օծեալդ 'ի Քրիստոսապարգև պաշտօն քահանայութեան և յեպիսկոպոսութեան հոգևոր հովուութեան սեպհական հօտին Քրիստոսի, մի՛ լեցի քեզ բնաւ անհոգ կալ մնալ և անդործ թողուլ զպարտաւորատաշաձ բարս որ մատակարարութիւն և գործադրութիւն հոգևոր պաշտամանդ, թէպէտ այս շնորհ ձրի պարգևեցաւ քեզ 'ի գերամբարձ քահանայապետէ անտի Աստուծոյ Փրկչէն մերմէ. բայց պարտէ քեզ արթուն մտօք և անձնադիր Ջանիւք արծարծել 'ի քեզ զշնորհս բարձր պաշտօնիդ երիցութեան, վարդապետութեան, եպիսկոպոսութեան, որով գերազոյն շնորհաց և փառաց արժանացիս ածեցուցանելով զտաղանդն քեզ աւանդեալ շնորհաց հոգևոր պաշտօնիդ գործադրութեամբ, որով արժանի լեցիս 'ի ժամու ընդհանրական հարցաքննութեան շնորհաց արդարաքնին գատաւորին լսել զայս երանաւէտ բարբառ, եթէ՝ «Ա՛զնիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մտա՛ յուրախութիւն Տեառն քո»։ Մատ. Իե. 23։ Ապա թէ ընդ հակառակն գործեսցես Աստուածային ձրիատուր շնորհաց, զոր ընկալեալ ես յերիցութեան, 'ի վարդապետութեան, և յեպիսկոպոսութեան, յայնժամ ունիս զսոսկալին զայն յանդիմանութիւն լսել 'ի նոյն իսկ Տեառնէ, որ զքանքարն շնորհեաց հոգևոր պաշտօնիդ, եթէ «Ծառայ չար և վատ՝ գիտէիր, թէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի։։։։Արդ առէ՛ք 'ի դմանէ զքանքարդ, և տո՛ւք այնմ՝ որ ունիցի զտասն քանքար, ։ ։ ։ Եւ զծառայդ անպիտան հանէ՛ք 'ի

խաւարն արտաքին. անդ եղեցի լալ և կրծել ատամանց»։ Մատ. Դ. Իե. 26. 28. 30։

Տես զի՞նչ վատ այն ծառայն չար, ստոգտանելի և անպիտան անուն ժառանգեաց, որպէս Յովհան Մորձորեցի սուրբ վարդապետն մեր գրէ 'ի վերայ բնաբանիս «Յիրաւի անպիտան, զի ո՛չ ինքեան» և ո՛չ այլոց օգուտ արար։ Երիցութեան հոգևոր պաշտօնն, զոր ունին քահանայք. վարդապետք և եպիսկոպոսք, պահանջէ ըստ Աստուածային օրինաց քարոզել զբանն կենաց, զստահական խրատել և զբանաւոր հօտն Քրիստոսի պաշտպանել և չտալ 'ի ժանիս գայլոց թշնամեաց հաւատոյ ճշմարտութեան. եթէ զայս ամենայն թողուցու կամ չեղեալն յերիցութիւն անձնասպասութեամբ կամ մարդահաճութեամբ, ծուլութեամբ և անհոգութեամբ, ո՛չ թէ միայն ապիրատ անուանի, այլև զսոսկալի վայն տերունական անիծից յանձն իւր սեպհականէ, զոր յիշելով երանելին Պօղոս գրէ. «Զի եթէ աւետարանեմ, ոչինչ են պարծանք. քանզի հարկ 'ի վերայ կայ. բայց վա՛յ է ինձ, եթէ ո՛չ աւետարանեմ։ Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ, և եթէ ակամայ, անտեսութիւն յանձն է ինձ»։ Ա. Կորնթ. Թ. 16. 17։ Այն սրբազան Առաքեալս Պօղոս զանժխտելի պարտաւորութիւն հոգևոր պաշտաման սիրելի աշակերտին իւրոյ յիշեցուցանէ գրելով առ նա այսպէս, «Զգոյշ լեր ինքդ՝ անձին և վարդապետութեանդ և 'ի դմին յամենայնի. զայդ եթէ առնիցես, և զանձն ազատեցուցես և զայնոսիկ՝ որք քեզ լսիցեն» Ա. Տիմ. Դ. 16։ «Եւ զու քարոզեա՛ զբանն, հա՛ս 'ի վերայ ժամու և տարաժամու, յանդիմանեա՛, սաստեա՛, մխիթարեա՛ ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ»։ Բ. Տիմ. Դ. 2։ Եւ երանելի Առաքեալն Պետրոս ընդհանուր ամենայն երիցանց գրէ 'ի զգուշութիւն հոգևոր պաշտօնատարութեան իւրեանց և ցուցանէ նոցա եթէ զնոյն ունին բարձրագոյն ատենման երիցութեան, որպէս և ինքեանք ունին, ըստ այնմ՝ «Զերիս-

ցունս այսուհետև աղաչեմ իբրև զերիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդս արասցէ՛ք՝ որ՝ի ձեզ հօտդ է Աստուծոյ, վերակացու լինիլ, մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի՛ զօշաբաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. զի յերևիլ հօտապետին ընդունիջիք զանթառամ փառացն պսակ». Ա. Պետ. Ե. 1—4։

Այս ամենայն առաքելական սահմանադրութիւնք հոգեշահ խրատուց են յորդորք առ եկեղեցական պաշտօնեայս. արթնութեամբ խղճի մտաց վարել զպարտուպատշաճ պաշտօնս բարձր աստիճանին. զի մի՛ որ յերիցանց Եկեղեցւոյ ըզչարն այն և վատ ծառային զանպիտան անուն ժառանգեսցէ յանձին, հակառակալ Աստուածային բարեխնամ կամաց և սրբոյ կոչմանն՝ աստիճանի երիցութեան, որով ոչ միայն զնջուցանէ զլոյս Աստուածային խմաստութեան՝ ի միտս իւր. և ապարդիւն առնէ զտաղանդ շնորհաց՝ զոր ընկալեալ է՝ ի կոչման իւրում քահանայութեան և հոգևոր հովուութեան, այլ և անպիտանութեամբն իւրով յաւիտենական դատապարտութեան լինի պատժակից ընդ այնոսիկ՝ որք հեռացեալ մերժեցան յԱստուածային ճշմարտութենէն, որպիսիք եղեն հեթանոսք՝ ի կուապաշտութիւնս, և Հրէայք յամառելովք՝ ի կամապաշտութիւնս. յաղագս որոց վշտալի սրտիւ զրէ երջանիկ մարգարէն Դաւիթ. և՝ ի վերջոյ յայտնէ զծայրագոյն ամբարշտութեան զործոց նոցին զղատապարտութիւնս ասելով թէ «Ամենեքեան խոտորեցան՝ ի միասին և անպիտանացան». Սաղմ. ԺԳ. 3. 4։

Զի՞նչ օգուտ է՝ ի ձեռնադրութեան խոստանալ եթէ բանիւ և եթէ գրով. առաջի Աստուծոյ և մարդկան՝ ի միջ սրբոյ Եկեղեցւոյ՝ առ՝ ի ծառայել Աստուածային կամաց սահմանադրութեան օրինաց և առաքելական հայրապետական կանոնադրութեանց և անխոցեալ լինիլ՝ ի գործադրութիւն. ոչ ապաքէն

յայնժամ այնպիսին 'ի վերայ իւր բիրտ զայն քստմնելի ա-
նուն անպիտանութեան, որով լինի անուանակից և պատժա-
կից ընդ այնպիսեաց՝ զորոց զրէ սրբազան Առաքեալն Պօղոս.
«Խոստանան գիտել զԱստուած, և գործով իւրեանց ուրանան.
պիղծք և անհաւանք և յամենայն գործս բարեաց անպիտանք»
Տիտ. Ա. 16 : Ապաքէն 'ի քահանայական, վարդապետական և
յեպիսկոպոսական կոչմունս հրաւիրելոց և զպաշտամունս հո-
գևոր բարձր ասպիճանաց ստանձնելոց՝ հարկաւորագոյն է նախ
ունել զուսումն մտաւորական, և զդիտութիւն սուրբ Գրոց և
ուղղափառ վարդապետութեանց աւանդելոց յառաքելա-
պատիւ նախնի հարց սրբոց, ապա թէ ոչ հարկաւ Աստուա-
ծային վճիռ սոսկալի դատապարտութեան ունի հասանել 'ի
վերայ այնոցիկ հոգևոր հովուաց Եկեղեցւոյ, որք միայն զա-
նուն երիցական ունին, և ոչ զԱստուածահաճոյ արդիւնս գոր-
ծոց՝ վայելուչս բարձրագոյն պաշտօնի իւրեանց, որպէս 'ի հին
օրէնս բանիւ մարգարէից սպառնայ Աստուած հին օրինաց
քահանայից, որք հովիւք անուանէին ժողովրդոյն Իսրայէլի, և
ոչ հսկողութիւնս և խնամակալութիւնս պաշտպանութեան
առնէին 'ի վերայ նոցա, այլ միայն զանձինս իւրեանց սնուցա-
նէին փափկակեցութեամբ, և փառս և պատիւս 'ի մարդկանէ
ընդունիլ յօժարասիրէին. վասն որոյ ահա Աստուածային վը-
րէժխնդրութիւնն տայ խօսել Եզեկիել մարգարէին ահագին
ինն սպառնալեօք այսպէս. «Եւ եղև բան Տեառն առ իս՝ և
ասէ, Որդի՛ մարդոյ մարգարէա՛ց 'ի վերայ հովուացդ Իսրայէ-
լի, մարգարէա՛ց և ասասցես ցհովիւսն։ Այսպէս ասէ Տէր
Տէր, ո՛ հովիւք Իսրայէլի. մի՛ թէ հովիւք զանձինս արածեն, ոչ
հովիւք զխաշինս արածեն : Արդ ահաւադիկ զկթնդ ուտէք,
և զսարդ ազանիք. զպարարսն զենուք, զխաշինս իմ ոչ ա-
րածէք : Զտկարացեալն ոչ զօրացուցանէք, և զՀիւանդացեալն
ոչ բժշկեցիք, զչարչարեալն ոչ յանձանձեցիք, և զբեկեալն ոչ
պատեցիք, զմոլորեալն ոչ դարձուցիք. և զկորուսեալն ոչ խնդ-

բեցիք՝ զՀաստատհարուստն աշխատ արարիք, և ցրուեցան խաշինք իմ. քանզի ոչ գոյին նոցա հովիւ. և եղեն կերակուր գազանաց անապատի, և ցրուեցան . . . Այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ ես 'ի վերայ հովուացդ՝ և պահանջեցից զխաշինս իմ 'ի ձեռաց նոցա, և դադարեցուցից զդոսա յարածելոյ զխաշինս իմ 'ի ձեռաց նոցա, և ոչ ևս արածեսցեն զնոսա, և փրկեցից զխաշինս իմ 'ի ձեռաց նոցա, և ոչ եղիցին դոցա կերակուր։ Եզեկ. Լ.Դ. 1—10։ Եւս և Մարգարէիս երեմեաւ արքարութիւնն Աստուածային դատապարտ առնէ զՀովուսն Իսրայէլեան ազգին, որք միայն զանձինս իւրեանց գիտէին պարարել և փառաւորել և ոչ յանձանձել և խնամել զժողովուրդս ըստ Աստուածային հրամանաց և օրինաց, ըստ այնմ՝ թէ «Ո՛հ հովիւք, որք կորուսին և ցրուեցին զխաշինս արօտի քո, ասէ Տէր վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի 'ի վերայ հովուացդ, որք հովուեն զժողովուրդ իմ. դուք ցրուեցիք զխաշինս իմ, և մերժեցիք զնոսա, և ոչ յանձանձեցիք զնոսա, արդ աւասիկ ես խնդրեցից զվրէժս 'ի ձէնջ ըստ չարութեան գործոց ձերոց ասէ Տէր»։ Երեմ. Իդ. 12։ Ապա հարկ 'ի վերայ կայ երիցանց, այսինքն քահանայից. վարդապետաց, եպիսկոպոսաց՝ որք կարգեալ են յԱստուածային ամենակալ տեսչութենէն իբրև հրեշտակ ազդարարող զՀրամանս Աստուծոյ թագաւորին երկնաւորի, վասն որոյ մարգարէիսն Մաղաքիա հրամայէ այսպէս. «Եւ արդ այս պատուէրդ է իմ առ ձեզ քահանայքդ, եթէ ոչ լսիցէք և ոչ դնիցէք 'ի սրտի ձերում տալ փառս անուան իմում ասէ Տէր ամենակալ, առաքեցից 'ի վերայ ձեր անէծս, և անիծից զօրհնութիւնս ձեր, և նզովեցից զնա, և ցրուեցից զօրհնութիւնս ձեր, և մի՛ եղեցի 'ի միջի ձերում. զի դուք ոչ եղիք 'ի սրտի ձերում։ Եւ յետ այսորիկ սքանչելի մարգասիրական շնորհիւն բարձրացուցանէ զպաշտօն քահանայից զպարտաւորութիւնս նոցին յայտնելով յասելն՝ «Երթուք քահանայից զդուշացին զիտութեան. օրէնս

խնդրեսցեն 'ի բերանոյ նորա, զի հրեշտակ Տեառն ամենակալի է։ Մաղ. Բ. 1. 2. 7։

Տեսեալ զպարտաւորութիւն հոգեւոր հովուաց, լուր ըզյորդորութիւն և զխրատական բանս հոգեկիր առնն երանելւոյն Թոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի. «Լուարուք հովիւք, լուարուք և երկերուք, և առաւել զարհուրեցարուք և ողբացէք ահիւ և դողութեամբ, զի ոչ թէ վասն այն կոչեցայք հովիւք, զի զանձինս արածիցէք, և իշակիսօք և երեւելի երիվարօք շրջիցիք յաշխարհի, և 'ի փառս մարմնական յօրանայք, և ըզգեստուք խնեղանայք իբրև զանիմաստս, այլ զի զժողովուրդս Տեառն հովուիցէք, զի զբանաւոր խաշինս արածիցէք, զի զայծին յոգիս փոխարկիցէք, զի միշտ բանիւ վարդապետիցէք, և գործով զնոյն յաւէտ առնիցէք։ Ցամենայն բարեաց յանձնէ տալ օրինակ բարեաց, և 'ի նախանձ բարի յորդորել զամենեսին. զի որում շատ տուաւ գիտութեան իմաստ, շատ խնդրեսցի 'ի նմանէ առաքինութեան տեսակ, և որում բազում աւանդեցաւ վերակացութիւն բանաւոր հօտից, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ ուղղութիւն վարուց և հոգաբարձութիւն ժողովրդոց։ Եւ դուք թողեալ զայս բարձրագոյն շնորհ՝ ումեկն գործոց հետեւիք և մարմնական հոգոց պարապիք, և անբան կենդանեաց տածօղք լինիք և զրզգալի երկիր կակղէք, և զմի ներուն թողութեան ունիցիք։ Կամ որո՞ւմ պատասխանեալ արժանի զանձինս համարիք, միշտ զփառաց և զհեշտութեանց հոգալով։ Երկուս գահեկանս աւանդեաց ձեզ Տէրն մեր Քրիստոս զհին և զնոր Կտակարանս, զի նոքօք զբանաւոր ոչխարն դարմանիք՝ զանկեալն 'ի ձեռս աւազակաց և եղեալ կիսամահ։։ Եւ ձեր թողեալ զայս Աստուածային առաքելութիւնս, զկնի ոչնչի ընթանայք, զկաթին ուտելով և զասրն զդենլով և զբեկեալն ոչ համարիք արժանի բժշկութեան, այլ կեղեքէք, կրկին ևս կսկծեցուցանելով։ Եւ որոյ օրինակ բարեաց լինիլ պարտ էր, գայթակղութեան

լինելով պատճառ, զանձինս և զընդ ձեռամբ անկեալսն կո-
րուսանէք, և որ զանձին կորուստ անփոյթ առնիցէ. վասն
այլոց զնմրդ հոգ փրկութեան վարիցէ». Ի Մեկն. ժամ: :
Ցայս միտ երանելին Ներսէս Լամբրոնացի Ի վերայ վերոգրեալ
Աստուածային բանից՝ որ Ի ձեռն մարգարէին Եզեկիէլի քա-
ռողեցաւ գրէ. «Հարկ կայ Ի վերայ քահանային զգուշանալ առ
Ի յամբարել և դնել Ի սիրտս իւր Ի ներքոյ սեմոց շրթանց
իւրոց զգիտութիւն օրինացն Աստուծոյ, էր վասն, քանզի օ-
րէնս խնդրեսցէ Ի բերանոյ նորա ամենայն մարդ, և նորա բար-
բառն սահմանէ Ի մէջ նոցա զխորութիւն բարւոյ և չարի,
ըստ որում զինա միայն է Ի մէջ նոցա հրեշտակ յԱստուծոյ:
Արդ՝ որպէս հրեշտակ արքայի Ի մէջ քաղաքի կարէ զամե-
նայն ինչ օրինադրել բանիւ թագաւորին, զոր կրէ Ի սիրտս
իւր, այսպէս և քահանայն հրեշտակ է յԱստուծոյ առ ժո-
ղովուրդ իւր: Վասն այսորիկ օրէնս խնդրէն ամենեքեան Ի բե-
րանոյ նորա, իսկ նա կարէ զամենայն ինչ ուղղել ըստ կամացն
Աստուծոյ՝ հնազանդութեամբ խնդրողաց, յաղագս այսր հարկ
կայ Ի վերայ նորա զգուշութեամբ պահել Ի ներքոյ շրթանց
զամենայն գիտութիւն, զի յորժամ խնդրեսցեն, բացեալ ըզ-
բերան իւր պարգևեսցէ նոցա զօրէնս թագաւորին իւրոյ Աս-
տուծոյ որպէս հաւատարիմ հրեշտակ: Իսկ ապա թէ ոչ ու-
նի զգիտութիւն, յորժամ խնդրէին Ի նմանէ զօրէնս Աստու-
ծոյ, տայ զայն ինչ՝ որ հեռի է Ի կամացն Աստուծոյ, և գրա-
տանի ամենեցուն, զրս մոլորեցոյց պարտապան արեան. որպէս
ասացաւ. «Զարիւն նորա Ի ձեռաց քոց խնդրեցից»:

Տես երանելին Պօղոս ոչ խնդրէր զփառս անձին իւրոյ, և
ոչ գիտաց երբէք հաճոյանալ մարդկան՝ «Արդ մարդկան հա-
ճոյ լի՞ցիմ թէ Աստուծոյ, կամ խնդրիցեմ մարդկան հաճոյ
լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի
ծառայ ոչ էի». Գաղ. Ա. 10: Կամի ասել՝ ոչ երբէք յօժարեցայ
զվարդապետութիւնս իմ աւետարանական ճշմարտութեան

ոչ 'ի շնորհուկս մարդկան առնելով՝ խօսեցայ և ուսուցի առ 'ի հաճոյանալ մարդկան, այլ զոր ինչ պահանջէր հոգևոր պաշտօնն իմ, զնոյն արարի և արարից, զի հաճոյ գայայ Աստուծոյ, և փառաւոր արարից զպաշտօնն իմ, վասն որոյ համարձակ ունի տեղի պարծանաց երանելի Առաքեալս գրելով առ Հռովմայեցիս. «Այլ ձեզ ասեմ հեթանոսաց ցորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ՝ զպաշտօն իմ փառաւոր առնեմ» ԺԱ. 13։ Եւ զայս արթնութիւն պարտաւորութեան հոգևոր պաշտօնի փայլեցուցեալ յորդորէր 'ի նոյն և զսիրելի աշակերտն իւր զՏիմոթէոս. «Որինակ լիջիր, ասէր՝ հաւատացելոց բանիւք՝ գնացիւք, սիրովք հաւատովք սրբութեամբ։ Զգոյշ լինիջիր անձինդ և 'ի դմին յամենջիր, զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուցես, և զայնոսիկ՝ որք քեզն լսիցեն։ Եւ թէ՝ «փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղղ համառօտել զբանն ճշմարտութեան». Ա. Տիմ. Դ. 12. 16։ Բ. Տիմ. Բ. 15։ Ի կնքել ապաքէն զնորհրդածութիւն մեր՝ որ յաղագս ձեռնադրութեան խորհրդոյ, յառաջ բերցուք զյորդորական բանս մեծի քահանայապետին մերոյ Գրիգորի Լուսաւորչի. «Գրել ձեզ և ուսուցանել կամիմ ասէ, եղբարք իմ և որդիք, զորս 'ի Քրիստոս ծնայ, զի որք յարգեն զանձինս 'ի գործս բարութեան և յուսումն ճշմարտութեան, ինքեանք իսկ պատրաստեսցին 'ի մեզ ասակարացն, և պէս պէս հնարիւք առնել բարիս խորհեսցին. որպէս զի օրինակ ճշմարտութեան եղիցին յառնելն և յուսուցանելն միշտ. անխեղճ և անպատճառ իցեն առ հեռաւորս և առ մերձաւորս, ըստ բանի Տեառն, լուսաւոր եղիցի՝ ասէ, լոյս ձեր արդարութեան առաջի մարդկան, որպէս զի տեսցին զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայրն ձեր երկնաւոր։ Եւ դարձեալ երանէ զծառայս, յորոց անուն օրհնի ինքն Տէր և փառաւորի. և վայ և եղուկ զայնոսիկ վարկանի՝ յորոց անուն Տեառն հայհոյեսցի. զի որք լինիցին քարոզք ճշմարտութեան,

ճշմարտութիւն ինքնին յարդարէ զնոսա անմոլար զիտութեամբն և Աստուած փառաւորէ զնոսա. յորժամ տեսանէ 'ի նոսա զբարեգործութեան ջանս. զի զոր նոքային տիկին և սրնուցանեն, Աստուած աճեցուցանէ և հաստատէ աւետեաց կենացն 'ի փառս և 'ի պարծանս նոցա 'ի արիզերական ատենին 'ի յարութեանն՝ որ 'ի մեռելոց։ Եւ կարասցին ասել՝ ահա մեք և մանկունք մեր ճշմարտեալ զքրս ետուր մեզ Աստուած։ Եւ պսակեալ առաքինութեամբք առնուն զդրաւականն խոստացեալ աւետեացն Քրիստոսի. զի որ ասասցէ՝ ասէ, և ուսուսցէ. նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից. Ցաճախ. ՃԱ. ձէ։

ԳԼՈՒԽ Ժ.

Խորհուրդ սուրբ Պսակին օրինակ է Քրիստոսի ընդ Եկեղեցւոյ շնորհօք միութեան. ուստի անբաժանելի են ցմահ ամուսնացեալքն 'ի միմեանց։

Խորհուրդ քրիստոնէական սուրբ Պսակին պարունակէ յինքեան սքանչելի իմն զօրութիւն շնորհաց անմահ սուրբ փեսային Յիսուսի Քրիստոսի, որ յինքն միայն սեփհականեալ զհարսնացեալ եկեղեցին միշտ ներգործէ 'ի նոսա սիրալիր խրնամաշատ և շնորհապարգև բարերարութեամբն, և Եկեղեցին՝ այս է ուղղափառ և ողջամիտ բարեգործ հաւատացելոց խումբ, ջերմեռանդն հոգւով կատարեալ երկիւղածութեամբ. միշտ պատկառ և յամենայնի հնազանդ է իբրև իսկական հարսն անարատ և զեղազարդ երինաւոր փեսային իւրոյ։ Ահա այս սուրբ Պսակի խորհրդով անարատ հարսին սուրբ Եկեղեցւոյ ուղղափառ քրիստոնէից զվայելուչ յարաբերութիւնն առ երկնաւոր փեսային Յիսուս Քրիստոս՝ նկատեալ երանելի սուրբ Առաքեալն Պօղոս գրէ. «Խորհուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ 'ի Քրիստոս և յԵկեղեցի». Եփես. Ե. 32։

Ընդ այս բան յարակցէ զեկուցանելով զօրինաւոր լծակ-

ցելոց և ամուսնացելոց սուրբ խորհրդով Եկեղեցւոյ Պասկին. զառն և զգինոջ զօրինական և զանժխտելի պարտաւորութիւնս յասելն՝ «Այլ դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւր որ զիւր կին այնպէս սիրեսցէ իբրև զիւր անձն. և կին երկրնչիցի յառնէ իւրմէ»: Ըստ Ոսկեբերանին կամի ասել Երանելի Առաքեալս. «Վասն դուք օրինաւոր լծակիցք. ամուսնական յոգիս Քրիստոսական օրինօք ծաներուք զպարսիս ձեր Աստուածասահման օրինադրութեամբ. ապա այր դու պարսիս խնամարկել կարդաւորեալ սիրով զկին քո իբրև զանձն և զմարմին քո. տես ծննդ. Բ. 23: Մատ. ԺԹ. 6: Եւ դու կին պարսիս զօրինաւոր այր քո յարգել մեծարել ամենայն կարեւոր հնազանդութեամբ և ազատական երկիւղիւ քով ճանաչել զնա իբրև խնամածու տէր քո. որով բարդաւածիք բարեծնունդ որդւովք և վայելէք զԱստուծոյ շնորհաղեղն օրհնութիւն. և արժանաւոր լինիք տեսանել զորդիս որդւոց ձերոց՝ ըստ օրինակի Աստուածահաճոյ նահապետաց»: Եփես. Ե. 23: ծննդ. ԻԲ. 16:

Արդ՝ զտիրասահման օրինադրութիւնս զխորհրդոյ սուրբ Պասկի կարեւորագոյն է գիտել և ճանաչել և ամենայն զգուշութեամբ և երկիւղածութեամբ պահել և պաշտպանել առանց զանցառութեան:

Նախ՝ ըստ կանոնի Աստուածային սահմանադրութեան մի մարմին և մի անձն լինին այր և կին. օրինաւոր ամուսնացեալք սուրբ խորհրդոյ Եկեղեցւոյ շնորհիւն. և այս միութիւն ամուսնական լծակցութեան անբաժանելի է և անքակտելի մինչև ցմահ միոյն և կամ միւսոյն ըստ յետագայ վըկայութեանց «Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ զկնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան 'ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու. այլ մի մարմին: Արդ՝ զոր Աստուած զուգեաց. մարդ մի՛ մեկնեսցէ»: Մատ. ԺԹ. 3. 6: Քանզի կին առնակին 'ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ

մեռցի այրն, արձակեալէ յօրինաց առն, ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոչի, եթէ լինիցի առն այլումն և եթէ մեռցի այրն՝ ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլումն։ «Կին կապեալէ, ցորքան ժամանակս կենդանի է այր նորա, ապա եթէ ննջիցէ այր նորա ազատ է ու մ կամիցի ամուսնանալ այլ միայն ՏԵՐՈՒՄ։ Հռովմ. Է. 2։ Ա. Կորնթ. Է. 39։

Երանելի սուրբ վարդապետն մեր Յովհան Ծործորեցի խորհրդածելով 'ի վերայ աւետարանական բանից՝ զրէ. «Մի բընութիւն է առն և կնոջ ոչ անձամբ, այլ յօժարութեամբ և սիրոյն կցորդութեամբ, առնն՝ իբրև իշխանի. և կնոջ՝ հնազանդելոյ հաստատապէս. արդ՝ զոր Աստուած զուգեաց մարդ մի՝ մեկնեսցէ։ • • • Այլ դիտեա՛ ինձ զգօրութիւն բանիս, թէ որքան օրինակաւ պնտեաց, ոչ կարէ առնել բաժանումն 'ի մէջ առն և կնոջ։ Նախ՝ թէ մի մարմին է, և զմի մարմին յերկուս հատանել երկցուցոյ է մահ, թէ և հաշտ իցէ այրն կամ կինն, կամ ուրուք կամ դիւահար. զի ոչ զուրուք մարմին՝ յորժամ այսպիսի ցաւով տաղնապի, հատանեմք և 'ի բաց ընկենումք։ Եւ երկրորդ՝ թէ Աստուած զուգեաց և դու մարդ բաժանող հայեաց՝ ասէ՝ 'ի բնութիւնն, զի արարիչ և արարած Նա շինէ, և դու քակես։ Եւ երկրորդ՝ յօրինակէն պատկառի, զի որ գկին բաժանէ, գրեթէ զնկեղեցի 'ի Քրիստոսէ որոշէ, որպէս Սաբէլ և Արիոս, և կամ չար թագաւորքն, որք բռնութեամբ յուրացութիւն ձգէին. արդ նոցա հաւասարի բաժանողն, զի այր և կին օրինակ է Եկեղեցւոյ, որպէս ասէ Պօղոս թէ՝ «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ 'ի Քրիստոս և յԵկեղեցի նորա»։ Մեկն. Մատթ. երես 399։ Եւ սուրբն Գրիգոր Նարեկացի զրէ 'ի յառաջաբանութեան Երգոյն երգոյն Մեկնութեան։ «Սուրբ ամուսնութիւն և սէր փեսայի ընդ հարսին և հարսին ընդ փեսային, որ ազատ լինի 'ի պիղծ խառնից, չէ օտար 'ի հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն 'ի Քրիստոս

բիստոս և յեկեղեցի աւարտի, ըստ Առաքելոյն թէ, «Խորհուրդս այս մեծէ, բայց ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի՝ վկայելով Սողոմոնի բանիցն։ Արդ՝ որ զուրբ ամուսնութիւնն պղծէ պիղծ խառնակութեամբ և չար գործովք, զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ և զՔրիստոս անարգէ»։ Երես 393։

Եւ սուրբն Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետն վասն պառնկական ախտիւ վարակելոց գրէ բան ազդու և յորդորական. «Ո՛չ եթէ մարմին մեղանչէ անձամբ, այլ մարմնովն շունչն, այսինքն հոգին մեղանչէ, իբրու գործի իմն է մարմին ընչոյն, և իբր հանդերձ ինչ արկանելի ընչոյն, եթէ 'ի սմանէ 'ի պառնկութիւն մատնի, լինի և պղծեալ. ապա թէ ընդ սուրբ շունչ բնակեալ է, լինի՞ նա տաճար Հոգւոյն սրբոյ։ Ո՛չ ես ասեմ զայս, այլ Պօղոս Առաքեալն. «չ գիտէք՝ ասէ, թէ մարմինք ձեր տաճար են, որ 'ի ձեզ Հոգին սուրբ բնակեալ է։ Անխոյսեա՛ դու 'ի մարմին քո, իբրու տաճար իցէ Հոգւոյն սրբոյ, մի՛ պղծեր պառնկութեամբ զմարմին քո, մի՛ թաթաւեր պղծութեամբ զայդ գեղեցիկ պատմուճանդ քո, ապա թէ պղծիցէ երբէք, նկ լուա՛ ապաշխարութեամբ, մկրտեա՛ց, լուա՛, մինչ ժամանակ է»։ Կոչումն Ընծայ. երես 62։ Այս ամենայն կնքի ազդու բանիւ սրբազան Առաքելոյն Պօղոսի. «Պատուական է ամուսնութիւն ամենեքին և սուրբ են անկողինք, բայց զշունս և զպառնիկս դատի Աստուած»։ Եբր. ԺԳ. 4։

Երկրորդ՝ զբինական սահմանադրութիւնս եկեղեցական կանոնաց՝ որ վասն ամուսնացելոց հարկ է պահպանել մի՛ լեցի համարձակել ումեք ընդ կարի մերձաւորսն արեամբ և խնամական ազգականութեամբ ամուսնանալ որպէս օրինադրեցին նախնի սուրբ հարք. յորոց առեալ գրէ Շնորհալի սուրբ հայրապետն մեր եթէ՝ «Մի՛ ոք համազգեաց, որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութեան դիցէ և այլն»։ Զինի այսորիկ զպատճառն յարէ. «Եւ քանզի ամենայն փոյթ Աստուծոյ և Աստուածայնոցն յաղագս սիրելոյ է զմիմեանս

մարդկան. վասն այսորիկ իբրաւունս համարեցան, որք հոգւովն օրինադրեցին զստորացեալսն 'ի միմեանց միանալ սիրով ամուսնութեանն կապակցութեամբ. իսկ զմերձաւորսն արեամբ բաւական վարկանի համազգութեամբ միայն ունել զհաղորդութիւն սիրոյ առ իրեարս». Ընդհ. երես 41։ Որպէսզի երկրորդանք և հոգևոր հովիւք եկեղեցւոյ առաջնորդք և եպիսկոպոսունք պարտին տեղեկանալ 'ի կանոնական սահմանադրութեանց սրբոց հարց՝ գոնէ զհամահաւաքեալ կանոնական գրութիւնս Մխիթարայ Գոշի մեծիմաստ և սրբակրօն վարդապետին մերոյ, և ամենայն ուշադրութեամբ նկատելով յայնս տալ հրաման Պասկի և կամ Հարմնախօսութեան։

Երրորդ՝ չունիմք հրաման 'ի կանոնական գրոց՝ խորհուրդ Պասկի կատարել 'ի վերայ այնոցիկ, որք նախ քան զՊասկն սուրբ ամուսնութեան վաւաշտութեամբ յարեալ իցեն ընդ միմեանս ընակակից լինելով, շաղախեալ են պոռնկական պղծութեամբ, որ ասի առևանկութիւն. որպէս բացայայտ գրէ Ներսէս Շնորհալի։ «Մի՛ և այնոցիկ՝ որք և առևանկս ասին, դնիցէ Պասակս. զի հակառակ օրինաց Աստուծոյ է, և բիւր չարեաց պատճառք 'ի սատանայէ շարժեալք 'ի մարեկան ախտն. և բազումք այն իսկ են, որ յետ սուտ պասկին, մեծաւ ատելութեամբ բաժանին 'ի միմեանց, և պասկաղիրքն այսպիսեաց կցորդ չարեաց նոցին լինիցին». Ընդհ. երես 40։

Չորրորդ՝ մի՝ որ յերիցանց անուտի պատճառանօք ատելութեան առանց կանոնական և օրինաւոր հրամանի համարձակեսցի վերստին պասկել զկնաթողս կամ զայրաթողս, որպէս գրէ Շնորհալի սուրբ Հայրապետն մեր առ քահանայս յասելն՝ «Մի՛ և կնաթողաց արանց կամ այրաթող կանանց առանց կանոնական հրամանին դնիցէ որ պասկ. զի մի՛ լուծջիք դուք 'ի քահանայական կարգէ ըստ կանոնաց, և եղեալ պասկն քակտեսցի. և եթէ բռնանան և ոչ բաժանին, ընդ պռնիկս համարեալ լիցին». Ընդհ. երես 40։

Ապաքէն թողում հոգևոր հովուաց և երիցանց Եկեղեցւոյ՝ յաղագս խորհրդոյ Եկեղեցւոյ պատկառութեան խոշիմատաց ընթեռնուլ զսահմանադրութիւնս և զկանոնական օրինադրութիւնս սրբազան հարց Եկեղեցւոյ, և զանձել 'ի միտս իւրեանց, և ամենայն զգուշութեամբ կատարել զպատկառութեան խորհուրդն, յիշելով զայն Աստուածային բան անժբխտելի հրամանին, որ առ քահանայս հնոյ օրինաց ասէ՝ «Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, լուիցես յինէն պատգամս, և սպառնացիս նոցա իբրև յինէն, յորժամ ասեմ ցանօրէնն, եթէ մահու մեռանիցիս, և դու ոչ զգուշացուցանիցես նմա, և ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին և դառնալ 'ի ճանապարհաց իւրոց չարաց և կեալ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից. իսկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին, և նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ և 'ի ճանապարհէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և դու զանձն քո ապրեցուսցես»։ Եզեկիէլի Գ. 17—19։ Ըստ սմին յուշ լեցին ձեզ ովք հոգևոր հովիւք և վերատեսուչք Եկեղեցւոյ սիրելիք մեր 'ի Տէր հոգեբարբառ ազդարարութիւնք սրբազան Առաքելոյն Պօղոսի եթէ՝ «Զգոյշ լերուք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբն իւրով»։ Գործ. Ի. 28։

ԳԼՈՒԽ ԺԱ։

Հերետիկութիւն շնորհաց խորհրդոյ հիւանդաց բժշկութեանէ։

Խորհուրդ Եկեղեցւոյ՝ որ գործադրի 'ի ձեռն հոգևոր պաշտօնեից 'ի վերջին տաղնապս հիւանդաց տալ նոցա շնորհ բժշկութեան, ըստ սահմանադրութեան Քրիստոսի Փրկչին մերոյ 'ի հրամայելն աշակերտաց իւրոց ասելով՝ «Հիւանդս

բժշկեցէ՛ք» Մատ. Ժ. 8. Եւ զկնի ինքնաղօր յարութեան իւրոյ՝ զձեռս կատարման խորհրդոյն յայտնի արար աշակերտացն. զի զձեռս իւրեանց 'ի վերայ հիւանդաց դնելով կատարեսցեն։ «Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկեսցին». Մարկ. ԺԶ. 18։ Արդ՝ Յիսուս Փրկիչ մեր, զոր ինչ առանդէր և ուսուցանէր սրբազան դասուց Առաքելոց, նախ ինքն առնէր իբրև հեղինակ խորհրդոյ. և ապա ուսուցանէր։ Ըստ այնմ՝ «Ամենեքեան՝ որոց էին հիւանդք 'ի պէսպէս ցաւս՝ բերէին առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս, և բժշկէր զնոսա». Ղուկ. Դ. 41։ Ապա ըստ ճշմարիտ հեղինակին խորհրդոյս Յիսուսի Քրիստոսի սահմանեալէ նիւթն և կերպն խորհրդոյն հիւանդաց բժշկութեան. իսկ ձեռս դնել երիցանց 'ի վերայ նեղելոց 'ի վերջին տագնապս հիւանդութեան ջերմեռանդն աղօթիւք յիշելով և խնդրելով զառողջացուցիչ շնորհս սքանչելագործ անուան կենարարին մերոյ հաստատեն յետագայ վկայութիւնքս. «Եւ ասէ ցնա Պետրոս, Ենէայ բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս, արի՛ և քեզէն թօթափեա՛ զանկողինս քո. և վաղվաղակի յարեաւ». «Եւ եղև հօրն Պուպղեայ 'ի ջերմ և յախտ թանչից հիւանդանալ՝ դնել։ Առ որ մտեալ Պօղոս և կացեալ յաղօթս. եդ զձեռն, և բժշկեաց զնա». Գործ. Թ. 34։ Իր. 8։

Գիտեմ բարեմիտ ընթերցող. ունիս իրաւունս հարցանելոյ ցիս. եթէ առ ի՞նչ երբեմն ոմանք 'ի սրբազան Առաքելոց օծմամբ իւղոյ ձիթենւոյ կատարէին զխորհուրդ բժշկութեան 'ի վերայ հիւանդաց, որպէս գրէ Աւետարանիչն Մարկոս. «Եւ դէս բազումս հանէին, և օծանէին իւղով զբազում հիւանդս և բժշկէին զնոսա». Մարկոսի Զ. 13։

Սոյնպէս և սրբազան Առաքեալն Յակոբոս՝ յորժամ առաջին եպիսկոպոս կարգեցաւ Յերուսաղէմ, իբրև կանոն սահմանեաց վասն հիւանդաց այսպէս. «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցէ զերիցուսն Եկեղեցւոյն՝ և արասցին 'ի վերայ նորա

աղօթս, օծցեն իւղով յանուն Ցեառն. և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն. և յարուցէ զնա Տէր։ Յակ. Ե. 14. 15։ Իւղոյն գործածութիւն յայտնի է 'ի սուրբ Գիրս. վասն զի սովորութիւն էր և աւանդութիւն ծիսական իւղով ձիթենւոյ օծանել զսեղանս ողջակիզաց, զքահանայս, զթագաւորս, և զայս անուանէին մաքրութեան և սրբութեան օծումն՝ որպէս զրեալ է. Ելից Լ. 24. 25. 30։ Ա. Թագ. Ժ. 13։ Սաղմ. ՃԸ. 21։ Օծանէին և զմարմինս մեռելոց առ 'ի պատիւ. Մարկ. ԺԴ. 8։ Ուստի տեսեալ սրբազան Առաքելոյն եթէ իւղոյն գործածութիւն յարգի է յոյժ, զօծումն հաստատեցին Յիսրայէլացիս իբրև հեռաւոր նիւթ 'ի բժշկութիւն հիւանդաց, որպէս զի հռչակեսցի 'ի Հրէայս զքանչելագործ զօրութիւն անուանն Յիսուսի. իսկ յետոյ մոռացեալ՝ ասէ Ոսկերբերանն զքանչելի զօրութիւն անուանն Յիսուսի, որք յերուսաղէմ Հրէայքն էին՝ առ հասարակ աւելորդ համարէին կոչել զերիցունս Եկեղեցւոյն՝ առանձինն զհիւանդս օծանէին իւղով ևեթ ձիթենեաւ։ Ուստի Առաքեալն Յակովբոս իբրև կարդեցաւ առաջին եպիսկոպոս Երուսաղէմայ, կամելով յայտնել եթէ անզօր է իւղոյն գործածութիւն առանց աղօթից, միանգամայն զմոռաւ ածեալ՝ զի զսովորական ծէսս ըստ ամենայնի խափանելով՝ տեղի տայ շփոթութեան տարամտաց, և զի հաստատել կամէր զհաւատս և զյոյս նոցին յամենակարող զօրութիւն երկրպագելի անուան Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. վասն այսորիկ այսպէս սահմանադրեաց. «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս Եկեղեցւոյն և արասցեն 'ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Ցեառն, և աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն և յարուցէ զնա Տէր։ Ի վերայ սոյն առաքելական բանիցս՝ հոգերեալս վարդապետութեամբ յոյժ յարմար բացատրութիւնս տայ Սարգիս Շնորհալի վարդապետն մեր։ «Պատուէ աստանօր զառաջնորդս Եկեղեցւոյ՝ ասէ, և մեծապէս յարգէ

զնոսա, և մտերիմ Ծառայս Աստուածութեանն և հաղորդս գող զնոսա 'ի միտս ամենեցուն ընծայեցուցանէ իբրև զՄովսէսն և զԱհարոն, նա ևս զերազանցեալ քան զնոսա, ըստ որում մեծագունի քան զնոսա շնորհաց արժանաւորք եղեն, զի զամենայն զոր և խնդրէին հաւատովք՝ առնուին, այսորիկ աղաչաւ ասէ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն : Որ սրբութեամբ իւրեանց և արդարութեամբ համարձակութիւն ունին առ Աստուած, աղօթիւք զայլոց մեզս սրբել և արդարացուցանել զնոսա : Եւ արդ՝ եթէ զհոգիս բժշկին նոքա 'ի ցաւոց մեզաց՝ ո՞րքան ևս առաւել զմարմինս 'ի բնութեանս ցաւոց : Զնոսա կոչեսցեն ասէ, զեմաստուն բժիշկս, որոց անհրնար ինչ ոչ է, այլ ամենայն ինչ հնարաւոր : Եւ նոքա, ասէ, աղօթս արասցեն 'ի վերայ նորա, և օծցեն իւղով յանուն Տեառն : . . . Արդ զայն օրինադրէ ասելով օծցեն իւղով յանուն Տեառն : Եւ զո՞ր ասէս, այս է, զոր օրինակ Առաքեալքն զբժշկութիւնն՝ զոր առնէին անուամբ Տեառն առնէին. յանուն Յիսուսի Քրիստոսի արի՛ և զնա՛ 'ի ծնէ կաղին ասացին: Եւ դարձեալ Պետրոս Տաբիթա, արի՛, կա՛ց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Այսպէս ամենայն ուսմբ զայն առնուն 'ի կիր արկանէին : Նմանապէս և աստ ասէ, օծցեն իւղով յանուն Տեառն. ապա յայտ է յայտմանէ, որպէս ես վարկանիմ՝ եթէ ոչ իւղն տայր զառողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն». Ցակ. ՃԱ : Ուստի ուղղափառ և առաքելական սուրբ Եկեղեցին մեր զայս խորհուրդ բժշկութեան հիւանդաց կատարէ 'ի ձեռն երիցանց սահմանեալ աղօթիւք, և 'ի վերջոյ ասէ զայս քարոզ «Վասն հիւանդաց և ամենայն վշտաց ցիրոց աղաչեսցուք զՔրիստոս՝ զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում, և բժշկեսցէ զախտս և զբոհիւանդութիւնս հոգւոյ և մարմնոյ Ծառայիդ իւրոց. և այլն: Եւ զայս աղօթս թէ՝ փարատեա զցաւս և բժշկեա՛ զհիւանդութիւնս 'ի ժողովրդենէ քումմէ Տէր Աստուած մեր». և այլն:

'Ի վերայ բանիցս այսոցիկ գրէ Երանելին Թոսրով Անձևացեաց Եպիսկոպոսն. «Աղօթք սրբոց յոյժ զօրաւորն յօդնականութիւն՝ ոչ միայն զմարմնոյ բառնալ զցաւս, այլ և զհոգւոյ, որք հաւատով և յուսով հայցեն ըստ մեծին Յակովբայ՝ որ ասէ. «Հիւանդանայցէ ոք 'Ի ձէնջ, կոչեսցէ զերիցուս Եկեղեցւոյն, և արասցեն 'Ի վերայ նորա աղօթս. և աղօթք հաւատով փրկեն զաշխատեալն. և թէ մեղս ինչ իցէ գործեալ թողցի նմա : Եւ զի ասէ. Օծցեն իւղով յանուն Տեառն : Այժ 'Ի վերայ նորագունիցն 'Ի հաւատս, զի առաւել հաստատեսցին 'Ի սէրն Աստուծոյ, և զի զգալի մարմին զգալապէս զնիւթ բժշկութեան սիրէ ըստ թանձրութեան մարմնոյ». 'Ի Մեկնութեան ժամագրքի :

Այսպէս եթէ ոք կամեսցի զընդարձակ ծանօթութիւն խորհրդոցս տեսանել, ընթերցցի զյօրինեալն յինէն զՀանդիսաբան Ուղղափառութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ. Տիպ Պօլսոյ. երես 358 :

Արդ՝ 'Ի կնիք տեսութեան համառօտ բանիցս յիշեսցի ստէն հողերուղն քարոզութիւն մեծ Հայրապետին մերոյ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի, որ զբանչելի զօրութիւն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի քարոզեաց մեզ այսպէս. «Այն իսկ են սրբոցն կամք. զի և ժողովուրդք նոցա բարեխօսութեամբն՝ Յաստուծոյ պաշտն յորդորեսցին, և այնպէս առցին զաշխատութեանցն զվարձս Յամենասուրբ Երրորդութենէն. զի և Պօղոս և Բառնաբաս արարեալ զնշանսն յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի, զառ 'Ի մօրէ ըզկաղն բժշկելով և զարմացուցանելով զամենեսին, մինչ զի քուրմքն աստուածս զնոսա համարեցան յերկնից իջեալս՝ զկերպարանս մարդոյ ունելով, վասն որոյ զոհիւք կամեցան պատուել զնոսա որպէս զաստուածսն իւրեանց : Եւ յաղագս այնորիկ պատառեցին զՀանդերձսն, և ճիչ բարձեալ ասէին: «Եւ մեք ձեզ նմանեալ մարդիկ եմք ծառայք Աստուծոյ բարձրե-

լոյ, որ արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք ի-ցեն, և յանուն նորա բժշկեցաւ սա. զայս ասելով հաղիւ լը-ռեցուցին զամենեսին, զի լաւ համարեցան մեռանիլը քան թէ զպատիւն Աստուծոյ յինքեանս ձգել, և փառաւորիլ 'ի մարդ-կանէ»։ Յաճախ. Յառ. ԺԶ.։

ԳԼՈՒԽ Գ։

Պարտաւորութիւնք ազգի, որ ընկալեալ իցէ յԱստուծոյ զառանձնաշնոր-հութիւն։

Արդ 'ի յաճախել առ մեզ բազմատեսակ շնորհացն Աս-տուծոյ, այո պարտաւորիմք բազմադիմի գոհութիւնս և փա-ռաբանութիւնս մեր բոլորով սրտիւ մատուցանել առ շնոր-հապարգև վերնախնամ մարդասիրութիւնն։ Զայս կարևորա-գոյն պարտաւորութիւն զնկուցանէ երանելի սրբազան Առա-քեալն Պօղոս Եկեղեցւոյն Կորնթացւոց յասելն՝ «Զի 'ի բազմա-դէմ շնորհացն՝ որ 'ի մեզ, բազմաք յաճախեսցին գոհութիւնքն վասն մեր». Բ. Կորնթ. Ա. 11։ Տես, զի ուր և որոց յատուկ մարդասիրական խնամոք պարգևեցան յԱստուծոյ առանձնա-շնորհութիւնք՝ անդանօր յաճախեցին գոհութիւնք և փա-ռաբանութիւնք առ Աստուած։ Ահա քեզ ապացոյց. զի այն ինչ Աստուած յայտնի արար նահապետին Իսահակայ զիւր յատուկ խնամածութեան շնորհ, իսկոյն շնորհընկալն Իսա-հակ զպարտաւորութիւն իւր առ Աստուած գոհութեամբ և փառաբանութեամբ փութացաւ կատարել. որպէս գրեալէ։ «Եւ երևեցաւ նմա Տէր 'ի դիշերին յայնմիկ, և ասէ. ես եմ Աստ-ուած հօր քո. մի՛ երկնչիր, զի ընդ քեզ եմ, և օրհնեցից զզ-քեզ, և բազմացուցից զզաւակս քո վասն Արրահամու հօր քո. և շինեաց անդ սեղան, և կարգաց զանուն Տեառն». Ծնող. ԻԶ. 24. 25։ Որպէս և 'ի գնալն նահապետին Յակովբայ 'ի Խառան և 'ի ննջել նորա ընդ երեկս արժանացաւ Աստուա-

ծային տեսլեան և առանձնաշնորհութեան, որպէս զրեալէ. «Եւ եհաս 'ի տեղի մի և ննջեաց անդ, զի արևն 'ի մուտս էր, և էառ 'ի քարանց տեղւոյն, և եդ ընդ սնարս իւր, և նընջեաց յայնմ տեղւոջ. և եռեսս տեսիլս, և ահա սանդուղք հաստատեալ յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս, և հրեշտակք Աստուծոյ ելանէին և իջանէին ընդ նա, և Տէր հաստատեալ կայր 'ի նմա, և ասէ, «Ես եմ Տէր Աստուած Աբրահամու հօր քո, և Աստուած Իսահակայ. մի' երկնչիր, զի երկիրդ՝ յորում դուդ ննջիցեր, քեզ տաց զդա և զաւակի քում . . . Եւ զարթեաւ Յակովբ 'ի քնոյ անտի իւրմէ, և ասէ Տէր է 'ի տեղւոջս յայսմիկ. և ես ոչ գիտէի : Զահի հարաւ և ասէ, ահեղ ինն է տեղիս այս և ոչ է սա, եթէ ոչ տուն Աստուծոյ, և այս է դուռն երկնից : Եւ յարեաւ Յակովբ ընդ առաւօտն և էառ զվէմն, զոր եդ ընդ սնարս իւր, և կանգնեաց զնա արձան և էարկ իւղ 'ի գլուխս նորա, և կոչեաց Յակովբ զանուն տեղւոյն այնորիկ տուն Աստուծոյ և ասէ. և վէմն՝ զոր կանգնեցի արձան, եղիցի ինձ տուն Աստուծոյ, և յամենայնէ՝ զոր տացես ինձ, տաց քեզ տասանորդ» . Գն. Իբ. 11. 13. 16. 19 22:

Աստուածախօս մարգարէն Մովսէս զԱստուածային նախախնամութիւնս և զառանձնական շնորհաց ներգործութիւնս՝ որք եղեն յատկապէս առ ազգն Իսրայէլացւոց՝ յիշեցուցանելով՝ պարտաւոր կացուցանէ զնոսա յիշել միշտ և անմոռաց 'ի մտի ունել յաճախ գոհութեամբ և մշտնջենաւոր փառաբանութեամբ յաղագս պէսպէս շնորհացն Աստուծոյ, զոր տեսին աչօք և վայելեցին անձամբ : Վասն որոյ ժողովեալ զնոսա առաջի իւր սկսաւ պարտուպատշաճ պատուէրս տալ նոցա յասելն՝ «Ցեսէք, զի ուսուցի ձեզ զկերաւունս և զդատաստանս որպէս պատուիրեաց ինձ Տէր առնել զայն յերկրին, յոր մըտանիցէք ժառանգել զնա : Եւ պահեսջիք և արասջիք, զի այն է իմաստութիւն ձեր և հանճար՝ առաջի ամենայն ազգացն՝ որք լսիցեն զամենայն իրաւունս զայսոսիկ. և ասիցեն ահա

ժողովուրդ խմաստուն և հանճարեղ ազգս այս մեծ է։ Քանզի ոչ իցէ ազգ մեծ, որոյ իցէ Աստուած մօտ 'ի նոսա, որպէս Տէր Աստուած ամենայնի, որովք կարդացուք առ նա։ Եւ ոչ ազգ մեծ, որոյ իցեն իրաւունք և դատաստանք արդարք ըստ ամենայնի օրինացս այսոցիկ, զոր ես տամ այսօր առաջի ձեր։ Հայեաց 'ի քեզ և զգոյշ լիր անձին քումդ յոյժ, մի՛ մոռանայցես զամենայն բանս զոր տեսին աչք քո, և մի՛ մերժեսցին 'ի սրտէ քումմէ զամենայն աւուրս կենաց քոց, և խելամուտ արասցես որդւոց քոց, և որդւոց որդւոց քոց։ Զօրն՝ յորում կացիք դուք 'ի Քորեբ առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ, յաւուրն ելեղեցւոյ, յորժամ ասաց ցիս Տէր. թէ ելեղեցայս՝ առ իս զժողովուրդդ, և լուիցեն զբանս իմ, զոր ուսուցից երկնչել յինէն զամենայն աւուրս, որչափ կենդանի իցեն գոքա 'ի վերայ երկրի, և ուսուցցեն զորդիս իւրեանց»։ Բ. Օրինաց. Դ. 5—10։ Զայս ամենայն առանձնաշնորհութիւնս Աստուածային խնամոյ բազում մասամբք և բազում օրինակօք 'ի ձեռն մարգարէից յայտնելոց առ իսրայէլեան ազգն միահաղոյն յիշելով հոգենուազ մարգարէն Դաւիթ երգէր և ասէր. «Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա»։ Սաղմ. Խե. 10։

Արդ՝ եթէ իսրայէլեան ազգն միջնորդութեամբ Աստուածահաճոյ նախահարցն և սրբոց մարգարէիցն յատուկ զԱստուածային նախախնամութեան շնորհ վայելելով պարտաւորեցան զոհանալ զԱստուծոյ և յաճախել զփառաբանութիւնս իւրեանց, ապա օրչափ ևս առաւել նախանձախնդիրն Աստուածպաշտութեան ցեղն Հայկայ ազգ մեր Հայոց զոհութիւնս և փառաբանութիւնս պարտաւորեցի մատուցանել առ Աստուած, որ 'ի սկզբանէ աշխարհի նախասահմանեաց զերազանց խնամովք պարգևել ազգիս Հայոց զբազմադիմի առանձնաշնորհութիւնս, զորոց ուրոյն ուրոյն մեայ մեզ գրել 'ի սորև։

ԳԼՈՒԽ Ա.

Առանձնաշնորհութիւն Հայոց յաղագս Հայկայ սերելոյ 'ի Յարեթական օրինալ տոհմէն։

Մասնաւոր խնամօքն Աստուծոյ սերունդք Հայկայ ա-ծնցան յարմատոյ անտի սերնդեան Յարեթայ որդւոյ Նոյի. վասն զի Հայկ որդի էր Թորգոմայ, և Թորգոմ որդի Թիրասայ, Թիրաս որդի Գամերայ, որդւոյ Յարեթայ՝ որ օրհնեցաւ 'ի հօրէ իւրմէ 'ի Նոյ նահապետէ այսու բարեմաղթութեամբ. «Ընդ-արձակեսցէ Աստուած Յարեթի, և այն»։ Ծննդ. Թ. 27։ Բանք օրհնութեան և մաղթանացս յոյժ համառօտ երևին, բայց զանազան զօրութիւնս Աստուածայինս պարունակեն յին-քն. կամէր ասել այրն Աստուծոյ սերելի որդեակ իմ Յարեթ, ընդարձակեսցէ ամենազօր Տէր Աստուած. այսինքն յաջողեսցէ քեզ համարձակ և աներկիւղ գործել զհաճոյս բարեբար կա-մաց իւրոց, ոչ երբէք տկարացին զօրութիւնք անձին քո յընթացս կենաց քոց առաջի թշնամեաց քոց, նուաճեալ ընկճեսցին ընդ զօրութեամբ քով ամենայն հակառակորդք քո. ընդարձակեսցի Աստուածպաշտութեան խորհուրդ մտաց քոց. ահա սաղմոսերգուն Դաւիթ զայս բարեմասնութիւն Աստ-ուածային զօրութեան յանձին իւրում տեսանէր շնորհեալ յԱստուծոյ. ուստի գոհաբանելով երգէր առ Տէր Աստուած. «Ընդարձակեցեր զընացս իմ 'ի ստորէ խմբէ, և ոչ տկարացան շաւիղք իմ»։ Սաղմ. ԺԷ. 36։ Եւ որդին Դաւիթի իմաստ-նացեալն Սողոմոն յայս միտ խրախոյս տայ առաքինասէր ան-ձանց յասելն՝ «Եւ ոչ երկիցես 'ի զարհուրանաց 'ի վերայ հա-սելոց մտրարշտաց, և յարշաւանաց 'ի վերայ եկելոց. զի Տէր եղիցի 'ի վերայ ամենայն ճանապարհաց քոց, և հաստատեսցէ զոտն քո, զի մի՛ սասանեսցի»։ Առակ. Գ. 25. 26։ Ապա ի-բրաւմբ պանծայ Մովսէս թորենացին յաղագս լինելոյն մերս ազգի ծնունդ և սերունդ նախնի նահապետին մերոյ Հայկայ

որդւոյ Յարեթի օրհնեցելոյ 'ի հօրէ 'ի Նոյ նահապետէն։ «Այս Հայկ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Դամիրայ, որդւոյ Յարեթի։ Նախնի հայաստանեայց և այս ազգ նորա և ծընունդք աշխարհ և բնակութեան և յայսմ հետէ սկսան՝ ասէ, բազմանալ և ընդ զերկիրն։ «Գիրք Ա. երես 29։ Սոյնպէս և սուրբ դպրապետն Յովհաննէս կաթողիկոս զրէ 'ի պարծանս ազգին։ «Եւ այնուհետև յայնմանէ ծանուցաւ մեզ մերոյն անվերջ զբուցաց հաւատքդ։ և խմացեալ զիսաց զքո զարի սկայազօր ախոյեանն զեղեցիկ զՀայկ զոլ որդի Թորգոմայ և Նախնի Նահապետ և սերունդ ազգի մերոյ։ երես 11։

ԳԻՒՈՒԻ Բ.

Պատերազմն Հայկայ ընդ Բէլայ վասն Ասուածապաշտութեան՝ պարծանք է Հայոց։

Աքանչելի առանձնաշնորհութիւն վերնամեամ տեսչութեան ներդործեցաւ 'ի բարեխոհ միտս Հայկայ, որով յուսացեալ յամենակարողն Աստուած։ Նախանձախնդիր եղեալ Աստուածպաշտութեան, անարդեաց զառաջնորդն կռապաշտութեան՝ զամբարտաւանն և զամբարիշտն Բէլ, որպէս գրէ Վարդան վարդապետ պատմիչն մեր յաղագս Հայկայ քաջութեանն և նախանձախնդիր լինելոյն Աստուածային փառաց։ «Ո՛չ պաշտեաց՝ ասէ, ընդ եօթանասուն և մի Նահապետան երկրի ըզպատկերն Բէլայ։ այլ խրախուսեալ յԱստուած՝ սատակեաց զնոյն ինքն զկենդանին զառաջնորդն կռապաշտութեան։ 'Ի Գոլ. Լուսաւորչին։

Բայց այսմ գրէ և Խորենացի սուրբ Հայրն մեր՝ եթէ Բէլ 'ի հաստատել զթագաւորութիւն իւրաւ ամենեսին, և ըզ-Հայկ միայն զտեալ նախանձախնդիր Աստուածպաշտութեան սերնդովք իւրովք՝ «Առաքէ ասէ։ 'Ի կոչմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամրք հաւատարմաք։ գալ նմա 'ի

հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ։ և եկեալքն ըզ-
խրախտ պատգամս Ներրովթայ ազդէին առ վերհազն Հայկ ա-
սելով. «Բնակեցեր՝ ասէ. 'ի մէջ ցրտութեան սառնամանեաց,
այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպար-
տացեալ բարուցդ. և հնազանդեալ ինձ՝ կեաց 'ի հանդարտու-
թեան. ուր հաճայ է քեզ յերկրիս խումբ բնակութեան։ Եւ
'ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բէլայ՝ խմաս-
տութեամբ պատասխանեաց. դառնայ առաքեալն անդրէն 'ի
Բաբելոն. ապա զոշաժողով լինի 'ի վերայ նորա Տիտանեանն
Բէլ ամբոխիս հետևակ զօրայ. գայ հասանէ 'ի հիւսիսի եր-
կիրն Արարատայ մերձ 'ի տունն Կադմեայ, փախստական լինի
Կադմոս առ Հայկ. քաջընթացիկս առաքի իւր առաքէ. զի-
տեա ասէ. ով մեծդ դիւցազնց. զի դիմեալ գայ 'ի վերայ քո
Բէլ յաւէրժիւք քաջօք և երկայնադիզօք հասակօք սկսցիւք
մրցողօք։ Եւ խմացեալ իմ զմերձ լինելն նորա 'ի տուն իմ.
փախեայ։ և գամ ահաւասիկ տաղնապս։ Արդ՝ ածապարեա
խորհել որ ինչ գործելոց ես։ Իսկ Բէլ յանդուգն և անձռուն
զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ-
'ի վայր հեղեալ՝ փութայր հասանել 'ի տահմանս Հայկին. 'ի
սիրտ և 'ի մարմին վատահացեալ արանց զօրաւորաց։ Ասա-
ուշիմ և խոհեմ սկսան քաջազանգուր և խայտաին ածապա-
բեալ հաւաքէ զորդիս իւր և զմեռուսնս արս քաջս աղեղ-
նաւորս թռուով յոյժ նուազունս. և զայլ ևս որ ընդ իւրով
ձեռամբ, հասանէ յերգ ծովակի մոյ. որոյ ալիքն ջուրքն.
մանուսնս ունելով ձկունս յինքեան. և կոչեցեալ զզօրս իւր՝
ասէ ցնոսա. յիշանելն մեր հանդէպ ամբոխին Բէլայ. դիպեալ
ջանացուք տեղւոյն, ուր անցեալ կայ 'ի մէջ խառն քաջացն
Բէլ։ Զի կամ մեռցուք. և ալոն մեր 'ի ծառայութիւն Բէլայ
կացցէ. կամ զաջողութիւն մատանց մերոց 'ի նա ցուցեալ։
ցրուեսցի ամբոխն. և մեք եղիցուք յաղթութիւն սատակեալք։
. . . . Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն 'ի միմեանս.

ահագին դղրդիւն 'ի վերայ երկրի առնէին շահատակելովն. և ահա պակուցանօղս տարազուք յարձակմանց զմիմեանս արկանէին։ Անդ ո՛չ սակաւ քերկոցուն կողմանց սկսելոց որք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք. տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցուն կողմանցն ՇՄայր անպարտելի։ Զայսպիսի անակնուելի դիպուած տարակուսանաց տեսեալ որքայն ցիտանեան զարհուրեցաւ. և 'ի նոյն բլուր՝ ուստի էջն. վերջոտնեալ ելանէ. քանզի խորհէր 'ի միջոցի ամրանալ ամբոխին. մինչև հասցէ բովանդակ զօրն. զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորքն Հայկայ. յառաջ վարէ զձիսն. մօտ հասանէ յարքայն. լի քարշէ պինդ զլայնալիճն. դիպեցուցանէ գերեքթեւեանն կրծէց տախտակին. և շեշտ ընդ մէջ թիկանց թափանցիկ լեալ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ՇՄոխացեալն ցիտանեան կործանի. յերկիր զարկուցեալ և փչէ զոգին. իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան. փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց. և վասն այսորիկ այսչափ բովանդակ լեցի ասելոյ։ Ա։ Գիրք։ ԺԱ։

Զայս Աստուածաշնորհ քաջութիւն Հայկայ և զԱստուածընդդէմ խրոխտ յարձակումն Բէլայ պարզ և դիւրահասրանիւք նկարագրէ Յովհաննէս կաթուղիկոս պատմագիրն։ Եւ այնուհետև յայնմանէ Ծանուցաւ մեզ մերոյն անվրէպ զուցացս հաւաստիք. և իմացեալ գիտացաք զարի սկսյազօր ախոյեանն գեղեցիկ զՀային գոլ որդի Թորգոմայ և Նախնի նահապետ և սերունդ ազգի մերոյ։ Եւ զոյն սա գիտէ բանս ընդ վեթխարի ըստ կայիցն միակամեալ գործել զբարձրարերձ ամբարտակին շինուած ամբարտաւանութեան. որք կարծէին կարել կատարել զամբարշտութեանն խորհուրդ։ Իսկ ըստ Աստուածայնոցն պատմութեանց՝ հողմն ահագին գոլցես իմն Աստուածային հրամանաւն շնչեալ զբուրգն բարձրարերձ 'ի վայր հոսեալ կործանէր՝ զնոցայն ցուցեալ անվաստակ տքնութիւնս։ Այսուհետև ապա Ղեբրովթն՝ որէ Բէլ. խրոխտաբար ձեռներէց լեալ

և 'ի վեր զինքն ամբարձեալ միապետել հնարէր առ հասարակ 'ի վերայ այլոցն ևս սկսելոց։ Իսկ մերոյն Հայկայ՝ ուժեղակա-բար ընդվզեալ և արասքս զինքն 'ի հնազանդութենէ բէ-լայ բերեալ՝ զայ հասանէ վաղվաղակի յայս աշխարհ մեր Ա-բրամանեկաւ որդւովք իւրովք զոր ծնաւ 'ի Բաբիլոն. և այլ դրա-տերքք և թոռամբք. և ընդոծնեօք և եկօք յարեալքք 'ի նու-խակ ներբողքն որ է բէլ՝ զկնի հետամտեալ Հայկայ հանդերձ իւրովքն ևս հրոսակօք արամբք կորովօք յաղեղն և 'ի սուս-սեր և 'ի տեգ նիզակաց, և բախեալ 'ի դիմի հարեալ միմեանց 'ի ձորադաշտի մեջ ահագին եմն զզզմամբ իրրև ընդ զառ 'ի վայր հեղեալ զսաստիկ ուզեմից վզդովումն այսպէս ահս իմն պակուցանօղս և սարսափելիս զմիմեանմբք շահատակելոցն արկանէին։ Իսկ մերոյն Հայկայ լայնալեզ աղեղամբ զերեք-թեւեանն նետ դիպեցուցեալ երկաթագամ տասնակի կրծոյն ներբողքն՝ թափանցանց ընդ թիկունս յայնկոյս յերկիր հարստէր։

ԳԼՈՒԽ Գ.

Անդրանիկ լինել Հայկական լեզուին է առանձնաշնորհութիւն ազգիս։

Աստուածային նախախնամական առանձնաշնորհութիւն առ ազգս Հայոց եղև և այս իսկ. զի յայն Աստուածասաստ պատժոց խառնակութենէ լեզուաց ազատ մնաց լեզուն Հայկա-զեան. մինչդեռ Աշտարակաշինութիւնն ամենախրխտ ամբար-տաւանութեամբ բէլայ հնարեալ 'ի Բաբիլոն կրեաց յԱստո-ուածուստ պատիժ պատուհասի՝ ըստ այնմ. «Եւ ասէ Տէր. ահա ազգ մի. և լեզու մի ամենեցուն. և զայդ սկսան գործել և ոչինչ պակասի 'ի նոցանէ. զամենայն՝ զոր ինչ յօժա-րեսցին գործել։ Եկայք իջցուք և խառնակեսցուք անդ ըզ-լեզուս նոցա. զի մի՝ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ։ Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս

ամենայն երկրի. և զադարեցին 'ի շինելոյ զքաղաքն և զաշտարարն. վասն այսորիկ կոչեցաւ անուն նորա խառնակութիւն. զի անդ խառնեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի. և անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի.» Ծնունդ. ԺԱ. 6—10։

Իսկ նախ քան զայս խառնակութիւն լեզուաց էր լեզու մի և բարբառ մի. որպէս գրի յԱստուածաշնչի. «Եւ էր յամենայն երկրի լեզու մի և բարբառ մի ամենեցուն.» Ծնունդ. ԺԱ. 1։ Ահա այս Աստուածազգեցիկ լեզու և բարբառ զկնի ջրհեղեղին մնաց 'ի նահապետն Նոյ և յորդիս նորին 'ի Սեմ 'ի Քամ և 'ի Յաբէթ, որք ոչ մեկնեցան 'ի գաւառէն Հայաստանեայ, որ կոչի Նախիջևան այսինքն նախնի իջևան, որպէս գրէ Յովսեպոս պատմիչ. «Եթէ այնպիսի անուամբ կոչեցաւ տեղին այն 'ի լեզու Հայոց Նախիջևան, որ յաւնարէն ասի Ապոբատերիոն, այսինքն իջևան. այլ միայն Հայկ նահապետն մեր գնաց 'ի Բաբիլոն. և նկատեալ անդ անօր զչարախորհուրդ զառաջարկութիւնս կռապաշտութեան ամբարշտին Բէլայ, և նախանձախնդիր խորհրդով Աստուածային փառացն մեկնեալ անտի սերնդովք իւրովք եկն յիջևանս մեծի նահապետին Նոյի. և զլսելին 'ի բաց թողեալ զԱստուածասաստ լեզուն և ըստ բարբառն խառնակութեան՝ որ 'ի Բաբիլոն՝ սկսաւ սերն, ոչ իւրովք խօսիլ հանապազ զայն Աստուածաշնարհ հայրենական լեզուն. որ աւանդեցաւ 'ի նահապետէն Նոյէ. և զկնի յաղթելոյ Նորա զԲէլ Աստուածազօր քաջութեամբ և խոհեմութեամբ ժառանգէ. տիրէ հայրենատուր աշխարհին իւրոյ՝ ամենայն բարեկարգութեամբ յարդարեալ զրազմատեսակ գործս քաղաքականս և զշինուածս աշխարհիս. որով Արարատեանս երկիր անուանի Հայաստան։ Զայսմանէ տայ ծանօթութիւն համառօտակի Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն. «Եւ այնպէս զնա (զԲէլ) սատակեալ ինքն (Հայկ) տիրէ հայրենատուր վիճակեալ աշխարհին իւրոյ. յիւր անուն անուանելով զան

Հայք։ Եւ յետ այսորիկ բազում զարծս քաղաքական յարդարեալ և շինութեանց աշխարհի պարապեալ և կեցեալ ամս ՀԷ սակաւս մեռանի։ Հաւատալով զՔրիստոս մեր Աստուածնեկայ որդւոյ իւրոյ։

Կնքեսցի այս խորհրդածութիւն մեր բանիւ խմաստնոյն Սողոմոնի։ որ յիշեցուցանէ մեզ զարդարութիւնն Նոյի և զԱստուածային խնամօք ազատ և անարատ մնալն նորին 'ի չարայաժամ միաբանութենէ անտի աշխարհին շինութեան և զամբծութիւն բարբառոյ լեզուին 'ի բաբիլոնական խառնակութեանցն խօսից զնախանձախնդիր փառացն Աստուծոյ զքաջն Հայկ հզօր անուամբ նշանակելով։ «Նոյն և 'ի միաբանութիւն շարութեան ազգացն շփոթելոց ծանեաւ զարդարն և պահեաց զնա անարատ Աստուծոյ։ Եւ 'ի վերայ որդւոյն զթութեամբք պահեաց զՀզօրն»։ Իմաստ։ Ժ։ Ե։

ԳԼՈՒԽ Դ։

Նիստ Նոյեան տապանին 'ի լեռան Արարատ 'ի Հայաստան՝ պարծանք է ազգիս Հայոց։

Ո՞չ փոքր առանձնաշնորհութիւն Աստուածային բարեբարութեանն եղև առ ազգս Հայոց։ զկնի զպարարելոյ Ջրհեղեղին Նիստ Նոյեան տապանին 'ի լեռան Արարատայ՝ զոր ասուցեալ սուրբ Գիրն։ «Եւ նստաւ տապանն յեօթնեւերորդում ամսեանն 'ի քսան և եօթն ամսոյն 'ի լերինս Արարատայ»։ Ծնող։ Ը։ 4։ Եւ լեռանս այս անուանեալ Արարատ կամ Մասիս է 'ի Հայաստան։ զոր ոչ միայն ազգային պատմիչք մեր հաստատեն։ որպէս Խորենացին։ Յովհաննէս կաթուղիկոսն։ Մագիստրոս։ և Վարդան։ այլև բազումք յարտաքին պատմագրաց ստուգեալ հաստատեն։ որպէս Աբիդենոս 'ի Քրոնիկոն Եւսեբեայ՝ Թղթ։ 30։ գրէ։ «Եւ նաւն երթեալ յաշխարհն Հայոց դադարեր։ և 'ի փայտիցն գեղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարգևէր»։ Սապէս և Բերոս քաղդէացի ըստ վկայելոյ Յոսեփ-

պոսի 'ի Նոյն Քրոնիկոնի. Թղթ. 65. վիպագրեաց և զարկղակերպ տապանէն, որով Նոյ նախնին մերոյ ազգիս ապրեցաւ։ «Եւ երթեալ դադարէ 'ի գլուխ լերանց Հայաստան* աշխարհին»։ Եւ ստանէաս Անտիոքացի 'ի չորրորդ դարուն գրէ. «Տապանն Նոյի ամբարձեալ 'ի ջուրց՝ եկաց 'ի գագաթն լերին, որ 'ի Հայաստան»։ Եւ սուրբն Յովհան Ոսկերերան հաստատէ զոյս ամենայն 'ի բանս Ա. Թեսաղ. Ճառ Ը. «Հաւատայցէ՞ք արդեօք եթէ եղև ջրհեղեղ. եթէ զառանցելոց ինչ բանք թուիցին ձեզ. ուր և լերինքն, յորս տապանն դադարեաց. վկայեն. զՀայոց լերանցն ասեմ։ Եւ ի ճառն սիրոյ ասէ. «Ապաքէն և զարդիս լերինք Հայաստանեայց վասն ջրհեղեղին վկայեն. ուր եկաց տապանն Նոյի. ոչ ապաքէն և այժմ անդանօր պահեալ կան նշխարք նորուն 'ի մեր խրատ»։

Արդ՝ հարկ է գիտել և ճանաչել մեզ. եթէ քանի՞ առանձնաշնորհութիւնս եղև Յարեթեան ցեղիս նստելով Նոյեան տապանին 'ի լերինս Արարատայ՝ որ 'ի Հայաստան. քանզի նախ Աստուածային մարգասիրական խնամոյ և նախատեսման պահպանութեան սերնդոց արդարոյն Նոյի. առաջին սեղան ողջակիզացն փառաբանութեան առ Աստուած՝ կազմեցաւ 'ի Հայաստան՝ ուր տապանն հանդեաւ. ըստ այնմ՝ «Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ, և էառ յամենայն անասնոց սրբոյ և յամենայն թռչնոց, և եհան ողջակէզ 'ի վերայ սեղանոյ, և հոտոտեցաւ Տէր Աստուած 'ի հոտ անուշից» Ծննդ. Ը. 20. 21։ Երկրորդ՝ յետ ջրհեղեղին Ծաւալեցաւ 'ի Հայաստան աշխարհի 'ի վերայ սերնդոցն Նոյի Աստուածային հոգենորոգ օրհնութիւնն. «Եւ օրհնեաց Աստուած զՆոյ և զորդիս նորա, և ասէ ցնոսա. աճեցէ՛ք և բազմացարո՛ւք և լցէ՛ք զերկիր և տիրեցէ՛ք զմնս». Ծննդ. Թ. 1։ Եւ երրորդ՝ առաջին քարոզ Աստուածպաշտութեան և Աստուածահաճոյ արդարութեան ըստ կրկնաւորեցաւ 'ի Նոյէ 'ի Հայաստան աշխարհի որպէս զրէ սբը-

*) Դրնագրին՝ Հայոց տեղ։

բազան Առաքեալն Պետրոս. «Զուխերորդն զՆոյ՝ զարդարութեանն քարոզ պահեաց 'ի ջրհեղեղէ աշխարհի. ամբարշտելոցն ածեալ։ Բ. Պետ. Բ. Ե։

ԳԼՈՒԽ Ե.

Յատուկ առանձնաշնորհութիւն եղեւ Հայոց նախ առաջին քարոզութիւնն քրիստոնէական հաւատոյ 'ի Հայաստան՝ Մոգուցն, որք եկին երկրպագանել սուրբ Ծննդեանն Քրիստոսի։

Այլ իմն հրաշալի առանձնաշնորհութիւն Աստուածային սքանչելի տնօրէնութեանն յայտնեցաւ 'ի Հայաստան աշխարհիս յաւուրս երկրպագելի Ծննդեանն Յիսուսի Քրիստոսի. զոր զրէ սրբազան աւետարանիչն Մատթէոս. «Եւ 'ի Ծնանելին Յիսուսի 'ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդէի արքայի, ահա Մոգք յարևելից եկին Յերուսաղէմ և ասեն. ուր է՝ որ Ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն Նորա յարևելս. և եկաք երկիրպագանել նմա». Բ. 1.—1.22։

Արդ՝ արժան է նկատել թէ այս նորատեսիլ հրաշալի աստղն Աստուածային կուսական Ծննդեանն Յիսուսի շնորհաց և փառացն յայտարար՝ ուր երևեցաւ, յայտնի առնէ աւետարանական բանն թէ՝ «Ահա Մոգք յարևելից երկին Յերուսաղէմ և թէ՝ «Տեսաք զաստղն Նորա յարևելս». բառիս դէպ 'ի իմանելի Հայաստան աշխարհ, քանզի երջանիկ Մոգքն՝ որք ունէին զուսումն աստղաբաշխութեան 'ի նախկին հեղինակաց Զարեանդ և Մոգս անուանեալ նահապետաց իւրեանց սերելոց 'ի Բերնդոյ նահապետին Սեմայէլին յարևելից յաշխարհէն Պարսից և Պարթևաց, ուր կայր առաջին զաւառ Մէդ անուանեալ. թող զի Պարսիկք և Պարթևք Մոգք կոչէին 'ի ժամանակին։ Արդ՝ Մոգս է մի 'ի զաւառաց աշխարհին Հայոց՝ կոչեալ Մոկ յանուն նահապետի ուրումն Հայկազնոյ, յորմէ և ծաւալեցաւ ուսումն մոգութեան. որպէս Մովսէս քերթողահայրն յիշէ 'ի կարգս նախարարացն Հայոց և զիշխանն Սուրայ յասելն.

«Սուրբ յոգին Մոկայ» և թէ՝ «Էր երբեմն ինձեւ երամակաց ցանուց յանդգնագոյնս արշաւեալ ընդ խորտարարան և 'ի վիճակս տեղիս. յորմէ կասել սկսաւ Շապուհ. իսկ Աստուծոյ Մոկացւոյ եպերեալ զնա ասէ. զնա՛, զնա՛ Աստուածորդի Պարսից. թէ այր իցես». Գ. Գիրք. ԽԳ. Նե։ Եթէ ոք կամի զընդարձակն իմաստիցս տեսանել ընթերցցի զՀնախօսութիւն Հայաստանեայց. Հատ. Գ. 52. 55։

Արդ յայսմ աշխարհէ՝ որ անկանի ընդ արևելս, եկին Մոգքն. որով լոյս յայտարար շնորհաց երկրպագելի սուրբ Ծընընդեանն Յիսուսի Ծագեցաւ 'ի վերայ Հայաստան աշխարհի նորատեսիլ և հրաշալի աստեղն, որ լուսեղէն բարբառով իբրև թէ քարոզէր աշխարհիս. եթէ լոյսն յաւիտենական Ծագեցաւ. ապա 'ի բաց արարէ՛ք զխաւարային գործս մեղաց, մատիք առ Տէր և առէ՛ք զլոյս. և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն, թողէ՛ք զզերութիւն ստոնայի. որ բերէ զյաւիտենական դատապարտութիւն. քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան. թողէ՛ք զհոգեկորոյս մոլորական և զդիւական պաշտօնն կռամոլութեան. քանզի Աստուած 'ի մարմնի ծնաւ ձեզ. փութասջիք 'ի բէթղեհէմ 'ի մանուրն երկրպագանել սքանչելահրաշ մարդասիրական Աստուածային յայտնութեանն. փութադեսջիք շնորհընկալ լինել և ուսանիլ 'ի հրեշտակաց զպարտուպատշաճ փառաբանութիւնս գոհութեամբ հանդերձ վերառաքել 'ի բարձունս. որ հաճեցաւ ինձանել յերկնից 'ի փրկութիւն մարդկայինս բնութեան։ Եւ ընդէր Մոգքն եկին յերուսաղէմ. վասն զի Ծանօթք էին մարգարէական աւանդութեան Բաղաամայ Բէորեան միջազգեստացւոյ սահմանակից եղելոյ Մոկաց. եթէ Ծագելոց է հրաշալի աստղն Յակովբայ. որպէս գրեալ է։ «Ծագեսցէ աստղն Յակովբայ. և յարիցէ այր Իսրայելէ. և հարցէ զիշխանս Մովաբայ. և առցէ սաւար զամենայն որդիս Սեթայ». Թուոց. ԻԴ. 17։ Արդ՝ իբրև տեսին Մոգքն զաստղն նորահրաշ. յիշեցին զմարգարէական

աւանդութիւնն Բաղատամոյ, որ հռչակեալն էր յարևելս 'ի Մոկս և 'ի Միջագետս, և փութացան ճանապարհորդել Աստուածային շնորհացն ներգործութեամբ 'ի սիրոս իւրեանց, զայս իմաստս զեղեցիկս ճառէ Ներսէս Շնորհալի 'ի Մեկն. Մատթէոսի. «Բաղատամ քննութեան պէտք էին մեզ թէ ուստի՞ Մոգք էին, և յորմէ՞ աշխարհէ, և ո՞ յորդորեաց, ած զնոսա, և յի՞նչ պատճառս, ազգաւ 'ի Պարսից էին և աշխարհաւ յարևելից, որպէս Աւետարանիչս ցուցանէ, բայց շարժման նոցա պատճառ, ոչ յինքեանց յատուկ և ոչ յԱստուծոյ առանձին, այլ ինքեանք յօժարեցան և Աստուած յորդորեաց».

Եւ ըստ սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյն. «Բնաւորական է մարդոյ զգալիսք գալ յիմանալիսն»: Արդ՝ զգալի էր աստղն, և իմանալի ներքին լուսաւորութիւն մտաց նոցա, որպէս ասէ Ոսկիբերան, «Թէ ոչ միայն աստղն թուի ինձ ըզգործն զայն ցուցանել այլև Աստուած, որ 'ի միտս նոցա արկանէր, և ոչ զանձնիշխանութիւն նոցա խափանեաց այնու, իբր թէ բռնի վարելով, այլ ինքեանք յօժարեցան և Աստուած յորդորեաց»: Այս երանելի Մոգքս մինչ իմաստասիրեցին ըզնարատեսիլ աստեղն գուշակութիւն, յԱստուածային ազդեցութենէն յորդորեալ կատարեցին զՀոգևոր իշձս իւրեանց 'ի Բեթղեհէմ 'ի սուրբ այրին երկրպագանելով Աստուածորդւոյն Յիսուսի Փրկչին մարդացելոյն վասն մեր, մատուցանելով ըզխորհրդական ընծայս իւրեանց՝ որպէս գրէ աւետարանիչն Մատթէոս. «Եւ իբրև մտին 'ի տուն, տեսին զմանուկն Մարիամ մարքն իւրով և անկեալ երկիրպագանէին նմա, և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս ոսկի, հնդրուկ և զմուռս». Բ. 11: Զայս խորհրդական նու իրեալ պատարագս յիշատակէ յերգսն Շարականի մերում քերթողահայրն մեր Մովսէս Խորենացի: «Եւ Մոգքն աստեղն նշանաւ եկին 'ի Բեթղեհէմ երկրպագին Ցեառն, և 'ի յայրին մատուցին զընծայս խորհրդոյ»: Զոհասութիւն խորհրդական և

բարոյական մտաց ընծայիցն երջանիկ Մոգուց բացատրէ հո-
գելից վարդապետութեամբ Ներսէս Շնորհալի գրելով 'ի Մեկն.
Մատ. Ա. 11 «Այլ զի՞նչ ասկի և կնդրուկ և զմուռս, քանզի
զկենդանական պաշտօնս յառաջադոյն ցուցանէին, զի զոսկին
ընծայէին որպէս երկնաւոր թագաւորի, իսկ կնդրուկն որպէս
Աստուծոյ, և զմուռն իբրև հանդերձեալ մեռելոյ։ Եւ դար-
ձեալ, քանզի մարդիկ յոսկի պատկերս երկիրպագանելով դի-
ւաց, որպէս առ գաղդէացւոքն օտարացուցին զնա յԱս-
տուծոյ, իսկ նոքա 'ի դիմաց հեթանոսայ նուիրելով նմա զոս-
կին հանդերձ երկրպագութեամբ, անդրէն դարձուցին զպատ-
ուականութիւն նիւթոյն առ արարիչ իւր. և կնդրուկն՝ քան-
զի անուշահոտ է, նշանակեցին՝ զի հոտովն անուշիչ՝ որ 'ի նը-
մանէ՝ լուծանելոց էր հոտն մահու՝ որ բղխեաց յօձէն, իսկ
զմուռն՝ զի նա է բժշկական՝ յայտ արարին, զի բժշկելոց էր
նա զբեկումն Ադամայ։ Արդ՝ 'ի դառնալն Մոգուց հարկա-
դրէին արդարև հռչակել յերկիր իւրեանց 'ի Մոգս 'ի Հայաս-
տան աշխարհի զԱստուածայայտնութիւնն՝ զոր տեսին 'ի բեթ-
ղեհէմ, ըստ ներքին Աստուածային ազդեցութեան պարտա-
ւորեալ, որպէս և քարոզեցին 'ի Միջագետս և 'ի սահմանս նորա
որուամ մերձէին։ Ըստ Յովհաննու աւետարանչին իրաւարա-
նելով՝ «Զեանքն յայտնեցան, և տեսաք, և վկայեմք, և պատ-
մեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր և երևեցաւ
մեզ։ Զոր տեսաքն և լուաք, պատմեմք և ձեզ, զի և դուք
հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ։ Ա. Յովհ. Ա. Զ. Ց։ Զքա-
րոզութիւն երջանիկ Մոգուցս հաստատէ սուրբն Յովհան Ոս-
կեբերան, «Ընդ այլ ճանապարհ գնացին՝ ասէ, յաշխարհն իւր-
եանց, զի՞նչ պաշտօն կալան անդ յաշխարհին, բայց միայն
զայն Աստուածայայտնութեան շնորհ, զնոյն քրիստոնէական
փրկագործ տնօրէնութեանն լոյս, որում ականատես եղեն,
հռչակեցին և քարոզեցին անվհերեր յամենայնի»։

ԳԼՈՒԽ Զ.

Առանձնաշնորհութիւն էր ազգիս անդրանիկաւատութիւն Թագաւորին մերոյ սրբոյ Արգարու 'ի Քրիստոս, որով սիրէր եղեւ 'ի Հայաստան լուսաւորութեան 'ի քրիստոնէական հաւատս։

Առանձնաշնորհութիւն եղև ազգիս ըստ Աստուածային ըստքանչելի նախասահմանութեանն, քանզի 'ի քարոզութենէ երանելի Մոգուցն Ծագեցաւ լոյս ճշմարիտ քրիստոնէական հաւատոյ 'ի միտս բարեպաշտ թագաւորին մերոյ Արգարու՝ որ էր 'ի Միջագետս, յայտմ քարոզութենէ ոչ սակաւ արծարծեալ 'ի միտս նորին այս լոյս Աստուածաշնորհ, մինչ վերադարձեալ Յերուսաղեմայ եկին երեք հաւատարիմ նախարարքն նորա։ Վասն զի կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի աքանչելագործութեանն ականատես եղին, և եկեալ պատմեցին նմա, ընդ որ յոյժ զարմացեալ առաւել ևս հաստատեցաւ 'ի հաւատս, և 'ի հեռուստ անտի զհաստատուն յոյս իւր և զկատարեալ սէրն ուղղեալ հաստատեաց բոլորով սրտիւ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Փրկիչն աշխարհի. որպէս պատմէ Մովսէս Խորենացի յամենին՝ «Եւ նոցա դարձեալ անտի ելին Յերուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր Քրիստոս վասն լրոյ հմտութեան աքանչելագործութեանն. որում և ականատես եղեալ պատմեցին Արգարու, ընդ որ զարմացեալ Արգարու հաւատաց ճշմարտապէս իւր յարդարեալ Որդի Աստուծոյ. և ասէ. այն զօրութիւնք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ. զի չիք ոք 'ի մարդկանէ որ կարէ զմեռեալս յարուցանել. բայց միայն Աստուած։ Եւ քանզի ապականեալ էր մարմին իւր 'ի չարաչար ցաւոց. որ պատահեցին նմա 'ի Պարսից աշխարհին յառաջքան զհօրն սմ. և 'ի մարդկանէ ոչինչ եղև հնար նմա բժշկութեան. եւ սատնել թուղթ աղաչանաց գալ և բժշկել զնա 'ի ցաւոյն։։ Այսու համարձակութեամբ ճշմարտութեան հաւատոյ փութացաւ զրեալ աղերս ջերմեռանդութեան առ Յիսուս Քրիստոս Փրկիչ աշ-

խարհի՝ սրինակ զայս. «Արգար Արշամայ իշխանի աշխարհի առ Յիսուս Փրկիչ և բարերար, որ երևեցար աշխարհի Երուսաղէմացւոց, ողջոյն։

«Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ՝ որ լինին ի ձեռս քո առանց դեղոց և արմատաց, զի որպէս ասի տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ և զբորոտս սրբել, և զայսս պիսիս հանես, որ միանգամ չարաչեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես դու և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի ի մտի իմում մի յերկուց ասել. կամ թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից գործես զայդ. կամ թէ Որդի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես. արդ վասն այսորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիւնս՝ զոր ունիմ ես։ Նաև լուայ՝ զի Հրէայք տրանջին զքէն, և կամին չարչարել զքեզ։ բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս։

Մինչ ընկալաւ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս 'ի հրեշտակացն զթութեան Արգարու և մարդասիրական շնորհիւն արժանի արար զնա պատասխանւոյ իւրում, յայնժամ հրամայեաց Առաքելոյն իւրոյ Թովմայի գրել առ Արգար զայս օրինակ։

«Երանի՛ ի՛նչ այնմ՝ որ հաւատայ յիս։ իբրև ոչ իցէ տեսեալ նորա զիս, զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանեն զիս. ոչ հաւատասցին յիս. և որք ոչն տեսանեն. նորա հաւատասցին և կեցցեն. իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս զալ ինձ առ քեզ արժան է կատարել ասա զամենայն ինչ, վասն որոյ առաքեցայ ես. և կատարեցիր զայս. ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց. առաքեցից զմի յաշակերտաց անտի իմոց. զի զդուս քո բժշկեսցէ. և կենաս քեզ և սրոց լնդ քեզ են շնորհեսցէ։ Ընդ այս աւետարեր գրութիւնս հետևեցուցանէ Մովսէս թա-

բենայի սուրբ հայրն մեր և զայս թէ. «Զայս թուղթ երեր Անանէ սուրհանդակ Արգարու։ ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յԵդեսիայ քաղաքի մինչև ցայսօր ժամանակի։» Գիրք Բ. Լ. Լա. Լբ։

Բարեսի՛ն ընթերցող, եթէ կամիս վերահասու լինիլ ամենայն պարագայից, եթէ զնարդ եղև յետ համբարձմանն Փրկչին մերոյ Յիսուսի՝ յեօթանասնից անուն Առաքելոյն Թադէոսի զնալ յԵդեսիա քաղաք, աւետարանել անդ ըստ հրամանի Տեառն մերոյ և բժշկել զԱբգար, և զամենայն հրաշագործութիւնս արարեալ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ևս և տեսանել զթուղթ Աբգարու առ Տիրերիոս Կայսրն Հռովմայեցւոց՝ առ Ներսէհ և առ Արտաշէս արքայն Պարսից առ Ի՛ծանուցանել նոցա զշնչմարտութիւն քրիստոնէական հաւատոյ՝ զոր ի՛նքն ընկալեալ էր. այլ լիք հանդերձ։ Արժան է ընթեռնուլ զսուրգաղտատում մատենագրութիւնս Նորին Խորենացւոյ։ Անդ. Լդ. Լդ։

Արժան համարիմ աստանօր ծանօթութիւնս տալ ընթերցողաց համագգի սիրելեաց իմոց՝ գրելով զերաւացի վերադառնութիւնս Յովհաննու կաթուղիկոսի. «Բայց Աբգարու ապրանեալ լիներ մարմին չարաչար ախտիւ, և փան զի Մարիամայ բդեաշխն Աղձնեաց և Շամշագրամ նահապետն Ապահունեաց և Անան հաւատարիմք աբքային Աբգարու, ելեալք յԵրուսաղէմ և տեսեալ զաքանչելի բժշկութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ եկեալ պատմեցին Աբգարու։ Սակս այսորիկ գրէ թուղթ ազաչանաց գալ առ նա և բժշկել յախտէն յայնմանէ. զոր ոչ օք երբէք ի մարդկանէ եղիտ բժշկութիւն։ Զոր և ընկալեալ Փրկիչն մեր, և արժանի պատասխանւոյ զնա համալեալ զրէ առ նա, առաւել երանելով զայնոսիկ, որք ոչն տեսեալ իցեն զնա և հաւատացեն, և ի կատարել ասէ զիսմն առաքչին իմոյ, առաքեցից քեզ զմի յաշակերտաց իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ և կեանս շնորհեսցէ

քեզ և որք ընդ քեզդ են։ Իսկ զՅուզեթ փրկչին բերեալ առ Արգար Անանայ սուրհանդակի ընդ նմին և զկենդանարուբ թիւն փրկչական պատկերին, որ կայ մինչև ցայսօր յԵդեսացւոց քաղաքի։ Ապա յետ համբառնալոյ Փրկչին մերոյ յերեսներորդի ամի թագաւորութեանն Աբգարու Թովմաս Առաքեալ մի յերկոտասանից առաքէ զԹադէոս յեօթանասնից ընտրելոց բժշկել զթագաւորն Աբգար ըստ խոստման Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր և արժանի վարկաւն իսկ դրով տալ զուստրանական աւետիսն։ Որոյ ապա եկեալ 'ի տուն իշխանին Ցուրիայ բաղարատունւոյ, որ ցայն վայր կայեալ մնացեալ էր հայրենի օրինաքն. իսկ իշխանին Ցուրիայ առեալ ածէ զԱառաքեալն առ արքայն, և նշան հրաշալի 'ի դէմս Առաքելոյն արքայն տեսանէր. և ապա ընդդձեալ 'ի ծունկս երկիրպագանէր նմա 'ի վերայ երեսաց երկրի. իսկ Առաքեալն զձեռն 'ի վերայ եդեալ Աբգարու բժշկէր զնայլև բոլոր իսկ զՏիւանդս և զախտաժէտս. որք 'ի տան արքայի և յամենայն քաղաքին բժշկէր։ Եւ մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն. և օր ըստ օրէ բազմանային հաւատացեալքն 'ի Տէր։ Իսկ սրբոյն Թադէի զԱդդէ ոմն խոյրաշիր ձեռնադրեալ և փոխանորդ իւր թողեալ յԵդեսիայ. և ինքն դայր առ Սանատրուկ քեռորդին Աբգարու աւետարանել վճռեալ ելոյն նմա զՔրիստոսի Աստուածութիւնն։ Բայց Աբգար մեծի յուսոյ զանձն տուեալ և կենդանարար գտեալ փառացն Աստուծոյ, և հեռեալ 'ի խոստովանութիւն անշարժ յուսոյն՝ վաճանի վերաթեռեալ 'ի վերին աշտարակն Սիոնայ։

Արդ՝ տես դու ասանօր զբանչելի և զերկնաձիր շնորհն Աստուածային յաստուկ իմն խնամածութեամբ անպառ տարածեալ 'ի վերայ ազգիս Հայոց, քանզի մինչ սրբազան Առաքեալն Թադէոս նահատակեցաւ 'ի ձեռն ամբարշտին Սանատրկոյ. սկսաւ զիւական կապաշուութեանն մոլորութիւն երևիլ և 'ի հաւատացեալս 'ի Քրիստոս Յիսուս, որք հաստա-

տուն կացեալ էին 'ի խոստովանութիւնս ճշմարիտ հաւատոյ, օր քան զօր սաստկանային սոսկալի տանջանք և նահատակութիւնք 'ի կռամոլ բռնաւորաց անտի 'ի կողմունս Հայաստան երկրի։

ԳԼՈՒԽ Է.

Հալածելի պատկեր սրբոյ Աստուածածնի շնորհի ազգիս Հայոց 'ի ձեռն Բարսղղիմեոս Առաքելոյն։

Հայաստան աշխարհ ոչ միայն յանմխիթար թշուառութիւնս յետ վկայական մահուան Թադէոսի Առաքելոյն, այլ վերնախնամ ցեսչութիւնն փութայոյզ զԲարդղիմէոս սրբազան Առաքեալն յերկոտասանից անտի 'ի քարոզել զճշմարտութիւնն Քրիստոնէական և լուսով Աւետարանական վարպետութեան հալածել զհոգեկրաց խաւարն կռամոլութեան։ Ունէր երանելի Առաքեալս ընդ իւր զՀրաշագործ պատկերն ամենարանեալ կուսին սուրբ։ Աստուածածնի 'ի հոգևոր ոգեփանս և 'ի յատուկ մխիթարութիւն հաւատացեալ բնակչացն 'ի Հայաստան աշխարհի ըստ գրելոյ Մովսէսի թարգմանչաց առ Սահակ մեծ իշխանն Արծրունեաց. յայտնելով զամենայն պարագայս պատութեան, յորոց և մեր առեալ բառ առ բառ ընդ զրով արկցուք աստանօր։ «Բարդղիմէոս Առաքեալ մի յերկոտասանեցն ոչ գոյր ընդ նոսա 'ի զուգահաւաքման կուսին, փան զի կամք էին ցեսաւն այսմ այսպէս լինել։ զի ընդ թովմայի 'ի Հնդիկս էր երթեալ, և եկեալ նա յետոյ առ Առաքեալսն՝ բռնադրօսանց զնոսա ցուցանել նմա զգանձն Աստուածային զմարմին ամենարանեալ կուսին։ Եւ յօժարեալ նոցա ընուլ զփափագ տենչանաց եղբօրն իւրեանց, բացեալ այնուհետև զսուրբ գերեզմանն, գտին ուստի յԱստուածածկիր մարմնոյն։ Եւ հիացեալք իմացան թէ 'ի դադարել օրհնութեան հրեշտակացն և սաղմոսերգու-

թեանցն զկնի երից աւուրց 'ի նոցանէ փոխադրեցաւ մարմինն սուրբ 'ի ձեռն նոցին հրեղինաց դասուցն։ Ապա յոյժ ազա-ցեալ Բարգուղիմէոս, զի ոչ ժամանեաց նա տեսուլթեան սրբոյ Կուսին, և ոչ լուաւ զորհնութիւնսն վերջին որպէս զայլ Առաքեալսն և զԱշակերտսն ցեռուն, և ոչ 'ի գերեզմանին եգիտ, տրտմեր առաւել քան զառաւել։

Զայն տեսեալ երանելի Առաքելոյն, մխիթարել զեղբայրն իւրեանց կամեցեալ, ետուն նմա զպատկեր Տիրամօրն, որ էր 'ի փայտն նկարեալ բնաւորեալ զօրութեամբ, զոր առեալ Բարգուղիմէոս զուարճացաւ, և իբրև ընդ կենդանւոյ համարեալ նայէր։ Ապա մեծաւ փութով եկ 'ի Հայս հրամանաւ սուրբ Հոգւոյն, զի զթագէոս Առաքեալ սպանեալ էր Սանատրուկ արքայ յԱրտաշատ գաւառի Հայոց։ . . . Եւ եկեալ յաշխարհն Ամենացեաց 'ի համբաւ քարի միոջ քանզի գեղ բաղումք բնակեալ էին անդ, և պատրէին զմարդիկ տեղւոյն։ . . . . Հասեալ սուրբ Առաքեալն Աստուծոյ անդ, հայածեաց զդարբինն զդարձուցեալս չարին, և զկուռսն փշրեաց՝ որ յանուն Անահտայ էր։

Անդ հիմնարկեալ սուրբ Առաքեալն զհիմն տաճարի սրբութեանն իւրովք իսկ ձեռօքն շինեալ զեկեղեցի փոքրագոյն, և անուանեաց զնա սուրբ Աստուածածին, և եդ 'ի նմա պատկեր Տիրուհւոյն, և տայ զնա սուրբ կանանց, և զլուս կացուցանէ անդ զքոյր Ցուսկանն, և զքոյր Որմզդատայ, և ըզՄաքովարի և զայլ կանայսն ընդ ձեռամբ նոցա կացուցանէ, շինէ խրթիթս վանիցն, և տեսուչս հրամայէ լինել հաւատացելոց, և քահանայ կացուցանէ անդ յիւրոց աշակերտացն, և անուանէ զտեղին Հոգեաց վանս յանուն Տիրամօրն և սուրբ Կուսին, զի բաղում սքանչելիս կատարեր Աստուած 'ի ձեռն սուրբ Կուսին յայնմ ամենայն։ Եւ ինքն սուրբ Առաքեալն ելեալ աւետարանէր 'ի Հայս, և կատարեցաւ յՈւրբանոս քաղաքի։

Այն այս երանելի Առաքելոյս Բարդուղիմէոսի՝ տնօրէնութեամբ Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գալն ի քարոզութիւն Հայաստան աշխարհիս զկնի Թադէոսի Առաքելոյն և կատարիլն շարշարանօք ի բռնաւորէն Սանատրկոյ, համառօտիւ պատմագրէ Յովհաննէս կաթուղիկոս այսպէս։ Իսկ ապա ի Հայս Նորին իսկ քառորդի Սանատրուկ կացեալ լինի թագաւոր, որ թէպէտ և ի սկզբան քարոզութեան Թադէոսի Առաքելոյն հաւատաց ի Քրիստոս, դարձեալ ուրանայ, և յետ փոքր ինչ ապա բազում շարշարանօք և սրով կատարեալ սուրբ Առաքեալն ընդ նմին և զդուստրն իւր զՍանդուխտ վճարէ ի կենացս, որք ի լոյս կենաց անվախճանից փոխեցան ընդ աջմէ փառացն Աստուծոյ։ Իսկ զկնի այսորիկ ապա և Բարդուղիմէոս մի յերկոտասանից անտի, որ Հայաստան աշխարհս ի Ցեառնէ վիճակեցաւ, խսկոյն յայսմ ժամանակի ի Սանատրկոյ կատարի շարշարանօք, և արեամբ շատի նահատակեալ ի Հայս յԱրասբեռն քաղաքի, ուր և եղան իսկ նշխարք ոսկերաց նորա ի պարծանս Հայաստանեայցս և ի բժշկութիւն ամենայն ախտաժետացս։ Երես 22. տիպ Մոսկվ։ Յայսպիսի Աստուածային առանձնաշնորհութիւնս ազգ մեր Հայոց առաւել փառաւորեալ և պերճացեալ գոյանի, զորս յայտնի կացուցանեն անենսանոյ ոգւով ճշմարտասէրք, որպէս սուրբն Սեղբեստրոս Հռոմայ հայրապետն ի սիրակցութեան և ի տեսութեան իւրում ի Հռոմայ ընդ բազմամաստակ առաքելապատիւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ականատես իսկ եղև հրաշիցն և սքանչելեացն՝ զորս Աստուած ցոյց ի նմա, փան որոյ նախ ինքն պատուեաց զնա, որպէս գրէ Ագաթանգեղոս զնոյն բան Սեղբեստրոսի մեծի հայրապետի։ «Զ.ատն որոյ ասէ և ես Սեղբեստրոս, որ ականատես եղէ այնպիսի զարմանալեացս, որով պատուեաց Աստուած զՊարթևն մեծ, մեծարեցի և ես զնա բան իմում կարի, տալով նմա զվկայան իմ պատուական, որ էր լեալ սրբոյն Յակոբայ Ցեառնեղբօր

առաջին եպիսկոպոսի Երուսաղէմի։ Եւ զինի բազմատեսակ պատուամատոյց մեծարանացն յատուկ ընդհանրական հրովարտակս զրէ Սեղբեստրոս առ պատրիարգունս արևելից. զի զՀայոց հայրապետն համապատիւ ինքեանց ծանիցին՝ զայս օրինակ։ «Դրեցի և հրովարտակս ընդհանրականս առ Աւետարանչաց աթոռակալ պատրիարգունս յարևելս. զի զՀայոց հայրապետն համապատիւ տեսցեն ինքեանց. վասն զի երկոտասան Առաքելոցն չորք անդանօր կատարեցան։

«Անդ կայ և պատկեր Փրկչին. զոր առաքեաց Աբգարու. որ յառաջ քան զամենայն թագաւորս նա հաւատաց 'ի Քրիստոս Աստուած։ Անդ կայ և փայտեղէն պատկերն սուրբ Աստուածածնի. զոր ՏԷրն տեառնազրեաց և օրհնեաց յաւուր սուրբ Աստուածածնի փոխման ծնողի և մօր իւրոյ։ Անդ կայ և խաչամասն պատրանիկ. որ էր 'ի պարանոցի սրբոյ կուսի Հռիփսիմէ օրիորդին. և այս մասն Հեղինէի և Կոստանդիանոսի՝ զոր մեք պարգևեցաք Տրդատայ։ Անդ կայ և գեղարդն Դունկիանոսի հարիւրապետին. որով խոցեցաւ կող Փրկչին. և բղխեաց ջուր և արիւն. նշանակ մկրտութեան և հաղորդութեանն. ջուրն 'ի լուացումն առազանին, և արիւնն յարբուցմն խորհրդին։ յԱդամ. 'ի Թղթին Դաշանց։

Արժան հաստատեցայ ապաքէն զյօրինեալն զսխրալի շարական 'ի մեծէն Վարդանայ Բարձրբերդցւոյ 'ի վերայ սքանչելագործ ցնառնամուխս գեղարդին յուշ առնել ընթերցողացն՝ որ գտանի 'ի մեծադիր և ճոխ ձեռագիր Շարականի 'ի մատենադարանի սրբոյ Աթոռոյս կաթուղիկէ Էջմիածնի։

«Իսկ զոր պարծանքդ պարծանաց գեղարդդ սուրբ և գեղբազանց. որ ձեռամբ Թադէոսի սուրբ և ընտրեալ Առաքելոյն, առաքեցար մեզ ապաւէն հիմն բարեաց հաստատութեան. քև զՔրիստոս բարեբանեմք հիմն բարեաց եկեղեցւոյ։ Թեաւոր սուր երկասրիր, և բանալի անճառ շնորհաց. զի դու բաց՝ քեր զկողն կենաց՝ ջուր և արիւն արտաբերեալ՝ որով մկրտիմք

և հաղորդիմք 'ի բնակութիւն Երրորդութեան. քև զՔրիստոս։

Գեղեցիկ զդն գովելի ներկեալ արեամբն Յիսուսի, 'ի փառս ազգիս Հայաստանեայց արձանացար յերկրի մերում աշտարակ բարձր և ամուր պարիսպ հրեղէն շուրջանակի. քև զՔրիստոս բարեր։—Աստուածամուխ սուսերդ սուրբ Աստուածածնան զօրութեամբ, որով կորին արմատք սխալից և ցաւք մեղուց և յանցանաց. քև փրկեցուք 'ի փորձութեանց և յամենայն որոգայթից. քև զՔրիստոս բարեբանեմք։ Գեղապաճոյճ գեղարդն սուրբ և թարգմանիչ անմահ Որդւոյն, որով ցուցաւ Աստուած և մարդ. ստոյգ մեռեալ և կենդանի. յոր հաւատաց հարիւրապետն և վկայեաց Աստուածութեան. քև զՔրիստոս բարեբանեմք։—Աստուածանարկ սուր փայլածու նիզակ 'ի ձեռն Յիսուսի, որով փոխէին փաղանգ դիւաց. և բնակին գունդք հրեշտակաց. քև ճանաչեցուք զզգայարանս և դրոշմեցուք զմիտս և զհոգիս. տալով պատիւ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. կենդանութեան և յետ մահու. և յանապատ յաւիտենից։

ԳԼՈՒԽ Ը։

Առանձնաշնորհութիւն է Աստուածային յաւէժական Լուսաւորութիւն ընդհանուր ազգիս 'ի քրիստոնէական հաւատս 'ի ձեռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի։

Յետ վկայական մահուան սրբազան Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի զի՞նչ զգաց Հայաստան. ո՛չ այլ ինչ. եթէ ո՛չ զսպառումն բարի սերման Աւետարանական վարդապետութեան և օր ըստ օրէ նուազումն Քրիստոնէական ճշմարտութեան, և զի՞նչ կրէին հաստատուն յուսով և սիրով Յիսուսի Քրիստոսի վառեալ ջերմեռանդ հաւատացեալքն. եթէ ո՛չ հալածանս 'ի կռամոլ բռնաւորաց անտի և զանազան տանջանս, և միանգամայն զմարտիրոսական նահատակութիւն ըստ զբերելոյ Խորենացւոյն։ Բայց խոստովանիմք ընդ հոգենուագ մար-

դարէին Դաւթի. եթէ «Ո՛չ թողու Տէր զդաւազան մեղաւորաց 'ի վիճակս արդարոց, և արդարք մի՛ ձգեսցին զձեռս իւրեանց յանօրէնութիւն»։ Սաղմ. ՃԻԴ. 3։ Ցիշեսցուք աստուածաշունչ զԱստուածային սքանչելի շնորհայ և մարդասիրական զարմանալի ներգործութեան զյուսալիր խոստմանութիւնս հրեշտակերձն սուրբ վարդապետին մերոյ Գրիգորի Նարեկացւոյն՝ զոր գրէ. «Եւ յորժամ սպառին առ 'ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալիսն յայնժամ ներգործես». ԾԴ։ Զսոսին ապացոյցն Տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի փրկագործ անօրէնութեանն յայսմիկ արար 'ի հարսանիս Կանայ Գալիլեացւոյ՝ 'ի սպառիլ գինւոյն հրաշագործեաց անդ զջուրս լցեալս 'ի թագոյսն՝ 'ի գինի փոխարկելովք։ Յովհան. Բ. 3 9։

Ահա այսպէս զՀոգևոր տրամութիւն ազգիս Հայոց 'ի զարմանալի ուրախութիւն փոխարկեաց յարուցանելով 'ի պարթևական ազգէն Լուսաւորիչ տասն թոռդոմեան զսուրբն Գրիգորիս. յաղագս որոյ գոհանալով զայսմ առանձնաշնորհութենէ Աստուածային կանխագիտութեանն 'ի լուսաւորութիւն և 'ի փրկութիւն ազգիս Հայոց յերդս Շարականի մերում գրէ Խորենացին։ «Հրաշափառ Աստուած և մի՛շտ բարեխնամող, որ յառաջգիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ, 'ի պարթևական մեղապարտ ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա Փրկիչ՝ կեցո՛ զմեզ այժմ և 'ի քո ահաւոր գալստեանն»։

Կամի՞ս ծանօթանալ Աստուածային առանձնաշնորհութեան առ ազգս Հայոց՝ զոր հրաշագործեաց 'ի ձեռն սուրբ Լուսաւորչին մերոյ. լո՛ր Ագաթանգեղոսի, որ նկարագրեալ զՀոգևոր բարեկարգութիւնս եկեղեցեաց՝ զմկրտութիւն թագաւորին Տրդատայ, պալատական մեծամեծաց, ընտանեաց նորին, արքունական զօրացն և զսքանչելեացն պատմէ։ «Եւ եդ անդ հիմունս և շինեաց եկեղեցիս. և զնշխարս՝ զորս ունէր յոսկերաց սրբոցն 'ի տէրունական տանն բնակեցուցանէր։ Սոյնպէս և

ընդ ամենայն կողմանս գաւառաց դնէր հիմունս եկեղեցեաց, և ուղղէր սեղանս, և կացուցանէր քահանայս, և ամենայն երկիր դարձեալ սրտիւք իւրեանց կանխէին 'ի պահս և յաղօթս և յերկիւղ Աստուծոյ։

«Իսկ 'ի լնուլ կիսին եղելոյ պահոցն կատարելոյ, առեալ սրբոյն Գրիգորի զաշխարհական զօրայն, և զինքնին զԹագաւորն, և զկին նորա զԱշխէն և զմեծ օրիորդն Խոսրովիդուխտ և զմեծամեծսն ամենայն, և ամենայն մարտիւք բանակին հանդերձ, առեալ ընդ այգուն առաւօտուն լուսանալոյ յափն Եփրատ գետոյն մատուցանէր և անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

«Եւ իբրև իջանէին մարդիկն ամենայն թագաւորաւն 'ի մկրտութեան անդր 'ի ջուրս Եփրատ գետոյն, նշան սքանչելի երևեալ յԱստուծոյ, զի զտեղի առեալ ջուր գետոյն, անդրէն դարձան ընդ կրունկն։ Եւ լոյս սաստիկ երևեալ 'ի նմանութիւն սեան լուսաւորի և եկաց 'ի վերայ ջուրց գետոյն, և 'ի վերայ նորա նմանութիւն աերունական թաչին, և այնչափ ծագեաց լոյսն, մինչև արգելոյր զմառագայթս արեգական և նուազեցուցանէր։ Եւ իբրն օծութեան՝ զոր արկանէր Գրիգոր 'ի վերայ մադկանն, շրջան առեալ 'ի մէջ գետոյն շուրջ զմարդկամբն խաղայր։

«Եւ ամենեքեան զարմացեալ բարձրացուցանէին զօրհնութիւն 'ի փառս Աստուծոյ, և ընդ երեկ աւուրն նշանն աներևոյթ լինէր, և նոքա 'ի վեր յաւանն դառնային, և որ մկրտեցան յաւուր յայնմիկ՝ աւելի քան զհնգետասան բիւր մարդիկ 'ի յարքունական զօրայն։

«Եւ անտի եկեալ մեծաւ յնծութեամբ և սպիտակազգեստ հանդերձիւք, սաղմոսիւք և օրհնութեամբք, կանթեղովք վառելովք և ջահիւք բորբոքելովք, մեծաւ լըջմտութեամբ և քաղցր զուարթութեամբ լուսաւորեալք հրեշտակացեալք,

և առևալ զանուն որդեգրութեանն Աստուծոյ և մտեալ 'ի ժառանգութիւն սրբոյ Աստուածային և 'ի վիճակ սրբոյն խառնեալք ծառկեալք հոտ անոյշ 'ի Քրիստոս, ելեալ 'ի վեր 'ի տերունական տունն դառնային։

«Եւ անդ մատուցանէր զօրհնութեան պատարագն և հաղորդէր զամենեսեան 'ի խորհուրդն գոհութեան, բաշխէր ամենեցուն զսուրբ մարմինն և զպատուական արիւնն ամենափրկչին Քրիստոսի զկենդանարարն, զկեցուցիչ ամենայն մարդկան, զարարիչն և զաշխարհագործն ամենայն արարածոց, զԱստուածատուր շնորհս առ ամենեսին առատապէս մատակարարէր»։ Այս ամենայն սքանչելահրաշ զօրութիւնք Աստուածային շնորհաց և փառաց յայանեցան յաշխարհիս Հայոց Աստուածազօր արդեամբք անուանելի չարչարանաց և 'ի խոր վիրապին համբերատար հոգւով մեծով մեծ հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, փան որոյ զայս ամենայն խոստովանելով երախտագէտ մտաք երդէ 'ի Շարականի ուղղափառ եկեղեցի մեր։ «Որ եռուր համբերութիւն անուանելի չարչարանաց սրբոյն Գրիգորի և նորին ժուժկալութեամբն լուսաւորեցեր զՀայաստան աշխարհս։ Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր զանուանելի զչարչարանս 'ի յանձն էառ. և երիւք հնգաք ամաւք 'ի մէջ թիւնաւորացն բնակէր անդընդային ատանջանաքն 'ի վիրապին»։ Ունկնդիր լեցուք և ցուցանենք կարգուզիկոսի պատմութեան, որ սքանչելի լեն հանդիսացուցանէ մեզ զբազմավաստակ և զհրաշալի արդիւնս սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի յաստուն։ «Ցետ բազում և անուանելի չարչարանացն և անհնարին և դառն կտտանաց և զհնգետասան ամ լինելոյ 'ի խոր վիրապին 'ի գղնակ բերդին որ յԱրտաշատ, ելեալ 'ի խորոյ թիւնաւորացն արտափայլեցաւ 'ի փրկութիւն մեզ, և զանճառելի և զանպարագիր Երրորդութեան հոգեզուարճ բղխումն յինքն ճառագայթ ափայլեալ զքաջն Արամեանս Աղն բուժեաց յախտից և 'ի կռապաշ

տութիւնէ։ Եւ յեսթն և 'ի տասներորդ ամի արքայութեանն Տրդատայ նստաւ յաթոռ սրբոյ Առաքելոյն Բարդուղիմէոսի և Թադէոսի սրբութեանցն գտեալ քահանայապորդող և ծրնող մեր ըստ Աւետարանին և նախահայր աստանօր արտադրելով։ երես 24։

Այնպէս և երանելի վարդապետն Յովհան Երզնկացի գրէ 'ի շնորհաբան ներբողս 'ի սուրբ Լուսաւորիչն։ «Լական բարւոյն վերադիտող Գրիգորիոս՝ բազմագունի բարեացն՝ որ 'ի քէն մեզ ընձեռեցաւ։ զնրպիսի ընծայս՝ յորմէ մեծամեծ և անզուգական իրի նուիրեսցուք բազմարան վարդապետութեամբ լուսաւորեալք քահանայապետական հայցուածոց նուիրեալք, արիական հսկողութեամբ հովուեալք, ճգնաւորական աղօթիւք պատսպարեալք»։ Յաճախ։ երես 298։ Զզօրութիւնս արդանդ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի վայելէ ազգս Հայոց, որ նախ ամենակարող խնամօքն և զօրութեամբ Աստուծոյ պաշտպանեալ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, զայս իւր հաստատեալ է 'ի նոյն ամենաբաւական օգնականութիւն Աստուածային ըստ հոգենուագ մարգարէին Դաւթի, որ ասէ. «Երանի ազգի՝ որում Տէր Աստուած Յակովբայ օգնական է նմա, և յոյս նորա 'ի Տէր Աստուած է»։ Սաղմ. ճԽԵ։

Եւ երկրորդ՝ զարժանընդունակ աղօթիցն սրբոյ Լուսաւորչին զարդիւնս վայելեալ մինչև ցարդ չետես զաղանդ չարափառ թշնամեաց հաւատոյ ուղղափառ Եկեղեցի ազգիս Հայոց, ըստ այնմ՝ «Ի ձեռն առեալ Լուսաւորչին զնշխար սրբոյ կարապետին, շուրջ պարսպեալ զկողմն աշխարհին շնորհօք աջոյ զբանն ծծողին, աստ թշնամիք մի՝ զօրասցին, մի՝ հերձուածոց աղանդք բուսցին, յերկնից գայր ձայն Աստուածային, թէ հայցուածք քո կատարեսցին»։ Շարական։ Այս բան ունի հաստատութիւն յաշակերտէ անտի Լուսաւորչին Զենոբայ եպիսկոպոսին Ցարօնոյ, որ գրէ այսպէս։ «Եւ ապա առեալ զաջ թևն սրբոյ Մկրտչին տեառնագրեաց զգաւառն

ասելով. եղեցի աջ Ցեառն 'ի վերայ դաւառիս այսորիկ պահեալ 'ի թշնամեաց. և թէ վասն մեղաց իւրեանց տանջեցան 'ի Ցեառնէ սակայն թշնամիք մի՛ յերկարեսցին. այլ չարեօք իւրեանց սատակեսցին. և մի՛ հերձուածողք բնակեսցին յայսմ աշխարհի. աջ սրբոյ Կարապետին եղեցի պահապան. և միանգամայն եղեցի տուեալս այս շինուած յաւիտենական յաղագս յաղագս. և ասացեալ զամէնն. ձայն դղրդի եհաս յականջս մերս. եբեա 61։ վասն որոյ ոչ երբէք 'ի վեր երևեցան աղանդաւորք յնկեղեցին մեր. և ոչ տեղի գտան հերձուածոյն հոգեկորոյս բանք. և ոչ երբէք ընդարձակ բնակութիւն գտին ուրեք 'ի Հայաստան. որպիսիք էին Արիոս. Մակեդոն. Պօղոս Շամշատցին. Նեստոր. Եւտիքէս. և սոցին նման ամբարիշտ աղանդաւորք և հերձուածողք՝ որք նզովեալ և մերժեալ են յառաքելական ուղղափառ և սուրբ Եկեղեցւոյ մերմէ։

ԳԼՈՒԽ Թ.

Առանձնաշնորհութիւն ազգիս Հայոց հրաշալի տեսիլ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի գձեւակերպութենէ շինութեան մայր Աթոռոյս սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Յատուկ առանձնաշնորհութիւն եղև առ ազգս Հայոց աքանչելի տեսիլն այն. յորում յայտնեցաւ Աստուածային հրաշալի ձևակերպութիւն շինութեան մայր սուրբ Տաճարին կաթուղիկէ Էջմիածնի. վասն զի 'ի սքանչելի ճառագայթից լուսոյն Քրիստոսի ձևակերպեալ ցուցաւ 'ի հոգեզուարթ տեսլեան առաքելապատիւ մեծի քահանայապետին մերոյ. զորմէ Ագաթանգեղոս պատմագրէ. «Նկայք պատմելոյ ձեզ՝ ասէ. եղբարք՝ զայսոսիկ սէր արարչին առ ձեզ. որ ինձ երևեցաւ ահաւորութեամբ տեսլեանն. Աստուածութիւնն խոնարհեալ առ սուրբ Վկայքս իւր. և սոցա զանհամեմատն բարձրութիւն յանպատումս վերացեալ անզուգականութեան արքայութեանն երկնից։ Ապ՝ զլինելոցս ընդ ձեզ կենսաբեր տուչութիւն շնչ-

Նորհելոյ. երևեալ ինձ տեսիլ անպատում սքանչելի Աստուա-
ծակերպ, զորոյ փոքր 'ի շասէ առի զհանգամանսն։ . . . .
Յանկարծակի եղև ձայն սաստկութեան, բոմբիւն որոտման, ա-
հաւոր թնդիւն իբրև զձայն եռանդեան կուսակելոյ խռո-
վութեան ալեաց ծովու, բացաւ խորանաշէն յարկն հաստա-
տութեան երկնից, և իջեալ այր մի 'ի նմանութիւն լուսոյ՝ կո-
չեաց զանուն իմ և ասէ. Գրիգորիոս, և իմ նայեցեալ տեսի
զկերպարանս նորա. և զարհուրեալ դողացեալ յերկիր կործա-
նեցայ։ Եւ ասէ ցիս. նայեայց դու 'ի վեր, և տես զքանչելիսս՝
զոր ցուցանեմ քեզ։ Եւ ապա 'ի լուսոյ անտի ձայն տուեալ քա-
ջալերէր և յորդորէր զիս. «Եւ դու քաջ լեր ասէ. պինդ կաց
զգոյշ լեր. զի գործ 'ի ձեռն եկեալ հասեալէ քեզ. զի քեզ
բարութիւն գիւրեաւ է լինելոյ. զի և դու ընդ ճշմարիտ մը-
շակսն մտեալ՝ վարձս առցես զանապական պարգևացն Քրիս-
տոսի։ Արդ՝ զգոյշ լեր աւադիկ. որ քեզ աւանդեցաւ 'ի ցեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ. շինեսջիր զՁաճար անուանն Աստուծոյ
'ի տեղւոջն՝ որ քեզ ցուցաւ. որ սիւն հրեղէն ունէր ոսկի խա-
բիսխ. և զվկայարանս սրբոցն՝ 'ի տեղիս՝ ուր զենան ինքեանք
'ի կենդանութեան իրեանց՝ յուսովն՝ որ առ Աստուած. զի
բժշկեսցին հարուածեալքդ. և քարոզութեանն աջողուած
յառաջադէմ լեցի հանապազորդութեամբ օր ըստ օրէ հա-
սանել ամենեցուն 'ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի։
Եւ զայս ասացեալ՝ շարժումն եղեալ. և ընդ առաւօտանալն
ծածկեցաւ տեսիլն»։ երես 270. 271. 277. 278։

Եւ ներբողէ զայս առանձնաշնորհութիւն սուրբն Ներսէս
Շնորհալի 'ի Շարականի մերում պատմաբանօրէն այսօրինակ։
«Եկ Մխաքիտ 'ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա. ձայնք հնչե-
ցին սանդարամետք անդնդոց։ Ցեսեալ զլոյս մեծ հայրապե-
տին Գրիգորի՝ պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային։
Եկայք շինեսցուք սուրբ զնորանն լուսոյ. քանզի 'ի սմա ծագեաց
մեզ լոյս 'ի Հայաստան աշխարհի»։

ԳԼՈՒԽ Ժ.

Առանձնաշնորհութիւն է ազգիս Հայոց զիւտ Աստուածաշնչոյն հայկական տառիցն ի ձեռն սրբոյն Մեսրովպայ թարգմանչի։

Ա. ազգս Հայոց յատուկ պարգև երկնաձիր և մանաւանդ ընդհ Աստուածային խնամոյն է արդարև համարելի հայկական տառիցն նշանագրութիւնք. զոր յաղթեալ Աստուածահաճոյ խնդրուածոց իւրոց տեսանէր թարգմանիչ սուրբ վարդապետն մեր Մեսրովպ, հոգւոյն իւրոյ պարծաղոյն տեսութեամբ հրաշագործեալ յԱստուածուստ, զի թարթ ձեռին աջոյ գրէր և գծէր ՝ի վերայ վիմին զնշանագիրս մեր հայկական տառիցս. և զայս ո՛չ թէ ՝ի քուն երազի տեսանէր՝ այլ յաղօթս ՝ի հոգեկիր սրտին երևութացեալ նշմարէր. որպէս գրէ Ղազար փարպեցի. «Յայնժամ Մեսրովպայ ՝ի Բարեբոսկ եպիսկոպոսէ գտեալ և անցեալ ընդ Փիւնիկէ ՝ի Սամոս գիւղ՝ քանզի Եպիփանու վճարեալ զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռուփանոս հրաշալի արուեստիւ Հելլէն գրչութեան. որ ՝ի Սամոս էր միայնացեալ։ Առ սա երթեալ Մեսրովպայ. և յայսմ ևս անշահ մնացեալ՝ յաղօթս տպաւորեալ. և տեսանէ ո՛չ ՝ի քուն երազ. և ո՛չ յարթնութեան տեսիլ՝ այլ ՝ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն թարթ ձեռին աջոյ գրելով ՝ի վերայ վիմի. զի որպէս ՝ի ձեռն վերջք գծին ունէր քարն. և ո՛չ միայն երևութացաւ. այլև հանդամանք ամենեցուն որպէս յամուն ինչ ՝ի միտս նորա հաւաքեցաւ. և յարուցեալ յաղօթիցն ստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռուփանոսիւ. ձևակերպեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրովպայ՝ փոխադրելով զՀայերէն ախուրեան ըստ անսայթաքութեան սիղբայիցն Հելլենացւոց. և այնպէս գիպեալ գիւտի նշանագրայն. ձեռն ՝ի գործ արկանէր երանելին Մաշտոց՝ յիրիւրելով զնա ընդ սուրբ հայրապետին Հայոց Սահակայ գիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգաւորութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան։

Սոյնպէս յերևելի աշակերտաց սրբոյն Սահակայ և Մեսրոպեայ հանճարաբանն Կորիւն պատմագրէ։ «Յայնմ ժամանակի՝ ասէ, երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյցն Մովսէս մարդապետական դասուն և յառաջադէմն Պօղոս բովանդակ առաքելական գնդաւն հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանաւն Քրիստոսի միանդամայն եկեալ հասեալ 'ի ձեռն երկուց հաւասարելոցն հայարարքառք հայերէնախօք դասն։ Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն, և ակնամոլեալ տեսիլ հայելոյն. քանզի երկիր՝ որ համբաւուն անդամ օտար էր կողմանցն այնոցիկ. յորում ամենայն Աստուածադրդ սքանչելագործութիւնքն դրծեցան. առաժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտելոցն, այլև յառաջագոյն յաւիտենից և ապա եկելոցն. սկզբանն և կատարածի. և ամենայն Աստուածատուր աւանդութեանցն։ Իսկ իրրև զչափ առեալ զերացն հաստատութեան և համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութեանն նոր բազմաւ վարդապետութեանն խմբելին ուսուցանել և թեքել և պատրաստական քարոզութեանն անդէտ մարդկան յօրինել. որոց և ինքեանք իսկ 'ի կողմանց և 'ի դաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և գրդեալք հասանէին 'ի բացեալ աղբիւր դիտութեանն Աստուծոյ. քանզի Յունարարտեան դաւառէն 'ի կայս թագաւորացն և քահանայապետացն բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ. անդ էր յիշելի և մարդարէականն. երէկ եղեալի անդ աղբիւր բղխեալ Դաւթի. որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել. զուարթել 'ի կողմանս 'ի դաւառս 'ի տեղիս տեղիս Հայաստան աշխարհին՝ դաս դաս զաշակերտեալսն ճշմարտութեան զհաւատացելոցս ի կատարումն դիտութեան. բաւականս և առ 'ի զայլսն զկուսանելոյ. որոց կանոն և օրինակ զի. բեանց անձանց արդասիս եղեալ. և պատուիրեալ կալ 'ի նմին

կանանի, և իբրեանց անդէն զառընթերակաց արքունիսն հան-
դերձ ամենայն աղատագունդ բանակաւն Աստուածեղէն իմաս-
տութեամբն վարդապետաւոյ։ Զայս շնորհ երկնաւոր պար-
գեւացն Աստուծոյ յիշատակէ և Յովհաննէս կաթուղիկոս պատ-
մագիրն։ «Զնդ այն ժամանակս ապա եկեալ Մեսրովպայ, և բե-
րեալ զնշանագիր մերոյ լեզուի, զոր գոգցես նմա պարգևեալ
'ի տուչ չութենէ շնորհացն Աստուծոյ, իսկ և իսկ 'ի հրամանէն
մեծին Սահակայ ժողովէ մանկունս խոհեմամիտս, տրամախոհս,
քաջուշեղս, փափկամանկս, և դպրոցս կարդէ ըստ գա-
ւառաց գաւառաց ուսուցանել մեծաւ ջանութեամբ, յեսո
որոյ չուեալ 'ի Վիրս, և անդ ըստ լեզուի նոցա արարեալ նը-
շանագիր, վարդապետս և դպրոցս 'ի նմա ևս կարդէ։ Եւ ա-
պա ի Ջեալ 'ի կողմն Աղուանից և նոցա ևս ստեղծանէ նշա-
նագիր ըստ կիսահազագ և խեցբեկոր լեզուի նոցա, վերակար-
գելով 'ի նմա ևս աշակերտանոցս, և ապա ինքն դարձեալ դառ-
նայ 'ի Հայս և գտանէ զսուրբն Սահակ անդադար 'ի թարգ-
մանութիւն պարապեալ։ Զա այս ամենայն Վարդան վար-
դապետ Բարձրբերդցի 'ի Շարականի սրբոց Թարգմանչաց յոր-
դորէ զազգ մեր գոհաբանական երգոք երկրպագանել Աստ-
ուածային անեղական լուսոյն։ «Որ խորհրդեամբ ճշմարիտ լու-
սոյ փառաց անեղին նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յար-
գանդ մաքուր մեծին Մեսրովպայ, անմահացոյց լուսոյն երկիր-
պագեսցուք»։

Սրդ՝ անհրաժեշտ պարտաւորութիւն ինձ համարիմ խը-
բատ յորդորական աւանդել յԱստուածային խնամոց պաշտ-
պանեալ և բարեզարդեալ սիրելի Ազգիս Հայոց, զի մի՛ լի-
ցի երբէք պարծիլ և բարձրամտիլ յիշելով զԱստուածատուր
բարեմասնութիւնս յատկացեալս ինքեան, նպաստաւորեալ ըզ-
բան հոգերգոյն Դաւթայ, եթէ «Ո՛չ այսպէս արար ամենայն
ազգաց ՏԷր»։ Այլ զի՞նչ՝ զնորհրդական խոստովանութիւն
նոյն երջանիկ Մարգարէին պարտէ և մեզ ունել 'ի բերան և

սրտի մտաք և ջերմեռանդութեամբ աղաղակել առ աղբիւրն շնորհաց առ. ինքնաբուն բարութիւնն այսպէս։ «Պարծանք զօրութեանց մերոց դու ես Տէր. և 'ի կամս քո բարձր եղջի եղջիւր մեր»։ Սաղմ. ՁԸ. 15։

Պարծանք ազգիս բարի և հաճելի Աստուծոյ եղիցի. յորժամ ուղղին առ Աստուած. ճանաչելով զնա ամենակարող զօրութիւն և ինքնաբուն բարութիւն և կատարելով զկամս նորին ամբաւ մեծութեանն։ Վասն որոյ պարտիմք կրթել ըզմիտս և զկամս մեր այսու բանիւ սուրբ Գրոյն։ «Մի' պարծեսցի խորհրդականն 'ի խորհուրդս իւր. և մի' պարծեսցի հզօրն 'ի զօրութեան իւրում. և մի' պարծեսցի մեծն 'ի մեծութեան իւրում։ Այլ որ պարծին՝ 'ի Տէր պարծեսցի. 'ի խորհուրդս գիտութեան զՏէր ճանաչել։ Առնել զերբաւունս և գործել զարդարութիւն 'ի վերայ երեսաց երկրի»։ Ա. Թագ. Բ. 14—16։

Ի վախճան գրոցս խրատական և յորդորական բանք երջանիկ Առաքելոյն Պօղոսի ազգեսցին 'ի սիրտս և 'ի միտս մեր ջերմեռանդ և շնորհատարտ երախտագիտութեամբ ճանաչել զԱստուածային շնորհաց բարերարութեանն ձրիատուր պարգևս. միշտ խոնարհիլ առաջի նորին խնամառատ մարդասիրութեանն, և նովաւ պարծիլ հանապազ առաքինական գործովք բարգաւաճեալ. ըստ այնմ թէ՝ «Զի շնորհօք է փրկեալք 'ի ձեռն հաւատոցն։ Եւ այս ոչ 'ի ձէնջ. այլ Աստուծոյ պարգև է. ոչ 'ի գործոց. զի մի' ոք պարծեսցի»։ Եփես. Բ. 8. 9։

ՅԱՆԿ

ԻՄԱՍՏՈՑ ՊԱՐՈՒՆԱԿԵԼՈՅ ԵՌԱՄՍ ՄՈՏԵՆԻ։

Երես

Արգարու հաստատելն ի Քրիստոս սիրիցն եղև լուսաւորութեան Հայոց ի Քրիստոնէական Հաւատս — — 147

Արդար գրէ թուղթ առ Յիսուս Քրիստոս հրաւիրելով զնա յԵդեսիա քաղաք — — — — 148

Աղղտեսացք և եղբայրասեացք — — 39

Ապաշխարութեան խորհուրդ զուգ զգջացելոց փարատէ Աստուածային շնորհաց մխիթարութեամբ — — 108

Ապաշխարութեան խորհրդոյ հիմն է խոստմանութիւնն առաջի քահանայի — — — — 110

Առանձնաշնորհութիւնք Աստուծոյ առ Իսրայէլացիս — 132

Առաքելք ընտրեցան ի Քրիստոսէ մատակարար շնորհացն Աստուծոյ — — — — — 82

Առաքելք առ ինչ հաստատեցին զզործածութիւն խզոյն ի խորհուրդ բժշկութեան հիւանդաց — — 128

Աստուածաշունչ սուրբ Գիրքն է հայելի Աստուածային բազմապատիկ շնորհաց — — — — 1,12

Աստուածաշունչ սուրբ Գրոց բարեմտութեամբ ընթերցումն ապրիթ է փրկութեան հոգւոյ — — — 23

Աստուած ընդէ՞ր լոյս անուանի — — — 46

Բարդուղիմէոս Առաքեալ բերէ ի Հայաստան զպատկեր սրբոյ Կուսին Աստուածածնի — — — 151

Գայթակղեցուցիչ բանք ապականեն զմաքրութիւն վարուց 76

Գրիգորի սրբոյ Լուսաւորչի մերոյ տեսիլ զձեակերպութենէ չինութեան կաթուղիկէ Էջմիածնի — — — 160

Դրոշմն խորհուրդ անջնջելի ապաւորէ զշնորհս Հոգւոյն սրբոյ ի հոգիս հաւատացելոց — — — 95

Դրոշմն խորհուրդ անկրկնելի է — — — 98

Եկեղեցի Հայոց սնարատ ունի մեծ յաղանդոց — — 159

Եկեղեցւոյն Քրիստոսի պաշտօնէից զինչ են պարտաւորութիւնք 113
Եղբայրսիրութիւն և ազգասիրութիւն նշան են քրիստոնէութեան 35
Եղբայրսիրութեան յատկութիւնք և արդիւնք նորա — 37
Երանութիւն յաւիտենական հանդերձեալ կենաց — 16
Երանութիւն առաքինեաց — — — 15
Երանութիւն այնոցիկ, որք ուղիղ մտօք նկատեն ի սուրբ Գիրս 19
Թաղէոսի Առաքելոյ քարոզութիւն ի Հայաստան — 149
Թշուառութիւն այնոցիկ, որք ոչ ուղիղ մտօք ընթեռնուն ըզսուրբ Գիրս — — — — 20
Լուսաւորութիւն Ազգիս Հայոց ի ձեռն սրբոյն Գրիգորի. 155
Լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս՝ յինչ միտս մեկին — 90
Խղճի մտաց արթնութեան հարկաւորութիւն — — 21
Խոստովանութիւն առաջի քահանայի զլխաւոր հիմն է ապաշխարութեան խորհրդոյ — — — 109
Խորհուրդք ընդդէմ բնական և գրաւորական օրինաց ապականեն զհոգւոյն սրբութիւն — — — 77
Խորհրդոյ բժշկութեան հիանդաց հեղինակն է Յիսուս Քրիստոս — — — — — 127
Հաղորդութեան սրբազան խորհուրդ միացուցանէ ընդ Քրիստոսի զարժանապէս մերձեցողն ի նա — — — 98
Հաղորդութեան խորհուրդ նկարագրէ զխաչելութիւն Փրկչին 100
Հաղորդութեան խորհուրդ գրաւական է արժանաւորաց հանդերձեալ անմահ կենդանութեան — — } 102
Հաղորդութեան խորհրդոյն ներգործութիւն յոյս յարութեան պարգևէ — — — — — }
Հաղորդութեան խորհրդոյն օրինակ էր հաց և գինի մատուցեալ ի Մելքիսեդեկէ առ Աբրահամ — — 104
Ի Հայաստան ի դաւառն Մոկաց երևեցաւ աստղն ծննդեան Յիսուսի — — — — — 143
Հայաստանեայց սուրբ Եկեղեցի անարատ մնացեալ է յաղանդաւորեալս — — — — — 160
Հայկայ պատերազմ վասն Աստուածպաշտութեան ընդ Բելայ 136
Հայոց պարծանաց մին է Հայկայ սերունդն ի Յարութիւնն օրհնեալ տոհմէն — — — — 135
Հայոց լեզուն անդրանիկ է — — — — 139
Հաւատացելոյն պարտականութիւն է երախտագէտ լինել բաղմապատիկ շնորհաց մարդեղութեան Փրկիչն — 27
Հաւատք Քրիստոնէին պարտի ունել ընդ իւր նաև զառաքինութիւն — — — — 15

Հոգւոյն սրբոյ շրջիլն ի վերայ Ջուրց յարարչագործութեան անդ՝ նշանակէ զներգործութիւն շնորհաց յաւազանին մկրտութեան խորհրդոյ — — — — 81
Հրաժարելոյն միանգամ ի մկրտութեան ի սատանայէ չէ վայել ասել այլուր դէրաժարիմքն — — — 73
Մարդեղութիւն Յիսուսի Քրիստոսի է ձրի շնորհք առ մարդկայինս բնութիւն — — — — 55
Մարդեղութեան Յիսուսի Քրիստոսի ձիրք շնորհաց բազմապատիկ եղեն առ մարդկայինս բնութիւն — — 80
Մարդկան վասն ստեղծան ամենայն արարածք — 53
Մարդկային բնութիւնս ի պատկեր Աստուծոյ ստեղծաւ, յինչ միտս ասի — — — — 88
Մեսրովպայ սրբոյ վարդապետի երեի նշանագրութիւն Հայկական տառից — — — — 162
Մկրտութիւնն ներգործէ զզերբնական զօրութիւնս շնորհացն Աստուծոյ — — — — 61
Մկրտութիւնն արժանաւոր առնէ որդեգրութեան շնորհաց Հօր Աստուծոյ — — — — 63, 79
Մկրտութիւնն տայ զշնորհս նմանակցութեան և հաղորդակցութեան Յիսուսի Քրիստոսի — — — 64
Ի մկրտութեան երիցս ընկղմեն զերեխայս ի ջուր աւազանին ի նշան հաղորդակցութեան նորա շնորհաց մահուան և երեքօրեայ թաղման Յիսուսի — — — 68
Ի մկրտութեան օրհէս պարտ է հրաժարեցուցանել ի սատանայէ զուրացօղն, որ դարձեալ եկեսցէ ի ճշմարիտ հաւատս Քրիստոնէութեան — — — — 70
Մկրտելոյն միագամ անհնար է կրկին մկրտիլ — — 69
Մոգքն երկրպագուք ի ծննդեան Փրկչին էին ի Մոկաց գաւառէն Հայաստան աշխարհի — — 143
Մոգքն ընդէր եկին յերուսաղէմ յերկրպագութիւն ծննդեանն Յիսուսի — — — — — 144
Մոգքն ուստի ունէին զուստուն աստղաբաշխութեան 143
Մոգքն քարոզեցին զՔրիստոս ի Միջագետս և ի Մոկս — 146
Մոլորութիւնք ի հաւատոյս ապականեն զհոգի չիջուցանելով զլոյս շնորհաց — — — — 75

Մոլութիւնք սոյականեալ վարուց զշնորհս Հոգւոյն սրբոյ հեռացուցանեն — — — — 76
Ցիսուս զարգանայր խաստութեամբ և հասակաւ շնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ. յինչ միտս մնկնի — 50, 92
Ցիսուս ընդ զգալի տեսակօք հացի և գինւոյ հաստատեաց զիմանալի խորհուրդ Հաղորդութեան — — 105
Ցիսուսի Քրիստոսի թուղթ առ Աբգար — 148
Ցիսուսի Քրիստոսի Աստուածութիւնն յայտնեցաւ ի թափօր վկայութեամբ Հօր Աստուծոյ — — — 50
Նոյեան Տապանն նստաւ ի վերայ լերինն Արարատայի Հայաստան — — — — 141
Նոր կտակարանն է հանդիսաւոր շնորհաց սքանչելի մարդեղութեան փրկչին — — — — 25
Շնորհք Քրիստոնէական Աստուածածանութեան է ինքնահաստատմանութիւնէն Աստուծոյ — — — 29
Շնորհք [առաջին առ մարդն է մարդասիրութիւն Աստուծոյ 43
Շնորհքն Աստուծոյ ձրիասարդն է հաստատումն վարձուց — 54
Շնորհացն լուսոյ մերձաւորս առնեն ճշմարիտ հաւատք — 1
Շնորհացն լոյս փարատէ զխաւար մեղաց հալածելով զասանատաց — — — — 6
Պարկեալ կատարեալք զինչ նշանակ են — — 44, 87
Պարկեալ բնականք Աստուածային հասարակարար ի վերայ չարեաց և բարեաց — — — — 54
Պասկեալք անբաժանելի են ի միմեանց մինչև ի մահ — 123
Պասկի խորհուրդ օրինակ է Քրիստոսի շնորհօք միութեան ընդ Եկեղեցւոյ — — — — 122
Պասկի խորհրդոյ պաշտօնեայք պարտին ըստ կանոնաց պըստակել — — — — 125
Սէրն Աստուածային յինչ պարտաւորէ զմեզ — — 45
Ստեղծումն մարդոյ ի զերբնական վախճան յաւիտենական կենաց — — — — 52
Վարդանայ բաթիրքերդոյս չարական իսուրք Գեղարդն Քրիստոսի — — — — — 154
Տուրք բարիք զինչ նշանակէ — — 44, 85
Քրիստոս է մի միայն զլուսն Եկեղեցւոյ — — 64
Քրիստոնեայք որդիք լուսոյ են — — 10
Քրիստոնէական Աստուածածանութիւն առանց արդեանց գործոց չէ բաւական ի փրկութիւն — — 31

ՀԱՅ. ՀՈՍՈՍ ԳՐԱԳԱՐ. ԸՆԿ. ԳԻՐՔԱՐԱՆ